

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ Ա.Մ.Ս.Ա.Գ.Ի.Բ

№ 5 1894

ՄԱՅԻՍ

1894 № 5

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

երես

1 ՏՈՒՐԳԵՆԵՎԻՑ-Ա. ԽԱՏՈՒՐԵԱՆ	667	Արծակ բանաստեղծութիւններ:
2 ՀԱՅՆԵՑԻՑ-Ա. ԽԱՏՈՒՐԵԱՆ	675	Երդ (բանաստեղծութ.):
3 ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ.	676	Լովզակ-լուր (քրդական պոէմա):
4 ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆՅ, ԴԱԲՐԻԵԼ.	682	Գեղը կանգնի—զերան կը կոտրի:
5 ԴԱԶԲԵԳ, ԱԼԵՔՍԱՆԴՐԻ:	691	Էլբերդ (պատմւածք):
6 ԼԵՖՈՐ, Վ.	711	Դրօշակ (պատմւածք):
7 ԱՐԾԲՈՒՆԻ, ԲԺՇԿ. Վ.	726	Բնական Հիանուտիսմ:
8 ԲԱՀԱԹԲԵԱՆ, Ա.	738	Հող. և անձն. իրաւ. Հին-Հայաս- տանում (վերջ):
9 ՎԱՐԴԱՆԵՍՈՆ, ԳՐԻԳՈՐ	756	Արծաթի և ոսկու խնդիրը:
10 ՅԱԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ	765	Բանւ. ապահովացումը Ռուսիակում:
11 Ա.Ս. Գ.	673	«Զոհակ Բիւրառապի Աժդահակ»:
12 " "	780	«Հանրամատչելի Բնախօսութիւն»:
13 ՎԱՆՑԵԱՆ, Գ.Բ.	792	Օրէնք և կազմակերպութիւն:
14 ՊԼԱՏԵԱՆ, ԱՐՄԵՆ ՎԱՐԴ.	801	Քահանահները Ախալք. վիճակում:
15 ***	803	Մի բրոշուրի առիթով I, II, III:
16 Z.	804	Քաղաքակ. Տես.-Լարնօ'ի մահը-Լա-
17 ԻՄԲ.	816	զիմիր Պիրիէ-Մինիստր. փոփոխ:


ՅԱՅՍԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Գ. Ա-ՕՏԻԵՆԵԱՆՅԻ

Տիպոգրաֆія М. Д. Ротніанця, Гог. пр., Ա. № 41

1894



ՄԱԿՐԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 5 1894

Մ Ա Յ Ի Ս

1894 № 5

ՊԵՏԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԻԱՆՑԻ

Տիպոգրաֆія М. Д. Ротиніанца, Гол. пр. լ. № 41.

1894

Дозволено цензурою. Тифлисъ, 20 Мая, 1894 г.

ԱՐՉԱԿ ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹԻՒՆԵՐ

ՏՈՒՐԳԵՆԵԽԻ

Թարգմ. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԱՏՈՒՐԵԱՆԻ

I

ՄՈՒՐԱՑԿԱՆ

Ես անցնում էի փողոցով... Ինձ կանգնեցրեց մի ծեր, հալից ընկած մուրացկան:

Աչքերն արտասւալից, ուռած ու կարմրատակմած, շրթունքները կապտամած. հազին լաթեր. մարմնի վրայ անմաքուր վէրքեր 0, ինչ այլանդակ կերպով մաշել, կերել էր այդ անբախտին աղքատութիւնը:

Նա պարզել էր ինձ իւր կարմրած, ուռած ու կեղտերով ծածկած ձեռքը...

Նա հառաջում, նա խեղդւած ձայնով ողորմութիւն էր ազերսում:

Գրպաններս սկսեցի տակնուվրայ անել... բան չգտայ—ոչ փող, ոչ ժամացոյց, ոչ էլ նոյն իսկ թաշկինակ... Հետո ոչինչ չէի առել:

Իսկ մուրացկանը շարունակ սպասում էր... և նրա կառկառած ձեռքը թոյլ կերպով ցնցւում ու գողգողում էր:

Ինքս ինձ կորցրած ու շփոթւած՝ ես ամուր սեղմեցի այդ դողդոջուն, կեղտերով ծածկւած ձեռքը... «Թողութիւն արա, եղբայր. ես ոչինչ չունեմ»:

Մուրացկանն իւր կարմրատակ աչքերն յառեց վրաս: Նրա

կապտած շրթունքները քմբիծաղ ու ին և նա էլ իւր կողմից պինդ
սեղմեց իմ սառած մատները:

«Է՛հ, ինչ արած, եղբայր,—ծամծմեց նա,—էղուր համար էլ
շնորհակալ եմ. այդ էլ մի ողորմութիւն է, եղբայր»:

Ես հասկացայ, որ ինքս էլ ողորմութիւն ստացայ իմ եղբօրից:

Փետրվար, 1878 թ.

II

Պ Ա Թ Ա Ի Հ

Մեն-մենակ անցնում էի լայնարձակ դաշտի միջով:

Յանկարծ ինձ թւաց, թէ ետեիցս թեթև ու յուշիկ քայլերի
ձայն եմ լսում: Մէկը հետեւում էր ինձ:

Ետ նայեցի—տեսայ մի փոքրահասակ, մէջքը կոր պառաւ՝
ոտից-գլուխ փաթաթւած աղքատիկ ցնցուիներում: Ցնցուիների
միջից պառաւի միայն երեսն էր երեսում—զեղին, կնճռոտ, սրա-
քիթ ու անատամ երեսը:

Ես մօտեցայ նրան... Նա կանգ առաւ:

—Ո՞վ ես զու. ինչ ես ուզում. մուրացկան ես, ողորմութեան
ես սպասում:

Պառաւը պառասխան չտեց: Ես գլուխս մի քիչ առաջ ծուեցի
և տեսայ որ նրա երկու աչքն էլ սքօղւած էին կիսաթափանցիկ,
սպիտակաւուն թաղանթով կամ փառով, ինչպէս որ մի քանի
թռչունների աչքերն են լինում, որոնց այդ նուրբ մաշկը պաշտ-
պանում է արեի խիստ ճառագայթներից:

Բայց պառաւի աչքերի այդ թաղանթը չէր շարժւում և բի-
բերն էլ չէին երեւում... որից եղբակացրի, որ նա կոյր է:

—Աւզում ես ողորմութիւն տամ, —կրկնեցի իմ հարդմունքը:—
Ի՞նչ ես զու ետեւիցս ընկել:

Սակայն պառաւն առաջւայ պէս լուռ էր, և միայն մի քիչ
կուչ եկաւ:

Ես երեսս շուռ տւի նրանից և շարունակեցի ճանապարհս:

Եւ ահա իմ ետեւից դարձեալ լսում եմ նոյն թեթև, նոյն
համաչափ, ասես, դողունի կերպով ինձ մօտեցող քայլերի ձայնը:

—Էլի այն կինն է, —անցաւ մոքովս, —ի՞նչ է կպել նա ինձանից: —Բայց իսկոյն մոքումս աւելացրի՝ երեխ, կուրութեան պատճառով ճանապարհը կորցրել է և այժմ քայլերիս ձայնին ականջ դրած՝ գալիս է ետեիցս, որ ինձ հետ միասին մի մարդաբնակ տեղ դուրս գայ: Այն, այն. հենց այդպէս է, որ կայ:

Բայց մի տարօրինակ անհանգստութիւն հետզհետէ պաշարում էր սիրտս: Ինձ թւում էր թէ՝ այդ պառաւն ոչ միայն ինձ հետեւում է, այլ նա ինձ ճանապարհ է ցոց տալիս, նա ինձ հրում է մերթ աջ, մերթ ձախ—և ես ակամայ հնազանդում եմ՝ նրան:

Սակայն ես շարունակում եմ իմ ճանապարհը... Բայց ահա իմ առաջ, հենց ճանապարհիս վրայ մի բան սեխն է տալիս և հետզհետէ լայնանում է... աչքովս է ընկնում մի փոս... «Գերեզման»—կայծակի արագութեամբ անցնում է մոքովս: —Ահա թէ ուր է մղում նա ինձ:

Ես իսկոյն շուռ եմ գալիս: Պառաւն էլի կանգնած է իմ առաջ... Բայց նա հիմայ տեսնում է: Նա նայում է վրաս իւր մեծ-մեծ, կատաղի, չարագուշակ աչքերով... նայում է զիշատիչ թռչնի հայեացքով... ես մի քանի քայլ եմ անում դէպի նա, աչքս մօտեցնում եմ նրա երեսին, նրա աչքերին... Դարձեալ նոյն մթաղունած թաղանթը, նոյն կոյր ու բութ գէմքի գծագրութիւնը:

—Ա՛խ, մտածում եմ ես... այս պառաւն—իմ ճակատագիրն է: Այն ճակատագիրն, որից մարդս ազատուել չի կարող»:

«Ազատուել չի կարող, ազատուել չի կարող: —ի՞նչ չիմարութիւն... Պէտք է փորձել»: Եւ ինձ շպրտում եմ մի ուրիշ կողմը, ճանապարհս փոխում եմ:

Ես գնում եմ շտապ-շտապ... Բայց իմ ետեւը, մօտիկ, շմամօտիկ ինձ՝ լսում եմ էլի նոյն առաջւայ թեթև քայլերի շրշիւնը... Իսկ առաջս դարձեալ սեխն է տալիս նոյն փոսը:

Ես ճանապարհս էլի ծոռում եմ մի այլ կողմը... Եւ էլի նոյն շրշիւնն—իմ ետեւը. նոյն ահեղ բիծն—իմ առաջ:

Եւ վախս տռած նապաստակի պէս, ուր էլ որ ընկնում... լսում եմ նոյնը, տեսնում եմ նոյնը:

—Սպասիր, մտածում եմ ես: —Արի, խարեմ նրան. ոչ մի կողմը չգնամ—և մի ակնթարթում նստում եմ գետնին:

Պառաւն երկու քայլ դէնը՝ կանգնած է իմ ետել։ Ել ձայն
չի գալիս, բայց զգում եմ, որ նա այստեղ է։

Եւ ահա մէկ էլ տեսնում եմ, այն բիծը, որ հեռւից սկին էր
տալիս, լողում, սողում է դէպի ինձ։

Տէր Ասուաման և հեղինական ծիծաղը ծամածոել է նրա անառամ
բերանը...

—Զիս ազատուիլ։

Փետրւար, 1878 թ.

III

ԽՆՋՈՅՎՔ ՎԵՐԻՆ ԷԱԿԻ ՄՕՏ

Մի անգամ Վերին էակը մի մեծահանդէս խնջոյք էր սար-
քել իւր երկնաշէն, կապուտակ պալատներում։

Նա բոլոր առաքինութիւններին հիւր էր կոչել իւր մօտ։ Մի-
միայն առաքինութիւններին... տղամարդկանց նա չէր հրաւիրել...
մենակ կանայք էին հրաւիրւած...։

Ահագին բազմութիւն էր հաւաքւել-թէ մ.ծ, թէ փոքր։
Փոքր առաքինութիւնները մեծերից աւելի դուրեկան ու սիրալիր
էին։ Սակայն ամենքն էլ զոհ էին երկում—և իրար հետ քաղաքա-
վարութեամբ զրոյց էին անում, ինչպէս որ այդ վացել էր մօտ ազ-
գականներին ու ծանօթներին։

Բայց ահա Վերին էակը հիւրերի մէջ նկատեց երկու գեղեցիկ
կին, որոնք կարծես բնաւ ծանօթ չէին իրար։

Տանուտէրը այդ տիկիններից մէկի ձեռքն առնելով՝ մօտեցրեց
նրան միւս տիկնոջը։

«Բարերարութիւն»—ասաց նա, ցոյց տալով առաջինի վրայ։
«Ծնորհակալութիւն»—աւելացրեց նա, ցոյց տալով երկրորդի
վրայ։

Երկու առաքինութիւններին էլ անասելի զարմացան։ Այն օրից,
երբ աշխարհս ստեղծւել էր—իսկ աշխարհս հօ վաղնւց էր ստեղծ-
ւած—նրանք առաջին անգամն էին հանդիպում իրար։

Դեկտեմբեր, 1878 թ.

IV

Դ Ե Ր Ո Ւ Կ

Վրայ հասան ծանր ու մթին օրեր...

Յաւեր սե փական, ցաւեր սրտիդ սիրելի մարդկանց, ցուրտ
ու խաւար ծերութեան: Եւ այն ամենն, ինչ որ դու սիրում էիր,
ինչին որ անդարձ անձնատուր էիր լինում, այժմ խայտառակւում,
քայքայում է: Ճամբէդ ծուել է. ժամդ դուրս է գալիս:

Ի՞նչ անել ուրեմն: Վշտանամլ, սիրու մաշել: Դրանով ոչ քեզ
ոչ էլ ուրիշին օգնած կը լինեա:

Չորացող, կուչ եկած ծառի տերեներն էլ մանրանում ու
նօսրանում են, բայց կանանցն էլի նոյնն է մնում:

Կուչ արի և դու, թաղւիր ինքու քո մէջ, քո յիշողութիւնների
մէջ—և այնտեղ խորը, շատ խորը, կենդրոնացած սրտիդ յատա-
կում կը փայլէ աչքիդ քո նախկին, միայն քեզ մատչելի կեանքը.
կը փայլէ իւր հոտաւէա, դեռ տակաւին թարմ կանաչով. կը փայլէ
մի փաղաքշանքով, լի գարնան ուժով:

Բայց զգոյշ կաց... առաջ չնայես, խղճալի ծերուկ:

Յուլիս, 1878 թ.:

V

ԿԱՊՈՒՏԱԿ ԱՇԽԱՐՀ

Ո', կապուտակ աշխարհ, կապուտակ աշխարհ: Աշխարհ լուսնի,
աշխարհ մատաղ կեանքի և բախտաւորութեան: Ես քեզ տեսայ...
երազում:

Մի քանի հոգի նստած էինք սիրուն, զարդարուն նաւակի մէջ:
Սպիտակ առագաստը, կարապի կրծքի նման, բարձր ու ցածր էր
անում օդախաղաց գրօշակների տակ:

Ես չգիտէի, թէ ովքեր են ընկերներս: Բայց ողջ էութեամբս
զգում էի, որ նրանք էլ ինձ նման երիտասարդներ են—ուրախ և
բախտաւոր երիտասարդներ:

Ես նրանց ամենեւին չէի նկատում: Չորս բոլորքս տեսնում էի
միայն անեղբ, կապտափալ ծովը, որ ամբողջապէս ծփում էր մանր

ու մեղմ, ոսկեցոլ ծփումներով. իսկ գլխիս վերև—նոյնպիսի անեզր, նոյնպիսի կապուտակ ծով, որի երեսին, ասես ծիծաղելով, քաջայաղթ լողում էր փաղաքշիչ արեգակը:

Եւ երբեմն-երբեմն մեր մէջ բարձրանում էր ծիծաղ—բարձրաձայն և բերկրառառ ծիծաղ, ինչպէս աստւածների ծիծաղը:

Կամ յանկարծ մէկի շրթունքներից գուրս էր թռչում գողարիկ խօսքեր, բանաստեղծական տողեր՝ արտասանւած հրաշալի գեղեցկութեամբ, ներշնչած ոգելից ուժով... Կարծես ինքը երկինքն էլ ձայնակցում էր այդ ոգեսորութեան—և չորս կողմից էլ ծովն էր համազգած ծփծփում... Յետոյ գարձեալ տիրում էր երջանկալից անդորրութիւն:

Թեթև սուզւելով փափուկ ալիքների մէջ՝ առանջ էր սահում մեր արագավազ նաւակիլք: Նրան տանողը քամին չէր: Նրան վարում էին մեր սեփական, մեր խաղուն սրտերը: Ուր որ ուզում էինք, նա այն կողմն էր սլանում. սլանում էր ունկնդիր մեզ, ինչպէս կենդանի էակ:

Մենք ճանապարհին պատահում էինք կղզիների, կախարդական, կէս թափանցիկ կղզիների, որոնք թանկագին ահների, յակինթի ու զմրուխտի նման շողում, շողշողում էին: Բոլորակ ափերից արբեցուցիչ անուշահոտութիւն էր բուրում: Կղզիներից մի քանիսը սպիտակ վարդերի ու շուշանների անձրև էին թափում մեզ վրայ. իսկ միւսներից յանկարծակի վեր էին սլանում ծիածանի պէս երփնագոյն, երկայնաթեւ թռչուններ:

Թռչունները ճախրում էին մեր վերև. շուշաններն ու վարդերը հալւում էին մարգարտեաց փրփուրի մէջ, որը սահում էր մեր նաւակի կողքերով:

Մաղիկների և թռչունների հետ միախառն՝ մեր ականջին հասնում էին անհցշ ձայներ, անհցշքնքնցշ ձայներ... Մեզ թւում էր, թէ գրանք կանացի ձայներ են... Երկինքը, ծովը, բարձրում ծըփւող առագաստը, զեկի տակ քրքջացող ջուրը—այդ բոլորը մեզ սէր էին պատմում; սիրոյ, երջանիկ սիրոյ մասին խօսում մեզ հետ...

Եւ նաև, որ ամեն մէկիս սիրականն էր, ամեն մէկիս սրտի հատորն էր—նաև այդ ըուպէին այստեղ էր... այստեղ, մեզ հետ, աներեւոյթ և շատ մօտիկ ամեն մէկիս: Մի ակնթարթ էլ—և ահա նրա աչքերը կը փայլատակին. ժակիալ կը խաղաց նրա շրթունքներին.

նրա ձեռքը կը բռնէ քո ձեռքից —և քեզ իւր ետեից կը տանէ,
կը թոցնէ դէպի անթառամ եղեմի դրախտը...

Օ՛, երկնափայլ, կապուտակ աշխարհ. ես քեզ տեսայ երազում։
Յունիս, 1878 թ.։

VI

Խ Օ Ս Ա Կ Յ Ց Ո Ւ Թ Ի Ւ

«Ո՛չ իւնգֆրառուին, ոչ էլ Ֆինս-
տերաարհորնին դեռ մարդու ոտք չէր
դիպել»։

Ահան Ալպեան լեռների գագաթները... Սեպեզր քարափների
մի ամբողջ շղթայ... Ահան սարերի հէնց սիրտը։

Վերել, սարերից բարձր վուած է բաց-կանաչ, պայծառ ու
անխօս երկինքը։ Խիստ ու դաժան սառնամանիք է։ Կոշտացած ձիւնը
շղում, պէծ-պէծին է տալիս։ Զիւնի տակից տեղ-տեղ գուրս են
ցցւել սառցապատ, հողմալից ժայռերի դժնատեսիլ գագաթները։

Հորիզոնի երկու կողմերից, որպէս երկու հսկաներ, գագաթները
վեր ամբարձած՝ նայում են Խնդֆրառուն և Ֆինստերաարհորնը։

Եւ Խնդֆրառուն ձայն է տալիս իւր հարեւանին. —ի՞նչ նոր բան
կայ. դու աւելի լաւ ես տեսնում։ Խնչ կայ այնուղ, ներքեւում։

Անցնում են մի քանի հազար տարի —մի՛ րոպէ։ Եւ Ֆինստերաար-
հորն դողդղալով պատախանում է. —Ամպերն ամբողջապէս ծած-
կել են երկրի երեսը... Սպասիր։

Անցնում են էլի հազարամեակներ —մի՛ րոպէ։

— Իսկ այժմ, — հարցնում է Խնդֆրառուն։

— Այժմ տեսնում եմ. այնուղ, ներքեւում էլի նոյնն է, ինչ որ
առաջ էր։ Աչքիս մանր-մժուր, զոյն-զոյն բաներ են երեւում։ Զրերը
կապուտին են տալիս, անտառները — սկին. քարակոյտերը գորշագու-
նում են. իսկ նրանց մօտերքին դեռ խժվժում են էլի նոյն մըժ-
զուկները, հօ զիտես, այն երկուանիները, որոնք դեռ ոչ մի ան-
գամ չկարողացան պղծել ոչ քեզ, ոչ ինձ։

— Մարդիկ։

— Այն. մարդիկ։

Անցնում է հազար տարի—մի՛ բոպէ։
—իսկ մյժմ, —հարցնում է Խւնդֆրառն։
—Կարծես մժղուկները սպակսեցին, քիչ են երևում, —թնդում
է Ֆինստերարհորնը։ Ներքեւն աւելի բայց ու սպարզւց։ Զրերը
սեղմեցին, քչացան, անտառները նօսրացան։

Անցնում է էլի հազար տարի—մի՛ բոպէ։
—Ի՞նչ ես տեսնում, —ձայն է տալիս Խւնդֆրառն։
—Մեր առաջ, մեր մօտերքն, ասես, մաքրւեց, —սպատասխա-
նում է Ֆինստերարհորնը, —իսկ այնուեղ, հեռուն, հովիտների
մէջ գեռ էլի աչքի են ընկնում զանազան բծեր և մի բան շարժո-
ղութեան մէջ է։

—Հը՛, իսկ մյժմ, —հարցնում է Խւնդֆրառն, երբ անցնում է
միւս հազար տարին —մի՛ բոպէն։

—Այժմ լաւ է, —սպատասխանում է Ֆինստերարհորնը։ Ամեն
տեղ մաքրւել, շնորհքի է ընկել. ուր էլ որ նայում ես —սպիտակին
է տալիս... Ամենուրեք մեր ձիւնն է սպատել —մեր հարշ-հաւասար
ձիւնն ու սառուցը։ Ինչ կայ ու չկայ՝ սպատել է։ Այժմ լաւ է. խա-
ղնդ ու հանդիսան է։

—Լաւ, —սպատասխանեց Խւնդֆրառն։ —Բայց բաւական է,
ինչքան խօսեցինք, ծերուկ, ժամանակ է նիրհելու։

—Ժամանակ է։

Քնած են վիթխարի լեռները։ Քնած է և կանաչ ու լուսա-
փայլ երկինքը յաւետ լուսած երկրի վրայ։

Փետրուար, 1878 թ..

Ե Ր Գ

(ՀԱՅՆԵՐԻՑ) ԱԼՔԲՍԱՆԴՐ ՇԱՏՈՒՄԵՍԻԿ

Ծերուկ, ալեռ
Կար մի թագաւոր...
(Երգըս վաղուց եմ լսել, սիրելիք)
Ուժասպառ արքան
Կին առաւ իրան
Ծաղկի պէս բացւած՝ մի ջահիլ աղջիկ:

Ժիր, կապուտաչիկ
Կար մի մանկլաւիկ—
Նորա մէջ մատաղ արիւնն էր եւում.
Նև էր փափկասուն,
Զահիլ թագուհուն
Սիրով, եռանդով միշտ սպասաւորում:

Վերջ տամ այստեղ հին
Վաղուցւայ երգին.
0', նա հնչում է այնպէս վշտալից...
Նոքա բոցավառ
Սիրեցին իրար,
Եւ սպանւած ընկան արքալի ձեռքից:

ԼՈՒՐ—ԴԱ—ԼՈՒՐ

(Բրդական պօէմա ¹⁾)

Վ. ՓԱՓԱԶԵՍՆՑԻ

Այնուեղ—Սև ջրի չքնաղ եզերքներումն էր, որ ապրում էր
Հասօն; Երկրի սիրուն և քաջ պատանին էր նա: Ոչ մի մարդ նրան
չէր կարող զինաթափ անել: Աւազալը սիրո չունէր նրա հօտի
շուրջը ման գալ և ոչ իսկ գալը ոչխարի կողքին քարշ գալ: Հա-
սօն որքան որ բարի էր դէպի լաւը, այնքան էլ անգութ էր դէպի
չարը:

Սիրուն էր Հասօն, նոր ծագող արևի պէս չքնաղ: Երկրի աղ-
ջիկների խելքը գնում էր նրան տեսնելիս: Հապա նրա նւազելը;
Նրա «փող»-ից հանած ձայնելը կարելի է էր որ հրեշտակներն ունենային,
այդքան գրաւիչ, այդքան սիրայոցք: Չայներ, որոնք հոսում էին
մելամազձիկ, կլկլում էին որպէս հեղիկ վտակ և դալալում որպէս
սիրահար սոխակ:

Մարդ թէ անասուն, այդ ձայնը լսելիս, ակամաց մօտ էին
դալիս. քարանում ու աշխատում՝ էին չկորցնել ոչ մի խազը, ոչ մի
գեղգեղանքը:

Նստում էր Հասօն ժայռերի գլխին, աչքերը ուղղած լայն
հօրիզոնին. Սև ջուրը գալարապտոյտ ոտքերի տակին, զզզզուն զե-
փիւռը խաղում ճակատին...

1) Այս պօէման բարձրաձայն կարդալու ժամանակ, հարկաւոր է գի-
տենալ լանգաւոր գրւածքներ կարդալը: Կարդալը մեծ նշանակութիւն ու-
նի պօէմալի համար:

Եւ նա ածում էր:

Պէտք էր տեսնել թէ ինչպէս գամփոները գլուխները թաթերի վրայ, աչքերը սրնդին, դառնապէս լալիս, կնձկնձում էին:

Պէտք էր տեսնել թէ ինչպէս ոչխարներն այն անմիտ մոռանում էին ուտելլը ու մօս գալիս:

Հասօն քարերին էր դողացնում, Սև ջրի ալիքները յուզումն Բնութիւնն էր քարացնում, զեփիւռին ողբացնում. ամեն ինչ շարժում ու հրեշտակների նախանձը գրգռում:

Ալդպէս էր Հասօն:

Էլ ինչպէս ոչխարները չհնազանդէին սրնդի ձայնին:

Ինքը չէր շարժւում, ոչխարներին նւագով՝ կանչում էր կողքին:

Արածացնելու համար «Բէրիկը», ջրելու համար «Խօզաթ»-ը և հեզ անասուններին իր շուրջը ժողվելու համար ածում էր «Ռխարի կոչը»:

Ոչխարները լսելուն պէս թողնում էին ամեն ինչ, անցնում ամեն բան, գալիս Հասօնի շուրջը հաւաքւում:

Ալրում էր Հասօն այսպէս երջանիկ, հեռու մարդկանցից, բնութեան գրկում, լեռների կրծքում: Երջանիկ էր նա որպէս մի իշխան, սիրւած իր հօտից և նւիրւած իր երգերին:

II

Մի օր Հասօն տեսաւ աղաջի միակ աղջկան: Տեսաւ ու սիրահարւեց:

Սիրուն էր Զալիսէն: Կախարդիչ՝ աչքերը, սալւի էր բոյը, կամար՝ ունքերը, դողարիկ՝ թշերը:

Զալիսէն էլ տեսաւ Հասօնին. Զալիսէն էլ սիրեց Հասօնին:

Տիրեց Հասօն Կորցրեց աշխուժութիւն, կորցրեց գւարթութիւն: Օրերով պսոյտ էր գալիս մեծ պալատի շուրջը, թեկուզ ոչխարն այնտեղ էլ ուտելու խոս չգտնէր: Աչքը աշտարակին, նւազում էր տիրագին, սիրուը սրնդի մէջ զնում ու արտասում:

Զալիսէն էլ տանջւում՝ էր: Թագնւած լուսամուտի ետեռում, նա աչքը չէր հեռացնում Հասօնից, ականջը՝ նրա նւագից: Աչ ուտում էր և ոչ էլ խմում: տանջւում էր միայն:

Երկուսն էլ գիտէին որ շատ հեռու են միմեանցից, որ աղայի աղջիկը չոբանի կին չի լինիլ:

Բայց սէրը Ասածոյ կրակն է, շատ զօրեղ կրակ: Նա կորում-անցնում է ամեն հեռա որութիւն, թափանցում ամեն խորութիւն:

Սէրը ոչ հեռաւորութիւն է ճանաչում, ոչ էլ խորութիւն:

III

Հեռատես էր աղան ու խիստ խորամանկի: Շուտով նկատեց նա Հասօի սէրը: Բարկացաւ, կատաղեց, ուղեց սպանել յանդուզն չոբանին, բայց խոհեմ էր: Չուզեց իր տան անունը կոտրել յաւի-տեան ու մի չոբանի արիւնը մոնել լնդունայն:

Բայց ինչ կասէին եթէ իմանային որ մի չոբան նրա աղջկաց եաւիցն էր ընկել: Պէտք էր Հասօին հեռացնել. հեռացնել ինքնակամ, զոհ խորամանկութեան: Պէտք էր այնպէս մի խաղ սարքել, որ Հասօն թողնէր ինքը հեռանար ու մէկ էլ այդ կողմերը չգառնար:

Մտածեց աղան, երկար մտածեց ու գոտու հնարք: Մարդ ու զարկեց, կանչեց Հասօին ու ասաց նրան:

«Գիտեմ, Հասօ, ասաց շար աղան—գիտեմ, որ սիրում ես իմ աղջկան: Դու քաջ տղայ ես. լսել եմ լաւ սրինդ էլ ածում ես Աղջիկս քեզ կը տամ, միայն կը դնեմ մի սղայման: Լսել եմ. որ ոշխարները քեզ հնազանդում են ու սրնդիդ ձայնից գրավւած քեզ մօտ գալիս են:

«Գետնից մինչև այդ բարձր աշտարակը—տեսնում ես նրան—դնել կը տամ փայտեաց սանդուխտը. դու կը նստես այնտեղ—բարձրում, ոչխարներդ կը ժողովւին ցածրում: Ահա սղայմանը: Եթէ դու բարձրից, սրինդդ ածելով, կարողացար ոչխարներին սանդուխտի վրայով քեզ մօտ վեր հանել, այն ժամանակ աղջիկս քեզ հալալ, առ ու վայելիր:

«Աղա թէ ոչ՝ խայտաւակ եղիր, ինչ ունիս-չունիս հաւաքիր և քանի շուտ է այս կողմերից հեռացիր: Մի չոբան՝ աղայի փեսայ չի լինիլ—այդ էլ խելքիցդ հանիբա:

Հասօն ժպտեց, խոր գլուխ տւեց, «Տէր ես աղա»—ասաց—ասածիդ համաձայն հմ:

IV

Ենիկ տւեց աղան, փայտեայ սանդուխտը: — Եննսուն և ինն աստիճան ունէր նա: — Հասօից ծածուկ կրտքեց նրա մէջ տեղի մի աստիճանը. կոտրածը թոյլ կերպով դրեց իր տեղը այնպէս, որ ոչինչ չէր երկում, բայց մի թոյլ սեղմում հերիք կը լինէր փայտը ձգելու, և մի աստիճանից դէպի միւսը՝ մի արշինաչափ տեղ բաց թողնելու. այդպիսով էլ ոչխարների անցնելը անհնար դարձնելու:

0', չար էր աղան. հպարտ էր հպարտ... Այդ խարդախութիւնը արեց չար աղան: Հասօին աշտարակի ծայրը հանեց, Զալլիսէին սկառշըգամբի գրայ ու ասաց չոբանին: «Ահա Զալլիսէն, խրախուսւիր, հալալ է քեզ նա, թէ ասածս արիր»:

Զալլիսէն տեսաւ Հասօին, ժպակեց նրան, կարմրեց ու նշան արաւ: Իմացաւ չոբանը որ Զալլիսէն էլ սիրում էր իրեն: Սիրուն ուրախութիւնով լցւեց: Առաւ սրինդը, բերանին դրեց, քէօլոզը ծռեց ու նւազն սկսեց:

Թնդաց սար ու ձոր, շարժւեցին ծառեր, դողացին քարեր. յուզւեց չար աղան, խելայիղ՝ Զալլիսէն. քիչ մնաց թոնէր ցած ու գնար ոչխարի պէս ընկնէր Հասօի ոտքերին:

Նարժւեցին ոչխարները, մօտեցան սանդուխտին ու սկսեցին միմեանց ետեւից բարձրանալ աշտարակին ի վեր:

V

Լծ, լօ, լօ Հասօ, Սլւ-ջրի չոբան, սար ու ձոր մղկտացնող ջիւան. գաղան մեղմացնող, քար ու ծառ յուզող չոբան: Խնչու ցիւմարի պէս հաւատացիր աղացի: Խնչու բարձրացար ծայրը աշտարակի: Զուր դառնայիր մօրդ փորում, Հասօ: Նրանի չմոնէիր այս աշխարհը որ լիքն է աղաներով: Երանի չտեսնէիր արեւի փայլը որ քեզ այրեց-խորովեց, Սլւ-ջրի ալիքները որ քեզ արորեց. շամբի օրօրւելը, որ քեզ կախարդեց: Լծ, լօ, լօ... մի՛թէ կրմանջը¹⁾ այնքան նամերդ²⁾ եղաւ, որ սէրը ծաղրեց: Միթէ նրա խիղճը

¹⁾ Քիւրզ:²⁾ Ոհաղնիւ, տմալովի:

կորաւ. Աստուածը մոռցաւ։ Խեղճ Հասօին ինչքու Շէլթանի բաժինն արաւ, աշխարհը լայի ու սուզի մեջ դրաւ... լօ, լօ...

Հայ բարձրանում էին ոչխարներլ, հրում միմեանց։ Սրնգի ձայնից դիւթւած մոռանում էին իրանց տակի անդունդը։ Աչքերը Հասօին ուղղած, բարձրանում էին։

Աշխարհը զմայլած դիտում էր։ Զար աղան քար էր կտրել։ Իսկ Զալխէն մինչև կէս մէջքը կռացել, ձեռները Հասօին էր պարզել ու գոչում էր։

—Ես քոնն եմ՝ Հասօ, քոնը յաւիտեան։ —Ես քեզ սիրում եմ։ այնքան եմ սիրում, որքան չէր սիրում Լէյլան՝ Մէջլանին։ —Ես քեզ սիրում եմ. այնքան եմ սիրում, որքան չէ սիրում թիթեռը ճրագին, սոխակը՝ վարդին, աշխարհն՝ արևին ու բոյսը՝ հողին։

«Դու ես իմ ճրագը, դու ես իմ վարդը. դու իմ արևն ու դու իմ հողը»...

Լսում էր Հասօն, սիրուը խշխում։ Ածում էր, ածում, նւազը ուժովցնում։

Եւ ոչխարները բարձրանում էին, շարքով բարձրանում։

VI

Հասաւ նէրի¹⁾ այծը կոտրած ասաիճանին։ Զգաց որ մահը առջեն է, բայց դիւթւած էր—ոտքը դրեց փայտի վրայ։

Շարժւեց փայտը. լուեց մի մայիւն և սիրուն նէրին պտոյա գործելով օղի մէջ, գնաց ջախջախւելու անդունդի քարերի վրայ։

Մղկաց Հասօն։ —«Հէյ վախ, իմ սիրուն նէրին կանչեց սրտաբուղիս. բայց աչքը երբ Զալխէին ընկաւ, մոռցաւ նէրիին։ Սրինգը դրեց բերնին ու սկսեց ածել։

Աշխարները տեսան նէրու դրութիւնը, կանգ առին, մտածեցին ետ գնալ, բայց դիւթւած էին, առաջ գնացին։

Փորձեց առաջին ոչխարը, ետ ետ քաշւեց, առջեկի ոտքերը բարձրացրեց և ուղեց թռնել։ —Մի մայիւն արձակեց և գնաց այծի ետեից։

—«Վախ, վախ, իմ անմեղ ոչխար, մղկաց Հասօն։ Նայեց Զալխէին, մոռցաւ ոչխարին, ոյժ տւաւ «փող»-ին։

¹⁾ Առաջնորդող այծ։

Փորձեց երրորդ ոչխարը, մինչև իսկ թռաւ, բայց կպաւ աստիճանին, մի պայոյտ գործեց, խղճուկ կերպով մայեց ու գնաց գէպի խոր անդունդը:

«—Թռէք, անցէք իմ սիրուն ոչխարներ—երգեց Հասօն—թռէք իմ թաւամաղ գառնուկներ, եկէք ձեր տիրոջ մօտա:

Ոչխարներն էլ չէին շարժւում. ետ ետ էին գնում:

Կատաղեց Հասօն—բացւածքը չէր տեսնում—որչափ սէր ունէր ու զգացմունք, ներշնչեց սրնգին, զեղզեղանքներով քարացրեց բնութիւնը... բայց ոչխարները ետ ետ էին գնում:

Ամաչեց աղան իր գործից. կիսամեռ եղաւ Զալիսէն յուսահատութիւնից:

Փոխեց Հասօն եղանակը:

Այժմ ինքն էլ չդիտէր ինչ էր ածածը:

Դաղրել էր քամին, կանգնել էր ջուրը, լոել ամեն ինչ:

VII

Ո՞վ չէ լսել «Լուր-դա-լուրը», որին չի դիմանալ ոչ միքար սիրտը: Որին լսելով կը թրթռայ սիրող սիրտ, կը մարի: Որին լսելով կը դժւի սիրող աղջիկը, կը դժւի և դէպի: սիրողը կը սլանաց:

Աքանչելի է նա. երգերի փառքն է նա:

Հրեշտակների մրմունջը, Հասօնի ողին է նա...

Եարժւեցին ոչխարները, զլորւեցին շառերը:

Եարժւեց և Հասօն, կռացաւ, տեսաւ բացւածքը:

Հասկացաւ ամեն ինչ, նայեց աղացին:

Զգաց որ Զալիսէն կորած էր իր համար, ինքն էլ աշխարհի համար: Եարժւեց Զալիսէն էլ, նայեց աղացին, նայեց Հասօնին:

Զգաց որ Հասօն կորել էր իր համար, ինքն էլ աշխարհի համար:

Եւ լսեց ամեն ինչ...

«Լուր-դա-լուրը» կարւեց, նրա խազի վերջին թռթռումը գնաց. մեռնելու օդի մէջ...

Յետոյ... լսեց մի ճիչ:

Ու երկու մարմիններ արագ պայոյտ գործելով օդի մէջ, գնացին միասին, ջախջախւելու անդունդի խորքելում... և միմեանց դրկում:

Հասօն և Զալիսէն էին դրանք...

ԳԵՂԸ ԿԱՆԳՆԻ—ԳԵՐԱՆ ԿԸ ԿՈՏՌԻ

ԳԱԲՐԻԵԼ, ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆՑԻ

Աղամ՝ պապէն առաւտուր, երբ ժամից տուն եկաւ, մի կտոր հաց մի քիչ կարագի հետ ձեռն առաւ, ու հորթիկները քշեց դաշտու Հորթիկները թւով երկու, քանի գիւղի միջումն էին, ճանապարհով ուղիղ գնում էին, բացց, երբ խոսոր-մոտոր փողոցներից դուրս եկան ազատ դաշտու, ամեն մէկը նոցանից մի կողմ փախան։ Ծեր պապէն խղիւզալով մինչև, փայտը նեցուկ, մէկին հասնում էր, միւսը արդէն հակառակ կողմն էր գնացած լինում։ Հեռւէն ոստոստելով եկող Մատուրը տեսնելով այս բանը, մօտեցաւ ծերունուն.

—Պապէ, ի՞նչ կըտաս, որ հորթիկները քշեմ տանեմ հասար։

—Հէյ, շան որդի, դու մեր խնձոր գողացողը չես։

—Զէ, էն Օսուածը, պապէ, ես ձեր խնձորները չեմ գողացել։ Ես պատի մօս խաղում էի, ձեր Մայրանը ինձ կանչեց, ասաւ. արի ինձոր կեր։ Դու էլ եկար բռնեցիր, խնձորները խլեցիր։ Հիմի էլ ձեր հորթիկները հասար չեմ տանի, ասաւ մանուկը և շրջեց փախչելու։

—Տօ կանդնի է... շրւն, շան որդի, ի՞նչքան ուզում ես քեզ ինձոր կըտամ, միայն հորթիկները տար հասար։ Բալա ջան, հիմի ինձոր քաղելու ժամանակ չէ, թող մնայ, հասնի, էլի դուք կերէք, հօ ես իմ գերեզմանը տանելու չեմ։

—Զէ, պապէ, թէ ինձ խնձոր կըտաս, հորթիկները կըտանեմ հասար, թէ չէ, չեմ տանի։

—Լաւ, կը տամ, կը տամ։

—Որ մէկ էլ եկայ ձեր այգին Մայրանի մօտ, հօ էլ ականջ-
ներս չես քաշի:

—Զէ:

—Քէչ, քէչ, հա-այ, ձեր բողազը, սորւեր էք պապէին, որ
վազել չկանայ, ձեր վիզը կը կտրեմ, փայտը ձեռին արագ պալտե-
լով և օգում շրջան գծելով, Ծատուրը հորթիկներին խռիկ տւեց
դէպի դաշտը:

—Փառք Քեզ Ասուած, ինքն իրան մրթմրթում էր ծերը մա-
նուկի հեռանալուց յետոյ, զրուստ որ աշխարհը փոխել է: Ո՞վ էր
տեսել մեր ժամանակին, որ տասը տալեկան ազան, մինչեւ ինձոր
չխոստանաս, քեզ չլիի, հիմի ամեն բան յեղաշրջւել է, առն մարդ
դէպի իրան է քաշում:

Հասարը, ուր հորթիկները տարաւ Ծատուրը, երեք տարի սրա-
նից առաջ բացարձակ դաշտ էր: Գիշի անասունները ազատ գնում
էին այնտեղ արածելու: Բայց մի քանի տարի առաջ Խնութաց մուլ-
քառէր Հաջի Միրզա Հուսէյն բէկը կամաց-կամաց սկսեց հրատարա-
կել, որ այդ հողը իրան է պատկանում: և անցեալ ոչ միւս տարի
մի օր գիւղացիները տեսան, որ մօտ յիսուն թուրք բանւոր սպարս-
պում են այդ հողը: Տանուտէրը գիւղում չէր, ամեն մարդ իր ցա-
ւին էր դնացել, խօսող չեղաւ մինչեւ տասն օր, երբ Հաջի Միրզա
Հուսէյն բէկը մօտ քսան խալւար ցործատեղ պատել տւեց: Այս անց-
քից յետոյ, Հաջի Միրզա Հուսէյն բէկը, թէպէտ միշտ հաւատա-
ցնում էր, որ հողն իրան է պատկանում: որ սրա համար կան դեռ
պարսկական զարակէք, որ զեմիկմէրն (հողաչափ) հասաւատել է այս
թղթերը, բայց գիւղացիք չէին լսում և միշտ այդ հողն արածե-
ցնում էին, Երկու տարի այսպէս անցել էր, բայց այսօր Հաջի Միրզա
Հուսէյն բէկը հրամացեց իր ծառաներին, որ այլ ևս գիւղացիների
անասունները չթողնեն հասար և ընդդիմադրողներին ծեծեն:

Ծատուրը, հորթիկները նոր արած հասարը, ուզում էր յետ
դառնայ, որ գուրս եկաւ Հաջի Միրզա Հուսէյն բէկի ծառայ Սարդարը:

—Տօ, շան որդի, բօլ չէ, էս ձագ ու հորթիկները անէք խալ-
խի հասարի մէջ:

—Է, ինչու խալխի, պատասխանեց Ծատուրը, հասարը գեղա-
կանինն է, էլ:

— Ասա, շան ձագ, դու ի՞նչ ես հասկանում, գիւղի հասարն մըն է, ուրիշինը մըլը Դէ, հայդէ, — կը գամ ականջներդ քոքահան կանեմ:

— Ինչու չեմ հասկանում, չգիտեմ, որ քո աղին ուզում է մեր գիւղի հողը Խլի, — կլումնք որ:

— Քէչ, քէչ, շան մալեր, դէ զուս ելէք, ասելով, Սարդարն ակսեց խորիկ տալ հորթիկները, դոմչի ձագերը, խոզի դոճիկները ու գառները:

— Տօ, ձագ ու հորթկան, ասում եմ, ձեռ մի տուր, է, գոռում էր Ծատուրը ու Սարդարի խրկած անասունները յետ դարձնում:

Մօտ կէս ժամ Սարդարը չէր կարողանում անասունները հասարից դուրս բերել. Ծատուրը չէր թողնում, վերջապէս նա բարկացաւ, իր չարաձմի հակառակորդին ծեծեց, հանեց դանակը ու միքանի անասունների պոչ ու ականջներն էլ կտրեց: Անմեղ հորթիկների պոչերը մի թիզ կտրում էր գցում: Նա մտաբերեց Հաջի Միրզա Հուսէյն բէկի սաստիկ ասպարանքը ու բոլորին էլ վիրաւորեց: Ազատ շմբացին անգամ խոզի գոճիկները:

Ծատուրը լիարդա զատառ վազեց գիւղ:

— Հայ, հաւար... Սարդարը հասարում գեղի ձագ ու որթկան պոչ ու ականջը կտրեց: Աղամ պապէ, ձեր չալ որթիկը արնի մէջ շաղաղւել է. Գէլօ, Կակօ, մօրքուր Սալթի, քաւորի մէր, գնացէք-հասէք:

Մինչ այս լուրը գիւղի մէջ տարածւելը, վիրաւորւած կեն-դանիներն էլ լցւեցան փողոցները: Հորթիկները, ականջները ու պոչերը արիւնոտ, փողոցներում վազվակերպ բուբուռում էին, գոմչի ձագերը նոյելով կամաց-կամաց քայլում: Մեծ աղաղակ բարձրացրել էին գոճիկները: Նրանք ջղջղում էին ու կոկուռ: Անգուրացել էր մանաւանդ մի գոճիկ, որը առաջ սիրուն էր, և որը այսօր փողոցէ փողոց փախչելով, արիւնոտ ականջը ցեխին էր քսում ու նայողի ծիծաղը յարուցանում:

Ասում են, եթէ կամենում ես գիւղացի կնոջ պատժել, նրա կթած կաթը թափի, իսկ եթէ ուզում ես զայրացնես, որ Ազամայ տարւայ խորածը հանի հողի երես, ձագին կամ հորթկան ծեծի:

Այս դէպքը կանանցը գժւացրեց։ Գիւղի զանազան թաղերում նրանք ճշլճողը զցեցին։ Եմ գառի ականջ կտրող որդիդ մեռնի, իմ ձագի ականջ կտրող, ձեռդ կուշտ փորի վրայ չգնես, որդիդ թոնրում խաշ ու խորով ըլլի։ Նրանցից մի քանիսը վազեցին դէպի Հաջի-Միրզա Հուսէյն բէկի տունը, սրանց հետևեցին միւսներն էլ և բոլորը հաւաքւեցին։ մուլքատիրոջ բարձր դարւազի առաջ։ Հաջի-Միրզա Հուսէյն բէկը հրամացեց, որ դռները փակեն, այդ անզգամեներին ներս չթողեն, և ինքը գնաց տան վերին յարկը։

—Հայ ես քու մեռլի գլխին, շան որդի, քո սատկածին, դու մեր տները աւերեցիր, դիւանխանի շուն, ստախօս, կեղծաւոր քու փակ, մեզ հող ու ջրից զրկեցիր, մի կտոր հող մնացել է, էն էլ ուզում ես պատես։ Աստած արդար դատաւոր է, քո որդիքը չեն ուտի, գուգոռում էին գիւղի կանացքը և, որը քարը, որը փայտը խփում գիւղի մլքատիրոջ տան պատերին ու դռներին։ Նրանց մօտեցան մի քանիսը գիւղի ծերերիցն էլ, և Հաջի-Միրզա Հիւսէյն բէկի հօր ու պատի սսկորներից ձեռ չեին քաշում, մինչեւ որ յանկարծ, սպիտակ ձին հեծած, դուրս եկաւ տանուտկը։

—Խնչ է, հաւաքւել էք այստեղ, գնացէք ձեր տները, բարկացաւ նա, և բոլորը ցրւեցին։

Հաջի Միրզա Հուսէյն բէկի վարմունքի լուրը շուտով տարածւց հանգը. գիւղացիները բանատեղում յայտնում էին իրանց անբաւականութիւնը և բողոքը։ Նուտով հաւաքւեցին մի խումբ շինականներ Համբօջի մօտ—Հաջի Միրզա Հուսէյն բէկը շատ անստածութիւն է անում, ասում էր Աղամբ։ Ոուտ տեղէն մեր գիւղը խլեց, մուլք զրել տւեց, մեր հողերի վրէն ջաղաց շինեց ու չի թողնում, որ գիւղի մարդն էլ շինի։

—Անաստածութիւն, որ ըստնց անաստածութիւն... էն տարին թանգութիւն էր, գնացինք կուշտը, երկու հարիւր մանէթից կոպեկ պակասեց ցորեն չուեց, վրաներս էլ շահով գրեց, ասում էր նորթօն։

—Տօ, մենք—հալա փառք Ասոծու, ասում էր Համբօն, Աստած հայ քրիստոնեային մի կտոր հաց է տւել, թէ լաւ, թէ վաս-

դրա պարտքի տակից պրծանք, բա մօտի գեղրանքի թուրքերը, իսեղճերի վրէն միշտ աւելացնում է և շահին շահ գնում. մեր խոնախա Ալին դրանից ուժ մանէթ փող էր առել, ուղիղ հօթանասուն երկու մանէթ տւեց, որ ազատուեց:

—Մի ուրիշ տեղ գիւղացիները աւելի տաք էին վիճում:

—Հաջի Միրզա Հուսէյն բէկը մեր տները աւերեց, ասում էր Աքլոր Մէլքոնը, էն է պակաս, որ մեզ տանի իրեն կնիկ անի:

—Հա, աղբէր, էդ է պակաս, ասում էր բարեկամը, մեր գիւղի ջրի, հողի զործին խառնում է, հարևաններին իրար հետ թշնամացնում է, խօսում ենք՝ ծեծում է, սրա ձեռին քաշել չի լինի:

—Լաւ կը լինի, որ էս զիշեր բոլոր գիւղով հաւաքւենք, դրա դրած պատերը քանդենք, թող ի՞նչ անում է, անի:

—Լաւ: Կ'ոչ պէտք է անի, զեղը կանգնի, —գերան կը կոտրի:

—Շատ լաւ: Մենք արդար կողմն ենք, դատարանը մեզ կը պաշտպանի:

Յունիսի երեկոյ էր: Հով զեփիւռը հազիւ տատանում էր ծառերի տերեւները: Լուսինը, սկարզ ու սպիտակ, հանդարտ ցոլում էր երկնակամարի վրայ: Բիւրաւոր աստղեր վառ փայլում էին ու պըստ պըզում: Լուսին հանդարտութինը տիրել էր Խնուժում: Ընտանիքները կով ու ոչխարները կթում, գուրսը կապած չարդախների վրայ լուսնի լոյսին լնթրում էին: Գիւղի մէկ թաղումը միացն, տանուտէրի տան մօտ, մեծ աղմուկ կար: Այստեղ ժողովւել էին համարեա ողջ գիւղականը:

—Մուխսի, ասա, ի՞նչ ես ասում:

—Ե՞նչ ասեմ, ես Հաջի Միրզա-Հուսէյն բէկի... էն... գնանք նրա դրած պատը, տունը, զուռը քանդենք, թող մեր գեղից կորչի, գնա!

—Թողէք, տեսնենք կակօն ի՞նչ է ասում, աշխարք է տեսել:

—Որդիք, ես հարիւր հինգ տարւայ մարդ եմ, ինձ էլ խանի-Խէեն ասում, քանի խանի մօտ ծառացել եմ, քանի նաշալնիկ, մով ըով, գոբերնատոր եմ տեսել, Հասան խան Սարդարի մօտ ձեռովս չորս անգամ դիւան եմ կտրել: Էլ պտի իր անունը գետին չտայ, պտի շթողի, որ ամեն մարդ իր վրէն ձեռ վերցնի: Ասուած էլ ժողովրդի գանգատը կընդունի, թագաւորն էլ: Պատական մէնք լսել

ենք. «գիւղը կանգնի—դերան կը կոտրի»; Հաջի Միրզա Հուսէյն բէկն էլ մեզ նման մարդ էր. Սարդարի մօտ էլաքչի էր: Մովովը, էս ժամանակ ով էր գիր գիտում, տարաւ իր մօտ միրզա: Էլաքչի Հուսէյնը գէ, գէ, դէ առաջացաւ, հարստացաւ, որից ազնւական գրւեց և իրան Աստծու երեսից գցեց, շատ անիրաւութիւններ արաւ: Մենք, աղքատ ու աղքատ, մեզ ինչքան զօռ ուեց, բաւական չէ, հիմա մեր վերջին կտոր հողն էլ է խլում: Ես էկուց-էլլօր մեռնելու եմ, ինձ թաղելու տեղ կը լինի, համա դուք մնալու էք, ձեզ ու ձեր որդքին մի օր լացէք, թէ չէ, դռնէ դուռ հաց կը մուրաք: Որ էլլիկով մէկ ըլլէք, Աստած էլ ձեզ կը լսա.

—Իուք էլլիկով մէկ էլէք, ես Հաճի Միրզա Հուսէյն բէկին էս ահաթին մորթեմ, թէ թագաւորը ինձ մի բան ասան, հնչեց Ենգօի ձայնը:

—Գնանք, գնանք, էս սհաթին հասարը քանդենք:

—Ամէնով էգակս կանգնել, հասարն ուզում էք քանդել, բարակի (գուցէ) մուածում էք, զրանից թնչ կը ծնի, շեշտելով խօսքերի վրաց միջամտեց Համբօն. չասէք, թէ ծառացութիւնից դուրս է եկել... Հաջի Միրզա Հիւսէյն բէկը,... բոլոր խաները նրա աղքականներն են, բոլոր ծառացողների հետ էլ ծանօթ, բարեկամ է... Նրան թողած՝ մեզ չեն պաշտպանի, առասի օրէնքն էլ ինքնազլուխ պատ քանդողին պատճում է: Եկէք, գնանք գանգատ, էլ ուրիշ ոչինչ:

— Տօ, թնչ ես ասում, Համբօ քեռի, կնիկներուցս էլ է ամաշենք. խօսելիս մեզ ասում են, թէ տղամարդ էք, թնչպէս է Հաջի Միրզա Հուսէյն բէկը ձեր հողը խլում է, գուում էին բոլորը:

Այս աղմուկը անվերջ շարունակւում էր, գլիր Գասպարը գիւղը թաղէ թաղ շրջելով, բարձր ու ձիգ ձայնով կանչում էր. «Աստած սիրողը, Քրիստոս պաշտողը գայ տանուտէրի տունը հա, հա, Աստած սիրողը, Քրիստոս պաշտողը գայ մէլիք Գէվօի տունը հա, հա»: Տանուտէրի տան առաջի ամբոխը կամաց-կամաց բազմանում էր: Ծէրերը, կանայքը, երեխաները, դաշտում մնացած բանւորները, կիշերայ այգեստանները—բոլորը ժողովւեցին: Աղմուկից իրար չէ ին հասկանում: Աերջը բոլորի ձայնը կտրեց տանուտէր.

—Թէ որ զեղով մէկ ըլլէնք, ես իմ տունը, երեխաները կըդը-

ներ, գեղի խօսքը առաջ կը տանեմ, լսկի մի խան ու բէկից էլ չեմ վախենայ, թող էլը (հասարակութիւն) իմ քամակին կանգնի, ևս սհաթին գնանք, հասարը քանդենք, — թող ինձ բանա զցեն:

— Ողջ էլլիկով մէկ ըլլենք, մէկ ըլլենք:

— Ո՞վ մեզ հետ չէ:

— Հաջի Միրզա Հուսէն բէկի ծառայ Սարդարը:

— Թաղեմ Հաջի Միրզա Հուսէն բէկի զլուխը, մէջ մոտաւ Սարդարի կինը, նա իր հացը հօ մեզ չի տայ: Իմ մարդը տասն և հինգ տարի է նրա մօս ծառայում է, իմ երեխէքս տկլոր մեռնում են, մէկին շոր չի տալիս, իմ մարդը տանը չէ, ես նրա վտխարէն եկել եմ, էլլիկը մեռնի էլ, ապրի էլ մենք հետն ենք, — ես էլ ձեզ հետ կը գամ հասար քանդելու:

— Նանամ օլասան (մայրս լինիս), պատասխանեցին գեղացիները:

— Յաճախ Հաջի Միրզա Հուսէն բէկը դրդուել էր գիւղացիների զգացմունքները: Այսօրւայ զէսլքը մի չնչին պատրւակ էր նրանց մինչև այժմ փակւած զայրոյթը երևան գալուն: Նոքա վճռեցին որ ամենքով հկեղեցում երլւեն, քանի որ ուժերնին կը պատի, միաբան բողոքեն գիւղի հարստահարողների դէմ և իրանց հողը շոան:

— Երեխէս կը ծախեմ, բանտում կը պատկեմ ու էլի խօսքը առաջ կը տանեմ, գուռում էր Աքլոր-Մելքոնը:

Լուսինը իր շուրջը անում էր երկնակամարի վրայ: Գզիր Գասպարը շարունակում էր գուռոցը: Յանկարծ գիւղական եկեղեցու դանգերը հնչեցին և նոցա բարակ ու մելամաղձոտ ձայնը պարզ օղով տարածւեց հետու գաշտերը ծանուտէրի դրան բազմութիւնը լցւեց գիւղի աղքատիկ եկեղեցին: Մի խումբ գիւղացիներ շուտով ձեռքերի վրայ բերեցին դիւղի ծեր քահանայ տէր Յարութիւնին: Տէր Հայ-Հօյը, երիտասարդ քահանան, դիւղի բանին չէր խառնում: Զեթի կանթեղը ի-ր ազօտ լոյսը տարածեց գիւղական աղքատ եկեղեցում: Տէր Յարութիւնը, փառաւոր, ճերմակ միրուքով սեղանից սկսեց Աւետարան կարդալ: Յորդ արտասունքը հոսում էր նրա աշքերից և ճերմակ միրուքի վրայից թափում գետին: Ողջ գիւղը աղօթում էր: Ծեր, պառաւ, երիտասարդ, խուռն լցւել էին եկեղեցի: Տանուտէրը, Համբօն, Աքլոր-Մելքոնը, Բարեղամը խելքատար

կանգնած էին սեղանի մօտ: Խանի Խչէն աշքերից կայծակներ թափելով, երկու ձեռը վեր բարձրացրած աղօթում էր: Աղամ պապէն չոգած, զլուխը գետնի վրայ, տափացած «ու մի տանիր զմեղ ի փորձութիւն» էր լալով արտասանում: Վերջը քահանան ամէն ասելով կորեց Աւետարանը: Խորին լուռթիւնը տիրեց եկեղեցու մէջ:

—Դէ, որդիք, շարունակեց նա, եկէք այս սուրբ Աւետարանի վրայ երդւեցէք, որ միաբան լինէք, չարը ձեզ չխարի, որ էլլ (հասարակութեան) օգուտը թողած, այլին չպաշտպանէք:

—Ամենից առաջ գնաց տանուաէրլու

—Այս սուրբ Աւետարանը իմ տունը քանդի, որդիները սպանի, ևս ժամ ու պատարագի արժանի չլինեմ: Թէ այս բանից յետ դառնամ, գիւղի օգուտը թողած, իմը կամ ուրիշինը բռնեմ:

Նրան հետեւեցին Համբօն, Աքլոր. Մէլքոնը, Թորթօն, Աղամը, Բարիզամը և միւաները: Երկուողները դուրս էին գալիս և պարիսպ քանդելու համար իրանցը հարկաւոր զործիք ճարում: Եռւառվ մի ահազին բազմութիւն, որը բահով, որը թիակով, որը կացինով զիւղից զուրս եկաւ և մօտ վեց հարիւր հոգի տղամարդ, կին, երեխայ ուղերդւեցին դէպի հասարը: Ծատուրը, Մայրանի և գիւղի միւս երեխաների հետ, ամենից առաջ էր վազում և Հաջի. Միրզա. Հուսէյն բէկի գլխին զանազան սպառնալիք կարգում: Նրանց հետ գնում էր ասանուաէրը իւր բոլոր գիւղացիներով, ամենից ետ էին Խանի. Խչէն ու Աղամ պապէն: Խրանց զզիր. Գասպարը, երկար փայտը ձեռին, Սելիքին էր զովաբանում, և սաղ լվի էլիկը ասելով, զարմացք յայտնում՝ նրա այսօրւաց միաբանութեան վրայ:

—Հիմա թող մեանեմ, թէ իմ աշքի առաջ ժողովուրդը հասարը քանդում է, էլ ուրիշ փափագ չ'ունիմ, ասում էր խանի. Խչէն:

—Եսո էլ մեր ազէն ես, ի՞նչ անենք, որ մեր հացն էլ ես կարում: Իո մենք չենք կարող ողջ էլը թողի, քեզ բռնի, ասում էր Սարդարի կինը:

Սմբոխը, հասաւ թէ չէ պարսպին, ձեռք տւեց քանդելու: Եինականները աշխատում էին զարմանալի եռանդով: Յիսուն մարդու տասն օրւան դրած պատը, վեց հարիւր մարդը մի ժամւայ միջոցում քանդեց, տափաղաղ արաւ: Օրւայ աշխատութիւնից յոգնածութիւնը բոլորովին աշքի չէր ընկնում, որը կուրծքն էր դէմ:

տալիս պատին, որը թիով հողը գցում, որը քլունդը պատի տակ տալիս բաշաւափ կոշտերը իրար վրայ շրջում։ Ամենից եռանդուն աշխատողները կանացք ու երեխաներն էին։

Առաւօտը, երբ արեգակը իր սպիտակ լոյսը սվասեց Խնութի վրայ, Հաջի-Միրզա-Հուսէյն բէկի հասարի տեղում միայն չոր հոդն էր ճերմակին տալիս։

Վեց ամիս աւելց խնութցիների ու Միրզա-Հուսէյն բէկի դատը Վերջինիս պաշտպանում էր նահանգի ամենածշմարիտ հաց փաստաբանը, որ ամենայն խօսակցութեան մէջ, երբ նրան ասում էին, թէ բէկի վարմունքը անիրաւացի է, պատասխանում էր, «իմնդրեմ ինձ ասէք, պատն մվ է դրել, բէկը, ուրեմն ոկտոք է նրա իրաւունքները պաշտպանւին»։ Նա անգամ խորհուրդ էր տալիս, որ հայերի կողմից արած այսպիսի անիրաւացի զործերում, անպատճառ հայերը թուրքերին պաշտպանեն, որանով թուրքերի սիրտը գրաւեն, որ երկու ազգութիւնների միջից թշնամութիւնը վերանաց։ Խնութցիները լնկել էին մի ժամանակ զաւառապետի օգնական եղած, այժմ փողոցացին փաստաբան, Գէորգ աղի ձեռքը։ Վկաներ էին կանչւած, որոնցից թուրքերը ճարպիկ խօսեցին յօդուտ իրանց հաւատակցի, իսկ հայերը, ոչ մեկն էլ մինչև այսօր դատարան չուսած, վախեցան, շշկւեցին, իրար հակառակեցին, անսպէս որ նոցացուցունքից մի որ և է եզրակացութեան գալ անկարելի էր։ Այսօր նահանգական դատարանը վերջնական վճիռը կարդաց։ Վիճելի հողերը ճանաչել որպէս բացառիկ սեփականութիւն Հաջի-Միրզա-Հուսէյն բէկի, որին և յանձնել խլելով գիւղացիներից։ տալ նրան իրաւունք պահանջել խնութցիներից իրանց վնասները, իսկ տանուտէր Գէւօի ապօրինի զործունէութեանց մասին ժողովուրդ գոգուելու նպատակով՝ յայտնել դատախաղին, նրա վրայ քրէական դատ սկսելու համար։

ԵԼԲԵՐԴԻ

ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՊԱԶՅԵԳԻ

Թարգմ. ՄԿՐՏԻՉ ՆԱԽԱՍԽ ԴԵԱՆՑԻ

Աշխղը քիստերի մի գիւղ է, որի բնակիչներին բաւականի ժամանակ է ինչ որ անտառոտ տեղից՝ ծառազուրկ դաշտի վրա վերաբնակեցրին։ Այս գիւղում բնակութիւն հաստատեց, ինչպէս որ շատերը, մի ծերունի իր պառաւ կնկայ և մօտ տասնութ-տասնուիննը տարեկան միակ զաւակ ելբերդի հետ միասին։

Սրանք սովորաբար ցանքով մի մեծ բագ պատեցին, մէջը մի տուն շինեցին և որովհետեւ կարողութիւնը տալիս էր և իրանք էլ աշխատասէր էին, ինչպէս առհասարակ բոլոր չեւնները, նրանց կեանքը անցնում էր առանց նեղութեան։

Մի անգամ ելբերդը սալլին եղները լծեց, վրէն սիմինդով լիքը մի քանի քիշելա¹⁾ բարձեց ու զէպի Վլադիկաւկազի բազարը քշեց, որտեղ պէտք է ծախէր։

Ճանփի վրա նա հանդիսեց մօտ տասնի չափ նազրանցի սայլերին, նոյնպէս սիմինդրով բեռնած և քանի մի տղամարդիկ ու աղջիկներ, ձեռներին հաւեր, ձու և սրանց նման գեղական արդիւնաբերութիւններ։

Ելբերդն հեռւից աչք կողցրեց սայլի վրա նստած մի ջահել, շնորհալի ու նազելի օրիորդին, որի սեռակ և հրապուրիչ աչքերը

¹⁾ Քիշելա—լաւ հարած ու տրորած կաշէ պարկ է, որ խոնաւութիւն ու թացութիւն չէ ընդունում։

ցոլում՝ էին ու, կարծես թէ, կրակի կայծեր էին թափում։ Նա նստած էր սայլի վրա ձեռին մի հաւ բռնած ու ժպտելով դէպի «Զառուգն»¹⁾ էր նայում, որին վերևեց, օդի մէջ, մառախուղի նման ծուխ էր ծածկել։

Էլբերդը նայեց այն աղջկան և սիրալ մի առանձին ցնծութիւնով լցւեց։ Ելբերդն նորատի էր, թիկնաւետ կարիճ, որի արիւնն եւում ու փրփրում էր և ջահելին վայել արկածն էր փնտրում։

Սա տեսաւ ջահել աղջկան, որ բարձրահասակ և նազելի էր ինչպէս ամառւաց զեփիւռը, միւնոյն ժամանակ հրապարից և սիրա յուղով։

Ելբերդը ճիպուեց իր եզներին, շուտով հասաւ այն սայլերին և սրտի մի առանձին տրոփիւնով ու ցնծումով ողջունեց նրանց աէրերին։

Սայլի վրայ նստած աղջիկը նայեց նրան, ժպտեց ու հանաքով ասաց։

—Ո՞վ գիտէ, եզներիդ ջիրիթ ես տարել, որ այդպէս քրտնեցրել ես դրանց։

—Այն, ջիրիթումն էին։

—Անշուշտ բոլորի առաջն էլ կարեցիր։ —Ճիծաղելով ասաց աղջիկն ու մերջանի պէս պրօշների յետեւում փայեցին համահաւասար կերպով դասաւորւած մարգարտաշար սպիտակ ատամները։

—Հայ, հայ, որ ամենից առաջ հասաց։

—Ի՞նչ վասրակեցիր, —շարունակեց նա մարդուն շմեցնող շնորհալի ժպիտով։

—Քո տեսութիւնը, —աշխացժով բացագանձեց Ելբերդն ու վառվուուն աչքերով սկսեց նայել նրան։

—Տեսութիւնս, —միւնոյն ժպիտով նայեց աղջիկը. բայց ինչ որ մի բան խաչթեց նրա սիրոն, նա կարմրեց և գլուխը կախեց։ Աղջիկը շփոթւեց, կախեց զլուխն, բայց մի աներեւոյթ ոյժից ձըգւելով նորից վեր նայեց։ Նայեց և առաջին անգամ նկատեց, որ նա գեղեցիկ, բարեկազմ էր. աղջիկը ցանկանում էր դիտել նրան անընդհատաբար, միայն Ելբերդի ուրուրի նման հրացայտ աչքերը

1) Զառուգ — լեռնեցիները Վաղիկաւկազին են ասում։ Ծ. թ.

ստիպեցին նրան շուտով նորից գլուխը կախել, և դէմքն էլ կարմրեց:

Չեչններում ամօթալի չէ, երբ մի ազապ աղջիկ ու մի երիտասարդ իրար հետ խօսեն. սրանց խօսակցութեան վրա ներկայ գտնւող մարդիկ սկսեցին քահ-քահ ծիծաղել:

—Պատասխանիր, Ենդի, պատասխանիր էլի. —քաջալերում էին նրանք աղջկան, որը կարմրում ու շփոթում էր:

Ենդին ուրախ բնաւորութեան տէր էր, զրոցի մէջ պատրաստախոս, կատակասէր և բոլորն էլ չոչմները նրա վրա դրած՝ կարծում էին թէ նա թոց չի տաց օտար գիւղացուն յաղթութիւն տանել. բայց աղջիկը պատասխանելու փոխարէն լռութիւն էր պահպանում: Այս միջոցներում լսեց զանգակների զրդանջը ու մի տարանտաս լոյս ընկաւ, որի մէջ չերքէզի երեք եաբուներ լծւած սրանց զիմացն էին սլանում: Ամենքն էլ վաղեցին իրանց սայլերի կողմը, որպէս զի ճանփա տան արագավազ ձիերին: Միմիայն էլ-բերդը չեռացաւ աղջկայ սայլի մօտից, որովհետեւ համոզւած էր, որ իր խելացի ու փորձւած եզները ինքնակամ, առանց տիրոջ օգնութեան, ճանփա կը տային ձիերին:

—Գնա՞մ, սայլիդ նացիր. —մեղմաբար ասեց Ենդին, և ձացնի մէջ դող նկատեց: —Գնա՞մ, սոնիդ չկոտրեն ու այստեղ չմնաս:

—Թող սատանէն տանի նրան, քանի որ քեզ տեսայ:

Աղջիկը դարձեալ կարմրեց ու այնպէս ուժով սեղմեց հաւին, որ սա ցաւից ճչաց:

—Ի՞նչի ես ծաղրում՝ ինձ, ի՞նքս էլ գիտեմ, որ տգեղ եմ:

—Եալահ. քեզ ծաղրողի թուրը՝ թող վրա բերած միջոցին կոթի մէջ կոտրւի:

Այս միջոցներում տարանտասը հեռացաւ սայլերից. սրանց մօտեցաւ մի կին ու ծիծաղելով ասեց.

—Այ տղայ, ասենք թէ լաւ մէջք ու թիկունք ունես, բայց լաւ էլ զինջիլ են գտել, զայիմ են կապոտել քեզ:

—Չեմ ցաւում, քանի որ Ենդին է ինձ կապոտել, երանի թէ հետն էլ տանի ինձ:

—Այդպէս շմառ, —ծիծաղեց նորեկը:

—Ի՞նչ կարիք կայ ուշացնելու:

Այս խօսքերն ասելուն որէս հանեց դարանչեն ու գցեց Ենդու

առաջ. այս նշան էր, որ Ելբերդը հանաք չէր անում ու այն աղջըկան կնութեան էր խնդրում: Էնդին նայեց, սիրտն սկսեց սասարիկ բարախել. սակայն սայլի վրա դաբանչէն գրանեց, որ գետնի վրա շընկնի: Ներկայ գոմեռող կինմարդը նրան բախտաւորութիւն մաղթեց, որովհետեւ Էնդու կողմից դաբանչէն չվերագարձնելը համաձայնութիւն էր նշանակում: Այսպէս հասարակ կերպով, բայց մասքուր սրոով, նրանեք նշանւեցին:

Ելբերդը վերադարձաւ տուն Էնդուցը գժւած. սակայն չէր համարձակում իր սրտի խորհուրդը յացնել հօրը:

Նա տանջւում, հալումաշ էր լինում: Երբեմն ընկնում էր այնպիսի ինքնամուացութեան մէջ, որ խօսակցին էլ չէր հասկանում, չէր կարողանում գործ կատարել. որովհետեւ այն միջոցներում նա միմիկայն իր շնորհալի, ուսորակ աչքերով սրտի հատորի մասին էր մոտածում:

Մի անգամ նրա հայրը հարկաւոր համարեց հարցնել Ելբերդին սրա այսպիսի մոււացկառութեան պատճառը: Առաջին խօսքի վրա որդին կարմրեց ամօթից, բորբոքւեց, իսկ հայրը հարեց նրա վրա իր փորձառու աչքերն ու պարզ կերպով հասկացաւ որդու սրտի խորհուրդը:

—Ելբերդ, ի՞նչի ես կարմրում, ի՞նչի ես ամաշում, ի՞նչի չես յայտնում ինձ թէ սրտումդ ինչ ունիս: Կարելի է ինձնից աւելի լաւ սրտացաւ բարեկամ ունիս:

—Առուած է վկաց, քեզնից ոչինչ չեմ թագցնում... Ի՞նչ ալիստի թագցնեմ,—պատասխանեց որդին գլուխը կախելով:

—Բաս երեսդ ինչի ես դաբնում ինձնից. էլ բանի վրա սիրտ չունես... հը՝, պատճառն ասա:

—Ի՞նչ ասեմ, որ ոչինչ չգիտեմ:

—Կարելի է մէկին սիրեցիր... թէ ուզում ես պսակել, ժամանակ է արդէն, ամօթ էլ չէ...

—Զէ, չէ,—աւելի կարմրելով ու վռագելով վրա բերեց Ելբերդն ու ձիու կողմը վազեց, որ ախուից զուրս էր ընկել ու շիփշիտակ դէպի ասպարի դուռն էր վազու: Ծերունին աչքերով հետևեց որդուն, քան մի բուրէ մտածմունքի մէջ ընկաւ, յետոյ ժապտեց ու քժի տակ փնթփնթաց.

— Հայ գիղի ջահելութիւն... եկաւ գարունքն ու սիրտն սկսեց տրոփել... Աջութիւն տայ Աստւած... երանի թէ լաւ աղջիկ լնտրի ու ես էլ բան չեմ ուզի:

Այս միջոցներում՝ էլբերդը բռնեց իր «Կապուտին», արորեց նրա ուրուրանման աչքերը, շփեց ձեռքով նրա գլուխն ու աչացից կապեց: Փաղաքշած ձին, իբրև շնորհակալութեան նշան, սկսեց զլուխը մեղմաբար շարժել ու փունչալ: Էլբերդը զուտուտ արեց, ձին ականջները յետ սրեց, վրա ընկաւ և զգուշութեամբ ակռեք-ներով այնպէս բռնեց նրա թեսից, որ մսին չգիպցնէր, չցաւցնէր ու հետը խազս ընկաւ: Էլբերդի դէմքի վրա ցնծութեան նշոցներ փայլեցին, սիրելուց փաթթւեց նրա շնչքովն ու փաղաքշական խօսքեր ասելով՝ սկսեց ձիու աչքերը պաշալէլ: Նրանց գգու անքից նկատելի էր այն բարեկամական շաղկապը, որ կարող է զգալ այն մարդը միայն, որը շատ անդամ է ազատուել վտանգներից իր հաւատարիմ ձիռւ օգնութեամբ: Էլբերդը չեչին էր, հետեւալէս յաճախս կը դիմաւորէր մահին ճակատ առ ճակատ:

— Էլբերդ. — Ճայն տւեց հայրը:

— Ի՞նչ ես կամենում, — պատասխանեց նա և ձիուցն անշատ-ւեց, որը իր ցոլուն և երախտալից աչքերը դարձրեց նրան:

— Այստեղ արի, — ասեց ծերունին ու նրան տարաւ դէայի ճըզ-նաւոր աչան, որ ամեն մի չեչին տնկում է ասպարի դուան մօռ՝ եկող հիւրերի ձիերը այնտեղ կապելու համար:

Ծերունին նստեց ու որդուն էլ ասեց, որ նա էլ նստի:

— Աստւած է վկայ, որ ես այսպէս էլ լաւ եմ, — պատկառանքով սպատասխանեց նա:

— Նստիր, ուզում եմ հետդ խօսել:

Էլբերդն փոքր ինչ հեռու նստեց:

— Էլբերդ, — սկսեց հայրը. — Հասել է ժամը և սրտիդ սրտակից է հանդիպել... աշխարհիս երեսին քեզնից աւել ոչ ոք չունեմ: ու-րախութիւնդ ինձ համար Աստծու ողորմութիւն է... Հաւանել ես, պսակւիր... Աստւած աջողի քեզ: Քեզ բախտաւորեցնող և հնազանդ կնիկ տայ Աստւած... ասան, մրտեղացի է:

— Սուրզոխեցի, — զլուխը կախելով պատասխանեց որդին:

— Որ օջախիցն է:

— Մասլագեանների օջախիցն է:

— Լաւ օջախ է, նրանց աղջկիկները ջինսով են լինում: Գեղեցկութեան մասին էլ ինչ հարցնեմ: գեղեցկութիւնն աչքն է ուսնում, սրտին սիրտն է հասկանում... Ասուած վերջը բարի անի... նշան տւիր, թէ ոչ:

Ելքերդը լուս էր:

— Պատասխան տուր, — ասեց ծերունին. — Ռւժնիցն ես ամաչում:

— Դաբանչէս տւի:

— Տղամարդու պատիւր զէնքումն է, այդ խոստումից առելի ծանր էլ ուրիշ բան չկայ: Ուրիշն էլ ի՞նչին ես սպասում: Ի՞նչի գլխագնի մասին չես հոգում: Մասլագեանների լնատանիքը հռակւած է, փոքր գլխագնի երբէք չեն համաձայնի:

— Վաթսուն կով են պահանջում:

— Այ, տեսմք... սակացն լու և ազնիւ աղջկայ համար վաթսուն կով շատ չէ... Վոշաղ տղայ ես, շուտով ձեռք կը բերես: տակաւին ոչինչ չունիս:

— Ունիմ մօտ տամներկու թուման¹⁾:

— Քառասուն թումնի չափ ես կարող եմ փոխ տալ... Այս փողը տար, «Յօիններից» — մոխեցիներից ոչխարներ գնիր և, մօտ օրերումն մեր պասը կը կանգնի, մէկը երկուսով կը ծախես: Եթէ այս ահատը երկու անգամ դրամաշուրջ կատարես դրանով, հարկաւոր փող էլ կը վաստակես ու ինձնից վերցրած պարաբդ էլ կը վճարես... հասկացմք:

— Հասկացայ:

— Լսիր ծերունու խրատը, ուրիշ գործի մի կազիր, առուտուրը ամենաշահաւետն է... Գեաւուրներին թալինելն ու կողոպտելը, Ասուած է վկայ, վարձք բան է. բայց հիմի դրա ժամանակը չէ: Առանց այս էլ են աշխատում, ինչքան որ կարելի է, մեզ գլխներից ուաղ անել... Բարի գործի ես գնում, բարութիւնով էլ գլխադին դադիր. չեմ ուզում, որ թշնամիդ անգամ անունդ անէծքով ցիշէ:

— Անց որ խորհուրդ կը տաս, այնպէս կը վարւեմ:

— Այն, այսպէս վարւիր, հաւատամ փորձառութեանս: Տանս

¹⁾ Այն կողմերում թումանը մի կովի գին է համարում: Ծան. Հ.

մէջ Աստծու ողորմութիւնը անսպակաս է. էլի կաշխատէի մի կերպով գլխազին ձեռք բերել. սակայն, Ելբերդ, ինքդ ես պարտական գլխազին ճարելու, քո հալալ աշխատանքով ակտոք է ննջարամնդ շինես... այս է մեր ծէսը, «յս է մեր աղաթն ու մենք էլ այսպէս պիտի վարւենք»:

Այդպէս կը վարւեմ:

Ու բախացած հայրը որդուն ներս տարաւ տուն, ձայն տւեց իր կնկան, որը առաջ էր լսել որդ ու սրտի խորհուրդն ու ցանկութիւնը:

Ելբերդն իր համար աշնանամուտին ննջարան շինեց, իր հալալ աշխատանքով այնքան փող վաստակեց, որ կարողացաւ գլխազինը վճարել ու հարս բերել, որը ծերունիների համար միսիթարիչ ու սփոփիչ՝ իսկ Ելբերդին ուրախացնող ու բաղդաւորովն եղաւ:

Ելբերդի կեանքը, բաւական երկար ժամանակ, սահում էր լաւ և բարեյաջող կերպով: Ալևորւած ծերունիները ցնծում էին որդիկերանց բախտաւորութիւնով, Աստւած նրանց թռուան տեսութեան էլ արժանացրեց, որին զառամեալները գդւում էին ու շատ երես տալիս, թէե գործի ու աշխատանքի էլ էին վարժեցնում սովորցնելով միենոյն ժամանակ ցրտին ու յօդնածութեան դիմանալ, որոնք մշակ մարդու համար անխուսափելի պայմաններ են:

Բայց ինչպէս առհասարակ՝ Ելբերդն էլ ունեցաւ իր տիտուր ու տրտում բոպէները. առաջ մեռաւ նրա հայրը և յետոյ մայրը, որ այնպէս կրթում ու լաւ խնամում էր հարսին:

Մնաց մենակ Ելբերդը իր ջահել կնկայ ու պզտիկ Սուլթունեա—այսպէս էր նրա որդու անունը: Ջահել հայրը ձեռք զարկեց աշխատանքին ու թէե իր վարելահողերը չէին բաւականացնում, որովհետեւ վեց օրավարից աւելի հող չունէր, բայց կապալով վերցնում էր հարեան զազախներից, որոնցից ամեն մէկը երեսնական դէսեատին հող ունէր, վարձը վճարում էր և էլի այնքան էր վաստակում, որ կարողանում էր թշնամու և բարեկամի առաջ պարզերես գուրս գալ:

Ելբերդը գող, դատարկապորտ ու վայրենաբարոյ չէր, մի խօսքով նա չէր ներկայացնում այն վայրենի մարդու պատկերը, որը նկարւած է մեր աչքի առաջ զանազան ճամփորդների գրած նկարագիրներից:

Այս մարդը իր կնկայ հետ միասին հնձում կալսում էր, ունէր շատ հոտաղներ, որոնց օնզութեամբ տաւար էր պահում. իսկ գիշերները անց էին կացնում իրար ջան ասելով ջան լսելով:

Մի իրիկնազահին Ելքերդն իր կնոջ հետ միասին հնձատեղից գիւղ վերադարձաւ ու տեսաւ, որ գեղամիջին մարդիկ մի տեղ էին հաւաքւել: Կնկան զրկեց տուն, իսկ ինքը մօսեցաւ բազմութեանը՝ հաւաքւելու պատճառն իմանալու համար:

— Ի՞նչ կայ. — հարցրեց նա:

— Չես զարմանում, — պատասխանեցին նրան. — Երեկ գիշեր փոստ են թալանել ու մեզ վրա հն կասկած զցում:

— Ե՞րբ են կողոպտել. — Նորից հարցրեց Ելքերդը:

— Երեկ գիշեր:

— Այսպէս էլ անօրէնութիւն չի լինի, Աստւած է վկայ. — ասեց մէկը:

— Ինչ էլ որ կորչի, մի գլուխ մեր գեղին են վճարել տալիս:

— Աքա ի՞նչ կարող ենք անել, — կարճ խօսքով պատասխանեց Ելքերդն ու դիմեց գէպի այնուեղ հետու կանգնած պրիստաւի կողմը, որ չարացած ու ձեռները ժաժ ու մաժ տալով ինչ որ խօսում էր ժողովուրդի հետ:

— Դուք ամենքդ էլ գողեր էք, — բզաւում էր նա. — բոլորդ էլ կաշիները քերթելու, կախաղանի արժանի մարդիկ էք:

— Պատասխանիր, Ելքերդ, մի բան ասա է սրան, — դիմեցին նորեկին քանի մի չէւնսեր, որովհետև Ելքերդը սրանցից լաւ էր ռաերէն խօսում:

Ելքերդը կամաց գդակը հանեց ու պրիստաւին գլուխ տւեց:

— Ահա մի ուրիշ աւազակ էլ, — պատասխանի փոխարէն գոռաց պրիստաւը:

— Մեր կողմի մարդիկ՝ բոլորն էլ ճանաչում են ինձ, որ ես աւազակ չեմ:

— Հայ, բոլորը ճանաչում են. ամենքդ էլ աւազակներ էք:

— Աղայ, ի՞նչի էք ամբողջ ժողովրդին հայհօյում... որոնեղ մարդիկ են կենում, այնուեղ լաւ մարդ էլ կը գտնուի, վատն էլ. — հանդարտ պատասխանեց Ելքերդը. — թէ որ վնաս են տւել, վճարել տւէք, թէ չէ մէկէները ինչո՞վ են մեզաւոր:

— Ես բոլորիդ էլ լաւ եմ ճանաչում... ամենքդ էլ իրար հետ
հոչերով էք կապւած... Դուք մէկզմէկու իսկի չէք մատնի:

— Մենք, զորդ է, իրարու մատնելու սովոր չենք. վաս մար-
դուն մենք էլ չենք սիրում: Մենք ցոյց տւինք վաս մարդու վրա,
ձեզ յանձնեցինք. իսկ դուք նրանց հողեր բաշխեցիք, ծառայու-
թեան մէջ լողունեցիք, մեր զլսին չարչարող կարգեցիք նրանց:
Սրանից յետոց էլ նվ կը կամենայ իր անցաւ գլուխլ ցաւեցնել:

— Ճանաչում եմ ձեզ, ճանաչում... Դուք դողութիւնից աւել
ուրիշ բանի անընդունակ էք, և նվ որ մեր հաւատարիմներն էին,
նրանցն ուղեցիք հեռացնել ձեր մէջից:

— Բոլոր կորուստները մեզ էք վճարել տալիս և լաւ մարդկե-
րանց հեռացնելուց մեզ ի՞նչ օգուտ որ... հ՛չ, պարոն «ազրիսոսալ»
մենք գող չենք:

— Ուրիմն մրտեղից էք այդպիսի բարեկեց կեանք վարում
դուք, քանի որ զազախները այնպէս աղքատ են, չնայելով, որ
նրանք ձեզնից աւելի շատ հողեր ունին:

— Աւելի շատ ունեցածին բանեցնել է հարկաւոր... զազախ-
ները արբեցող ու ծոյլ են. մենք բանում ենք երբ որ նրանք ար-
բեցութիւնով, լրբակեցութիւնով և իրարու շատ զցելով են օրերն
անցկացնում:

— Բէհասք նամազուլ ես անում:

— Ճշմարիտն որ ասում եմ, երեխ նրա համար էք վրէս չա-
րանում... Աքա մի անդամ, աշխատանքի ժամանակ, մեր զեղն էլ
մտէք ու զազախներինն էլ... Մենք բոլորս դաշտի վրա կը լինենք
բանելիս. իսկ նրանք հարբած-արագւած կը լինեն գինեսներում...
մրտեղից կունենան մեզնից աւելի:

— Դուն ի՞նչ կուզես զլսից զուրս տաս, պէտք է որ փոստի
թալնողը մեզ յանձնէք. եթէ ոչ էկզեկուցիա եմ նշանակելու ձեր
գիւղի վրա:

— Մէծ է Աստւած, զօրը ձեր ձեռին է. այսաեղից որ բոլորին
էլ դուրս քշէք, նվ է մեր տէրը:

— Մինչև էգուց ժամանակ եմ տալիս ձեզ, եթէ գողերը չեք
յանձնի ինձ, մի գունդ սալդաթներ կը կանգնեցնեմ այստեղ ու
նրանք ձեր օհուիցը կը դան:

Այս խօսքերով պրիստաւը գնաց դէպի ղազախների մօտակայ գիւղը, որտեղ սպասում էին նրան «չիխերն» ու ղազախների լիտի աղջկերանց փաղաքշանքները։ Խակ խեղճ Աչլիղցիք մնացին տարակուսած, որոնք աղմկւեցին, շփոթւեցին. որովհետև գողերին չէին ճանաչում, ոչ մէկի վրա չէին կարող մատնացոց անել ու հետեւալէս «էկզեկուցիան» նշանակելը անխուսափելի էր դառնում։

Լեռնեցու համար չկաց մի ուրիշ աւելի անտանելի պատիժ, քան թէ «էկզեկուցիան» է. որովհետև իւրաքանչիւր լեռնեցին, առանձին վերցրած, առաւ ել բարձր է կանգնած՝ բարոյազէս լրբացած ու ինքնազլուի կեանք վարող զինւորներից, որոնք առանձնացած աղբելով, երկարատև ժամանակով կանացի հասսրակութիւնից անջատ լինելուց՝ ընտելանում են ամեն տեսակ լիրք խօսակցութեան ու անպատկառ վարքին։

Արդար ու անարատ, այս հանգամանքում, անմեղ ժողովուրդը չէր կարողանում դլիսից հեռացնել այսպիսի անտանելի պատիժն ու երեակայեցէք ձեզ,—ի՞նչ կը լինէր աչլիղցիների դրութիւնն և որքան ժամանակ կը տեէր նրանց վրդովմունքն ու խօսակցութիւնը։

Զօգնեց նրանց ոչ խօսակցութիւնն և ոչ էլ հնարագիտութիւնը. վրա երրորդ օրը՝ կէսօրից չորս ժամ անցած Աչլիդ դեղում լսւեց թմբուկի «տրայ-բայ-ռատատայի» ձայնն ու մի քանի սպաների առաջնորդութեամբ մի ամբողջ գունդ ռսներ ներս եկան...

Զինւորներին բաժանեցին գեղի ծուխերի վրա բոլորի բերանն ու հոգին դիտելու համար։

Էլբերդի մօտ նշանակեցին սպաներին, որովհետև այս չէչէնի առւնը աւելի լաւ էր սարդ ու կարգած և մաքուր էր։

Այս օրւանից ի վեր էլբերդի կեանքը կատարեալ դժոխքի փոխարկւեց. որովհետև, համարեա ամեն իրինապահին, անգործ, պարապ-սարապ սպաներին զւարձացնելու նպատակով խմբում էին երգող ռսներն ու անտանելի դռոց էին բարձրացնում։ Սպաները հարբում էին մի ուրիշ զործ չունենալու պատճառով և զինւորները որքան ուժը պատում էր, զոփում էին ռաներով ու բզաւում։

Էլբերդին ու Էնդին, ինչպէս մշակ մարդիկ, քնի ու հանգստու-

թեան կարօտ էին. սրանք .չին կարող մինչեւ կէսօրը քնել, ինչպէս սպառն սպաներն, և առանց աշխատանքի օրւայ հազ ճարել:

Բացի սրանից, այն խրութեակները այնպէս էին նացում Էլբերդի վրա, ինչպէս իրանց պարսաւորին, ականջ կորած ճորտի վրա և այս պատճառով երբեմն զէս էին զրիում և երբեմն զէն: Ելբերդը, ինչպէս լեռնեցիները առհասարակ, սկզբում նրանց խաթրը չէր կոտրում ու գնում էր ամեն տեղ, որ կողմն Էլ ցոցց կը տային. բայց երբ հասկացաւ, որ սպաները նրան նացում են ինչպէս պարտաւորեալի վրա, Էլ չգիտէր թէ ինչ անէր ու ինչպէս գլխիցը ռադ անէր զահյա տանող հիւրերին:

Մի օր Ելբերդին գործ պատահեց «Զառւզ» գնալու և այս պատճառով հրաժեշտ տեսեց իր կնոջ, որն ասեց.

— Անպատճառ սիէտր է զառւդ գնահան

—Անդատճառ:

—Վահ, վալ, վալ, մենակ ես ի՞նչ անեմ աւարան ունեմի մէջ:

— Խ՞ոչիցն ես վախում: — պատասխանեց Էլբերդը, հարեւան կանանցից մէկին խնդրիր, որ այս գիշեր քեզ մօռ մնայ, իսկ ցերեկը միաս չունես:

—Երանի մնալիք, —և գրկեց ամուսնուն:

— Բարեմ կը մնայի, միայն թէ գործս ի՞նչ անեմ, — զրկեց
կողը, Եր կրծքի վրա սեղմեց, պահեց մի քանի անգամ ու խտռեց
փոքրիկ Սուլթուն, որ մօր փէշերից այնպէս էր կախ ընկել, կար-
ծես թէ վախում էր թէ սա էլ մի ուրիշ տեղ կը գնար:

Ելլերը սրան էլ քանի մի անդամ պաշտչելուց յետոյ՝ մօրը յանձնեց ու ինքը դուրս գնաց: Այսուեղ սրան պատահեց սպաներից մէկը, որի դէմքը շատ քնելուց ու արթեցութիւնից պշնել էր ու ձայնն էլ մի կերպ խրպուտել էր: Սա մի քսնի անդամ հազեց, որից մի այնպիսի բօխ ու անդուրեկան ձայն դուրս եկաւ, կը կարծէիր թէ կարասից լինէր լաւելիս:

— Խնչ բանի համար ես ձիղ թամքել, — ասեց նու տանտէրին և մատով զույ զ անտեղ և եթ բացում կապած ձիու վրա:

— զառւգ եմ պնում, դործ ունեմ այնտեղ, —պատասխանեց Էլեբըրբ:

—Քեզ ուզում էի «Ստարա-Վերկա» սրբելլ

— Զառւգում ես անյետաձգելի գործ ունեմ:

— Այնտեղ էլ հարկաւոր գործ կայ:

— Ի՞նչ գործ:

— Այսօր իմ ընկեր սպաները հիւր են դալու ինձ մօտ ու այնտեղից էլ էի ուզում սպաներ հրատիրել:

— Հաւատան, որ կերթացի, եթէ Զառւգում հարկաւոր գործ չունենայի:

— Եթի լինի, գործդ մի ուրիշ օրւան թողնես:

— Այնպէս գործ է, որ չի կարելի:

— Իսկ ես ասում եմ, որ պէտք է յետաձգես:

— Ասուած է վկայ, չեմ կարող, թէ չէ խաթրդ չէի կուրի: ԱՍՏԱՐԱ-ՎԵՐԿԱՆԱ մօտիկ է, զինւորներից մէկին զրկիր այնտեղ:

— Քեզ ոչ ոք խորհուրդ չէ հարցնում: — կոպտաբար ընդմիջեց նրան: — դու պէտք է գնաս:

Էլբերդը կատղեց այս հրամանը լսելով:

— Չեմ կարող, թէ չէ երբ եմ ալարել:

— Ազդ չգիտեմ, ալարել ես թէ ոչ: բայց հիմի պէտք է գնաս: Էլբերդի աշքերը կատաղութիւնից կրակ կտրեցին:

— Չեմ կարող ու չեմ էլ գնայ: — բարձրածայն և շտապով պատասխանեց չեչէնն ու այնպէս նայեց նրան, որ սպան քանի մի ոտ յետ ընկրկեց:

Նա աշկարա տեսաւ, որ Էլբերդի աշքերը վճռողականապէս հրավառւեցին ու խանչալի կոթին դրած ձեռը ուժգին դողողաց:

Էլբերդը նորից նայեց սպացին, թքեց մի կողմն և մինչեւ որ սպան ուշքի կը գար, մի բան կը մոտածէր, չեչէնը նստեց ձիու վրա և Զառւգի կողմը չափ զցեց:

Պատահում են երբեմն այնպիսի աշքեր, նամանաւանդ այնպիսի հայեացք, որ մարդուն յանկարծակի է շփոթում, բերանի խօսքը կտրում և բաւականին երկար միջոց պէտք է անցնի, մինչեւ որ այս դրութեան մէջ ընկածի մոտածելու ընդունակութիւնը իր սովորական ընթացքը կընդունի: Ուղիղ այսպիսի շփոթութեան մէջ զցեց Էլբերդն այն սպացին և զգալ տւեց, որ Էլբերդի նման մարդկանց հետ՝ հեշտ բան չէ հանաքներ անել:

— Այս ինչպիսի մարդիկ են, աէր Աստւած, բոլորն էլ խանչաղի վրա ունեն ձեռները դրած... Սրանց համար մի վառիկ մորթելն ու մարդ սպանելը միևնույն բանն է:

Այս խօսքերից յետոյ սա նորից մտածմունքի մէջ ընկաւ ու քանի մի բոսէ անցնելուց յետոյ աւելցրեց.

— Սրան անպատճառ հարկաւոր է փոքր ինչ խելքի բերել և ես էլ չեմ ուշացնի, այսօր և եթ կը գրեմ պրիստաւին սրա բարք ու վարքի մասին:

Սպան ձայն տւեց զինւորին, որ իւր կերակուր եփողն էր Հարցրեց ճաշի մասին և իմացաւ, որ հիւրերի համար բաւական միս էր սպատրասոած թէ ոչ:

— Միս հծ կայ:

— Այն, կայ. զօրքի համար մորթած եզան մսից ամենալաւ կաորներն եմ վերցրել:

— Չաղ է:

— Գեղի ամբողջ նախրիցն են լնարել ու ինչ կը լինի աբա. Նրա աէրը այնպէս յիշոցներ էր տալիս, այնպէս յիշոցներ էր տալիս որ...

— Ի՞նչ ասիր:

— Այդ մէկ եզն ունեմ; ասում էր, միք մորթի... ձեզ մօտ էր գալիս...

— Յետո՞յ:

— Ե'լ ինչ յետոյ. զինւորները ծեծեցին ու զուրս արին:

Այս միջոցներում ճանփի վրա թող վեր ելաւ և մի քանի վայրկեանից յետոյ երևեցան վեց հոգի ձիաւորներ, որոնցից սպան ճանաչեց իր հիւրերին:

— Գալիս են, գալիս են,— շտապեց սպան և խոհարարին վռնգեց, որ ճաշը վռագեցնի:

Որովհետեւ շատ հիանալի օր էր և ասպարն էլ մեծ ու խատակ, սեղանը վրանի տակը բաց արին ու սկսեցին խմել: Գոռում-գոչիւնին ու ուռան կանչոցին էլ վերջ չկար: Զինւորները երգում էին անձունի լողիրշ երգեր—զինւորի թոյլ մաքի արգասիք, —ինչպէս օրինակ «վենեան» է և այն:

Մի կողմից խեղդող տօթը, որ աւելի զգալի էր դառելի միւս

կողմից ոգելից խմբչքների ոյժը տաքացրեց սպաներին և սրանց վրա աւելացրու և խայտառակ երգեցողութիւնը։ Սպան հրամացեց վրանի փեշերը վեր թողնել, ու թեթև հովն էլ փչեց։

—Այ, պարոններ, եթէ զազախի գիւղում լինէինք հիմա—սկսեց հիւրընկալը։—աղջիկներ էլ բերել կը տայի ձեզ համար։

—Իսկ այստեղ ի՞նչ կը լինէր որ, —հարցրեց հիւրերից մէկը։

—Այստեղ բոլորն էլ «բուսուրմաններ» են։

—Ի՞նչ վնաս ունի որ... աղջիկը աղջիկ է, ամենքն էլ միտեակ են ստեղծւած—հանաք արեց միւնոյն հիւրը։

—Սրանք մեզնից փախչում են... բայց եթէ իրանց կողմի մարդ գալու լինի, այն ժամանակ, ինչքան որ հարս ու աղջիկներ կան, հաւաքւում են, երգում, պարում են. իսկ մեզ իսկի չեն մօտենում։

—Դուն անշնորհք ես եղել. —պատասխանեց բեխեր սրած հիւրն և քահ-քահ ծիծաղեց. —աբա ես լինէի, թէ չէին մօտենաց լինձ։

—Հաւատացնում եմ ձեզ. —երգուում էր հիւրընկալը, —ամենին քաղաքավարութիւն չունին։ Սրանք ասիացի, լուսաւորութիւնից զուրկ՝ վայրենի ժողովուրդ են. սրանցից բան չի կարելի սպասել։

—Կրկնում եմ, ես պէտք է լինեմ, —պատասխանեց զարձեալ միւնոյն հիւրն ու հոտհոտող շան պէս պուշները լսատեց։

—Ասում եմ էլի, թէ չէ...»

Այս միջոցին տան շէմքի վրայ երեաց Էնդին կուժն ուսին զրած և ուզում էր ջուր բերելու գնալ։ Նա դուրս եկաւ, բայց իսկոյն կանգնեց հէնց որ սպաներին տեսաւ, որովհետեւ վախում էր նրանցից վատ խօսքեր լսել։ Նա բաւական ժամանակ մնաց այնպէս. բայց ջուր պէտք է բերէր անպատճառ, այն ինչ սպաները իրանց քէֆը չէին վերջացնում։ Էնդին գլուխը կախած ու արագաքայլ դիմեց դէպի բագի դուռը։

—Նայեցէք, ի՞նչ շնորհալի աղջիկ է. —բացագանչեց բեխեր սրած սպան։

—Աբա, աբա, —գոչեցին միւսներն ու վրանից դուրս թափեցին։

—Ճշմարիտ, ի՞նչ շնորհալի է, ի՞նչ գեղեցիկն է—սկսեցին բոլորն էլ քահ-քահ ծիծաղելով բղաւել։

Աղջիկը շփոթեց. համարեւ թէ յետ կանդնեց, յետոյ ոսներին զօռ տալով արագավազ անցաւ:

Դա տանտիրոջ կինն է.—բացատրեց հիւրընկալը:

—Այ այ սատանաց. —հանաք արեց հիւրերից մէկը. —հէնց դրա համար էլ վաղիկաւկազ չեռ գալիս հա՛, որ այդպիսի աղջկերանցովն ես զւարճանում:

—Դա ի՞նչ կարող է է. —ձեռքը թափ տւեց բեխերը սրածը:

—Դուք այդպէս կասէք. —ընդհատեց երրորդն ու աւելցրեց.

—Պատոն Պլատոնիչը մի տակետակն է որ...

—Չէ, պարոններ, հաւատացնում իմ ձեզ... ինչպէս ասա.

—ինքն իրան արդարացնում էր հիւրընկալը:

—Ե՛հ, գալար տանք այդ խօսակցութեանը, որքան անշնորհք սիրահար է եղել Պլատոն Պլատոնիչը, այնքան էլ լաւ հիւրընկալ է... կեցցէ լաւ հիւրընկալ ու անշնորհք սիրահարը:

Ամենքը վերցրին բաժակները ու ուռա կանչելով խմեցին հիւրընկալի կենացը:

Պլատոն Պլատոնիչը թէև ժպտում էր, ինքն իրան ուրախ էր ցոյց տալիս, բայց մտքում չարանում էր իր վրայ, իր վեհերոտութեան վրայ, որ իր ընկերների առաջ ծաղրի առարկայ եղաւ:

—Ուզիղ, ինչպէս զոնէ ներս չգնացի նրա մօտ մի անգամ, մտածում էր նա ու իր բաղդն անիծում: Արդարեւ, —շարունակեց մտածել նա, —ինչպէս չէի կարող ձեռք գցել այսպիսի վայրենի ժողովուրդի աղջկան... Չէ, իմ մեղն է, արժանի եմ, որ ամենքը ծաղրեն ինձ... ինչ էլ որ լինի, ինչ կուզէ թող պատահի ինձ, ինչքան կուզէ արժենաց, այս չեչէն աղջիկը իմն պէտք է դառնաց, թէ չէ ընկերներս էլ հանդիսա չեն թողնի ինձ, աշխարհիս երեսին ամօթով կը մնամ:

Նա մտածում էր, մտածում այս առարկայի մասին ու սիրաը դառնապէս կսկծում էր, որ չկարողացաւ իր ընկերակիցների շըրջանի մէջ անպատիւլրութեան հերոսի» անուն հռչակել, որ այսպէս պարծանք են համարում իրանց համար Մարսին ծառացող «Հըրկչիկացողներից» շատ շատերը:

Այս միջոցներոնմ էնդին վերադարձաւ և Պլատոն Պլատոնիչի աշքերը դժբաղդաբար հանդիպեցին նրա աչքերին. նա տեսաւ այդ

կնոջը և նկատեց, որ ուղիղ գեղեցիկ էր նա, և մի անորոշ զգացմունք տուորելով անցաւ նրա սրտովը:

—Դա իմա պէտք է լինի, անպատճառ իմս, —մտածեց նա և հիւրերին ներս հրաւիրեց տուն, որովհետեւ արեգակն արդէն սկսել էր մայր մտնել ու այն կողմերում արել մայր մտնելուն պէս՝ օդը յանկարծ փոխուում, տօթից դէպի ցուրտն է իջնում:

Սենեակում մոմեր վառեցին, բաց արին կանաչ սեղանները, բոլորի շուրջը նստաեցին սպաներն ու սկսեցին կանչել — «սպանեցի», «ձերն է», «վորանկ»:

Խիս մարախուղի նման սպապիրոսի ծխով լցւել էր սենեակը. այժմ ամենքը մոռացել էին գեղեցիկ էնդուն և նրանց դէմքերի վրայ նշմարւում էր միմիայն մի ցանկութիւն — փող վաստակել անպատճառ:

Միայն Պլատոն Պլատոնիչն էր նստած անզգայ կերպով, անզգալապէս էլ թուղթ էր խաղում և տանում էր թէ տարւում, նրա վրայ ոչ նեղութիւն էր երևում ոչ էլ ուրախութիւն. այլ նա մի տեսակ տրտում, տխուր մտածում էր մի առարկայի մասին, զբաղւած էր իր գեղեցիկ էնդիով:

Այսպէս լուսացրին թուղթ խաղացողները, միւս օրը նախաճաշեցին և հիւրընկալլ միայն այն ժամանակ ազատ շունչ քաշեց, երբ հիւրերը ամենավերջին բլրակի ետեն անհետացան:

Նա ներս գնաց տուն տրտմած, վրդովւած, համարեա խռով. պառկեց թախտի վրայ և աչքերը յառեց օճորքին, կարծես այնտեղիցն էր յոյսն ու ապաւէն սպասում:

Հասաւ ճաշի ժամանակն ու զինւորը ոտի մատների վրայ կամաց-կամաց ներս եկաւ կարծելավ թէ սպարոնը քնած էր և չէր ուզում նրան զարթեցնել. սակայն Պլատոն Պլատոնիչը երեսը զարձրեց զէպի զինւորը, նայեց նրան ու առանց ձայն հանելու կրկին պատի կողմը շրջեց: Զինւորը մնաց կանգնած ու սկսեց քանի մի բոպէ նայել:

—Քնած էք, պարոն, —հարցրեց նա վերջապէս:

Պլատոն Պլատոնիչը նորից յետ նայեց և առանց ձայն հանելու դիտում էր զինւորին:

—Ճաշ չէք վայելի՛:
 —Չէ, կարճ կորեց նու:
 —Խաշուն բոլորովին ցամքեց:
 —Չհաննամը, թէ ցամքեց:
 —Եթէ չէք ճաշի, կրակը հանգնեց, անհանդստացնում էր

ծառան:

—Ինչ կուզես արա... կրկին մի և նոյն կերպ պատասխանեց սպան:

Զինւորը սպասեց, սպասեց, թքեց ու զուրս եկաւ. հասկացաւ որ իր պարոնին մի բան է պատահել: Զանցաւ քանի մի բուզէ, երբ Պլատոն Պլատոնիչը յանկարծ փոխեց, վեր թռաւ տեղիցն ու բացադանչեց.

—Կուզմա, այ Կուզմա.—այսպէս էր կոչում զինւորը:

—Ի՞նչ էք հրամացում. —պատասխանեց ծառան գուռը բանալով:

—Դուն պէտք է այնպէս անես, որ ես տանտիրոջ կնկան կարողանամ սեսնել, նրա հետ խօսելու բան ունիմ...

Կուզման այս խօսքերը չհասկացաւ, որովհետեւ իր տիրոջից առաջին անդամն էր լսում այս տեսակ խօսակցութիւն:

—Ի՞նչ հրամացեցիք:

—Ախմախ. —գոռաց սպան և աւելցրեց.—դուրս կորի՛, արադ բեր ինձ համար:

Կուզման արազը բերեց, սպան մի քանի բաժակ իրար վրաց ու շտապով կոնծեց, որից աչքերը շաղւեցին: Նա սկսեց սենեակում յետ ու առաջ ման գալ, մօտեցաւ սեղանին և նորից քանի մի բաժակ լցրեց կոկորդը: Յետոյ կանգ առաւ, յառեց աչքերը զինւորի վրաց ու ասաց.

—Կուզմա, գնա կնդուն ինձ մօտ բեր. ասա՝ պարոն սպան հրամացեց, փող պիտի բաշխէ, ասա:

Կուզման զգեղի կերպով ժպտաց ու շըջւելով պատասխանեց.

—Այս բուզէիս. —և հոլի պէս կրունկի վրայ սպտըտելով դուրս գնաց, իսկ պարոնը դարձեալ արազին զիմեց. նա հետզհետէ անհաց, իսկ պարոնը դարձեալ արազին զիմեց. նա հետզհետէ անհացմանում էր և գազանացին կիրքը գերում էր նրա մարդկացին զգացմունքը:

—Ի՞նչ պատահեց, ի՞նչի շեն գալիս. —տասներրորդ անգամն էր կրկնումնա, թէև շատ ժամանակամիջոց չէր անցել տակաւին: Վերջապէս ներս եկաւ կուզման ու դռան մօտ կանգնեց: սպան նայեց:

—Ի՞նչ արիր —հարցրեց նա:

—Ոչինչ չկարողացայ հասկացնել նրան, ձերդ մեծապատռութիւն. —պատասխանեց զինւորն և զգալով իր «մեղապարտութիւնը» ձիք կանգնեց:

—Յիմար, —կարճ պատասխանեց սպան. —ուրեմն էլինչ զին. որ ես, որ այդ էլ չկարողացար հասկացնել:

—Ի՞նչ անեմ, ձերդ մեծապատռութիւն, նա ռսերէն չի խօսում ու ես էլ «բուսուրմանների» լեզուն չդիտեմ... նշաններով փորձեցի հասկացնել, բայց նա ջգրւեց ու ականջ չդրեց ինձ:

—Անշնորհք, չէիր կարող զուռով բերել:

—Ցերէկ է, ձերդ մեծապատռութիւն, զուռով ի՞նչպէս կարելի է. մարդիկ գնում գալիս են:

—Ախ, Աստանձ, այս ի՞նչ յիմարի հանգիպեցրիր ինձ. ուսերը վեր քաշելով բացականչեց պարոնն ու նորից արադ խմեց:

—Ձերդ մեծապատռութիւն, —համարձակւեց զինւորը:

—Ի՞նչ կայ, —կոշտ զիմեց սպան:

—Ելբերդը տանը չէ հօ, մինչեւ երեկոն սպասեցէք. յետոյ ուղղակի մտէք նրա կնկաց մօտ, այն ժամանակ ինչ որ կամենաք, նա ձեր բոլոր ցանկութիւնը կը կատարի:

—Դու այնքան էլ յիմար չես եղել, ինչքան դէմքդ է արտավայտում:

Զինւորն ուրախացաւ, որ տիրոջ բարկութիւնից ազատուելու միջոց գտաւ ու ժպտեց:

—Եթէ բղաւի. —հարցրեց սպան:

—Ո՞նց կը համարձակւի... թէկուզ բղաւի էլ, այս տունը միւսներից բաւականին հեռու է և ով կիմանայ որ... Ես հինգ հրացանաւոր զինւորներ կը բերեմ և նրանց սպատրաստ կը պահեմ, որ եթէ մէկը ներս գալ յանդզնի, քիթ ու պոռուզը կը ջարդենք... նրա համար, որ մենք կասենք թէ այստեղ պարոն սպան է օթեւանում և մի՛ք համարձակւի նեղութիւն պատճառելնրան:

Պլատոն Պլատոնիչը շատ հաւանեց զինւորի հնարագիտութիւնն և վճռեց, որ կէս դիշերին ներս կը գնայ Էնդու մօտ, որն անպատճառ կը փաթաթէր սրա վզովն ու փաղաքշանքներով կը զւարճացնէր:

Գիշերւայ մօտ ժամը տասին՝ Կուզման բագի մէջ ներս բերեց քանի մի զինւորներ հրացաններով գողունի կերպով և նրանց թաք-ցրեց տների մօտերքում: Պլատոն Պլատոնիչը մօտեցաւ Էլբերդի տան դռանը, հրեց, և, երևակացեցէք, գուռը կողազած չէր: Մտածեց, որ Էնդին նրա համար է գուռը բաց թողել և ուրախութիւնից ժպտեց: Սենեակը մութն էր. այս պատճառով փոքր ինչ կանգ առաւ. բայց շուտով լսեց Էնդու ձայնը:

— Գուռը փակիր, բաց չթողնես:

Սպան այս խօսքերի իմաստը չհասկացաւ, որովհետև չեչներէն չդիտէր և այս պատճառով էլ կարծեց թէ Էնդին նրան իր մօտն է հրաւիրում:

Աղջիկը խօսքերի վրա հասկացաւ. անկոչ հիւրի ով լինելն և վախեցածի ձայնով ճշաց ուժգին:

— Էլբերդ, հասիր, օգնիր ինձ:

Էլբերդն այն գիշեր Զառոգից վերադարձել էր ու այդ միջոց-ներում իր ձիուն թիմարում էր. ճիշը լսելով խանչալի կոթին ձեռը զրած տուն ներս վազեց և հեռը բերած ճրագի լոցի վրա տեսաւ իր կնոջը, որ գաղանացած սոյացի հետն էր մարտնչում:

Էլբերդը այն աստիճանի շփոթւեց, այնպէս ապշեց այս տեսարանով, որ քանի մի բոսէ մնաց քարացած դրան շէմքում: Իայց երբ եղելութիւնը հասկացաւ և խանչալլ հանած մոտքրւեց վրա թռչել անամօթ հիւրի օրը խաւրեցնելու, վրա հասան Կուզմայի բերած զինւորները ու նրանցից մէկը կոնդախով այնպէս խփեց ետեւից չեցնի զլսին, որ քանի մի տեղ պատռեց և Էլբերդը ուշաթափ գետնի վրա ամբողջ մարմնով տարածւեց:

Զինւորները վրա թափւեցին ուշագնաց մարդու վրա, սկսեցին անողորմարար ծեծել. կապուտեցին կիսաշունչ մարդու ձեռն ու ոտքը և միւս օրն և եթ Զառուդ զրկեցին, որտեղ լատարանը վճիռ պէտք է կայացնէր «ապատամբող Էլբերդի մասին, որ մուալրւն էր ոռուս սպային սպանել»:

Էնդուն էլ, որ բռնելու միջոցին մարդուն օգնութեան հասաւ, բռնեցին ու ձեռն ու ոտը կապկապած՝ սպազի սենեակը ներս գցեցին. ի հարկէ այն սպատճառով, որ ճնա մի ուրիշ տեղ չփախչէրա:

Նրանց փոքրիկ Սուլթուն միւս օրը մեռած գտան. որովհետեւ կռւողների սոների տակն ընկնելով՝ արորւել էր:

Մի քանի ժամանակից յետոյ Վաղիկաւկազի հրապարակի վրա մի կախաղան տնկեցին, որի վրացից կախեցին Ելբերդին ժողովուրդի աչքի առաջ, որպէս զի այս օրինակը ազդէր հասարակութեան վրա և այնուհետեւ ոչ ոք չցանդգնէր սպաների վրա զինւած ձեռք բարձրացնել:

Անտէր, անոք մնացած էնդին, սպառաւած ու տիսրազգած հիմի էլ Ազլիղումն է ապրում, ընկած է դոնէ դուռն մուրալով և ողբում է իր փոքրիկ Սուլթուն ու սիրական Ելբերդին:

ԴՐՈՇՎԿ

ԶՐՈՅՑ Գ. ԼԵՖՈՐԻ

Առաւելէնից՝ ՄԻՔ. ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

Բաց անելով դուռը, կլողինան ցնցւեց. նա լսեց մի թոյլ հա-
ռաւաշանք ախոռի խորքում:

—Ի՞նչ էր, որ ինձ երևաց!

Եւ յիրաւի, լսում էր միայն կովերի միակերպ շնչառութունը
և շղթաների գնդզնգոցը, որ յառաջանում էր ցինկի մսուրներին
դիպչելուց: Զշտապելով նա իջաւ մթութեան մէջ իրան ծանօթ
աստիճաններով, մօտենալով իւր հօր սիրելի կովին և, իր շնչառու-
թիւնը պահելով, ուզեց նորից լսել: Այս անգամ նրան ոչինչ չե-
րեաց. նա պարզ լսում էր մի հառաշանք այն դառարկ տարածու-
թեան մէջ, որտեղ խոռ էին դարսում, մի զգացող հառաշանք,
որից սառսուում էր նորա ամբողջ մարմինը:

Կլողինան իւր կովկիթները դրեց յատակի վերայ և վաղելով
այն անկիւնը, ուր ճրագ էր վառում, վերցրեց այն և նորա դող-
դոչուն լուսով լուսաւորեց ախոռը:

—Ով ամենասուրբ կոյս! —բացականչեց նա: Նորա առաջ յեն-
ւած մի ձեռքին՝ խոտերի վերայ թեք էր ընկել մի զինւոր, իւր
խոշոր աչքերի հայեացքը յառաջ նորա վրայ, որոնց մէջ մահ էր
նշմարւում:

Նա բոլորովին երիտասարդ մի զինւոր էր, թոյլ առանց բե-
խերի, այն երիտասարդներից մէկը, որոնք 1870 թւականին դէն
էին ձգում Հոմերոսը և մտնում զօրքի շարքը:

Պատառոտւած ու կեղսոս վերարկւի մէջ մի ձեռքով նա ամուր պահել էր իւր սւին, իսկ միւս ձեռքը սեղմել էր արիւնոս կրծքին: Կլողինան այս բոլորը մի հայեացքով ըմբոնեց և ծունկ չոգելով նայում էր նորա գունաս դէմքին, որից արտասուքի կաթիներ էին գլորւում: Վիրաւորը իւր հայեացքը չէր հեռացնում Կլողինայի աչքերից և նորա շրթունքները լուս շարժում էին, աշխատելով ձայն արձակել: Վերջապէս Կլողինան այդ հնչիւնների մէջ հասկացաւ, որ նա խմելու մի բան է խնդրում: Նա վեր թռաւ տեղից և շուտով վիրաւարձաւ մինչև բերան փրփրալից կաթով լի կովկիթով:

—Ահա, ասաց նա:

Կլողինան զգուշութեամբ դրեց կովկիթի պառնիկը զինւորի շրթունքին և նա ագահաբար վրայ պրծնելով, խմում էր սկզբում անընդհատ, յետոյ աւելի ու աւելի դանդաղ, երբեմն սկի իւր գունատ դէմքը բարձրացնելով դէպի Կլողինան Յետոյ նորից ընկաւամանի վրայ և մեծ մեծ կումերով խմում էր, ծանր շնչելով, որպէս կենդանիները խմում են առւից: Վերջապէս նա շունչ առնելով ասաց:

—Ենորհակալ եմ!

Կլողինան ցած դրեց կովկիթը:

Ենթադրելով, թէ նա պատրաստում է գնալ, զինւորը դարձաւ դէպի նա հազիւ լսելի շշուկով:

—Ի սէր Սստուծոյ, ինձ մի՛ թողէք!

Այդ խօսքերը Կլողինային ստիպեցին կնճռոտել իւր յոնքերը, որպէս թէ վիրաւորանք զդալով և նա համարեա կոպիս պատասխանեց:

—Տանը պրուսացիք կան...

Այդ դարձւածքը նրան սառցրեց, մի թռիչքով նա ոտքի կանգնեց և գունատ ու անհանգիստ հայեացքով թոթովեց.

—Ուր փախչել... ես նրանց անձնատուր լինել չեմ կարող:

Զինւորը մի շարժում արեց դէպի առաջ, բայց, յանկարծ կանգնելով, տատանւեց և, լայն բացանելով աչքերը, գլորւեց խոռի վրայ և անշարժ մնաց ծոմուած շրթունքներով, որոնցից հոսում էր արիւնը:

—Մեռաւ! ի հարկէ, նա մեռաւ!

Կլողինան, սարսափած, թեքեց դէպի նրա կուրծքը իւր գլուխը, աշխատելով վերարկուի տակից սրտի զարկը լսել...

Վերջապէս նա լսեց սրտի զարկերը, բայց նա այնպէս թոյլ էր խփում, որ կարելի էր իւրաքանչիւր զարկը վերջինը համարել: —Ի՞նչ անեմ—մոտածում էր կլողինան:

Մի կողմից գերմանացիք տիրել էին շրջակայքին. նրան յայտնի էր, թէ նրանք ինչպէս էին վերաբերում այն բնակիչներին, որոնք թագցնում էին իրանց մօս վիրաւորներին ու փախստականներին: Միւս կողմից նա չէր կարող սպանել այն թշւառին, որովհետեւ նրան իւր պատահական թագստեան տեղից խրկելը նշանակում էր սպանել: Եթէ նա պահապանների գնատակներից աղստուել էր, դարձեալ գետնին նստած այն խոր ձիւնն ու սառնամանիքն էլ բաւական էին, որ նա կորչէր:

Ոչ, կլողինան չի կարող այդ անել! առաջին որ նա զինւոր է, երկրորդ որ նոյն այդ համազգեստը կրում են և իւր եղբայրները, որոնք հէնց նոյն բուկէին գուցէ սրա նման օգնութիւն էին հայցում:

Կլողինացի վճիռը ընդունեց. զինւորը կը մնայ նրանց կալւածքում այնքան, որքան որ նրա ոչժերը թոյլ կը տան թագնւելու: Բայց կլողինան այդ մասին ոչ ոքի չի ասիլ, մինչև անդամ հօրը չի յայտնիլ: Նա ցանկանում է պատասխանառուութիւնը վերտոնել իւր վրայ և մենակ կրել բոլոր հետևանքները: Ճարպիկ շարժողութիւններով նա խոտից անկողին պատրաստեց վիրաւորի համար և ծածկեց նրան ձիու ծածկոցով: Յետոյ լցրեց իւր կովկիթները և զուրս եկաւ ախոռից, ծածկելով իւր յետևից դուռը:

—Ի՞նչպէս ուշացար կլողինա! հանդիպեց նրան հայրը, ծեր լուիզէն, երբ նա մոտաւ խոհանոց: —Նոքա անհանգիստ են:

Եւ նա գլխով ցոյց տուեց դահլիճի կողմը, որտեղից լսում էին դժոխային ձայներ: Արբշիո երգերը խառնուում էին բաժակների ճրլնգոցի և խցանների թրխկոցի հետ:

—Իսկ դուք չկարողացաք նրանց ծառայել, վրայ բերեց աղջիկը այլայլած դէմքով:

—Ախար դու զիտես, որ նրանք միշտ քիչ են պահանջում: Կլողինան ահամութեամբ ուսերը շարժեց և խուլ ձայնով ասաց.

— Իսկ եթէ ես չեմ ուզում... եթէ նրանք ինձ զզւելի են. այն աստիճան անսպիտան են, որ ես ուզում եմ թքել նրանց երեսին... եթէ...

— Ծերը ծալեց ձեռքերը և աղաչաւոր հայեացքով նայում էր աղջկան:

— Լռիր, Կլոդինա, հառաչեց նա: — ԶԵ որ դու չես ուզիլ մեր տան քայքայումն, մեր մահը, չի՞ Դու չէ որ տեսար, որ նրանք ուզում էին այստեղ ամեն ինչ ոչնչացնել. բայց երբ միայն դու յայտնեցար, նրանք խսկոյն մեղմացան... դէ գնա է...

Աղջիկը նրա վերայ անհաճոյ հայեացք գցեց:

— Թէե դու իմ հայրն ես, բայց երեւում է, որ եթէ նրանք ինձնից պահանջէին... նա ընդհատեց դարձւածքը, արհամարհանքով աւելացնելու համար. — աղջկան աւելի քիչ գնահատել, քան թէ կալւածքը... Եւ վերցնելով իւր կովկիթները, նա խիստ բացարեց դահլիճի դուռը, ուր նրա երեւալը ընդունեց աղաղակով լի հիացմունքով:

Իսկ մտազբաղ Լուիզէն նստեց կրակի մօտ աթոռի վրայ, որտեղից կարող էր աննկատելի կերպով հետեւել Կլոդինային:

Կնոջ բնաւ բանի չես հասնի! Գերմանացիք ինչ են որ: Մարդիկ են ինչպէս մարդք: Միայն համազգեստներն են ուրիշ! Իսկ այդ դեռ ոչինչ չէ հաստատում. բայց այդպիսի մի կալւածքի համար արժէր որ Կլոդինան խեղաէր իւր մէջ ատելութիւնը:

Կալւածքում ամեն ինչ խաղաղ էր: Հարբած սլրուսացիք քնած էին անկանոն կերպով, — որը ցած դահլիճում յատակին անկողնակալի վրայ, որը վերին յարկում, իսկ մէկը մինչև անդամ ծեր Լուիզէի հետ միասին մի անկողնում:

Իսկ Կլոդինան, բորիկ ոտքերով կանգնած իւր սենեակի սառը սալահատակի վրայ և ականջը դրած դռանը՝ լսում էր քնածների միակերպ շնչառութիւնը...

Բայց ահա նա վերջապէս բակումն է: Փայտեայ կոշիկները, որ նա հագել էր խոհանոցումը, ճռճռում էին ձիւնի վրայ և գիշերային լուսութեան մէջ այդ ճռճռոցը նրան սարսափելի էր թւում:

Մտնելով ախոռը, նա կանգնեց, վախեցած այն մոքից թէ զինւրը մեռած կը լինի:

Կլողինան շտապով մօտեցաւ զինւրին և ձեռքը դրեց նրա կուրծքին. սիրտը տրոփում էր և կիսաբաց շրթունքները շարժում էին ցաւալի հառաջանքներ արձակելով:

— Ա, յաջողութիւն,—ասաց նա կիսաճայն,—այսպիսի ցրտութեան մէջ... նա վեր առաւ իրանից լայն ծածկոցը, որի մէջ և փաթաթեց վիրաւորին, ինչպէս մի մանուկի: Ասպա զգուշութեամբ մի ձեռքով նրա մէջքից բռնելով, իսկ միւսով կոնատակից, նա փորձ արեց նրան վերցնել: Նա ծանր չէ, փոքրիկ զինւր է, ոչնչով ծանր չէ այն հացի տոպրակներից, որոնց նա շուռ ու մուռ է, տալիս շուրմարանում: Կլողինան ուրախութեամբ վերցրեց զինւրին, սեղմելով իւր կուրծքին, որպէս զի նրան պաշտպանած լինի քամուց, և համարեա վազ տալով անցաւ բակը: Այս, անցնելու այդ մի քանի վայրկեանների լնթացքում նրա սիրտը սաստիկ բարախում էր կրծքում. բաւական է, որ շունը հաչէր և արթնացնէր քնածներին, այն ժամանակ մնաք բարեւ կլողինա, վիրաւոր, հացը և կալւածք! Գերմանացիք հանաք չեն անում:

Այսպիսով նա առանց արգելքի հասաւ մինչև խոհանոցի դուռք: Կրկին այնուեղ թողնելով իւր կօշիկները, նա, ինչպէս դուրս գնալիս, բորիկ սկսեց բարձրանալ սանդուխքով. բայց այս անգամ աւելի ևս դանդաղ, ծածկւած սառը քրտինքով և դողդողալով իւր հանդէպ զարհուրելի պրուսակ-զինւրի պատկերը տեսնելու միակ մոքից:

Վեր բարձրանալով, նա արգէն հազիւ շնչում էր, ոտքերը ծալւում էին, ձեռքերը ջարդուում, բայց նա այնչափ բազգաւոր էր, որ յաջողւեց ցանկալի կերպով հասնել իւր նպատակին, ուստի և նա համարեա թէ յոդնածութիւն չէր զգում:

Ինչ ուզում է լինի, մինչեռ զինւրը փրկւած է սաստիկ ցրտից և գնտակներից. և հիմա եթէ նրան վիճակւած է վէրքից մեռնել, գոնէ քրիստոնէաբար կը մեռնի, տաք անկողնում, շրջապատւած բարեկամի հոգածութեամբ և չի սատակիլ շան պէս ախոռի անկիւնում կամ թէ ճանապարհին, ինչպէս ուրիշ շատերը:

Դուռը վակելով և կրկնապիեղկերը ծածկելով, կլողինան ճրադ

վառեց։ Յանկարծ զինւորի շրթունքները շարժւեցին և Կլողինան կրկին լսեց «վսմել» բառը։ Կլողինան տւեց նրան բաժակը և նա վեր առնելով այն զոյզ ձեռքերով, սկսեց ագահաբար խմել։

Կլողինան՝ արագաբար արձակեց նրա վերաբկուն և յանկարծ յետ ընկնելով ճշաց։

Կրծքի վրայ, հէնց այն տեղում, որտեղ բռնել էր զինւորը, նա աեսաւ գործւածքի մի կեղտոտ պատառ, որի ներկայութիւնը հասկանալի եղաւ նրան երեք գոյնի լինելու պատճառով։ Այն դրօշակ էր, աւելի ուղիղ՝ դրօշակի պատառ էր, որ մեացել էր անողոքելի մի կուից յետով։

Սարսափած և արտասւալից աչքերով Կլողինան կռացաւ և ջերմեռանդութեամբ համբուրեց այն թանկադին փալասը։

Այդ համբոյրը վիրաւորին ստիպեց բաց անել իւր աչքերը. և նա ձիգ հայեացքով նայում էր աղջկայ վրայ։

— Դուք փրկւած էք, — ասաց Կլողինան։

Բաղդի ճառագայթը լուսաւորեց հիւանդի դէմքը և նա շնչաց։

— Նա էլ է փրկւած!... Նրա համար չնորհակալ եմ։

Զինւորն ընկաւ մէջքի վրայ։

Կլողինան շտապով պառկեցրեց նրան, բաց արեց շապիկը վէրքը տեսնելու. ձախ ուսի ուղղութեամբ քնքոյշ մորթի վրայ երեսում էր ձեռափի մեծութեամբ մի կարմիր տարածութիւն և այդ տարածութեան վրայ մի սև անցք, որ ծածկւած էր մակարդւած արիւնով և որը ցոյց էր տալիս գնդակի մոնելու տեղը։

— Խեղճ մանուկ!

Տաք ջուր վերցնելով, Կլողինան վիրակապ շինեց չոր քաթանից, որը պոկեց հէնց իւր շապիկից։

Յետոյ նա մօտ բերեց բազկաթոռը հիւանդի մահճակալին, վնենելով ամբողջ գիշեր պահպանել հիւանդին. բայց յոգնածութիւնը յաղթեց և նա, գլուխը զնելով բազկաթոռի յենարանի վրայ, քնեց...

Կրկնափեղկերի անցքերի միջով արդէն ներս էին թափանցել արևի ճառագայթները, երբ Կլողինան բաց արեց աչքերը. մէկը նրան կանչում էր։

Յուղւած կերպով նա յետ դարձաւ և հանդիպեց վիրաւորի

հայեացքին, որը, փոքր ինչ առաջ կռացած դէպի մի արմուկը,
թեքել ընկել էր մահճակալի վրայ:

—Կլողինա, —արտասանեց զինւորը քնքոյց ձայնով, որի մէջ
դեռ լսում էին մանկական հնչիւններ, —ձեզ կանչում են:

Եւ յիրաւի սանդուխքի տակից լսում էր Լուիզէի խուլոս
ձայնը:

—Կլողինա... Կլողինա —գոռում էր կալւածատէրը, —վեր կըդաս
դու վերջապէս!... սպասիր, ծոց! Ահա ես ինքս կը դամ...

Կլողինան շտապով վեր թռաւ, վազեց դռան մօտ և, փոքր
ինչ բաց անելով, կանչեց.

—Ես այսոեղ եմ, այսոեղ, այս րոպէին!

Յետոյ կրկին դուռը փակելով՝ նա մօտեցաւ մահճակալին:

—Ի՞նչ է —հարցրեց նա անհանգիստ հետաքրքրութեամբ նա-
յելով հիւանդի երեսին:

Պատասխանի փոխարէն զինւորը վերցրեց նրա ձեռքը և նախ
քան նրա զգաստանալը, համբուրեց այն:

—Ի՞նչպէս բարիէք դուք! —շշնջաց նա: Առանց ձեզ այն կը լի-
նէր նրանց ձեռքում:

Կլողինան հասկացաւ, որ նա խօսում էր զրօշակի պատառի
մասին, որի մի ծայրը երեսում էր բաց շապիկի տակից. բռունցք-
ները սեղմելով, կլողինան մռմռաց.

—Անպիտաններ!

Հանգած կրակը փայլեց զինւորի մաքուր, մանկական աչքե-
րում:

—Այո, —խուլ ձայնով կրկնեց նա կլողինայի խօսքը —անպի-
տաններ! Եթէ դուք տեսնէիք դրանց երէկ, երր շրջապատել էին
մեր զօրագունդը: Մեզ վրայ յարձակւում էին ինչպէս զայլեր!...
Այո, դա մի սարսափելի կորւ էր: Ես առաջին անգամն էի նմանը
տեսնում... Բայց այն ինձ չէր շարժում, մինչեւ որ իմ սւին չմտաւ
մէկն ու մէկի կուրծքը. այդ ինձ բոլորովին փոխեցր: Ինքներդ դա-
տեցէք, մի ամիս առաջ ես ճագար անդամ անկարող էի սպանել:

Կլողինա!... Կլողինա!... —մռնչաց Լուիզէն, —ես այս րոպէին
ինքս կը բարձրանամ:

Կլողինան անհամբերութեամբ ուսերը շարժեց:

— Իսկ դրօշակը... հարցրեց նա:

Երիտասարդի արտայայտութիւնը լրջացաւ:

— Դրօշակը... ճշմարիտ չեմ յիշում ինչպէս պատահեց. յիշում եմ միայն, որ մի սոսկալի կռւից յետոյ, յետ նահանջելով, ևս զօրագնդի մի քանի ընկերներիս հետ թագնւեցի այն սրահում, ուր արդէն մերժնցից քսանը կային... կէս ժամի չափ, մենք մի կերպով ողաշտպանւեցինք ընկնելով միմիայն յետելից... Վերջապէս մեր մթերքը վերջացաւ, մենք միայն չորս հոգի էինք մնացել... վճռեցինք դուրս սողալ, բայց հէնց այդ վայրկեանին մի նոր պայմանով լուսամուտը կոսրւեց: Ես զդացի, որպէս թէ փայտով խփեցին իմ ուսին և ընկայ:

— Խեղճ՝ մանուկ! — շշնչաց Կլողինան:

— Երբ ես զգաստացաց, համարեա մութն էր: Ամեն ինչ լուռ էր. իմ շուրջն անշարժ կերպով ընկած էին միւսները սեւացած աչքերով... Ես տանջւում էի: Այդ սարսափելի էր, բայց ես, որ ուսումնարանում այնքան քնոքոց էի, չէի լաց լինում: Ես հնարք էի վինտուում դուրս գնալու: Մի կերպ վեր կացայ և արդէն մօտ էի դուռը, երբ իմ յետելից լսեցի ինձ կանչող մի թոյլ ձայն. «Ընկեր, ընկեր», — կրկնում էր ձայնը հետզհետէ նւազելով: Ես յետ նայեցի... Սրահի պատին յենած ինչ որ սուեր շարժում էր իւր ձեռքերը դէպի իմ կողմը: Ես դիակների վրացից անցնելով մօտեցայ և ճանաչեցի մեր հին սերժանտ-մայիօրին: Այդ կռւի ժամանակ ես հրացանաձում էի նրա հետ միասին և տեսայ թէ ինչպէս նա գըլխից վիրաւորւած գետին տապալւեց: Ես նրան մեռած էի հաշւում: «Փմ սիրելի, — ասաց նա, ինչ որ մեկնելով ինձ, որը ես անկարող էի տեսնել մթութեան մէջ, — ահա թէ ինչ է մնացել իմ գնդի գրօշակից: Ես այս պոկեցի փայտիկից, որպէս զի թաղցնելը հեշտ լինի, բայց իմ հաշիւները վերջացել են... մինչ քո ձեռքերը ողջ են, փրկիր այս... 120-րդ գնդի գրօշակն է սա!» Եւ նա մեռած ցած գլորւեց: Այն ժամանակ ես սկսեցի փախչել անտառի միջով դէպի սահմանը, որը ասում են, երկու լեօի (մղոն) վրայ է. բայց մոլորւեցի և ցրտից դողդողալով, տանջւած հասայ այսուեղ և ահա...

Երկար պատմութիւնը ձանձրացը երիտասարդին. նա իւր գլուխը գնելով բարձի վրայ, շշնջաց.

— Խմել եմ ուզում...

— Կլողինա, — կատաղաբար կանչում էր Լուիզէն, — Կլողինա, ...
սպասիր, ծոյլ, ահա գալիս եմ! ...

Վիրաւորը վախեցած հայեցք ձգեց Կլոնդինայի վրայ:

— Մի' անհանգստացէք, հայրս վախենում է աստիճաններից:
Բայց ես այնուամենացնիւ կիջնեմ: Նա ընդունակ է այստեղ սրա-
ծայր սաղաւարտներ ուղարկել: Այժմ քննէցէք, երբ ազատւեմ, ես
կրկին կը գամ...

Մի' ժամկց յետոյ նա եկաւ, հեալով շոապ քավելուց և ժպ-
տելով դուրս հանեց գողնոցի տակից թարմ կաթով լի ամանը:

Ահա թէ ինչով կարելի է և կուշտ լինել և ծարաւը յա-
գեցնել:

Նա խմեց, յետոյ Կլոնդինան նախորդ օրւայ պէս նրա վէրքերը
լւաց:

— Այժմ հարկաւո՞ր է մի լաւ քնել:

Զինւորի այտի վերայից արտասունք զլորւեց:

— Դուք տանջւմնեմ էք:

— Սարսահելի կերպով, — պատասխանեց զինւորը, աշխատելով
ձնշել դուրս ցայտող արտասունքները և հերոսական ժպիտով աւե-
լացրեց.

— Ախար ձեզ ասացի, որ ես ուսումնարանում քնքոյշ էի:

— Այն ուսումնարանումն էր, — Կլողինան աշխատեց հանաքի
տալ: — Այժմ դուք էլ ուսումնարանում չեք:

— Ընդամենը մի ամիս է... Հայրիկս տւագ եղբօրս հետ մնաց
Պարիզում, երկուսն էլ ազգային զօրագնդի մէջ... իսկ մայրիկս ինձ
ու քողերիս հետ գնաց Տուր... ես սովորում էի լիցէում, բայց վեց
շաբաթ առաջ, Սեղանից յետոյ, ես մօրիցս թոյլուութիւն ինդ-
րեցի զնալու: Սկզբում նա ընդդիմացաւ, լաց եղաւ, բայց յետոյ
զիջեց և ես մտայ կամաւոր զինւոր:

Կլողինան լսում էր այս հասարակ պատմութիւնը դժւարու-
թեամբ պահպանելով իւր արտասունքները:

Զինւորը կարմրելով ասաց.

— Դուք այնպէս բարի էք և այնպէս գեղեցիկ էք, որպէս բարի:

Կլողինան կանգնեց և մի տեսակ յուզւած ասաց.

— Դուք այժմ զովացաք, հարկաւոր է քնել, — և, ուշ չդարձնելով նրա աղաչաւոր հայեացքին, դուրս եկաւ:

Մենակ մնալով, զինւորը երկար նայում էր զռանը, որից դուրս եկաւ Կլողինան, յետոյ գլուխը դրեց բարձի վրայ. աչքերը փակւեցան, և նա քնեց, արտասանելով քնի մէջ — Կլողինա:

Անցաւ ութ օր: Տանջանքի և յուզման ութ օր! Նոքա երկուսով էլ զողում էին այն կառի վրայ, որը երդւել էին պահպանել: Ամենաթեթև թրխկոցը ստիպում էր զինւորին ցնցւել և նա տրոփող սրտով սպասում էր յարձակման, վճռելով իւր կեանքի գնով պաշտպանել իրան համար թանկագին դրօշակը:

Կլողինան էլ իւր կողմից նոյնպէս շտապում էր վերապառնալ գործից յուզւած այն մտքով, ինչ որ կարող էր պատահել, ինչից որ ինքը վախենում էր և ինչ որ օրէցօր նրան անխուսափելի էր թւում:

Համարեա անհաւատալի էր, որ հայրը վերջ ի վերջոյ ուշադրութիւն չդարձնէր Կլողինայի անդադար սանդուխքով վազվելուն: Նա բաւականին լաւ գիտէր իւր հօր վախկուութիւնը և նրա անսահման սէրը գէպի իւր կալւածքը, որպէս զի համոզւէր, թէ հայրը կը մասնէ զինւորին, որի ներկայութիւնը նրա տան քայքայման պատճառ կարող էր լինել:

Արդէն ութ օր էր, որ Կլողինան չէր պարկում: Նա ամբողջ գիշերն անց էր կացնում առանց հանւելու ընկած բազկաթուի վրայ հիւանդի անկողնու մօտ, և ամեն վայրկեան զարթելով, հոգում էր նրան կանթեղի թոյլ լուսով: Յաճախ նա ան նայելով, Կլողինան նկատում էր նրա լարւած հայեացքը, որով նա նայում էր դրանը, ականջ դնելով ամեն մի շշուկին:

Այդպիսի պայմաններում առողջանալու մասին զուր կը լինէր մտածել. ոյժը, ուղիղ է, քիչ աւելացել էր, բայց ջերմը մնում էր, իսկ գնուակը անտանելի տանջանքներ էր պատճառում:

— Գիտէք, — ասաց զինւորը մի անդամ ցաւի սաստկութիւնից յետոյ, որի ժամանակ նա մտածում էր բարձր հառաչանքները խեղտելու համար, — գիտէք, ես չափազանց տանջւում եմ. իսկ իմ

ամենաթոյլ ճիշը կարող է ինձ մատնել։ Այն ժամանակ ձեզ ի՞նչ կը պատահի։ Այդ անպիտանները ձեզանից չեն քաշւիլ... ես առանց այն էլ ի չարը գործ դրեցի ձեր անձնուրաց հիւրասիրութիւնը, ձեր հոգնածութիւնն ու ինսամքը... հարկաւոր է դնալ...

Մի քանի վայկեան լոդինան նայում էր նրա վրայ, որպէս թէ իւր առաջ մի խելազար էր կանգնած, և կրկնում էր.

—Գնալ... գնալ... Ո՞ւր։ Որպէս զի մեռնէք մի ձորում և առաջին գերմանական մոլեշրջիկին տաք այդ դրօշակը, որը դուք խոստացել էք փրկել...

—Դուք ինձ ասացիք, որ այստեղից մինչեւ սահմանը մի մղոնից էլ պակաս է. դուք ինձ ցոյց կը տաք ճանապարհը և դժւարը միայն այդ է։

—Բայց ախար դուք ոյժ չունէք...

Զինւորը շարժեց գլուխը և կուրծքը սեղմելով՝ ասաց.

—Սրան փրկելու համար ես իմ մէջ ոյժ կը դռնեմ։ և այն մի մղոն, այդ հեռու չէ։

Կլողինան լուռ էր, բայց երբ նա դուրս եկաւ, եթէ վիրաւորը կարողանար նրան տեսնել, նա իսկոյն կը նկատէր, որ Կլողինան մի որոշ վճռի է հասել...

Եւ ահա զինւորը նստած է բազկաթոռի վրայ, հագած իւր վերարկուն, որ կոճկել էր փալասի վրայ, սպասելով Կլողինայի դարձին, որը գնացել էր համոզւելու անարգել փախուստի կարելիութեան մէջ։

—Ե ի՞նչ—մտազբաղ հարցրեց զինւորը, երբ նա ներս եկաւ։

—Բոլորը քնած են. բայց նրանք ինձ չեն անհանգստացնում, — ես նրանց բաւականին գինի տւեցի, նրանց հիւրասիրեցի. միայն լաւ չէ, որ ձիւն է գալիս։

—Աւելի լաւ, քայլերիս ձայնը չի լաւիլ, —պատասխանեց նա. բայց դուք ի՞նչ էք անում։

Կլողինան վերարկուն էր հագնում։

—Տեսնում էք, վերարկուս եմ հագնում, այժմ գնանք։

—Ո՞ւր ենք գնում։

—Աստւած իմ, ես ձեզ կառաջնորդեմ! Դուք երեւակայում էք, թէ ես ձեզ այնպէս հիւրանդ ու միայնակ գիւղերի մէջ այս սառնա-

մանիքին բաց կը թողնեմ; —Եւ հանդիմանելով աւելացրեց. —Այս լաւ չէ! Բայց ախար, յիրաւի, դուք ինձ չէք ճանաչում:

Զինւորը նրա ձեռքից բռնեց և սրտանց ասաց՝

—Ես ձեզ չեմ ճանաչում! Ես գիտեմ, որ դուք իսկական ֆրանսուհի եք: Ես զգում եմ, Կլոդինա, որ կը սիրեմ ձեզ...

Վաս կարմրութիւնը սփռւեց աղջկայ դէմքի վրայ:

—Ժամանակ է. —յանկարծ կտրուկ կերպով ասաց Կլոդինան:

Նա անցաւ առաջ, զինւորը հետեւեց նրան, մի ձեռքով բռնելով վանդակից, իսկ միւսով յինւելով Կլոդինային:

Իջնել շատ դժւար էր, բայց նրանք յաջողութեամբ հասան մինչեւ դուռը: Անցնելիս Կլոդինան վեր առաւ պատից Լուիզէի վերարկուն և ձգեց զինւորի ուսերին:

—Դուրսը զարհութելի ցուրտ է:

Բացւած դրնով նրանց դէմ բարձրացաւ ձիւնի ամբողջ փոթորիկ:

—Զիւտաձգել մինչև վալը, —առաջարկեց Կլոդինան յետ քաշւելով:

—Գնանք —եղաւ նրա պատասխանը:

Զիւնը երկու ամբողջ օր գալիս էր մեծմեծ քուլաներով և ծածկել էր հողը հաստ շերտով, այնպէս որ նրանց ոսքերը խրում էին մինչև սրունքները: Նրան թեւանցուկ անելով, Կլոդինան զգաց, որ նրա ձեռքը զողվողում էր:

Այնուամենայնիւ զինւորը կայտառութեամբ առաջ էր գնում:

Դունից անցնելով, նրանք անցան ճանապարհը և մտան անտառը, որը նրանց ծածկում էր ամբողջ շրջակայքում նշանակւած պահապաններից: Անսովոր լինելով զիւղական անյարմար կօշիկներին, վիրաւորը սայթաքեց և այդ շարժումից յառաջացած նրա ուսիցաւը ստիպեց նրան ճշալ:

—Աստւած իմ! —հառաչեց նա:

Նա թուլացաւ և Կլոդինան զգաց իւր վրայ նրա ամբողջ ծանրութիւնը: Այն ժամանակ, զինւորին բոլորովին անսպասելի կերպով, Կլոդինան վերաւաւ նրան և տարաւ այնպէս, ինչպէս մի ժամանակ սրահից դէպի տուն:

Կլոդինան սպասում էր, թէ նա կ'ընդգիմանայ, բայց նա լուռ էր, ամաչած իւր թուլութիւնից և միայն արտասուքի երկու կաթիլներ ցած գլորւեցին և սառեցին նրա ացուերի վրայ:

Խոկ նազելի աղջիկը դնում էր, խրելով ձիւնի մէջ, սայթա-
քելով իւրաքանչիւր քայլից և հեւալով իւր բեռան ծանրու-
թեան տակ:

Անցնելով հարիւր մետրի չափ, նա մոտաւ խիտ անտառի մէջ,
ուր եղենու մերկ բնին կապած գտաւ ձին իւր սայլով:

—Աերջապէս, մենք այժմ ազատ ենք:

Եւ այդ զիտակցութիւնը Կլողինային նոր ոյժեր պարգևեց:
Նա հիւանդին դրեց սայլի մէջ, ինքը նստեց կողքին և երասս-
նակը ձեռքն առնելով, խփեց ձիուն:

—Դէհ, մոխրագոյն, քաշիր:

Զին քաջալերւելու կարիք չունէր. նա խոշոր քայլերով վազեց
անհարժ ճանապարհով:

—0', —ասաց Կլողինան իւր ճանապարհորդակցին ուրախ կեր-
պով,—եթէ հայրս իմանայ, թէ այժմ որտեղ է իւր ձին:

Զինւորը բարձրացաւ խոտի վրայ և գլուխը դնելով աղջկած
ծնկների վրայ, քնքշութեամբ ասաց.

—Նորհակալ եմ ձեզանից, գոնէ այդ գարշելիները չեն խլի
թշւառ դրօշակը, իսկ ես կը տեսնեմ մօրս:

Կլողինան ոչինչ չպատասխանեց և, կրկին խփելով ձիուն,
կանչեց.

—Միայն թէ անցնենք անտառը, այն ժամանակ կարող ենք
սրածայր սաղաւարտներին երկար քիթ ցոյց տալ... Տասը վայր-
կեան էլ գնանք, արդէն այնտեղ Բելգիան է:

Յանկարծ նրա յոնքերը կնձռուաւեցին, դէմքը վրդովմունք էր
արտայացառւմ:

—Այս ի՞նչ է, թէ ի՞նձ է այնպէս թւում. նրանք ի՞նչ են
շինում այսուեղ—անտառում:

Նա ձիուն զարձեալ խփեց:

Յանկարծ աջ ու ձախ կողմից մարդիկ յայտնւեցան և փակե-
ցին նրանց ճանապարհը:

—Wer da?—այդ ով է—լսւեց մի ձայն:

—Պարկեցէք,—ասաց Կլողինան, բոթելով զինւորին և նորից
խփեց ձիուն, որ վազում էր կատաղի թռիչքներով:

Լաւեցին հրացանի որոտներ և գնտակները վզվզում էին սայլի

շուրջը։ Նրանցից մէկը կոտրեց սայլի տախտակը հէնց զինւորի գլխի մօտ։

Կլոդինան թողեց երասանակը և փախեցած ձին գլուխը տարաւ։

Մի նոր պայմթիւն խանգարեց տիրող լոռութիւնը, մոխրագոյնը հառաջեց, տատանեց և ծանրացած ընկաւ կողքի վրայ, կոստատելով սամիները։ Սայլը վեր ընկաւ, Կլոդինային և զինւորին շարտելով ձիւնի վրայ։

Երկու հարիւր մետր հեռաւորութեան վրայ թնդաց մի յաղթական ձայն։ Կլոդինան վեր թռչելով, հեռակաց տեսաւ երկու շարժուն կէտեր։

— Շուտ, շուտ! — ասում էր նա, բռնելով իւր ճանապարհորդակցի ձեռքը, — աւելի համարձակ! Ահա և սահմանը, այնտեղ կազատւենք։

Այսպէս նրանք վազում էին մի առ ժամանակ մի նեղ շաղով, որ ձգւում էր բարձր եղենիների միջով։

Բայց յանկարծ վիրաւորը կանգնեց և թոյլ ձայնով արտասանեց։

— Ոչ, ոչ, էլ չեմ կարող... փախէք առանց ինձ!

Կլոդինան կամեցաւ բռնել նրա ձեռքը, բայց նա յուսահատար նստեց հողի վրայ։

— Ոչ, վերջացած է... միևնոցն է, ես կը մեռնեմ սահմանին չը հասած։ Ահա ձեզ... և նա մեկնեց Կլոդինային երեքդունեան փալասը։

— Ձեզ թողնել! — բացականչեց նա դառնութեամբ. — երբէք!

Զինւորների ձայները արդէն պարզ լսում էին։

— Փախէք, փախէք, — աղաչում էր զինւորը, — այդ ազատեցէք!

Կլոդինան մի վայրկեան տատանւելուց յետոյ վերառաւ արիւնով յագեցած պատառը և հեկեկալով առաջ վագեց։

Ճանապարհը կորցրած շների պէս գերմանացիք անցան այն թփի մօտով, որի տակ արիւնաքամ ընկել էր զինւորը, և վագեցին Կլոդինայի յետևից։

Բայց նա մանկութիւնից սովորած լինելով դաշտերում՝ վագելուն, գերազանցեց իւր հետև ողներին։

Անտառը անցնելով, նրան մինչև սահմանասիներն հասնելլ
քսան մետրից աւել չէր մնում գնալու։ Յանկարծ մի նոր պայմանական
լուեց։

— Ասուած իմ! շշնչաց նա, կանգ առնելով, և սեղմեց իրեն
հաւատացած դրօշակը։

Նրա ծնկները ծալեցան, աքերը մթնեցան։

Մեռնել այսոեղ! իսկ դրօշակը։

Ոչ, այդ անկարելի է։ Եւ իւր հայրենասիրական զգացմունքից
ոյժ ժողովելով, նա առաջ գնաց մի ձեռքով բունած դրօշակը, միւ-
սով պահելով վէրբից ցայտող արիւնը։

Լուեցին նորից երկու հրացանի ձայներ. նա մի քանի քայլ էլ
արեց և ընկաւ արիւնաշաղախ, հինգ մետր սահմանից անցած։

— Փրկւած է! — շշնչաց նա և երեսը երկնքին դարձրած լռեց։

Գերմանական գիշերապահները սահմանին հասնելով, մի շրջան
կազմեցին և անայաջողութիւնից կատաղած՝ հեռացան։

Եթէ որ մի քառորդ ժամից յետոյ նրանցից մէկը յետ նայէր,
ձիւնի վրայ մի կէտ կը նկատէր, որը լանդաղ կերպով առաջ էր
շարժւում, մերթ կանգ առնելով, մերթ նորից գնալով։ Այդ կէտը
ընթանում էր դէսի սահմանը տանող ուղղութեամբ։

Զինւորը, այն ուղղութեամբ հրացանի ձայներ լսելով, ժողո-
վեց իւր վերջին ոյժերը, որպէս զի փնտրէ իւր ձանապարհորդակ-
ցուհուն։

Երբ առաւօտեան Բելզիայի չեղոքութիւնը պահպանելու հա-
համար սահմանի վրայ նշանակւած կարարինէրները անցնում էին
նոյն տեղով, նրանց ձիւնի տակ կիսով չափ թաղւած տեսան Փրան-
սիացի զինւորին, որի գլուխը հանգչում էր աղջկայ կրծքի վրայ։
Նրա մասները սեղմած բունել էին երեքունեան դրօշակը, իսկ
շրթունքները հպել էին երխտասարդ աղջկայ աջին։

ԲՆԱԿԱՆ ՀԻՊՆՈՏԻՍՄ

ԲԺՇԿ. ՎԱՀԱՆ ԱՐԾԲՈՒԽՈՒ

Մեր ակա աշխատութեան առաջին մասում¹⁾ մենք ուսումնասիրեցինք այն հիպնոսական երևովթները, որոնք չարուցաւմ են արևստական կերպով. ալսինքն Արևեստական կամ Փորձնական Հիպնոտիսմը:

Մենք տեսանք, որ հիպնոսական երևովթները վերին աստիճան բազմատեսակ են, նաևելով հիպնոսական քնի խորութեան, Բայց եթէ խորը քննելու լինենք ակա երևովթները, կը տեսնենք, որ նրանց գիմքը ն երշնչումն է: Ներշնչումն է ակա անհամար երևովթների պատճառը, որոնք նկատում են Քարացման և գլխաւորապէս Քնաբածութեան (Սոմնաբուլիսմի) մէջ, ներշնչման ուսումնասիրութիւնն է, որ տալիս է մեզ հասարակական կեանքի զարգացման օրէնքների բանալին:

Բնական հիպնոտիսմը ընդ գրկում է (ինչպէս մենք ասել ենք) այն բոլոր հիպնոսական երևովթները, որոնք նկատում են բնականաբար, աչսինքն փորձնական հիպնոտիսմից դուրս:

Մի որոշեալ պրոգրամմի հետեւելու համար, մենք կ'ուսումնասիրենք բնական հիպնոտիսմի խաղացած դերը մարդկութեան պատմութեան մէջ, և չետու մի թռուցիկ հայեացք գցելով հիպնոտիսմի վրա արդի հոգեբանութեան, մանկավարժութեան, իրաւաբանութեան տեսակէաներից, կ'անցնենք «Նմանողութեան» կամ «Ընդ դօրինակման» մեծ օրէնքին և «Ամբոխի հոգեբանութեանը» ըստ Սիգելէի:

1) Այս աշխատութեան առաջին մասը տպւած է «Մուրճի» 1891 № 12 և 1892 №№ 1, 2:

ԳԼՈՒԽ Ա.

ՀԻՊՆՈՏԻՍՄԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵԶ, ՀՆԱԴԱՐԵԱՆ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ,
ԴԻԻԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՔԱՆՉԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ:

I. ՀԻՊՆՈՏԻՍՄԸ ՀԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

Գիթիան և օրակուլներ, Պիմելները և Պիթանեանները, — Մոդութինը և Կախարդութինը: — Հին զաւանութիւնների ծագումը: — Մարդու գաղափարը բարու ու չարի, երկնալին ու երկրագին գորութիւնների մասին: — «Բարի սպիներով բռնւածները» ու «Հարողներով բռնւածները»:

Հիպնոտիսմի երեսութիւնների հետ ծանօթանալով, գիտնականները նկատեցին, որ ազգերի պատմութեան էջերը լիքն են նույանման երեսութիւններով, որոնք մինչև վերջին տարիները գաղտնութեան (միտոլոգիամ) քօղավէին ծածկւած:

Հին և մինչև անգամ նոր գարերուժ նրանց մեծ մասը ընդունւում էին, ինչպէս գերբնական երեսութիւններ:

Հիպնոտիսմի հետ ծանօթութիւնները մի նոր, ապագայ լուսերով լի, մեթոդ է տալիս մեզ պատմութեան եղելութիւնները մեկնելու համար:

Արդէն հին և նոր ազգերի պատմութեան ռազմաթիւ էջերը լուսաբանւած են, Պիթիանները և օրակուլները պարզած են, մեծ արշաւանքների, մեծ հրաշագործութիւնների պատճառները լմբունւած են, բիւրաւոր մնապաշտութիւնների, որոնց շարքումն են և միջնադարեան դիւահարութիւնները, մեկնւած են. իսկ, մարդաբան Տարղի չնորհիւ՝ ալսօր ն մանողութեան մեծ օրէնքը ազգերի քաղաքական և հասարակական շարժումների հիմքը ընդունւած:

Այս նպատակը այնքան մեծ է, որ եթէ մեզ լաշողւի նրա մի մասին անգամ համուելու, մենք շատ երջանիկ կը լինենք:

Մենք կանգ կ'առնենք պատմական ամենազլիսաւոր շրջանների վրա, որոնք լաւ ուսումնասիրւած են մեզ հետաքրքրող տեսակէտից, — այն է՝ հնագարեան դաւանութիւնների պատմութեան վրա, միջին դարի համաձարակ դիւահարութեան և գլուաւորապէս թովչութեան համար եղած հոչակաւոր դատերի վրա:

«Իջնելով պատմութեան սանդուխքներով մինչև երկրիս հնադոչն դարերի փլատակները, և օրւակ լուսով զննելով անցած դարերի մնացորդները, որոնք զեռ գիշերավին խաւարի մէջն են, մենք մի շարք հրաշավին անցքեր ենք տեսնում, անցքեր, որոնք ոչ միայն զարմացնում էին ամբողջ Եղիպատոս, Յունաստան և Լիրիան, ալ և գրաւում էին բոլոր լետագայ ազգերի ուշադրութիւնները. Այս կարգ եղելութիւններն են—օրակուլների գուշակութիւնները, Դելֆիեան Ապոլոնի, Դոդոնեան իւպիտերի, որ

էպիրումն էր, Ամմոնեան իւպիտերի, որ Լիբիացումն էր, Բէօսիալի Տրո-
ֆոնիան և շատ Սիւլների, որոնց գուշակութիւնները ազգերի աչքին ան-
ժխտելի ճշմարտութիւններ էին»:

Այս խօսքերը ես քաղում եմ 1818 թ. տպած մի հազւագիւտ գրքից
ակնդանական մագնիսութեան մասին», որը հաղորդեց ինձ, իրան լատուկ
սիրելութիւնով, բժշկապետ Քաբակեանը:

Ուրեմն Մեսմերի ուսմունքը կինդանական մագնիսութեան մասին ¹⁾,
որքան էլ սխալ լինէր նրա հիմքը, զեռ մեր դարի սկզբին լուսա-
բանել էր մի շարք ամենակարենոր պատմական երևոլթներ, որոնք մինչև
աչժմս էլ շատ պատմաբաններին անհասկանալի են:

Մենք կ'աշխատենք կանդ առնել այս երեսիթներից կարեորագոյն-
ների վրա,

Հիպնոտիսմը լաւոնի է մարդկութեանը ամենահին դարերից. Հիպ-
նոսական երեսիթները նկատել են ամեն ժամանակ, նրանք նոյնն են եղել,
ինչ որ հիմի են. Ազգերի պատմութեան մէջ նրա խաղացած դերը անչա-
փելի է, բաւական է կարդալ Տարդի (Tarde) գրւածքը հասկանալու հա-
մար, թէ որքան կարենոր է այս նոր գիտութեան ուսումնասիրութիւնը
մարդկութեան քաղաքական և հասարակական զարգացման օրէնքները
ըմբռնելու համար:

Ամեն դարերում հիպնոսը մեծ դեր է խաղացել կրօնական սնապաշ-
տութիւնների արմատանալուն և զարգանալուն. բացի ալդ նա ընդունել
է, իբրև մի զօրեղ բուժական միջոց:

Ափսոս, որ մինչև պատմական ժամանակները ճիշտ տեղեկութիւններ
չունենք հիպնոսի մասին:

Կարելի է ենթադրել, որ Ասիակում և Զինաստանում հիպնոտիսմը
դործ էր ածում արդէն զանազան ախտեր բժշկելու համար:

Եգիպտոսում հիւանդներին ուղարկում էին Մեմֆիս, որտեղ Սերա-
պիսի տաճարի մէջ քուրմերը քննցնում էին և դրանով բժշկում էին նրանց:
Դանիլո Վելանսկու ասելով, Եգիպտոսում գտնւած են նշանագրեր, որոնց
մէջ նկարած ան երկու մարդ խսկապէս նոյն գրութեան մէջ, ինչ զրու-
թեան որ լինում են նրանք հիմի էլ մագնիսելու ժամանակ: Հեղկաս-
տսնի Փակիրները իրանք իրանց հիպնոսում էին և սքանչացման (էք-
ստաղ) մէջ ընկնում, իրանց քթին նաևելով:

Աւելի ընդարձակ տեղեկութիւններ ունենք մենք Յունաստանում և
Հռոմում թագաւորած հիպնոսի մասին:

¹⁾ Տես «Մուլճ» 1891 թ. № 12, էջ 1485—1486.

Հների գաւանութիւնները պահպանուում էին գուցէ մեծ մասամբ հիպնոսի թովչութեան ներքու:

Քուրմերը ընդհանրապէս ծանօթ էին ալս երևութներին և կարողա-նում էին չարուցանել նրանց: Երանց գիտութիւնից ի հարկէ օդտուում էին նրանք գուեհիկ ամբոխը միշտ տարակուանքին և մինչև անգամ սարապի մէջ պահելու համար:

Համ չառաւածների մեհեաններում պահուում էին ներդափն աղջիկներ, կամ կանաչք, որոնք հեշտութիւնով ընկնում էին հիպնոսի մէջ, քուրմերի ներշնչման ներքու, և զանազան գուշակութիւններ անում:

«Պիւթիան, օրինակ, ընդհանրապէս մի ջահիլ ներդափն, դիւրագրգիռ կին էր. երեք օր ծոմ պահելուց չետուց զափնի պսակը ճակատին, այս քուրմունքից արթեցած, նա, դափնիի տերենները ծամելով, նստում էր եռոտանու վրա—Դելիթեան մեհեաննում: Այս եռոտանին ծածկւած էր Ապոլլոնի սպանած Պիւթն օձի կաշխով և զրւած էր մի զետնի սպատուածքի վրա, որի խորքից բարձրանում էին թանձր գոլորշներ, բերելով իրանց հետ բնական, կամ գուցէ և արևստական, արթեցնող հոտեր: Նըր-ջապատած քուրմերով, որոնք սպառնում էին, երբ գուշակութիւնը ուշանում էր, զանանան ներշնչումներ՝ ստանալով նրանցից, ալս ցած ծագումով և տգէս կինը, իր զափնու հատից և օղը լցնող գոլորշիններից թմրած, սկսում էր շարժել նստած տեղը, նրա ամբողջ մարմինը գողղողում էր, բերանը փրփրուում էր, մազերը բիզ-բիզ էին կանգնուում:

Ճերի և ոռնոցի միջից, որոնք իրը թէ գերբնական ոգու երեան էին աղջարարում, քրմունին մի քանի շատ ու քիչ հասկանալի խօսքեր էր արտասանում, խօսքեր, որ թելադրում էին նրան քուրմերը. Գոնէ սրանք էին մեկնում ալս անհասկանալի բառերը, առանց ծիծաղելու, ոտանաւրով հաղորդում հարցնողին: Աչսպիսով օկնու խաղացւած էր: Ճշմարիտ է, ալս պատասխանները չաճախ երկմտական էին, օրինակ, Պիւռ-ռոսին տւած պատասխանը՝ *Romanos Pyrrum vincere*, որ թէ նշանակում է, որ նա կը չաղթի Հռովմանեցաց, և թէ կը չաղթի նրանցից: Ճիշդ է նմանապէս, որ ակապիսի նիստուերից չետու խեղճ աղջիկը թուլացած վայր էր ընկնում, կարծես մի մեծ ներդափն դղրդումից չետու, ճիշդ է նաև որ վաղանաս մահը կնքում էր շուառով նրա կեանքը: Բայց ուս հոգսն էր աղդ»? ¹⁾:

Նրբեմն ալս ներդափն գրգռումները զարհուրելի դրութեան մէջ էր զցում ալս խեղճ կանանց: Յանկարծ, փրփուրը բերնին, մարմինները չանկուելով, սկսում էին վաղվզել չորս կողմ, և բոլոր իրանց շարժումների մէջ

1) Paul Marin. l'Hypnotisme théorique et pratique.

արտակազում էին խելագարութիւն և կատաղութիւն¹⁾: Պլուտարքը պատմում է, որ մի անգամ վհուկը այն աստիճան կատաղութեան հասաւ, որ իրանք քուրսմերը սարսափի մէջ փախան, իսկ խեղճ կինը մեռաւ սաստիկ կարգամմանց մէջ:

Պիւթիան մեծ չաստւած Ապոլլոնի վհուկն էր: Նա ամենահեղինակաւորն էր համարում և նստում էր Կելֆիսում:

Միւս չաստւածներն էլ իրանց վհուկներն ունէին, որոնք չափում էին Սիբիլլա անունով և որոնք գուշակութիւններ էին անում: Ամենահին Սիբիլլան նստում էր էրիթրէտում և լաւոնի էր էրիթրէտցի Սիբիլլա անունով: Բայց սրանից աւելի հոչակաւորը Կումացի Սիբիլլան էր:

Այս գուշակող կանակըն էլ նողնպէս սաստիկ ներդաշն, խտերիկ արարածներ էին, և շարունակ ներշնչան ներքու էին գտնւում:

Բայց լիշած վհուկներից, կապին և մի ուրիշ կարգի կանակք, որոնք միջնորդ էին մարդկանց ու աստւածների մէջ: Սրանք չափունի էին, Պիւթոնիս սսա անունով և կատարում էին այն դերը հների համար, ինչ դեր որ կատարում են ալժմ Մեղիումները Սպիրիտների աշքում: Պիւթոնիսսաների միջից ամենառոշակաւորը Էնդորեան վհուկն էր, որի քարարը դեռ ցուց են տալիս Պալեստինում:

Այս կինը մի օր Սաւուղին երևցնել տւեց Սամուէլի ուրւականոր, որը Սաւուղին վաղահաս մահ գուշակեց²⁾: Գուշակութեան ազդեցութեան ներքու այս վերջինը սուրբ իր փորը խրեց և դրանով արդարացրեց վհուկի խօսքերը:

Մոգութիւնը (magie, magie) երեկի միշտ գուշութիւն է ունեցել աղյերի մէջ, իսկ իւր կատարելագործութեան հասել է Հնդկաստանում, այս գաղտնական (միտիկ) երկրում:

Մոգութիւնը լինում է սպիտակ և սև: Սպիտակ կամ բնական մոգութիւնը նա է, որը «ընական բայց ամբոխին անկախ միջոցներով առաջացնում է գերբնական կոչւած երևովթներ, իսկ սև մոգութիւնը իր թէ զեերի միջոցով լարուցանում է անբնական երևովթներ»³⁾:

Ազգելով հանդիսականների երևակացութեան վրա, թովքութեան մէջ քցելով նրանց, այս մոգերը կամ կախարդները ներշնչում էին նրանց զանազան դրական կամ բացասական ցնորքներ:

Ակախարդութիւնը (волшебство, sorcellerie) մոգութեան կրոսեր քուրն է, ասում է Պ. Մարէնը. Կախարդը դաշն է կապել չար ողիների, մինչև անգամ սատանալի հետ իր կախարդանքների լաջողութեան համար, լաճախ իր հոգին նրանց ծախելով:

¹⁾ Велланский. Живомный магнетизмъ.

²⁾ Յնորական տեսիլ:

³⁾ Littré. Dictionnaire de la langue française.

Սակայն այս երկուամի մէջ մեծ տարբերութիւն կալ: «Մոլութիւնը իր զօրութեան ներքոյ է պահում բնութեան տարբերը, և իր հաճուքին է ծառակեցնում գերբնական ուժերը և ազն: Մի խօսքով այս մի բանաստեղծական ուսմունք է... Նա չի սարկացնում մարդու հոգին, նրա հրաշք-ները բարիք են ասում, նա գիւղում է մարդուն միայն թժկելու համար: Ան ինչ կախարդութիւնը, ընդհակառակ, միշտ չար ոգիների, նոյն իսկ սատանակի օգնութեան է դիմում միշտ և դրա ծառադրութեան գինը այս կեանքում կենդանի ալրւելն է¹⁾, իսկ այն կեանքում լաւիտենական դատապարտութիւնը» (Պօլ Մարէն):

Կախարդի մէջ գեեր, սատանաներ են նստած, որոնց օգնութիւնով կախարդը ամեն տեսակ չարութիւններ անելու և ամեն տեսակ վեաներ հասցնելու ընդունակ է: Կախարդութեան խնդիրը աչնքան նշանաւոր է և աչնքան մեծ գեր է խաղացել ազգերի պատմութեան մէջ, որ առանց նրան հասկանալու անկարելի է բացատրել շատ պատմական փասոեր, որոնք մինչև վերջին ժամանակներս հրաշքավին քօղով ծածկւած են եղել: Միան վերջին զարիս հոգերանական հոսանքը դիտութեան մէջ նոր լոյս քցեց այս օտարոտի երեսովների վրա, որոնք վախոնի են միջնադարեան պատմութեան մէջ կախարդութիւն, զիւահարութիւն, սատանայութիւն և ալըն անուններով: Հիստերիա հիւանդութեան ուսումնասիրութիւնը, հոգեկան խանգարումների ծանօթութիւնը և վերջին տասնուհինգ տարւակ հրաշալի գիւտերը հիսկուստիսմի մէջ մեզ հասկանալի են դարձնում ալսօր այդ օտարոտի երեսովները, վասնորոյ մենք անհրաժեշտ ենք համարում մի համառօտ հավեացք քցել միջին և նոր դարերի զիւահարութեան պատմութեան վրա:

Մարդու գաղափարը երկնակին ու երկրավին զօրութիւնների մասին «հարի ոգիներով բանածնները ու չար ոգիներով բռնածնները»:

Հին ազգերի դաւանութիւնը ամեն սեղ ենթադրում է երկու մեծ ուժեր տիեզերքի մէջ: Աստածավին և սատանակին, ուրիշ խօսքերով՝ երկնակին ու երկրավին: Այս ոժերը երբեմն միացած են եղել, իսկ վետոյ զանազան պատճառներով բաժանւել են: Աստած կործանել է իր թշնամուն—սատանավին, և զահալիթել է նրան անդունդը: Աստած բնութեան բարի զօրութիւնն է, իսկ սատանան—չարի, անարդարութեան իդէալացումն է: Այս ոգիները կանոնաւոր գինաւական կազմակերպութիւն ունեն: Նրանք բաժանւում են զօրադնդերի:

¹⁾ Մենք կը տեսնենք, որ ինկուպիցիան կախարդներին ողջ-ողջ արում էր:

սրանց վրա հրամանատարներ են կարգւած։ Հրեշտակների դասում մենք ճանաչում ենք հրեշտակապետ Գաբրիէլին, Սերովրէ և Քերովրէներին և ալլն, իսկ սատանալի զօրքի մէջ մուծ զօրապիտներին՝ Բենեղզէրուդ, Մա գոգ Դագոգ, Ազարիել, Ասմօտէլ, Գաբրիմ և ալլն իրանց մելիոնաւոր զինւորներով։

Այս զօրապետների երևակալական պատկերները պատմութիւնը պահանջնել է։

Մարդ մի օտարութի զգւանք է զգում դէպի ալս հրեշտար էստիները։ Միջնադարիան մարզու ֆանտազիան, քանի կարողացիլ է, դարչելիացրել է զեերի մտապատկերները։ Ազագէս, Գաբրիմ սատանան ներկայացնում է մի դարչելի ձիւազ անագին ականջներով, նրա աջ ուսի վրա երիում է կատուի զլուկս, կրծքից զաւրս է ցցւել մի օձի դլուխ, որի բերնից թռն է կաթում, մի ուրիշ անագին օծ անցնում է նրա ոտերի արանքով... Աստարութ սաթափէլը մի թեատր հրէշ է, թագը զլիխին, օձը ձեռին մի օտարութի գաղանի վրա նստած։ Հասարակ զինւորների թիւը 7 միլիոնից աւելի է։

Աստած ու սատանան անդադար ու լաւիտենական կռւի մէջ են և ալդ կռիւը մարդու հոգու վրա է։ Մէկը պաշտպանում է նրան, վրկում է, որ իր մօտ երկինքը տանի ու նրան լաւիտենական երջանկութեան արժանի անի, երկրորդը—ամեն չանք զործ է զնում, որ իւլի ալդ հոգին արքալութիւնից և տանի իր հետ զժոխքը, Նրկնագին տէրը, որը կարող էր մի չնչով ոչնչացնել չար ոգիներին, համբերում է, որպէս զի մարդը, մաքառելով ու լաղթող հանդիսանալով չարի դէմ, իրաւամբ արժանանալ դրախուին, սատանալի գրաւիչ փորձութիւններին չհետելով։

Զարմանալին ան է, որ այս ուսմունքը մենք գտնում ենք մարդկութեան պատմութեան արշալումին, և այնպիսի ազգերի մէջ, որոնք իրար հետ ոչ մի գարաբերութիւն չեն ունեցել։

Մարդաբանական հոգեբանութիւնը բացատրում է ալս հանդամանքը նրանով, որ ալդ դաւանութիւնը միանգաման համաձան է մարդու ներքին ինքնազգացողութեանը։ Մարդս ամեն տեղ և ամեն ժամանակ իր մէջ զգացել է երկու ովֆ.—մէկը բարի, որը մզում է նրան դէպի առաքինութիւն, միւսը չար, որը նրան դրզում է զէպի չարութիւն։ Ճշմարիտ է, բարու ու չարի գաղափարները տարբեր են եղել զանազան պատմական ժամանակներ և զանազան ազգերի մէջ, այնպէս որ անս, ինչ որ մի տեղ բարովական և առաքինի է համարւում, մի ուրիշ տեղ կամ մի ուրիշ ժամանակ հակառակն է, —սակայն ալս երկու հոգեկան լատկութիւնների մէջ մշտական կռիւ կալ։

Աստած ու սատանան, դրախտավին ու զժոխալին ոչմերը, միևնուն զէնքով չեն կռւում միմիանց հետ։ Այն ինչ Աստած միմիան առաքինի

ձգտումներ ու բարի մտքեր է ներշնչում մնդյ սատանան ընդհակառակը չար գաղափարներ, վատ լատկութիւններ է չարուցանում մեր մէջ։ Մարդու մէջ լան ու վատը, բարին ու չարը խաւն են։ Սատանան օգտում է մարդու աչս վատ ձգտումներով, նրա հոգին գրաւելու համար։

Հների հասկացողութիւնով մարդու մէջ մի գերբնական էակ է նըստած, — կամ հրեշտակ կամ զե։ Հրեշտակ կրողները իրանց Աստծու ընտրածն են համարում, քանի որ հրեշտակը խօսում է նրանց բերանով։ Երկրորդները ընդհակառակը համոզւած են, որ դրանց մէջ զի է քնակւում և, ինչ չարիք որ գործում են, սատանավի հրամանով են գործում։ Հներում բարի հրեշտակներով բռնւածները չամ էին։ Հազարաւոր մեծ ու փոքր մարդարէներ, զանազան դաւանութիւններ հիմնողներ և ազն աղդպիսի անձեր էին, որոնք համոզւած էին, որ սրբերը, հրեշտակների նրանց միջոցով բարի, առաքինի գաղափարներ պիտի տարածեն ժաղովրդը մէջ և մարդկանց հոգիները փրկեն։ Քրիստոսի խղէալական առաքինութեան ուսմունքը և նրա կատարած հրաշագործութիւնները կալողացան թուլացնել ազդ լափշտակումն, խիստ և բանաւոր հիմունքների վրա դնելով քրիստոնէական առաքինութիւնը։ Սակալն նրա լուսաւոր ուսմունքը ցաւակացար չջնջեց աշխարհիս երեսից մարդու աչս օտարութի գաղափարը։

Զար ոգիներով բռնւածները մենք կ'անւանենք ընդհանուր անունով զի և ակի ըներ, իսկ բարի ոգիներով բռնւածներին — սրբակի ըներ կամ էքստի էներ, Մենք կ'ուսումնասիրնենք նախ Գիւակրութիւնը, իսկ չետու կը խօսենք Արբակրութեան կամ Սքանչացման (Եքոտագ) մտախն։

I. Դիմակրութիւն (Démonomanie)

Դիմակրութեան ծագումն՝ Դիմակրութեան երկու ձևերը՝ Կախարդութիւն և զիւարութիւն։ Կախարդի գաղինը սատանավի հետ, սատանավի կնիքը, սատանավի փոշին ու օճանելիքը՝ Սարրաւակախարդների ցնողքները։ Հաւաքական ցնողքներ։ Թրիստակներ պատմութիւնից։

Դիմակրութիւնը մի պատմաբանի խօսքերով քրիստոնէութեան ուսմունքի պատուղն է։ Պատմաբան Միշընի ասելով «Դիւ ականութիւնը եկեղեցու չանցանքն է»։ Յիսուսի հրամանները խիստ էին, անողոք էին, մարդու լուսահատութեան մէջ ընկած (արքակութիւն ժառանգելու դժւարութեան պատճառով) նրան պատերազմ լաւոնեց և բնականարար իրան օգնութեան կանչեց խաւարի ոգիները, որոնց չարութիւնը (նրա կարծիքով) Աստծու զօրութիւնից պակաս չէր։

Դիմականութիւնը հին ժամանակներն էլ գոյութիւն ունէր, սակայն, նա միանգաման գարակիչ մի հիւանդութիւն դառաւ միջին և նոր դարերում,

երբ յանկարծ ամբողջ հասարակութիւններ, ամբողջ երկիրներ սկսեցին դիւակրութեան ենթարկւել:

Բայց ինչ է դիւականութիւնը?

Երբ Աստւած թողնում է մարդուն, նրա անձի մէջ իսկոն մտնում է սատանան և ազդ մարդուն իրան գործիք է շինում ու նրա միջոցով ամեն տեսակ շարագործութիւններ անում: Սատանան կարող է մտնել մարդուս մարմնի մէջ երկու կերպ, կամ ազդ մարդու կամքով, կամ հակառակ նրա կամքին: Առաջի գէպքում մարդ կախարդ է դառնում, իսկ երկրորդում — դիւահար կամ աչսակ իր:

Ա. ԿԱԽԱՐԴՈՒԹԻՒՆ (Волшебство, Sorcellerie)

Հների ասելով, սատանան ամեն տեղ է: Ոչոք հաւաստի չէ, որ մի օր նրա ձանկը չի ընկնի, Ամենից երկիւղալին այն է, որ դեկրը հեշտ կերպարանափոխուում են, երևալով մարդու կամ իբրև մի գեղեցկադէմ երիտասարդ, կամ իբրև մի հրաշալի կուտ, կամ ձեռները ոսկիններով լի ժլատների հոգին գրաւելու համար, կամ թէ չէ մի թռչունի, մի որ և է կենսատու կերպարանք ընդունելով, խարում, գրաւում, կորցնում նրանց հոգին, որոնցից Աստւած հեռացել է, Բայց սատանան ընդհանրապէս երիտասարդի կերպարանքով է երևում կանանց և գրաւում է նրանց կամ անազին հարստութիւններ խոստանալով, կամ սիրահարական լսարաբերութիւնների մէջ մտնելով նրանց հետ: Միակ պայմանն է հնազանդւել նրա ամեն մի ցանկութեանը և, որ գլխաւորն է, հրաժարուիլ Աստծոց, հոգով ու մարմեռով նրա հլու հպատակը դառնաւլ դնը միաւն հասակաւորներին չէ բռնում, մատաղահամ երեխանները նոցապէս բռնուում են նրանից, կախարդութեան պատմութեան մէջ չիշատակւածեն 13, մինչև անդամ 8 տարեկան երեխաններ:

Ահա ինչպէս է կատարում դաշնակլութիւնը¹⁾, որի գօրութիւնով մի կին կախարդ է դառնում: Սատանան յաջմուում է ազդ կնոջ, պատմում է նրան իր կեանքը և ասում է իր անունը՝ լետոչ ձեռը գնում է նրա ձեռին, կամ ձակատին, կամ ականջի ետևին և կամ մի ուրիշ տեղ և այնուհետև ազդ տեղերը բոլորովին անզգայ են դառնում, անպէս որ աղաեղերը կարելի է կտրել, ալբեր և ազդ կինը ոչինչ չի դգալ:

Այս սատան աչի կնիքն է: Աքուհետև աչս ողորմելի արարածը կախարդ է մկրտւած:

Երբեմն զեերը գրաւոր դաշն էին կապում: Թուղթը գրւում էր ա-

¹⁾ Աչս մանրամասնութիւնները ես քաղում եմ մի վերին աստիճան հետաքրքիր գրքից. „Les maladies épidémiques de l'Esprit“ (Հոգեկան վարակիչ հիւանդութիւններ), հեղ. Պոլ Թէնիարի:

րիւնով, իսկ զեք իր եղոնկը դնում էր վրան՝¹⁾: Մինչև ալսօր պահպանած մի դաշնագրի վրա, իբր թէ սատանալի եղունկի տեղը այրւած է, Աւունետեսե խեղճ արարածը ամբողջապէս սատանալին է նվիրւած և պարտաւորւմ է հրաժարել Աստծուց, մինչև անգամ հայութել նրան, նա սպանում է իր զաւակներին առանց մկրտութեան և ամեն չար բանի համար սատանաներին իրան օդնութիւն կանչում:

Այս ամենի փոխարին կախարդը սատանալից ստանում է չար գործելու զօրութիւն: «Դեք կախարդին մի տեսակ փոշի է տավիս, որը սակայ գցի իր թշնամու ուտելիքի ու խմելիքի մէջ ու նրան մահ կոմ սարսափելի տաճանքներ կ'աւաշցայնի: Այս փոշին պատրաստւած էր նորածին մասուկների գլխակներից, գլխաւորապէս նրանց սրտից, կամ թէ չ'մեռածների ոսկորներից, որ ծեծում էին և խառնում թունաւոր միջաւների բերանի փրփուրի հետո»: (Պօլ Իշնիար):

Եթէ ալդ փոշուց կախարդը շաղ տակ մէկի արտը, հունձը կը չորանար և արտը կը լցէկը օձերով ու որդներով...

Այս կախարդները, որոնք ընդհանրապէս կանաչը են, վերջ և վերջու իրանք էլ ընդունակ են լինում ուրիշ մարդկանց մէջ զեեր մտցնելու և զիւակար շնուելու նրանց, բաւական է, որ կախարդը փշի մէկի երեսին, կամ զզին,—ալս խեղճի մէջ դե կը մանի: բաւական է, որ մի կախարդ մատը մէկի թեին կպցնի, թեք կը չորանակ և այն և այն: Դիւականութեան պատմութեան մէջ շատ դէպքեր կան, որոնք ցուց են տալիս, թէ կախարդները ալսպիսի գերբնական ուժ ունենին:

Սաբբաթ ալս փոշիներից, կախարդները ստանում էին նոչնակէս մի տեսակ օծանելիք (իւղ), որը պատրաստւում էր զիւակների ճարպից: Այս իւղը կախարդները քսում էին իրանց մարմնին և զիշերները ցախաւելի պոչը հեծած, թռչում էին գնում սատանաների խնջուքը, որը չափանի էր Սաբբաթ անունով²⁾:

¹⁾ Այստեղից չէ արդեօք համական դարձւածքը «Սատանի զունկը մէջն է» կամ այն հաչուանքը՝ «Սատանի զունկ»:

²⁾ Սաբբաթում (կամ Շաբաթում) մեծ սատանան նստած էր իր գահի վրա, նրա զլուխը ու սանկերը աչծի էին, նա մի երկար պոչ ունէր և հովանուակի թեեր (լեցուայ մատա): Անստեղ մտնողը պիտի քամականց գլուխ տար սատանալին, և հրաժարւելով Աստծուց, Աստածածնից և սրբերից նվիրել իրան սատանալին, Կէս զիշերին սկսում էր խնջուքը, գարշելի օրգիան սկսում էր: Ուտում էին ամեն տեսակ զզւելի սովուներ, որդներ, անկնունք մեռած երեխաների սրտեր, փաշաղներ, զիւակներ: Էտու սկսում էր պարը, որին մասնակցում էր նորնալիս սատանան: Այս պարերը զարմանալի անբարևական պարեր էին: Անունեան սատանան ու փիլուքցած, քամակը տաճարին արած կատարում էր «Սև պատարագը», Քրիստոսի մարմնու և արեան փոխարին առաջարկում էր շաղկամ կամ կարմիր

Կախարդների ցնորքները Սենք տեսանք, թէ ինչպէս և ինչ պատճառներով ծագեց զիւականութեան գաղափարը: Մենք տեսանք, որ զիւականութիւնը աղիսութեան և հետեաբար սնապաշտութեան արդիւնք էր: Բոլորը համոզւած էին, որ աշխարհը լիքն է չար ողիներով որոնք կարող են ախրապետել մարդկանց և նրանց միջոցով չարութիւններ անել: Տգէտ և, որ գլխաւորն է, զիւրագրգիտ, ներդաւին, հիստերիկ կանաչը հաւասում էին աւելի, քան թէ աղամարդիկ: Այս ներդաւին արարածները անդադար ներշնչման ներքով գտնելով, այն աստիճան դրգուման էին հասնում, որ ինքնաներշնչումով ցնորքներ էին ստանում: (տ. Հիպնոտիսմ, մասն առաջին, էջ 59 և հետ.)

Կենդրոնացնելով իրանց ուշքը դեերի մասին զանազան պատմւածքների վրա, այդ ներդաւին կանաչը վերջ ի վերջով պարզ տեսնում էին իրանց ցանկացած գեին: Բայց սարսափելին այն է, որ իրանց երևակալութեան պտուղը նրանք իրեն եղելութիւն էին ընդունում և համոզւած էին, որ տեսել են իսկական սատանավին:

Այս համոզմունքը անուհետե կը գառնալ այն կանւան, որի վրա կը հիւսւեն նրանց բոլոր ցնորքները: Այսուհետե նրանք կը լսին սատանաների ձանը, նրանցից հրաման կը ստանան և նրանց հաջողանքները ու անէծքները կը կրկնեն: Բայց այդ բաւական չէ: Կոլուրը, մենաստաններում փակւած կանաչը, սեռական գրգուման մէջ կ'երեսակալեն, որ սիրահարական լարաբերութիւններ են ունենում այդ զեերի հետ ու բացարձակ կիրապով, առանց քաշմելու, ամօթխածութեան զգացմունքը կորցրած՝ նրանք կը պատմին, թէ այս ինչ օրերը գիշերը այս ինչ զեը մտնում է նրանց իուցը և նրանց հետ սիրահարութիւններ անում, կամ կը պատմեն, թէ նրանք գնում են սատանաների ինճուքին, որը Սարբա է կոչւում, և որ անտեղ գարշելի օրգիաներին են մասնակցում:

Դիւականութեան զարերում մարդկանց երևակալութիւնը այն աստիճան գրգուած էր, որ նրանք ամեն տեղ դեեր, կախարդութիւններ էին տեսնում և եթէ մէկ կին, մէկ ներդաւին, հիւսանդոտ, հիստերիկ կին, իր ցնորութեան մէջ մի դե տեսնէր կամ սաբբա գնար, այդ կնոջ բարեկամները, ազգականները, ընկերուհիները վարակում էին և նոյն ցնորքներն էին ունենում:

Հաւաքական ցնորքներ Այս «հաւաքական ցնորքների» զիտելիքը մի վերին աստիճանի կարող կէտ է, որը մեղ բացատրում է զիւականութեան տարածւելը և շատ ուրիշ երևութեար:

«Եթէ մեծ քանակութիւնով մարդիկ մի համոզմունք ունին, ասում

գաղաբ և ամենքը ծաղրում էին ու արարողութիւնը»: Առաջիմին լան. կարծ բոլորը ցրւում էին գիշերավին բուերի նման: (Պ. Թենիար):

է լիեբօ՞ն, մանաւանդ, եթէ միմնոն զգացմունքով են ոգևորւած նրանք,
նրանք ներգործում են միմեանց վրա և նրանց երեակազութիւնը բորբոք.
ւում է մինչև վերջին աստիճան, Այն ժամանակ բաւական է որ նրանց
միջից մէկը միայն մի ցնորսական տեսիլ ունենալ—և այդ տեսիլը ամենքի
աչքին էլ կ'երեաց Մինչև աշխատ ամենից շատ հաւաքական ցնորքներ է
առաջացրել կրօնական զգացմունքը: Չի կարելի չնկատել, որ այդ ցնորքը
ները նշանաւոր դեր էն խաղացել նոր դաւանութիւնների, հաստատելու
մէջ: Օրինակ, անհիմն չէ այն աւանդութիւնը, թէ Մոհամմէզը լուսինը
երկու մասն արեց և արեգակին ճանապարհից ետ զարձրեց: Ասում են,
որ չնայելով իր կարծ հասակին, նա ամենից բարձր էր երեսամ: Նրա
զէմքը փայլում էր լուսով, քարերը, բոլորը և ծառերը խօսում էին նրա
հետ և կրանում էին նրան ողջունելու համար: Կենդանիները, մողէսները,
գալիքը ձայն էին տալիս նրան: Խալամի պատերազմներում և խաչակիր-
ների արշաւանքներում նոյնպէս նկատեցին հաւաքական ցնորքներ, իբրև
արգասիք ընդհանուր գաղափարների և ցանկութիւնների: Սկզբում խաչակիր
զինուրները զանազան նշաններ էին տեսնում երկնքում, բայց Ասիակում
հրաշքները շատացան: Դորիէում իբր թէ սուրբ Գէորգ և ս. Դեմետրիոս
մարտիրոսները օգնում էին խաչակիրներին պատերազմի մէջ թշնամու
դէմ: Անտիօքի կուտի մէջ, նոյն մարտիրոսների հրամանով իբր երկնքից
մի զրահաւորւած զօրքունդ է իջնում օգնութեան: Երուաղէմի առման
միջոցին զօրքերին երեաց, որ ս. Գէորգը և պաշարման ժամանակ սպան-
ւածներից շատերը դրօշակ էին ամրացնում սուրբ քաղաքի պարիսպների
վրա: Յեսով, երբոր Սալադինը ետ առաւ քաղաքը, Արժանատեօլի աբեղա-
ներին երեաց, իբր թէ լուսինը իջաւ զիտին և կրկին երկինք բարձրա-
ցաւ Շատ եկեղեցիներում ազօթողների առաջ Քրիստոսի խաչելութիւնը
և սրբերի պատկերները արտասուր էին թափում:

Դիւականութեան պատմութիւնը լի է ապահսի հաւաքական ցնորք-
ներով: Սրանք առաջացնում էին «հաւաքական ներդաբին հիւանդութիւն-
ներ», որոնք մարդկութեան հոգերանութեան ամիսազարմանալի էպիզոդ-
ներն են կազմում:

(Կը շարունակեի)

ՅՈՒԱՅԻՆ ԵՒ ԱԽՋԱՎԱՆ ԻՐԱԿՈՒՔԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ս. ԲԱՀԱԹ-ԲԵԱՆԻ

(ՇՐՋԱՆ ԱՌԱՋԻՆ)

(Շարունակութիւն և վերջ¹⁾)

VI

Տէրութեան և իշխանութեան իրաւունքը ցեղերի մէջ, երբ դոքա Հայկազանց ժամանակ անկախ էին և կամ առարների հպատակութեան տակ էին: — Նախարարութիւնը՝ գորա ծագումը, սկիզբը, էութիւնը: — Մի թուոցիկ հայեացք, թէ ինչ էր նախարարութիւնը Արշակունիանց ժամանակ: — Ինչպէս էին հետզհետէ քալ առ քալ փոփոխում դրանց իրաւունքները: — Աւագ և կրտսեր նախարարներ: — Դրանց ունեցած իրաւունքները երկրի և գաւառի վրայ և ապն: — Վերջաւորութիւն:

Հայկազանց ցեղերը, ուր կար տիրոջ ու ծառայի կամ հպատակի յարաբերութիւն, իրանց շէնով անկախ ցեղեր և ծնունդներ էին և առաջնորդում էին իրանց իշխաններով, կամ աւելի լաւ է ասել՝ իրանց առաջնորդներով: Օտար մատենագիրները և հին արձանագրութիւնները այդ գլուխ կանգնածներն մինչև անգամ թագաւորների պէս էին նկարագրում: Հայկազունք ցեղովի վայելում էին

¹⁾ Տես «Մուրճ» 1894 թ. № 1, 2, 3 և 4:

կալւածքի և սեփականութեան իրաւունքը. և, ի հարկէ, անկախ ցեղի մէջ, ուր կային ծառաներ կամ հպատակներ, ցեղապետը մի տեսակ իշխան և տէր էր. մանաւանդ որ ցեղապետները ժառանգաբար էին մէկը միւսին յաջորդում: Արամը լինելով նինոսից յետոյ երկրորդը ևս առաւել հասած կը լինէր այդպիսի իշխանութեան: Երբ Ասորեստանցիք յաղթեցին հայերին, հայ ցեղապետները այդ տեսակ տէրութեան իրաւունքից զրկեցան, և մնացին լոկ Ասորեստանի ինքնակալների զործակալները: Բայց կալւածքի և սեփականութեան իրաւունքը մնաց ցեղերի ձեռին ամբողջովին թէ մասամբ, որովհետու չկայ ոչ մի տեղեկութիւն, որ դրանք զրկւած լինէին այդ տեսակ իրաւունքներից: Հենց այդ էր պատճառը, որ մենք տեսնում ենք Անուշաւանին և այլոց, որոնք ինամում էին մեր աշխարհը: Պարոյը կրկին անկախութեան հասաւ և հետևապէս մեր ցեղապետները նորից տէրութեան իրաւունքի արժանացան: Կրկին մենք տեսնում ենք իշխանութեան այն եղանակը, ուր կայ տիրոջ և հպատակի կամ ծառայի յարաբերութիւնը: Տիգրանը, օրինակ, դաւառ է չնորհում իւր քրոջը «ի ծառայութիւն»:

Մակեղոնացւոց ժամանակ Արտաւարդ Սիւնեաց իշխանը Սիւնեաց զօրքով ապատամբեց Նէոսպողումիա կուսակալի դէմ, դորան արտաքսեց Հայաստանից, և բոլոր զօրքի և միւս իշխանների սիրու գրաւելով ինքը տիրեց բոլոր ազգին: Սիլևկացոց Հրանդ կուսակալը իշխանապետ էր Հայոց: Դորա ժամանակ Արտաւազդը կամ Արտաւազնը, որը տեղական աւագ իշխաններիցն էր, տիրեց մեր երկրին: Առ հասարակ մենք տեսնում ենք, որ հին իշխանութիւնների բնաւորութիւնը փոփոխուում էր, բայց նոյն հայ իշխանները մնում էին: Սրանց մէջ երբ Հայք անկախ էին լինում, կային ազնպիսի էին: Սրանց մէջ երբ Հայք անկախ էին լինում, կային ազնպիսի էին: Սրանց մէջ երբ Հայք անկախ էին լինում, կային այն պիսիները, որոնք լոկ իշխաններ էին: Հայկը, Պարոյը և այլարար անունն էին կրում: Խորենացու ասելով Խոռից ծագել էր Խոռիունի ազգի մեծ նախարարութիւնը: Աւրեմն մեր ցեղերի և ծնունդների գլուխ կանգնածները իրանց անկախութեան ժամանակ նախարար էլ էին անւասնւում: Հետևապէս նախարարութեան և տէրութեան իրաւունքը մէկ էր. իսկ նախարարութիւնները Վաղարշակից շատ առաջ էին մեր մէջ ծագել:

Վաղարշակը գրում է Արշակին, որ նա թոյլ տայ իրան զիւանատներից դուրս բերել տեղեկութիւններ վթէ ոչք ոմանք յառաջ քան զիս իցեն տիրեալ աշխարհին Հայոց, և ուստի նախարարութիւնքս՝ որ աստ կան. զի ոչ կարգք ինչ լեալ աստ յայտնի... և ոչ գլխաւորաց աշխարհիս յայտնի է առաջինն և ոչ վերջինն, և ոչ այլ ինչ օրինաւոր, այլ խառն ի խուռն ամենայն և վայրինի (Խոր. եր. 29) ¹⁾: Խորենացին էլ է հետեւում նախարարութիւնների մասին մանրամասն տեղեկութիւններ տալ: «Խակ զՆայաստանհայցս նախարարութիւնս, զամենեցուն զուստն և զզիարգն յայտնելով համառօտ, որպէս հաւաստի ՚ի յունականս ոմանս կայ պատմութիւնս» (Խ. եր. 3): Խորենացու ասելով, նախարարները Սարդանապալի օրերից սկսեցին առաջ գալ (Խոր. եր. 31): Վաղարշակը, յաջորդելով Հայկազանց հարստութեանը, դաւա Հայաստանում իրանից առաջ ստեղծւած կարգ կանոնները: Քննելով դորա և առաջի Արշակունիների հաստատած կարգադրութիւնները նախարարութիւնների մասին, մենք կարող ենք լրացնել մեր այդ մասին կազմած գաղափարը և աւելի սպարզ կերպով հասկանալ թէ ինչ էր այդ հիմնարկութեան էռութիւնը Հայկազանց ժամանակ: Արշակունիները շենը պարզեւում էին կամ տալիս էին արքայազանց, կամ մի որ և իցէ բանով իրանց ծառայութիւն մատուցած մագուն: Յայտնի բան է, որ արքայազունք կամ միւս պարզ առացողները գառնում էին այդ շենի կամ, ինչպէս տեսանք, ժողովրդի տէրը կամ գլուխը:

Վաղարշակի կարգած նախարարները նոյն ժողովրդի միջից աւելի երեւելիներն և ումեղներն էին, նոյն ժողովրդի կամ շենի և գաւառի վերայ տէր էին կարգւած: Ահա ինչ ենք կարդում այդ մասին Խորենացու մէջ: «Եւ զնախարարութիւնն ապահունեաց

¹⁾ Թէ ինձանից առաջ ոգէ տիրել հակական աշխարհին և թէ մրտեղից են ալս նախարարութիւններն, որ ալսուել կան: Որովհետեւ լատնի չէ թէ ապահուել եղած լինին ոչ կարգեր մեհեանների պաշտմունք: Ահա աշխարհի երեւելիներից լայտնի չէ ոչ առաջինն և ոչ վերջինը: և չկատ ոչ ինչ օրինաւոր, այլ բոլորը խան ի խուռն է և վայրինի (Խ. ծ. վ. Ա. 26):

²⁾ Յոյց կտաանք Հայաստանի լուլոր նախարարութիւնների և ամենքի որտիդից և ինչպէս լինելը (սկիզբը և գործերը) կ'ատնենք համառօտ ինչ որ սատրդ կատ քանի մի յունական պատմութիւնների մէջ (եր 4.)

և զմանաւագեանն և զբգնունեան ի նոյն զաւակացն Հայկայ. ի բնակչաց գտեալ սկերճագոյն, տեարս կարգէ յանուն շինից և գաւառաց կունելով (Խոր. եր. 115) ¹⁾: «Խակ զմոկացին ի նոյն գաւառէ գտեալ այր, որ ունէր լնդ իւրեաւ սրիկայս բազում, նախարարութիւնս հաստատէ: Նոյնպէս և զկորդւացիս, զանձեացիս, զակէացիս ի նոյն գաւառաց (Խոր. եր. 116):

Հետեւապէս առաջի Արշակունիների կարգածնախարարութիւնները սկզբում շատ քիչ էին զանազանուում Հայկաղանց նախարարութիւններից: Նախարարը ժողովրդի գլուխը կամ տէրն էր, իշխողի կամ կառավարողի մոքով, և ոչ թէ ժողովրդը դորա ստրուկը, սպասաւորը և կամ գեղջուկն էր, և կամ ժողովրդի թէ կեանքը, հողը պատկանում լինէին նախարարին: Ժողովրդի ձեռին էր մնում կալւածքի, սեպհականութեան և ժառանգութեան իրաւունքը, որոնցից ի հարկէ նախարարներն էլ իրանց չափով զուրկ չէին: Դա իր գեղջուկը և սպասաւորն ունէր, ունէր նաև կալւածքի վրայ էլ որոշ իշխանութիւն: Այդպէս էլ յիրաւի ապագայում մենք դրանց գիւղերի, գաստակերտների և իշխանութեան տէրեր ենք տեսնում:

Նախարարը կարող էր և լոկ միայն պաշտօնեաց լինել՝ ինչպէս կային արքունիքում խոհանոցի վրայ կարգւած նախարարներ և այլն: Օրինակ, Վահնունեաց, իրրե նախարարների՝ քրմութիւնն էր յանձնած:

Ահա և այլ օրինակներ, որոնք ուրիշ կողմից կարող են պարզել մեզ այս առարկան: Բագարատը տանուտէրական պատիւն է պարզեւ ստանում, կուսակալ է կարգւում, և նրանից ծագած ազգը իրաւունք է ստանում կոչւել Բագրատունի (Խոր. եր. 103, 109): Արծունեաց և Գնունեաց ուները Սենեքերիմի զաւակներիցն էին: Գնունիք աւագ նախարարութեան շարքումն էին կարգւած (Փ. 110).

1) Ապահունի, Մանաւագեան և Բզնունեան նախարարութիւնները նոյնպէս Հայկի սերունդներից Բնակիչներից առաւել երեսելիներին դանելով, գիւղերի և գաւառների տէրեր է կարգւում, տեղերի անունով կոչելով նոցա (99) Մոկի գաւառից գանելով մի մարդ, որ ունէր իւր իշխանութեան տակ շատ սիրիկաներ. Մոկացի նախարարութեան է ըստատում: Նոյնպէս (հաստատում է) և Կորդեացի, Անձիացի և Ակեացի (նախարարութիւնները) նոյն անուն գաւառներից (Ծ. ծ. վ. Ա. 100).

Թագաւորութեան երկրորդը կարգւեց Սարերի Աժդահակ թագաւորի զաւակից։ Այս ազգին նահապեաին ասում էին մարաց տէր, և դորա վրայ թողնւեց բոլոր շէնը, որը մարաց գերութիւնիցն էր գոյացել (Խոր. 112)։ Աշոցի տէրութեան և Տաշրի սեպհականութեան վրայ Գուշարայ Հայկազնոյ զաւակները կարգւեցան (Խ. 113)։ Շաւարշը, որ Սահասարայ տանիցն էր, հաստատում է բգեշին և կուսակալ և Արձն գաւառն է պարզե ստանում (Խոր. եր. 116)։ Ռշտունիք և Գողթնեցիք Սիսականներիցն էին ծագում, միայն Խորենացին չի կարողանում հաստատել, թէ այդ անուններիցն էին իրանց գաւառները կոչւած, թէ գաւառների անուններիցն էին նախարարները կոչւում։

Այսուղից մենք տեսնում ենք, որ կային օրոշ ծագումն ունեցող արաօնութիւններ, այսինքն կալւածքի կամ իշխանութեան իրաւունք ձեռք բերած զաւակներ, որոնք տներ էին կազմում։ Այդ զաւակներից մէկը իր մատուցած ծառայութիւնների կամ այլ պատճառով կարող էր տանուտէրական պատիւ ձեռք բերել, տան գլուխը լինել, որը նահապետ էր անւանւում։ Այսպիսի տների մէջ ոմանք նախարարական էին, կային որ այդպիսի զաւակներից տէրութեան վրայ էլ էին կարգւում, ինչպէս Գուշարայ Հայկազնոյ զաւակները Նշոցի տէրութեան վրայ էին կարգւած։ Պատահում էր, որ նախարարական տների անուններիցն էին գաւառների անունները կոչւած, երբեմն էլ գաւառների անուններիցն էին նախարարութիւնները կոչւում։ Այսուղից երեսում է, որ նախարարները այլ ևս ցեղապեաններիցը չէին, այլ ցեղից առաջացած ազնւականներից, որոնք դեռ ևս ցեղերին յատուկ սովորութեամբ տներ կամ ծնունդներ էին կազմում։ Այսպիսի արտօնութիւն վայելող ազնւական ծնունդները Արշակունեաց ժամանակ տոհմեր էին անւանւում։ Ազգերի, տոհմերի կամ նախարարութիւնների գլուխ կանգնածներին նահապետ էին անւանում։ Օրինակ, ասում էին Զնորա՝ նահապետ ազգին մուրացան, Շամշագրամ՝ նահապետ Ապահունեաց տոհմին, Աբեղոյ՝ նահապետ Աբեղենից տոհմին, Պարզափրան՝ նահապետ Ռշտունեաց նախարարութեան։

Եթէ Արշակունիները ցանկանում էին հարազատութեան կամ մատուցած ծառայութեան կամ՝ առանձին շնորհի պատճառով մէ-

կին առաջացնել, դորա ընտանիքը կամ ծնունդը ազգ էին սերում, այսինքն բարձր դասակարգի շարքն էին անցկացնում: Ոմանք իան ազգ էին սերում, ումանք էլ ազգ սերելով՝ նախարարութեանց թիւն էին անցնում:

Սղկունիք Վաղարշակից ազգ էին սերւած, և կար այդ ազգի նահապետը: Գուշարաց Հայկազնոյ գաւակները կարգւած էին Աշոցաց տէրութեան վրայ: Այդ ազգից Տաճառը Աշոցաց գաւառի վրայ իշխան կարգւեց: Բզնունիք նախարարներ էին Վաղարշակի օրով կարգւած, Տիրանի օրով Դատարբէն Բզնունեաց իշխան էր անւանելում:

Նախարարական տներում, ուրեմն, նահապետը, կամ նա, որը թագաւորի կողմից և կամ այլ պատճառով առաջացրած էր, այդ նախարարութեան նահապետը կամ իշխանն էր անւանելում: Դա, կարելի է ասել, ցեղապետի կամ լայն մոքով իր դաւառի կամ ժողովրդի տէրն էր: Բայց զրանցից գուրս կային և մեծամեծները: Առաջի Արշակունիները կարգել էին առաջնակարդ ազգեր կամ իշխանութիւններ, այսինքն մեծ նախարարութիւններ: Բղեշխնները, ասհմանակալները, Անգեղուան մեծ իշխանը, թագադիր ասպետը, սպարապետը, Մոկաց, Սիւնեաց, Խշոտնեաց, Մաղլսազութեան և սպարապետութեան իշխանները և Շահապը՝ Շահապիվանի մեծամեծների շարքում էին: Սոքա էին կուսակալները, կողմնակալները, հազարաւորները և բիւրաւորները:

Տրդառը դիմում է, օրինակ, հրովարտակով մեծամեծներին, իշխաններին և նախարարներին: Զորբորդ գարում նախարարների աւագանիքը՝ «մեծամեծներ», «մեծամեծ աւագանիք», «պատւական» և մեծամեծ աւագանիք», «մեծամեծ իշխաններ», «մեծամեծ» և կամ գլխաւոր նախարարներ էին անւանելում:

Ուրեմն այդ ժամանակամիջոցում կային գլխաւոր նախարարները կամ մեծ իշխանները, իշխանները կամ նախարարները և ազատները կամ ազգերը և կամ ազնւականները:

Հետեւապէս նախարար խօսքը վերաբերում էր իշխողին կամ զլուխ կանգնեցրածին: Դրանց միջում կային մեծ իշխաններ, իշխաններ և ազատներ:

Նախարարները սկզբում ժողովրդի տէրերն էին՝ կառավարութեան մոքով: Գիւղերի և ագարակների սահմանները որոշելով, Ար-

տաշէսը (հողի) գետնի իրաւունք մացրեց, և ի հարկէ այդ ժամանակ նախարարները իրանց գիւղերի և զատուակերտների գետնի տէրերն էլ դարձան։ Հետզհետէ զլանց իրաւունքները լայնանում են, որովհետեւ նախարարները հետեւում էին իրանց ժողովրդի տէր լինելուց ջոկ՝ տեղի, գետնի և հողի իրաւունքն էլ ձեռք բերելու։ Այդ իրաւունքները զանազան ժամանակամիջոցներումն էին ծագել և տարբեր բնաւորութիւններ ունեին։ Նախարարներին յաջողւում է մասամբ տեղի իրաւունք ձեռք բերել, և դրանք, ժողովրդին առաջնորդ և տէր լինելուց զատ՝ գաւառատէր էլ են գառնում։ միայն թէ այդ դրանց յաջողւում է ՚Վ. դարում։

Հողային զանազան տեսակ իրաւունքների քննութիւնը վերաբերում է Արշակունեաց շրջանին. այստեղ հարկ ենք համարում միայն կարծօրէն նկարագրել, թէ ինչպէս էին նախարարները տիրանում այդ իրաւունքին։

Աղձնեաց բգեշիսը Աղձնեաց իշխանն էր։ Զորբորդ դարում դա Աղձնեաց մեծ իշխան է անւանւում։ Երրորդ դարում մենք տեսնում ենք Անգեղտան իշխանին, որը և մեծ իշխան էլ է անւանւում։ Զորբորդ դարում դա որոշ տան գաւառի իշխան էր և որոշ կողմերում արքունական շահուց և եկամաից հաւատարիմն էր։ Տրդատի ժամանակ Սիւնեաց կողմնակալը անւանւում էր իշխան, կամ նահապետ կամ Սիւնեաց աշխարհի իշխան։ Հետզհետէ դա Սիւնի կամ Սիւնեաց գաւառի իշխան է անւանւում և չորրորդ դարում Սիւնեաց գաւառի տէր անւանեց։ Ռշտունեաց նախարարութեան նահապետը հետզհետէ անւանւուց Ռշտունեաց աշխարհի իշխան, Ռշտունեաց իշխան, չորրորդ դարում դա սկսեց Ռշտունեաց նահապետ, Ռշտունի և կամ Ռշտունեաց գաւառի տէր անւանել։ Անձեւացեաց տոհմի իշխանը հետզհետէ անւանւեց նահապետ Անձեւացեաց և տէր գաւառին Անձեւացեաց։ Կամսարականք անւանւում էին իշխանք Նիրակաց և Արշարունեաց, նահապետ Արշարունեաց, իսկ չորրորդ դարում տեալք Նիրակաց և Արշարունեաց։ Զորբորդ դարում առաջ եկան նոր գաւառատէրեր՝ Զորաց, Կողբաց, Գարդմանաց ձորոյ և այլն. առաջ եկան գաւառների իշխաններ՝ Վանանդաց, Հաշտենից, Գողթան և այլն գաւառների նահապետներ՝ օր. Հրսեծորոց, Բաքենից և Հապոժինից... Միւնոյն

Ժամանակ Տրդառի օրով եղած Ուտէացւոց, Գարտամանացւոց, Մոկաց աշխարհակալ իշխաններին զեր կատարելիս չենք տեսնում: Կարծես չորրորդ դարում գաւառի կամ երկրի վրայ մի տեսակ իրաւունք էին ձեռք բերել նախարարները և տէրերը: Անգեղուան գաւառը Ոստան արքունիք էր (Փ. 173—178): Կային եկեղեցական գաւառներ (Փ. 25): Պապը ստիպւած է իր հօր յափշտակած Շիրակաց և Արշակունեաց գաւառները յետ դարձնել Կամսարականներին: Տասնուհինդ գաւառներ տուած էր ձեռական իշխանութեամբ եկեղեցուն (Փաւ. երես 26): Տայքը Մամիկոննեանների աշխարհն էր համարում (Փ. 21): Նապուհը անպայտազատ էր արել Սիւնեաց տոհմը. իսկ Մանուէլը Սիւնեաց տան կոորդածից մնացած երեք պատանիներին յետ է դարձնում նրանց երկիրը. դրանցից առաջինը երկրի վրայ տէր է կարգուում, իսկ միւսները իրանց չափով (Փ. 211): Նապուհը խոստանում է Մէհրուժան Արծրունուն յետ դարձնել նորա աշխարհը և տունը (Փ. 152): Մանածիհը Ռշտունին (Թ. 320) մեծ իշխան աշխարհատէր էր (Փ. 21): Կար «Ծոփս Եահունոյց» որը հաւանական է Նահունեաց պատկանեալ Ծոփաց գաւառն էր:

Հետզհետէ մենք տեսնում ենք, որ երկիրները լինելով գանձագինք, պարզեականք և քսակագինք, պատկանելութեան առարկայ էին գառել և իբրև ժառանգութիւն անցնում էին որդւոց որդիի Սիւնոյն ժամանակ նախարարների իրաւունքը այնքան է լայնանում, որ դոքա ուղղակի աէրութիւնների դլուխ էին կանոնած լինում: Յազկերտը, օրինակ, բարիանալով նախարարներից մէկի վրայ, տէրութիւնը նրանից խլում է, «Նանեալ ի բաց զտէրութիւն ի նմանէ» (Եղ. եր. 14): Մանուէլ սպարապետը կարգում էր ճնահապես և տեարս գաւառաց (Թ. երես 124): Անտարակոյս երկրի և տէրութեան իրաւունքի պատճառով էր Տարօնի իշխանը եկեղեցուց կորել դորա շահեցողութեան տակ եղած Կուսաս և Պարեխ անւանեալ գիւղերը: Արծրունեաց Վարդպատրիկ իշխանը գանձագին է անում այդ գիւղերը Տարօնոյ իշխանից և կրկին նւիրում է եկեղեցուն (Զեն. գլ. 12): Երբ Վահանը, Մամիկոնէից տան իշխանը, նստեց Տարօնոյ իշխանութեան ամժուը և տարածայնութիւններ էր Տագել դորա և պարսից թագաւորի մէջ, Վահանը երկիրը իրանը

համարելու պատճառով, պահանջեց զօրքի կողմից իր երկրին հասցրած վնասը Վահանը ասաց. «180,000 դահեկանի խոտ են կերեալ ի դաշտէդ, և 60,000 դահեկանի որ զեզն և զեղջերու և զնապատակ երկրիս որսացեալ են և կերեալ, զջրոյ և զհացի գինն թողում: Բայց զանոյշ գինին Սալնոյ և Ասորոց և զՄոխրաց այս երկու տարի է՝ որ լինէն կիրեալ էին և ինքեանք արբին, զայն թող տան, և զվեց գաւառին հարկն զոր առեալ են, և զքաղաքի մուտն 400 դահեկան, զայդ ամենայն թող բերեն»... (Զեն. գլ. 38): Ուրեմն տէրութեան զլուխը երկրի ամայի մասը՝ անտառը, արօտը ամբողջապէս իրանն է համարում, իսկ երկրի շէն մասից էլ ստանում է, գաւառներից՝ հարկը, քաղաքներից՝ մուտքը: Այգիներից գինի է ստանում, երեխի, հարկի տեղում Մինչեւ անգամ գիւղերի և դաստակերաների իրաւոնքի մէջ էլ է խառնում, թէւ գրանք մասնաւորաց սեպհականութիւնն էին գարձած: Գաւառները ունենում էին իրանց իշխանը: Մենք տեսնում ենք, որ դաշնակից կամ համհարզ նախարարները ունենում են հետզետէ իրանց զլուխները (Եղ. 173), որը մեծ իշխանը կամ զլիսաւոր նախարարն էր: Դորա վերաբերեալ միւս իշխանները կամ նախարարները մինչեւ անգամ գաւառապետներ էին անւանում (Յով. Ման. 30), գաւառակալ կամ իշխան նախարարի ձեռօք էր զօրքը գաւառից մատենի հաշտով դուրս բերւում, բայց համհարզ նախարարների բոլոր զօրքերը աւագ նախարարի իշխանութեան տակ էին: Նախարարները առաջնորդում էին զօրքին և մինչեւ անգամ, հայոց անիշխանութեան ժամանակ, այր ու կին էլ դրանց առաջնորդութեան տակ էին:

Դատաստանական իրաւունքը կարծես բաժանում էր թագաւորի և մեծամեծների մէջ: Եկեղեցին, իւր ծիսական իշխանութեամբ ունեցած երկիրներից ստանում էր պազի և տասանորդ: Գաւառապետ կամ իշխան նախարարներն էլ հաւանական է, որ սոյն տեսակ իրաւունքների տէրեր էին: Դա իշխանութեան կամ կալածքի իրաւունք պիտի լինէր: Գաւառապետ կամ մեծ իշխան նախարարները, իրանց երկիրը իրանցն էին համարում, և այդ պատճառով արօտատեղերից, անտառից, այգիներից, ժողովրդից, քաղաքներից որոշ հարկեր էին առնում զանազան անուններով: Թագաւորը իր հպատակներից միայն հարկ էր առնում, իսկ այն երկ-

ըից, որը ոստան արքունի էր, նրան հասնում էր և այդ իրաւունքով պատկանելի ստանալիքները:

Հետևապէս ժողովուրդը որոշ տեսակ հարկեր էր տալիս թէ իշխանին կամ կրտսեր նախարարին, թէ մեծ իշխանին կամ աւագ նախարարին, թէ մեծ թագաւորին: Մենք այստեղ մտադիր չենք մանրամասն խօսելու նախարարութեան և կամ իշխած իրաւունքների մասին: Նախարարները, սկզբում լինելով միայն ժողովրդի տէրը, իշխողի կամ կառավարողի մոքով, հետզհետէ երկրի և տէրութեան իրաւունքը ստացան:

Հետևապէս մենք տեսանք, որ հարազատ արիւն ունեցողներից առաջ եկան ազնւականները՝ ազգերը և տոհմերը: Սրանց մէջ ցեղական սովորութիւնները մնում էին և դրանք տներ էին կազմում, որոնք ունէին իրանց տանուտէրերը: Միապետութեան ժամանակ թագաւորներն էլ էին այդպիսի ազնւականներ առաջացնում՝ ազգ սերում, տանուտէրական պատուի արժանացնում: Այսպիսի տներում ցեղական սովորութիւններ էին տիրում: Սեպհականութիւնը և կալւածքի իրաւունքը ամբողջ տանն էր, իսկ տանուտէրը մի տեսակ գերիշխանութիւն ունէր տան վրայ: Այս մոքով նա նախարար և ազատ էր անւանում:

Այսոեղից ոմանք նախարարութեան կարգն էին գցան, բայց զանազան չափով: Կային աւագ և կրտսեր նախարարներ: Իշխանները՝ կրտսեր նախարարներ էին անւանուում:

Կային ազտոաց կամ ազնւականաց տներ:

Արշակունեաց ժամանակ սկզբում նախարարները ժողովրդի տէրերն էին մօտաւորապէս ցեղական սովորութեամբ. նրանք գաւառականներ նորդներն և կուսակալներ էին անւանում և զօրքի առաջեին, բայց ժառանգաշար երկրի իրաւունք չունէին. ուժեղանալով միայն այդ տեսակ իրաւունքներ էլ ձեռք բերին:

Մեր աշխատութեան հետևեալ բաժնում կը տեսնենք թէ ինչ անբաւականութիւններ էին ծագել մեր թագաւորների և նախարարների մէջ, երբ առաջինները չցանկացան զրանց տէրութեան և երկրի իրաւունքը ճանաչել: Վերջապէս նախարարների երկրի և տէրութեան իրաւունքը ճանաչեց:

Հետևապէս աւագ նախարարութիւնները տէրութիւններ էին

մանաւանդ ցեղական կազմակերպութեան ժամանակ, երբ դոքա ան-
կախ էին լինում:

Բայց նախարարի դէպի իրան ժողովուրդը ունեցած իրաւունքը
սկզբում աւելի թոյլ էր, մանաւանդ Հայկազանց ժամանակ, երբ
ցեղական կարգ ու կանոնները և ազատութիւնները սահմանափա-
կում էին նախարարների իրաւունքները:

ԱՐԵԱԹԻ ԵՒ ՌԱԿՈՒ ԽՆԴԻՐԸ¹⁾

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

Տնտեսական կեանքը Եւրոպայում յարուցանում է բազմաթիւ հետաքրքրական խնդիրներ, որոնք ընդհանուր նշանակութիւն են ստանում և կազ ունեն յաճախ նաև ամենահեռաւոր ասիական երկիրների հետ Այսպիսի բնաւորութիւն կրող խնդիրներից մինն էլ նա է, որ վերաբերում է արծաթի արդիւնաբերութեանը և սրա ապագային:

Յարոնի է, որ արծաթը նախ իբրև զրամ ի բնէ անտի տուացել է մեծ նշանակութիւն: Բացի սրանից արծաթը, իբրև հում նիւթ, գեր է խաղում նաև արեսոների և գեղարւեստի մէջ: Արդ, եւ է արծաթը կրկնապատիկ գեր է կատարում տնտեսական կեանքում, չէ որ այդ մետաղը պիտի լաւ դին ունենայ և հաճելի լինի, անգամ ուրիշ մետաղներից գերադասած համարւի Խսկապէս, արծաթը մինչ 50-ական թւականները վայելում էր յիշեալ առաւելութիւնները, սակայն այս ժամանակից յետոյ՝ նա սկսում է անընդհատ կորցնել զգալի չափով իւր նախկին արժեքը և վարկը: Այս երեսոյթը տեղիք է տւել քաղաքանահասական մամուլին արծաթի խնդիրը ուսումնասիրելու և այն միջոցների, վրայ մատնանիշ լինելու, որոնք կարող կը լինեին արծաթին իւր վաղեմի արժանաւոր նշանակութիւնը ապահովելու: Գլխաւոր պատճառները, որոնք

¹⁾ Die Zukunft des Silbers von E. Franhäuser 1894.

Die Zukunft des Silbers von Prof. Süss. 1892.

Die Zukunft des Goldes von Prof. Süss. 1892.

Ներկայումն ստորացրել են արծաթի արժէքը, երկուսն են: Նախ 50-ական թւականներին՝ սկսեցին Ամերիկայում և Ռուսիայում ոսկի արդիւնաբերել մեծ քանակութեամբ, այնպէս որ այն տնտեսապէս յառաջընթաց երկիրները, որոնք ուզում էին ոսկեղբամ ունենալ, մոցրին սրան իրանց մէջ: Գլխաւորապէս Անգլիան է, որ առաջինը անցաւ դէպի ոսկեղբամը և այսօր էլ կատարելապէս պահպանում է այդ դիրքը: Յետով յաջորդեցին Ֆրանսիան և Գերմանիան, որոնք թէև ոսկեղբամի աստիճանի վրայ են գտնուում, բայց այդ դրութիւնը այսօր ևս ատառանող է, և Ֆրանսիան այժմ էլ աւելի արծաթ ունի քան ոսկի: Քանի որ ոսկի շատ կար շուկաների վրայ, սկսեցին աւելի շատ ոսկի գործածել նմանապէս և արւեստի համար: Երկրորդ պատճառը, որ շատ նպաստեց արծաթի արժէքի անկմանը, նրա մէջն է, որ ոսկու հետ միաժամանակ արդիւնաբերում էր ահագին քանակութիւններով արծաթ արդէն կատարելագործւած եղանակներով, որոնցով արծաթի արդիւնաբերութեան ծախքը մեծապէս պակասեց: Բնական է, որ երկու թանկապին մեաղների մէջ գոյացած մրցման գործում՝ ոսկին պէտք է յաղթէր ոչ միայն իր արժողութեամբ, այլ և այն գերազանց նշանակութեամբ տնտեսական գործառնութիւնների մէջ, որ արծաթը չունի: Ոսկեղբամը իր անժխտելի ընդունակութեամբ գործ է ածւում խոշոր վճարումների համար: Թէ մի երկրի սեփական առևտրական գործերում և թէ միջազգային առևտրական յարաբերութիւնների մէջ, մինչդեռ արծաթի դրամը ծառայում է սովորաբար միայն մանր վճարումների համար:

Որ արծաթի գինը շատ է ընկել, դրա մասին հետաքրքրական թւեր կանո Մէկ ունց (7 զոլոտնիկ) արծաթը արժէր 1870 թ. Եւրոպայում 1,29 դոլլար (մօտ 1 ռ. 60 կոպէկ ոսկով), իսկ 1893 թ. նա արժում էր 70 ցենտ (90 կոպ. ոսկով), կամ նոյն 1870 թ. մէկ ունց (7 զոլոտնիկ) ոսկով կարելի էր գնել 15—16 ունց արծաթ, այսօր մէկ ունց ոսկով առնում են 28 ունց արծաթ: Զնայած արծաթի արժանութեանը, սա նոյն իսկ արւեստի և գեղարւեստի համար համեմատապէս քիչ է գործածւում: Վերջին 1893 թւին բոլոր արդիւնաբերւած արծաթը եղել է 4,700,000 կիլոգրամ (մօտ 300,000 քութ), որից 650,000 կիլո (40,000 քութ) գործ է

ածւել արւեստի և գեղարւեստի համար. իսկ ոսկու արդիւնաբերութիւնը հասել էր նոյն տարին 205,800 կիլօ, որից 120,000 գործածւել է միևնույն նպաստակների համար:

Տեսնենք հիմա թէ արծաթի արդիւնաբերութիւնը ինչպիսի հակայական քայլեր է արել զանազան երկիրներում: Հիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգները բոլորովին շէին արդիւնաբերում արծաթ մինչ 1860 թիւը: Բայց արդէն 1873 թւին այս երկիրը արդիւնաբերել էր 27 միլիոն ունց (մօտ 50,000 փութ), իսկ 1893 թւին նա հասցրել էր արծաթի արդիւնաբերութիւնը մինչ 58 միլիոն ունցի, ուրեմն աւելի քան կրկնապատկել էր: Աւստրալիայում արդիւնաբերւել էր 1870-ին 180,000 ունց արծաթ (մօտ 270 փութ), իսկ 1893-ին ստացւել էր $13\frac{1}{3}$ միլիոն ունց արծաթ (24,540 փութ): Կարճ ասենք. ամբողջ տիեզերքում արդիւնաբերւել է 1873 թւին 63 միլիոն ունց արծաթ (115,000 փութ), 1893-ին տիեզերական արդիւնաբերութիւնը արծաթի հասել էր 152 միլիոն ունցի (277,400 փութ):

Արծաթի արդիւնաբերութեան արագ աճելուն նպաստել են մի կողմից ձուլելու նորագոյն եղանակները, որոնց միջոցով հանքերից շատ աւելի մետաղ է ստացւում, քան սրանից քսան տարի առաջ: Ամերիկայում այժմ ստացւում է հանքերից մօտ 90% զուտ արծաթ, մինչդեռ քսան տարի առաջ զուտ արդիւնքն էր 60% : Միւս կողմից արծաթի արդիւնաբերութիւնը բաւականին հեշտացել է, որովհետեւ այրելու նիւթը, քարածուխը, և ապրանքի փոխադրութեան ծախըը արժանացել են: Արդիւնաբերութեան այսպիսի նպաստաւոր պայմանները մեծ խթան եղան արծաթի նորանոր հանքերը արդիւնագործելու և ստացած արդիւնքը մեծ քանակութիւնով շուկաների վրայ դիզելու:

Հիմա բանը նրանումն է, որ արծաթէ զրամ ունեցող երկիրները փախուստ են տալիս սպիտակ մետաղից և ձգտում են ոսկեղբամ ունենալ: Նոյն իսկ Հնդկաստանը, ուր արծաթը բուն էր զրել այժմն, 1893 թւականի մի նոր օրէնքով, ընդունել է ոսկէ զրամի սիստէմը: Հնդկաստանում շրջում է մօտ 800 միլիոն դոլար արծաթ (1032 միլիոն ոռորդի արծաթ), զանձատանը պահւած է զրամով 200 միլիոն դոլար (մօտ 129 միլիոն ոռորդի). և մօտ 1500 միլ-

լիոն դոլլար (մօտ 2000 միլիոն ռուբլի) կազմում են հնդիկների գոհարեղինը և հում արծաթը (ձուլւած): Այսքան արծաթ գնում է Հնդկաստան գլխաւորապէս Անգլիայից: 1873-ից մինչ 1891-ը ամեն տարի միջին թւով Անգլիայից ուղարկւել է Հնդկաստան 37 միլիոն դոլլար արծաթ (47,730,000 ռուբլի), 1893-ին ուղարկւած արծաթի քանակութիւնը հասաւ 28 միլիոն դոլլարի (36,120,000 ռուբլի):

Գալով ուրիշ երկիրների արծաթէդրամի դորժածութեանը՝ նախ յիշելու է Անգլիան, որ թէկ ոսկէդրամ՝ գործածող է, բայց և անկարող է հրաժարւել արծաթէդրամից իր մանր վճարումների համար: Անգլիան գործ է ածում 100 միլիոն դոլլար մանր արծաթէդրամ: Ամերիկայի Միացեալ Խահանգները ունին 400 միլիոն դոլլար (516 միլիոն ռուբլի) արծաթէդրամ, որի իսկական արժեքն է, արծաթէ ցածր գնի պատճառով, միայն 240 միլիոն դոլլար (309,600,000 ռուբլի), և 150 միլիոն ունց արծաթի մետաղ, որ նմանապէս արծաթի ընթացիկ գնով 40 միլիոն պիտի կորցնի: Ֆրանսիան ունի 3000 միլիոն ֆրանկ (750 միլիոն արծաթ ռուբլի) արծաթէդրամ: Գերմանիայում շրջում է 400 միլիոն մարկ արծաթէդրամ (մօտ 130 միլիոն ռուբլի):

Վերև յիշեցինք, որ մի ունց ոսկին այսօր հաւասար է 28 ունց արծաթին: Այդ չափ ոգանց մեծ զանազանութիւնը արծաթի և ոսկու գների մէջ համարւում է մի դժբաղդութիւն, նամանաւանդ բոլոր այն երկիրների համար, որոնք միայն արծաթէդրամ ունին և իրանց արտաքին պարոքերը ոսկով պիտի վճարեն: Ել ինչ ասել կ'ուզի թղթադրամ ունեցող երկիրների մասին, որոնց մեծ ջանքեր և համբերութիւն են հարկաւոր՝ մինչեւ անգամ դէպի արծաթէդրամն անցնելու համար:

Թղթադրամ ունեցող երկիրներից նոր թեկնածու, որ կը ցանկար ոսկէդրամ ունենալ, հանդիսանում է Ռուսիան: Առանձին բարգաւաճ տնտեսական պայմաններ են հարկաւոր, որպէս զի Ռուսիան այդպիսի մի թռիչչք գործի՝ թղթից ոսկուն անցնելով: Ապա թէ ոչ բոլոր գործը արհեստական կերպարանք կը կը և անյաջողութիւնների և դժբաղդութիւնների կը հանդիպէ: Այսուամենայնիւ դէպի ոսկէդրամ անցնելու շարժումը եւրոպայում և այլն

տեղի ունի և հետևանքների տեսակէտից մեծ ուշադրութիւն է գրաւել: Առանց շատ սպասելու, այս շարժման մի ամենաշօշափելի հետևանքն արդէն նա է, որ արծաթը գնի մէջ շատ ընկել է:

Ուրեմն այն մեծ քանակութեամբ արծաթը, որ մինչ այժմ արդիւնաբերում էր, նոր պիտի զետեղւի, քանի որ զրամի համար նա, կարծես, այլ ևս յարգւած չէ երեւում: Այս հարցին պատասխանը դունւում է, թէև յուսահատութեան վախ էլ կայ, որ չմինի թէ արծաթը բոլորովին գործածութիւնից դուրս մնայ ապագայում: Գանի որ արծաթ շատ կայ և աժան է, յոյս կայ, որ թըղթաղրամ ունեցող երկիրները հեշտ և առանց գոհաբերութեան կը մտցնեն արծաթէղրամ, որ թուղթից շատ անգամ աւելի գերազանց է: Այս գործում, օրինակ, Շուսիան մեծ դեր կատարած կը լինէր և սպիտակ մետաղի համբաւը և վարկը կը վերականգնէր:

Նոյնպէս ասիական երկիրներին վիճակւած է երեւում արծաթէղրամ մոցնելու: Թղթաղրամ ունեցող երկիրները վաղուց ի վեր ցանկանում էին ազատել թղթից, բայց զորա համար սոքա հնարք չին գունում: Այժմ հնարաւոր է դարձել, ցանկացած նպատակին հասնելու: Պէտք է միայն թուլամորթ չլինել և պէտք է վճռողական քայլ անել: Բացի այս նշանաւոր յուսալի սպառման միջոցից, շատ հաւանական է, որ արժանութեան պատճառով՝ արծաթը այսուհետեւ առաջորէն զործ կ'ածւի նաև իրեղէնների համար, ինչպէս գդալներ, ամանեղէն և այլն: Անհերքելի է, որ ազգաբնակութիւնը անընդհատ ամենուրեք աւելանանով՝ բազմանում են նոյնպէս սորա ամեն տեսակ պահանջները: Իրեղէններն էլ մի պահանջ է, որ, հարկաւ, աւելանում է: Հետևաբար արծաթը այժմեանից աւելի դործ կ'ածւի արւեստագործական նպատակների համար: Աշքի առաջ պէտք է ունենալ և այն հանգամանքը, որ արծաթի արդիւնաբերութիւնը միշտ առատ և հարուստ չի լինել այլ կը գայ ժամանակ մօտիկ ապագայում, որ հանգերը վերջապէս կը սպառւեն և կը հատնեն: Արդէն Ամերիկայում նեւագա կոչւած տեղում, որ աշխարհիս երեսին ամենից շատ արծաթ էր արդիւնաբերում, հարուստ արծաթէ հանգերը սկսել են սպառւել: Նեւագա հանել է 1878 թւին 28 միլիոն գոլլար արծաթ (36,1000,000 ռուբ.): Կակ 1893-ին նեւագայի արծաթահանութիւնը ընկել էր մինչ 2.800,000

գոլլարի (3,600,000 ռ.): Միեւնոյն բանը կարելի է ասել և ոսկու հանքերի մասին, որոնք շատ տեղերում արդէն սպառման շրջանի մէջ են գտնւում: Յոյսեր դրած ունեն ռուսական Սիբիրիայի և հարաւային Ավրիկայի հարուստ ոսկէ հանքերի վրաց, որոնք մօտաւորապէս միայն $10^{\circ}/_0$ զուտ ոսկի են տալիս: Արծաթի և ոսկու հանքերի սպառման վերաբերմամբ հեղինակաւոր մասնագէտները այն կարծիքի են, որ գետնի մակերեսոցից 4000 ռանչաշափից աւելի խոր գնալով՝ հանքագործութեամբ զբաղւել անհնարին է: Գետնի 4000 ռոտ խորութեան մէջ զգալի է լինում մի անտանելի շոք և երեւում են ջրի յօրդ հոսանքներ, որոնք ամեն մարդկացին գործ և աշխատանք ոչնչացնում են: Մի քանի տեղերում արծաթի հանքերը արդէն անցել են 3000 ռոտնաշափ խորութիւն, որից մասսամբ կարելի է եզրակացնել, որ սպառման և հատնելու ժամանակը մերձենում է հարուստ հանքերից շատերի համար: Հակառակ այս ամենի՝ արծաթը և ոսկին լեռ ևս շարունակում են շուկաների վրաց բաւականին քանիակութեամբ դիզել և տէրութիւններին անճիշտ և խաբուսիկ ուղղութիւն տալ իրանց դրամական կազմակերպութեան գործում: Արդի ոսկու բացարձակ նախադասութիւնը և արծաթի յետամղութիւնը համարւում է մի ժամանակաւոր, բայց ոչ ցանկալի, անգամ շատ վասակար երեսով՝ տնտեսական և հասարակական տեսակետներից:

Մեծ մտամբ այս մետաղների բովագործութիւնը գտնւում է մասնաւոր ձեռնարկող կապիտալիստների ձեռքերում: Վերջինները հանքերը վերցնում են տէրութիւններից կապալով: Կապալառու կապիտալիստները հանում են մետաղներ որքան հնարաւոր է, առանց հարցնելու կամ քննելու թէ ինչ է ժողովրդական սկահանջը: Նրանց համար հարստանալը գլխաւոր բանն է: Նրանք անստարեր են իրանց գիշակեր գործերի հետևանքների մասին ժողովրդական մասսայի շահերի տեսակէտից: Արծաթը յանկարծ ընկնում է շատութեան պատճառով: Սորա ուղղակի վասակար հետևանքը այն է, որ ժողովրդական աղբուստի բոլոր միջոցների գները բարձրանում են և ոսկու թանգութեանը հասնում: Խակ գների այս փոփոխման հետ՝ ժողովրդական աղբուստի բիւջեալ մնում է միեւնոյնը, այնպէս որ զրկանքները մասսայի համար շափաղանց զգալի և անտա-

նելի են դառնում: Այս օրինակ դրութիւնը հասցնում է տէրունանական գանձարաններին՝ ոյնպէս մեծամեծ վնասներ: Հարկատութիւնը անկանոն է դառնում և ապառիկներով լցւում է, որովհետեւ ժողովրդի վճարելու ընդունակութիւնը նւազում է: Մի խօսքով արծաթի անկումից յառաջացած վնասները այնքան մեծ են, որ Եւրոպայում հարց է ծագել այս մետաղների հանքագործութիւնը տէրունական գարձնել: Տէրութիւնները ժողովրդական շահերի ներկայացուցիչներ և սպաշտապաններ են: Սրանք միայն ընդունակ են ոսկու և արծաթի արդիւնաբերութեան չափը և սահմանը որոշել: Մասնաւոր տնտեսութիւնը այս գործի մէջ իւր անելիքը արել է շնորհիւ սանձարձակ կամայականութեան, որ իրանշնորհւած էր: Այսօր այդ նշանաւոր գործը պիտի պատկանի պետական-հասարակական տնտեսութեանը:

ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ՀԱԽԱՔԱԿԱՆ ԱՊԱՌՈՎԱՑՈՒՄՆ ՌՈՒՍԱՏԱՆՈՒՄ
ԴԺԲԱՂԴ ԴԵՊՁԵՐԻՑ

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

Կարդալով «Մուրճ»-ում լոյս տեսած պ. Գ. Ղարաջեանի «Բանւորների ապահովացման խնդիրը Եւրոպայում» յօդւածը և «Մուրճի» պրն. Խմբագրի հրաւերը՝ տեղեկութիւն տալ Ռուսաստանում ևս գոյութիւն ունեցող այն մասնաւոր ընկերութիւնների մասին, որոնք բանւորներին ապահովում են դժբախտ դէպքերից, մենք խրախուսւած թէ այդ խնդիրի երեան գալուց և թէ «Մուրճ»-ի յարգելի խմբագրի հրաւերից, կամենում ենք, իբրև լրացուցիչ նկարագրութիւն պ. Ղարաջեանի յօդւածի, մի ամենոփ բացառութիւն տալ «Մուրճ»-ի ընթերցողներին, թէ ինչպէս է ընդունուում բանւորների ապահովագրութիւնը Ռուսաստանում և ինչ պայմանների մէջ են գտնուում այն ապահովագրական ընկերութիւնները, որոնք յանձն են առնում ապահովացնել բանւորների կեանքը դժբախտ դէպքերից:

Նախքան խօսելը այդպիսի ընկերութիւնների բնաւորութեան և գործունէութեան մասին, թող ներւի մեզ նկատել այսաեղ, որ համեմատաբար թէ Ռուսաստանում առհասարակ և թէ մանաւանդ մեզ մօտ Կովկասում՝ բանւորների ապահովացման դործը գեռ շատ խորթ է մնացած և անուշադրութեան է մատնաւած զանազան դործարանատէրերի կողմից:

Եւ զարմանալին այն է, որ թէև գործարանատէրերի զլիսաւոր շահագործութիւնը հիմնւած է աշխատաւոր ձեռքերի վրաց, բայց նրանք միշտ աշխատում են խուսափել այնպիսի անհրաժեշտ պարտաւորու-

Թիւնից, որը այսպէս թէ այնպէս նորա գործարանավարական բարեկարգութեան մէջ տռաջին տեղը պիտի բռնէր:

Խսկ այդ պարտաւորութիւններից մէկը իր բանւորների ապահովացութիւն է: Եաւ պարզ պէտք է լինի այն հանգամանքը, որ, որքան էլ գործարաններում, կամ որ և է արդիւնաբեր հիմնարկութեան մէջ կատարելագործւած լինեն տեխնիկական պայմանները, կամ որքան էլ բանւորը զգուշութեամբ վերաբերուի իր գործին աշխատանքի ժամանակ, այնու ամենայնիւ դժբախտ գէպքերը միշտ ենթադրելի և իրօք անխուսափելի են:

Երեակայեցէք ձեզ մի մեխանիկական գործարան, որը ամփոփում է իր մէջ :ուգունէ-պղնձեայ (չուցինո-անձնութեան) ձուլարաններ, դարբնանոց (եզնուց), կաթայագործարան (եուելիութեան) և այլն:

Բանւորի կեանքը մի այդպիսի գործարանում, ուր նա միշտ ապրում է կրակի, ծուխի, բազմաթիւ ճախարակների ու մեքենաների մէջ՝ միշտ կապւած է զանազան պատահարների հետ:

Այդ մասին թող ընթերցողը կրկին կարդայ «Մուրճ»-ում պ. Գ. Խաժակնեանի «Նաւթաշըջանի բանւորները» խորագրով յօդւածը, և կը համոզւի, որ իրաւ բանւորի աշխատանքը դժոխազին պարապմունք է:

Պայմում է կաթսան, և մեռնում է կաչեգարը, մի որ և է ծանրութեան տակ ջարդում, փշրում է իր մարմնի մի մասը բանւորը, վնասում է իր ձեռքը արհեստաւորը, չէ՞ որ այդ բոլորը մի ամենօրեայ երևոյթ է բանւորի համար, որը կրկնում է մեր աչքերի առաջ:

Եւ հեմ վրայ է ընկնում մեղը այդ պատահարներից յետոյ: Անմեղ զոհ դարձած բանւորի, թէ այն գործարանատէրի, որը իր զանցառութիւնից է թէ չգիտեմ խնայողութիւնից բարեկարգութեան մէջ չէ դրել իր գործարանի տեխնիկական պարագաները:

Հարցը երբեմնապէս մնում է վիճելի:

Եւ կաթսայի պայմումից, մահացած կաչեգարի (կաթսայի վրայ հսկողի) կինը, կամ չուգունէ լաւացից խորոված զոհի ծնողները, դիմում են գործարանատէրին բաւարարութիւն պահանջելու կեանքի փոխարէն, որ և մեծ մասամբ մնում է առանց հետեւանքի, հետևապէս գործը ընկնում է դատաստանի:

Եւ ահա սկսում է գատաստանական պրոցէսը, որը բացի այն, որ համարեա ամեն անգամ վերջանում է յօգուտ բանւորի, այլ և գատաստանական ծախսերի տակ են ընկնում երկու կողմերը, միևնոցն ժամանակ իզուր ժամավաճառ լինելով:

Ահա հէնց այդպիսի անախորժութիւնների դէմն առնելու համար է, որ այդպիսի դէպքերում բանւորների հաւաքական ապահովագրութիւնը երևան է գալիս իբրև մի անհրաժեշտութիւն թէ բանւորի և թէ գործարանատիրոջ համար:

Բաւսկան է, որ գործարանատէրը մի որոշ պայման ունի կապած մի որ և է ապահովագրական ընկերութեան հետ, և նա ազատում է ամեն մի պատասխանատուութիւնից: Խոկ բանւորական դըժքախտ դէպում միակ բաւարարութիւն տւողը ներկայանում է ապահովագրական ընկերութիւնը:

Մենք կարծում ենք, որ բացի օրէնքով սահմանած պարտականութիւնը գործավարին բաւականութիւն տալու դժբախտ դէպքերում, եթի այդ դէպքը պատահել է գործարանատիրոջ մեղաւորութիւնից, նաև մի բարոցական պարտք պէտք է համարւի գործարանատիրոջ կողմից ապահովացնել կեանքը այն մշակ դասակարգի, որի չնորհիւ նա կրկնապատկում է իր օգուտները:

Ենթադրեցէք մի բոպէ, որ բանւորը ևս մի կենդանի մեքենաց, մի աւտոմատ է. եթէ ձեր գործարանային մեքենաները, ճախարակները կամ կաթսաները սարք ու կարգի մէջ դնելու համար ամենայն օր իւղում սրբում էք, որ ժանգից չփչանան, եթէ դուք յաճախ քանդում, նորից կազմում էք, որ լաւ բանեն, որքան ուրեմն պարտաւորէք խնամել կեանքը այն կենդանի մեքենաների (բանւորների), որոնք նոյնքան $\frac{0}{0}$ օգուտ են բերում ձեզ, որքան և ձեր իսկական մեքենաները—ճախարակները և այն:

Այդպիսով դուք ապահովելով բանւորի կեանքը և բանւորն էլ իր հերթին տեսնելով ձեր խնամքը, նա, մի առանձին եռանդով ու աշխատասիրութեամբ է վերաբերում դէպ իր վրաց դրած պարտականութիւնները, նա կրկնապատկում է իր ոյժերը յօգուտ ձեզ:

Ուրեմն բանւորների ապահովագրական ընկերութիւնները ներկայացնում են բացի որպէս այլ և այլ անախորժութիւնների, զանազան աւելորդ ծախսերի առաջն առնող մի ֆակտոր, այլ և

իբրև մի գեղնցիկ մարդասիրական հիմնարկութիւն, իբրև միակ պատասխանատուն և հաշտեցնողը վէճով բռնւած երկու կողմերի:

Իուսաստանում գոյութիւն ունին առայժմ երկու մասնաւոր ընկերութիւններ բանւորներին համագումար ապահովացնելու սկզբունքով, որոնցից զրամագլխով հարուստ «Քօչեա» ընկերութիւնը (միւս ընկերութիւնը անւանւում է «Պօմօչե», որ մասնաւորապէս պարապւում է համագումար ապահովագրութեամբ) յանձն է առնում ապահովացնել բանւորների կեանքը դժբաղդ դէպքերից, լինի դա գործարանում աշխատանքի ժամանակ, կամ գործարանից դուրս, միացնթէ դէպքը պատահած լինի պարապմունքի ժամանակ ծառայութեան մէջ:

Ահա այդպիսի ապահովացումն անւանւում է հաւաքական ապահովագրութիւն դժբախտ դէպքերից: (Коллективное страхование отъ несчастныхъ случаевъ):—Ոչ միայն յատկապէս գործարաններում, այլ և ամեն նոր սկսւող կամ կառուցւելիս շինութիւններում, ուր առնց բանւորի գործը գլուխ գալ չէ կարող, ընկերութիւնը ընդունում է աշխատաղ բանւորների ապահովացումը:

Կառուցանաւում է մի ահագին շինութիւն, ուր բանում են բազմաթիւ որմնադիրներ, քար, հող, կիր կրող մշակներ, շինուում է մի խճուղի, որտեղ պէտք է ճեղքել սարերը, հարթել բլուրները, վերջապէս հանքերում, ուր բանում են բազմաթիւ բանւորներ, այդտեսակ դէպքերում ևս ընկերութիւնը ապահովացնում է բանւորներին և դժբաղդ դէպքերում առանց յետաձգելու վճարում է ապահովացման գումարը վնասւած բանւորին:

Սակայն որ չափով է լինում այդ բաւարարութիւնը, կամ ինչ ձեռք է որոշում բանւորի կեանքի գինը,—մահւան փոխարէն, կը հարցնեն մեզ ընթերցողները:

Ահա հէնց այդ բացատրութեանն ենք ուզում մօտենալ:

Բայց նախքան այդ կէտին հասնելլ, բացատրենք այն թէ դժբաղդ դէպք կամ պատահար խօսքը ինչ սահմաններում և ինչպէս պէտք է հասկանալ:

Դժբաղդութիւնը բանւորի կեանքում պատահում է ոչ միատեսակ կերպով և ընկերութիւնն էլ նրան բաժանել է Յ աստիճանի, այն է՝

1) Մահ դժբաղդ դէպքում (несчастный случай, смерть):

2) Մինչև մահ աշխատանքի անկարութիւն (инвалидность):

3) Ժամանակաւոր անընդունակութիւն աշխատանքի (временная неспособность к труду): Եթէ պատահած դժբաղդ դէպքից բանւորը մեռնում է, այն ժամանակ բանւորի կինը կամ ծնողները կամ վերջապէս որդին (որը սակայն 16 տարեկանից պակաս չպիտի լինի) ստանում են ընկերութիւնից՝ մեռած բանւորի մասնաբաժին ապահովացրած բոլոր գումարը միանգամայն, անկարութեան դէպքում ստանում է ինքը բանւորը իրեւ կենսաթոշակ մաս առ մաս, կամ միանգամայն այն գումարը, որը ապահովացրած է համապատասխան իր նիւթական դրութեան. իսկ աշխատանքի ժամանակաւոր անընդունակութեան դէպքում – բանւորին տրում է ամենօրեայ վարձի կէսը, բժշկւելու և ապրելու համար՝ մինչև բոլորովին առողջանալը:

Այժմ էլ տեսնենք, թէ ինչպէս և որքան է վճարում գործարանատէրը իր բանւորների ապահովացման փոխարէն՝ իրեւ տուրք (պրեմիա):

Օրինակ, գործարանատէրը ցանկանում է ապահովացնել մի տարով իր բոլոր ծառայողներին և բանւորներին, որոնք աշխատում են իր կտաւի գործարանում և որը պատկանում է III-րդ դասակարգին¹⁾. Նա կամենում է որ ամեն բանւորին, համեմատաբար իր ստանալիք ուոճկի, ապահովացնի 600 օրավարձի չափ մահւան դէպքում, 900 օրավարձի չափ անկարութեան դէպքում:

Կտաւի գործարանում բանողների թիւը ենթադրենք թէ հասնում է 250-ի, որոնք իրեւ ընդհանուր տարեկան վարձագին ստանում են 60,000 ռուբլի: Այդպիսի ապահովագրութեան համար տարեկան պրէմիան ամեն մի 1000 ռուբլու համար կազմում է 8 ռուբլի 90 կոպ., իսկ 60,000 ռուբլու ապահովացրած գումարի համար 8 ռ. 90 կ. $\times 60 = 534$ ռուբլի: Բայց որովհետեւ ընդհանուր

¹⁾ Կործարանները վտանգի աստիճանին համաձայն բաժանւած են 12 դասակարգի. այն գործարանում, ուր աշխատանքը կապւած է աւելի վտանգաւոր հանգամանքների հետ, ալդպիսի ապահովացման տուրքը համապատասխան կարգի ու վտանգի տեսակէտից, փոխում է համաձայն Փինանսների նախարարից հաստատւած տարիֆի:

տարեկան վարձագինը անցնումէ 50,000 ռուբլուց, ուստի ընկերութիւնը, համաձայն իր կանոնների, վճարելիք տուրքից զեղչում է 26 ռ. 70 կ. այսինքն $5^{\circ}/_0$. ուրեմն 250 բանոր ապահովացնելու համար վտանգի III աստիճանում, դործարանատէրը վճարում է տուրք 507 ռ. 60 կոպ.

Իսկ եթէ մի քանի տարի շարունակ գործարանատէրը նոյն ընկերութեան մէջ ապահովացրել է իր բանուորներին, այդ դէպքում ընկերութիւնը պրէմիայի քանակութիւնը քչացնում է $5^{\circ}/_0$ ևս, փոխարէն դիւդիենդի, որ կազմում է 25 ռ. 36 կոպ., ուրեմն 3 տարուց յետոց գործարանատէրը վճարում է տարեկան տուրք 481 ռ. 94 կոպ.։

I Դասակարգի գործարանը 1000 ռուբլու համար վճարում է տուրք 3 ռ. 10 կոպ. որ ասել է թէ 60,000 ռուբլու համար = 198 ռ. 80 կոպ., իսկ XII դասակարգի համար հազարին 29 ռ. 20 կոպ., որ ասել է թէ 60,000-ի համար 1752 ռուբլի։

Բացատրենք:

Արդիւնաբերը կամ մի որ և է գործարանատէր ցանկանում է կապել պայման դիցուք «Россия» ընկերութեան հետ իր բանուորներին դժբաղդ դէպքերից ապահովացնելու մոքով. և ահա նա ներկայացնում է ընկերութեան վարչութեանը (որը գտնուում է Պետերբուրգում) կամ բոլոր տէրունական քաղաքներում գտնող գործակալներից մէկին, մի ծանուցագիր (ձայլութեան) որի մէջ արձանադրելով իր գործարանում բանող բոլոր բանուորների թիւը՝ յայտնում է, որ մի տարւայ ընթացքում նա դիցուք թէ 300 բանուորին վճարում է 100,000 ռուբլի վարձագին. նա միեւնոյն ժամանակ յայտնում է որ մի տարւայ ընթացքում ցանկանում է ամեն մի բանուորի կեանքը ապահովացնել 500, 1000, 1500, կամ վերջապէս 2000 բազմապատկումով (երածութեան): Դիցուք բանուորը օրական ստանում է 80 կոպ. վարձագին, և եթէ բանուորի կեանքը ապահովացրած է 1000 վարձագինով, ուրեմն նա մի տարւայ ընթացքում ստանում է $80 \times 100 = 800$ ռուբլի մահւան և հաշմանդամութուն դէպքում. բանուորը որ օրական ստանում է 2 ռ. և ապահովացրած է 1000 բազմապատկումով, սրա կինը մահւան դէպքում ստանում $2 \times 1000 = 2000$ ռուբլի. եթէ բանուորը ապա-

հովացրած է 1500 բազմապատկումով (երգանք) և օրական ստանում՝ է 1 ռ., ուրեմն և կստանայ բաւարարութիւն 1×1500 ռ. և այլն:

Նոյն հաշտով տրւում է բաւարարութիւն և անկարութեան ժամանակ ամբողջ կեանքում (ինվալիդություն), երբ բանւորը զրկում է աշխատանքի ընդունակութիւնից:

Գործարանատէրերից շատերը երբեմն ապէս անկարութեան դէմ բանւորի կեանքը ապահովացնում են մեծ բազմապատկումով, այն է 2000 օրւայ գնով. ուրեմն եթէ բանւորը օրական ստանում է 1 ռ., դժբաղդ դէպքից անկարութիւն ստացողի բաւարարութիւնը մի տարւայ մէջ կազմում է 1×2000 ռ., որ կազմում է 2000 ռ.:

Իսկ ժամանակաւոր անընդունակութիւնը վարձատրւում է 50%, այն է օրավարձի կիսագնով, որը սակայն կարող է տեսել 200 օր:

Եւ այսպէս ամեն մի բանւոր, կամ մի քանի բանւորներ միասին վեասւած մի անգամի համար ստանում են բաւարարութիւն համալրատասխան իրանց նիւթական եկամուաների:

Մահը, որ առաջանում է դժբախտ դէպքերից, դա հասկանալի է. բայց ինչպէս հասկանալ անկարութիւն (ինվալիդություն) խօսքի որոշ սահմանները, ահա ցանկալի է, որ այդ բացատրւած լինէր դործարանատէրերի համար:

Անկարութիւն առաջանում է անւանում է այնպիսի դէպքերից, երբ բանւորը կորցնում է աչքերի տեսողութիւնը, երբ վնասւում են նրա երկու ձեռքերը և երկու ոտները, կամ մի ձեռք և մի ոտը, նոյնպէս և այն դէպքում, երբ նա անբուժելի խելացնորման է համանում, որով բանւորը դատապարտւում է աշխատանքի անընդունակութեան մինչև իւր մահը. այդ դէպքում, ինչպէս ասացինք, ընկերութիւնը վճարում է նշանակւած թոշակ:

Երբ բանւորը կարող է և մնում է ընդունակ գոնէ կիսով : ափ աշխատելու, այսինքն երբ նա կորցնում է իր ֆիզիքական օրգանիզմի մի մասը, օրինակ մի ձեռքը, կամ մի ոտը, աչքերից մէկը, կամ եթէ, չնայած իւր խելացնորմանը՝ ձեռքի աշխատանքով մի կերպ կարող է ապրել, այդ դէպքում ընկերութիւնը վճարում է նշանակւած և ապահովացրած կենսաթոշակի կէսը:

Երբորդ ասաինձանին պատկանում են այն տեսակ դժբախտու-

թիւները, եթէ բանւորը զրկւել է մի կամ մի քանի մասից կամ մի փոքրիկ գէպէքը վնաս է առաջ բերել և այն. այդ գէպքում էլ ընկերութիւնը վճարում է $10^{\circ}/_0$ — $25^{\circ}/_0$ այն թոշակից, որը նշանակւած և ապահովացրած է ընդ միշտ աշխատանքի անընդունակ դարձած ժամանակ:

Մենք գիտենք մի ֆակտ, որ բանւորը (լիտեյնիկ) ահագին ծանրութեան տակ ջախջախից իր ոտի մէկը և նա ստացաւ 300 ռ. այն էլ զատաստանով, մինչեւ եթէ նա ապահովացրած լինէր որ և է ընկերութիւնում՝ կը ստանար անկարութեան գէպքում հասնելիք կինսաթոշակը ամբողջովին, որ եթէ 3 ռ. նրա ստանալիք օրավարձը բազմապատկենք 1000 վրայ՝ կը կազմէ 3000 սուբլի. թշւառ զոհը մինչ օրս էլ անիծում է իւր գործարանատիրոջ, իսկ գործարանատէրը փաստաբանին վճարեց յաջող գործը տանելու համար 500 ռ.

„Россия“ ընկերութիւնը, որը սկսել է բանւորների ապահովացման ճիւղի գործունէութիւնը թոյլատութեամբ վինանսների նախարարի 1888 թւականից, հետեւեալ ստատիստիկան է ցոյց տալիս իր տպած հաշվի մէջ:

Որ թւականին	Ապահովագրած բանւորների թիւը:	Ապահովագրած գումարը բանւորների համար:	
		Մահւան գէպքում:	Անկարութեան գէպքում:
1888	40.196	28.151.555	29.738.655
1889	63.757	44.262.320	48.905.860
1890	84.172	57.153.840	64.002.007
1891	85.647	65.284.728	44.793.269

Այսպէս որ 1891 թ. վերջերում միջին թւով ամեն մի բանւորի ապահովացման գումարը մահւան գէպքում հասնում է 682 ռ. 57 կոպ., անկարութեան գէպքում 781 ռ. 51 կ., ժամանակաւոր անընդունակութեան գէպքում առ 31 դեկտեմբերի 1891 թ. 19.785 աշխատաւորի համար ապահովացրած էր օրական վարձատ-

բութիւն 16.625 ռուբլի, կամ միջին թւով մի բանւորին օրական հասնում էր 84 կոպէկ:

Իբրև տարեկան տուղք „Россия“ ընկերութիւնը զանազան արդիւնագործական հիմնարկութիւններից ստացել է՝

1888 թւակ.	54.363	ռուբ.	88 կոպ.
------------	--------	-------	---------

1889 ,	110.130	»	70 »
--------	---------	---	------

1890 ,	151.580	»	70 »
--------	---------	---	------

1891 ,	185.406	»	— »
--------	---------	---	-----

1891 թւականին ամեն մի բանւորի միջին թւով հասնելիս է եղել 1 ռ. 94 կոպէկ:

Միւս անգամ մենք կաշխատենք «Մուրձա-ի ընթերցողներին ծանօթացնել այն կանոնների և պայմանների հետ, որ ընկերութիւնը ունէ կապած կայսերական կառավարութեան հետ միջնորդութեամբ ֆինանսների նախարարի և թէ ինչպէս է կատարում կառավարչական վերահսկողութիւնը (կոնտրոլ) այդ ընկերութիւնների գործունեութեան վերաբերմամբ:

ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ՖՐԴՈՒՄԸ—«ԶՈՀԱԿ» Բիւրասպի Աժդահակ» ամբողջ վէպ Շահ-Նամայից: Ա. (գիրք): Թարգմանեց բնագիր պարսկերէնից Առմուէլ Գիւլզադեանց: Եռշի, 1894թ., գինն է 30 կուգ: ՖՐԴՈՒՄԸ—«Ռուստամ» և Սոհրաբ», ամբողջ վէպ և զանազան հատածներ Շահ-Նամայից. Գ.: Թարգմանեց բնագիր պարսկերէնից Սամուէլ Գիւլզադեանց: Եռշի, 1893թ., գինն է 60 կ.:

Բոլոր ազգերի կեանքի մէջ պատահած են մոմէնսներ, երբ գրականութիւնը, պատմական որոշ հանգամանքների չնորհիւ, հասել է իր ծաղկման գագաթնակէտին: Ազդափի մոմէնսների պարուկական գրականութեան պատմութեան մէջ երկու անգամ ենք հանդիպում: մէկն է Հաֆիզի զարը, երբ արենելքի ալդ ամենամեծ քնարերգուն հնչեցնում էր իր գողտրիկ քնարը՝ սէրն ու գիւղին երգելով, միւսն է Ֆիրդուսուղարը, երբ «Դրախտացին» բանասիեցը, թէպէտ կրօնով մահմելուկան, բաց չանձինս առասպելական և կիսապատմական հերոսների՝ «Յիսուսի նման բարուցանում էր»¹⁾ արևապաշտ պարուկի աշխարհահատին գողութիւնը:

1) «Բողոք Վահմուղ շահի դէմ».

Բայց Ֆիրդուսուղարը ստեղծողը միայն Ֆիրդուսին չէր, այլ և մի լուսաւոր պիտի Մահմուղ շահը, որ իրանից հովանաւորուած հարիւրաւոր բանաստեղծներին, և նոյն իսկ Ֆիրդուսուն, ժողովրդական ոգի ներշնչեց և պարուկական բանաստեղծութեան տւեց ցանկալի ժողովրդակամ ուղղութիւն և հիմք:

Բանաստեղծութիւնն ան ժամանակ կարող է համարւել ինքնուրուն, այն ժամանակ նա արժանի է դասում օտարների հետազօտութեան, երբ նա իր ազբիւրները որոնում է ժողովրդի մէջ, երբ նա արտացոլացնում է ժողովրդի հոգեոր և մտաւոր ուժերը: Բայց որովհետեւ ամեն մի ժողովուրդ՝ իրը առանձին կեանքով ապրող մի ամբողջութիւն՝ ունի իր որոշ առանձնահատկութիւնները, նա անկասկած իր մտքի և հոգու

արտադրութիւնների — գրականութիւնների մէջ երևան պիտի հանէ ազդ։ Ազդ առանձնաբառակութիւններն են, որոնք բնորոշում են լայտնի ժողովովի գրականութիւնը, նրան տալով ինքնուրանութեան պատկեր և նրան առանձին տեղ լատկացնելով համաշխարհակին գրականութեան պատմութեան մէջ։ Պարսկական հերոսական վէպը բնորոշող գծերը հիմք են առնում հին պարսկի դարերով աւանդած երկուսութեան կրօնից, որը դարձաւ ան կանւան, որի վրա հիւսեց Ֆիրդուսին իր Շահ-Նամէն։

Մահմուդ-Շահը (997—1030), որի ժամանակ Պաֆնաչեան հարստութիւնը հասաւ իր ամենածաղկեալ վիճակին, թէպէտ նպաստել է բանաստեղծութիւնը, ինչպէս և կրթութիւնն ընդհանրապէս, պալատական դարձնելու, բայց նա արել է ազդ՝ նրանց առանձին ուժ տալու և հովանաւորութիւն ցոյց տալու նպատակով։ Նա իր բանաստեղծներից ոչ թէ հնչուն ու գեղեցկահիւս պանեղիրիկաներ է պտհանջել, ինչպէս ուրիշ արևելեան պետերը, աչ պահանջել է լինել կատարեալ ինքնուրոցն և ներշնչւած ժողովրդական ոգով։ Եւ անկատկած պարսկական հերոսական վէպը քիչ չէ պարտական Մահմուդ-Շահին, և գոյցէ Ֆիրդուսին ըլինէր այն Ֆիրդուսին, և թէ ըլինէր լուսաւոր Մահմուդ-Շահը...

Մահմուդ-Շահը իրանից հովանաւորւած հարիւրաւոր բանաստեղծներից ընարում է 7-ը ամենաաղանդառութիւններին, որոնց մէջ էր և Ֆիրդուսին, և առաջարկում նրանց մշակել նրանի պատմութիւնը բանաս-

տողեղօրէն՝ և իբրև պատմութեան նիւթեր առաջարկում է ժողովրդական առասպելները, պատմական աւանդութիւնները, որոնք զանազան ժամանակներում կազմւած էին նունպէս ժողովրդական պատմական աւանդութիւնների վրա հիմնած։ Վերոշեալ գրաւոր աղբիւրները կազմւած էին Խոսրով Նուշիրւանից (531—579) սկսած և նրանք անցան զանազան հատւածներով, լաւելումներով մինչև Սասանեան վերջին թագաւոր Յազկերու III, որի ժամանակ կրկին խմբագրւեցան, լրացւեցան, և նրանցից կազմւեց Բաստան-Նամէտիրքը, որի մի քանի իրարից տարբեր օրինակները գտնւում էին զանազան ձեռքերում Մահմուդ-Շահի ժամանակ։ Անա աչս Բաստան-Նամէն պիտի լինէր այն գլխաւոր աղբիւրը Խրանի բանաստեղծական պատմութեան, որը պիտի մշակէին Մահմուդի Կօթը բանաստեղծները։ Բայց Մահմուդ-Շահի հանճարեղ միտքը, բացի Ֆիրդուսից, ուրիշ ոչ ոք չկարողացաւ իրագործել։

Աջատեղ մի հետաքրքիր համեմատութիւն կարելի կը ինէր անել քրիստոնէական հանրահոչական անդամականութեան» և մահմեդական «Քանատիկոսութեան» մէջ։ — Մինչդեռ մեզ մօտ ու Լուսաւորչից սկսած կատաղի հալածանքի է ենթարկում այն ամենը, ինչ վիշեցնում է հեթանոսական կրօնը, հեթանոսական ժամանակները, մահմեդական չահ Մահմուդն ընդհակառակիր՝ ինամքով հաւաքում է այն ամենը, որից արտանշում է որմզգական պահծառ հուրն

իր հետաքրիր անցեալով, Եւ ճէնց Շահ-Նամէի մէջ որմզդական հուրին անքան է ոգնորել բանաստեղծին, որ բոլորովին մոռայլում է թէ Ֆիրդուսին մի մահմեղական է և ոչ զրադաշտական։

Ֆիրդուսու խսկական անունը Խրն-Խակ-իբրն-Շէրիֆ-Արուլ-Կասիմ է։ Ֆիրդուսի, Ֆըրդուսի, Ֆի(ը)րդօ(ա)-ուսի նրա մականունն է, որ նշանակում է «Դրախտալին»։ Ծնւած է նա 940 ի մօտերքը Խորասանի Շադաք գեղում Թուսի մօս և վախճանւոծ 1020-ին Թուսում։ Ֆիրդուսու հնկաց անձնաւորութեան հետ կապւած են շատ սրաւաշարժ և բանաստեղծական աւանդութիւններ, որոնք մտել են չետագայ գրողների շարադրութիւնների մէջ և որոնցից շատերը դեռ մինչև հիմա պատմում են ժողովրդի բերանցում¹⁾։ 36 տարեկան հասակում Ֆիրդուսին գրեց իր Շահ-Նամէն (Թագաւորների Գիրքը) և վերջացրեց 71 տարեկան հասակում։ Շահնամէն բաղկացած է 60,000 «բէլթերից», ազինքն երկուող տուներից, պատմութեան սկիզբը կորչում է անդիշատակ ժամանակներում, վերջը չանգում է Սասանեան պետութեան ամկմանը։

Շահ-Նամէի մէջ Ֆիրդուսին անց է կայրել Զրադաշտի դուսալիստիկական կրօնի հիմնագաղաղաբարը—Ոմքզդի և Արհմի, բարու և չարի, լուսի և խաւարի մրցումը և ալդ մրցումը

նա մարմնացրել է Խրանի և Թուրանի գարաւոր պատերազմներում։ Խրանում կամ Լուսի աշխարհում բնակւում էին որոշ քաղաքակրթութեան հասած արիական-զենդական ծագում ունեցող նստակեաց ազգեր, իսկ Թուրանի կամ Խաւարի աշխարհի ընդարձակ տափաստաններում, որոնք բաժանւում էին Խրանից 0.ք. սուս գետով, թափառում էին թուրքական ծագումն ունեցող կիսավարքենի ցեղեր, Եւ ահա ալդ «Խաւարի և լուսի» աշխարհները, որոնք զանազանում էին իրարից աշխարհա-զրական զիրքով, կլիմական չառ-կութիւններով և մնում էին լեզով, սովորութիւններ ով, կրօնով և կուլ-տուրակով տարբեր ժողովուրբներ, ընդհարւում են իրար՝ մրցման ասպարեզ գուրա բերելով իրանց հերոսներին։ Ֆիրդուսին իրի իրանացի՝ առզորւած ժողովրդական ոգով իր հայրենիքի հերոսներին դուրս է բերում պայծառ գոյներով, իսկ Խաւարի աշխարհի հերոսներին դաժան և մութ չառկութիւններ է տափս։ Օրինակ, պ. Գիւլզագեանի թարգմանած ա. գրքում գուրա է լերւած մի կողմից թուրանական ծագում ունեցող «անարդար, անօրէն ու անհաւատ» Զրհակը, որը բոնի կերպով տիրապետում է իրանական գահին։ Նա, իրի Խաւարի ծնունդ, լարաբերութիւն ունի չար ոգու։ ի բլիսի հետ Նրա ուսերին բուսել են երկուօձեր, որոնց կերակրում է նա Խրանացի երխաւասարդների ուղեղներով, միւս կողմից հանդէս է գալիս Խրանի ներկայացուցիչ գեղեցիկ, չնորհալի ու բոլոր բարի խաւարութիւն-

1) Ֆիրդուսու կինսագրութեան վերաբ որը պիտի տակ պ. Գիւլզագեանին ապագալում մենք չենք ուզում, կանգնել.

Ներով առատ ֆերիդունը, լաղթում է Զոհակին և շղթակում Դեմաւէնդ սարի մի մութ ալրում: Աւատեղ, ինչպէս տեսնում է ընթերցողը, դուրս է բերւած պարսկական զուալիսիկական կրօնի հիմնագաղաքիարը—բարի և չար սկզբունքների մրցումը և բարու վերջնական լաղթանակը: Սա մնում է իրեն հիմնական մօտիւ Ֆիրդուսու ամբողջ Շահ-Նամէի, բայց այս հիմնական մօտիւի տակ հնչում են հրաշալի ակլորդներ, զգացմունքների և պատկերների հրաշալի բազմատեսակութիւնն, պատկերները փանտաստիկական գեղեցկութեամբ, ըզգացմունքները հսկաչական որժ ստացած, բայց բոլորը բնական, որքան լատուկ է բնութեան և մարդուն, և սիրուն, Ֆիրդուսու նկարագրած ամենակոպիտ հսկաների և զեւրի կրծքերում անդամ խաղում են մարդկաւին սրահին լատուկ զգացմունքները: Թող կարդաց ընթերցողը վերսկիշեալ երկու թարգմանութիւնները և նա ալդ թող թող թարգմանութիւններով անգամ կարող է զազափար կազմել թէ որքան մեծ ու հրաշալի է Ֆիրդուսին: «Արեւելեան բանաստեղծներից ոչ մէկը չի կարող համեմատւել Ֆիրդուսու հետ զգացմունքի ուժով և խորութեամբ,—առում է եւրոպացի արեւելագէտներից մէկը,—նրա պատմւածքի փառահեղ զարգացման մէջ տիրապետում է ախտանական ողբորութիւն, նրա հանգիստառը տոնը (եղանակը) կարողանում է լանկարծակի ամենաքնքոց ակլորտների փոխւել. նա զարմանալի կերպով գիտէ կապիլ պատմըւածքի մէջ տիրապետող ընդհա-

նուր խստութիւնն ու վեհութիւնը հովերգական չքնաղութեան և եղերերգական փափկութեան հետ...»

Ֆիրդուսին իրան շատ լաւ էր ճանաչում և ըստ արդիւնքի գնահատել է նա իր Շահ-Նամէն:

«Մինչեռ ողջ չէն հիմնարկութիւնքն անձրեց և արեգակ Հետզնետէ մաշեցնում դարձնում են աւերակ,

Ես հիմնեցի տաղաչափով մի հէնց բարձր աշտարակ,

Որին ոչ հողմ, ոչ անձրեւ է հարւածելու ընդունակութիւն՝¹⁾:

Շահ-Նամէն երբէք չի հնանակ. նրան կը կարդան հաւասար հետաքրքրութեամբ ինչպէս վառվուն պատանին, նողնպէս և ալլիքներով զարդարւած ծերուկը:

«Վանցեն ի՞մ ալդ դրբի (Շահ-Նամէի) վրայ կեանքի շնտշնտ տարիները,

Եւ կը կարդան ալք՝ ամենասէն) խելք ունեցող մարդիկներ....»²⁾

Շահ Նամէն մնաց համար առանձին նշանակութիւն ունի, Հավերն ու պարսիկներն իրեն միևնույն ծագում ունեցող իրեն դարմերի ընթացքում միևնուն քազաքական կեանքով արրած, իրեն մի ժամանակ միևնուն լուսի և խուարի կրօնը դաւանած ազգութիւններ, չի կարելի, որ մի ընդհանուր բան չունենակին իրարմէջ: Համեմատեցէք Շահ-Նամէի Զոհակին Խորենացու նկարագրած Բիւրասով Աժդահակի հետ, համեմատե-

¹⁾ Ֆիրդուսու պարսաւը ա. գ. երես 19:

²⁾ Ibid.

ցէք նոյն Զոհակի երազը—Ձերիդունին տեսնելը Խորենացու Մար Աժդահակի՝ Տիգրանին երազում տեսնելու հետ, Զոհակի Դիմաւէնդում շղթաւելը Արտաւազդի Մասիսում շղթաւելու հետ, Վերցրէք Դ. գիրքը և նրա բովանդակութիւնը համեմատեցէք հաջ ժողովրդի մէջ պատաճաւանդիւմիւների հետ, հաղացրած Ռոստոմը, իր Զալ հօր հետ մարտընչում է հսկաչ Սալմանի հետ և նրանց ոտքերի տակ շարժում է գետինն, որից առաջանում է երկրաշարժը (Համով-Հոտով հ. Արուանձտեանի), Ասունցի Դաւթի որդի Մհերին երկիրն ալ ևս չի կարողանում տանել ինչպէս և Զալի որդի Ռոստոմին (Գրոց-Բրոց), «Առիւծածն Մհերի» որդի Դաւթի ճիշտ այն կերպով է ընտրում իր Քուռկէ-Զալէին, ինչպէս և Ռոստոմն ու Սոհրաբը իրանց Բաշխուու Սամանդ Նժուզներին (Սամանդ Շուեր Դարեգին սարկաւազի), Աբարանի բարբառով) և ալն և ալն, Աւղալիսի համեմատութեան արժանի կտորներ մենք շատ կը զտնենք ամբողջ Շահ-Նամիթի մէջ, Աւրենն Շահ-Նամիթն, բացի իրեն մի բանաստեղծական արտադրութիւն, մեզ համար նշանակութիւն ունի և մասամբ իրեն մեր պատութիւնը (Աստանիանների բարբառութիւնը հակերի հետ), կամ, աւելի ուղիղն ասած, մեր պատմական աւանդութիւնները լուսարանող մի գրւածք, Ալս պատճառով պ. Դիւլզագեանից մենք պահանջում ենք առաջին՝ Շահ-Նամիթից այն կտորները, որոնք անսամբման կերպով բանաստեղծական արժէք ունին — իբրև ընթերցանուած

թեան նիւթ, և երկրորդ՝ այն կտորները, որոնք շատ թէ քիչ կապ ունին հայկական կեանքի հետ—իրրե ուսումնասիրութեան նիւթ,

Բայց միթէ ամբողջ Շահ-Նամիթն չի կարելի համարել իրեն գեղեցիկ նիւթ ընթերցանութեան — Ոչ, — և ահա թէ ինչու,

Մի այնպիսի մեծ գրւածք, ինչպիսին է Շահ-Նամիթն, որը չաւակնութիւն ունի իր մէջ մի ազգի երկհաղարամնալ պատմութիւնը ամփոփելու, բանաստեղծականի կողմից անկասկած կարող է ունենալ իր պակասութիւնները, բացի սրանից՝ բանաստեղծի հասակն էլ նշանակութիւն ունի իր գրւածների վերաբերեալ Ֆիրդուսին գրել է իր Շահ-Նամիթն ՅՅ տարւադ ընթացքում, ուրիմն նրա գրելում անց է կայրել իր երիտասարդութիւնը, առնական հասակն ու ծերութիւնը, կարող էր արդիօք Ֆիրդուսին միհնոցն ոգմը, համաշափութիւնը պահպանել այնպիսի մի նակարական գրւածքում սկզբից մինչև վերջը: — Մենք տեսնում ենք, որ Ֆիրդուսու սկզբնական գրւածների մէջ ժողովրդական ազատաթութիւնը տիրապետող գերէ խաղում, սրա համար և տիտերը մի քիչ ալլանդակ լատկութիւններ ունեն, վէպերը զղկւած, կոկւած չեն, նրանու զնն կազմում մի նուրբ գեղարվեստական ամբողջութիւնն Վերցիւնեալ բոլոր լատկութիւնները կարելի է տեսնել պ. Դիւլզագեանի «Զոհակ» ում, որը պատկանում է Ֆիրդուսու սկզբնական գրւածների թւին: Առնական հասակում Ֆիրդուսու գրւածների մէջ ժողովրդական

ֆատազիալի սուր թռիչքները սան-
ձահարւում են հասուն բանա-
ստեղծի ձեռքով. ալստեղ երե-
ւակացութեան հետ ձեռք ձեռքի
տւած առաջ է ընթանսամ խելքն ու
փորձառութիւնը, աւելորդ ու ան-
բնական բան չէք տեսնիլ վէպերում.
Նրանց մէջ ամեն ինչ չափած ու
կշռած է. նրանք կատարեալ հն և
հիանալի նիւթ ընթերցանութեան:
Այս տեսակ վէպերի թւին են պատ-
կանում «Ծուատէմն» ու Զոհաբը» և
«Ախավուշը», որը շուտով լուս աշ-
խարհ է ընծափելու պ. Գիւլզադեանը:
Շահ-Նամէի համեմատաբար թով
մասն է կազմում նրա վերջին կէսը,
որ գրել է Ֆիրզուսին ուշ հասակում:
Որովհեան այս մասում արձանագրը-
ւում են բանաստեղծին համեմատա-
բար մօափկ և ծանօթ ժամանակները,
ժողովրդական ֆանատիան ստիպ-
ւած տեղի է տալիս պատմական ի-
րողութիւններին, այս մասը ոչ թէ
իստուկ բանաստեղծութիւն է, այլ
չանգաւոր ստանաւորով գրւած տա-
րեգրութիւն:

Մեր արած այս վոքրիկ համե-
մատութիւնից արդէն կարելի է եղ-
րակացնել, որ ամբողջ Շահնամէն չի
կարելի ընթերցանութեան նիւթ հա-
մարել, և որ Շահնամէն թէպէտ աշ-
խարհահաչակ մի գրւածք է, բայց
նրա մէջ էլ պէտք է ընտրութիւն
անել. Օրինակ պըն. Գիւլզադեանի
թարգմանած «Զոհակը» ամբողջ ջո-
վին առած իբրև ընթերցանու-
թեան գիրք՝ թարգմանութեան ար-
ժանի մենք չենք համարում, թէպէտ
մէջը կաէ մի փոքրիկ էպիզոդ, որ
բոլորովին արժանի է մեր ուշադրու-

թեան. այդ՝ ժողովրդի ապստամբա-
կան շարժումն է զարբին Գավահի
առաջնորդութեամբ ընդդէմ բռնա-
կալ Զոհակի, և Գավեան զրօշակի զե-
ղեցիկ նկարագրութիւնը. Այդ Գա-
վեան դրօշակի առաջնորդութեամբ,
որ ներկայացնում է գարբին Գավա-
հի կաչէ գողնոցը, Ֆերիդունը սիրտ
է առնում է կոխւ մղել Զոհակի դէմ.

«(Ֆերիդունը) մղեց դէպ առաջ
Զօրքը, որոնց պարագլուխ էր
Գավահը քաջ (գարբինը),
Սիրտը վիշապ Զոհակի դէմ ոխ
ու քէնովլ լի լցած,
Օրհնած Գավեան զրօշակը բար-
ձրացրած, բաղ արած» (Կընս
37):

Ֆերիդունն առնում է Զոհակի
արքալանիստ քաջաքը. Զոհակն ար-
շատում է նրա վրալ և շրջապատում
քաջաքը. Զոհակի կողմն է զօրքը,
իսկ Ֆերիդունի կողմը ժողովուրդը:

«Բաղաքացւոց կուել կարողն էլ
դուներում ու կորում,

Պատերիցը ազիւններ և կտուր-
ներից էլ քարեր,

Փողոցներում սրեր, թրեր և
խատանգեալ սուր նեսեր

Տեղացին հէնց որպէս անձրե
թուխ սեագոն ամպերից.

Ել ոչ ոքի չէր մնացել պատըս-
պարի տեղ վախից:

Զիանց պատը ծածկեց տափը,
քաջքի ձանից թնդաց լիառ,

Փոշու թուխ ամպ ծածկեց, ծա-
կեց տէպի զարկը քար ու

ժայռ» (Կընս 45),

«Ծոսատմ» և Սոհբարին մէջ նկա-
րագրւած է մի վերին աստիճանի
տրագիւկական էպիզոդ, որ պա-

տահել է Շահնամէի ամենամեծ հերոս «Փղամարմին» ու առիւծասիրտ» Ռոստամին, Ռոստամը մենամարտութեան մէջ սպանում է իր 14-ամեակ որդի հսկաչ Զոհրաբին առանց նրան ճանաչելու Այս վէպի հետ, որն իր քարձր արժանաւորութիւնների համար համայն աշխարհի սեպհականութիւն է դարձել, մանրամատն ծածո թացնել աւելորդ ենք համարում, Խորհուրդ ենք տալիս ընթերցողներին կարգալ այն պ. Գիւլզագեանի թարգմանութեամբ, Քանի որ աւելի լաւ թարգմանութիւն չունինք և առանձին ուշադրութիւն դարձնել հետեւալ գլուխների վրա, թ. գլուխ, որտեղ նկարագրւած է մի կողմից անվտրծ պատանի Զոհրաբի սերն ու նրա սիրախին տանջանքները, միւս կողմից կիանքի չկուսան անցած Հռոմանի արամաբանութիւնը սիրու վերաբերեալ և առողջ դատողութեան լաղթանակը զգացմունքներու վրայ չանուն ձեռնարկած գործի. ի. գլուխ, որտեղ Ռոստամից մահացու վիրաւորւած Զոհրաբը սպառնում է նրան իր հօր (Ռոստամի) անունով, իբ. և իգ. գլուխները, որտեղ նկարագրւած են «Փղամարմին» Ռոստամի լուսահատութիւնն ու լացը և Զոհրաբի մայր Թէհմինէի գշտամահ լինելը...

Պարսկիերէն լեզուն հայերից շատերին է չափոնի, բայց չնաևելով դրան՝ մենք Ֆիրդուսուն թարգմանած, եթէ չենք սխալում, հայերէն միայն մի բան ունենք—այս հանգուցեալ Սէկեադի «Բողոքն է Մահմուտ Շահի դէմ»: Չենք հաշւում ախտել պ. Փիլ. Վարդանեանեցի Շմիդից թարգմանած «Ռուսէնու ու Զոհ-

րաբը, որը ոչ թէ Ֆիրդուսու վէպի իսկական թարգմանութիւնն է, ալ նրա զարմարացումը պատանիների ընթերցանութեան համար (այդ մասին տես «Մուրճ» 1890 № 2): Այս պատճառով պ. Գիւլզագեանի թարգմանութիւնները վելին աստիճանի ցանկալի և նոր երեսով են կազմում հաջոց թարգմանական գրականութեան համար:

Պր. Գիւլզագեանը մեր գրականութեան չափոնի գործիչների թվին չէ պատկանում, բայց անուամենալ նիւ նա բոլորովին նոր մարդ չէ: Մեզ չափոնի են նրա «Ուսոր մոլոր Քուռն էր գալիս Կովկաս սարերէն (Մաթինիկ և Արտաշէս մանուկ) չափոնի ժողովրդականացած բալլագան և հայանուն ծաղիկների հետաքրքիր ոտանաւոր նկարագրութիւնը, որը բանաստեղծականի կողմից չափոնի արժանիքներ է ներկապացնում և տպւած է «Մեղուի» մէջ նրա հրատարակութեան վերջին տարիներում: Իրբե թարգմանիչ նա առաջին անգամն է հանդէս դուրս գալիս:

Պ. Գիւլզագեանը, ինչպէս երեւում է, իրան նպատակ է դրել ծանօթացնել մեզ Շահնամէի հետ, որը զանազան մասերի բաժանած՝ առանձին գրքերով լրա է ընծալում: Առ աչժիմ հրատարակել են Ա. և Գ. գրքերը: Վերջին գիրքը պիտի կազմնն Ֆիրդուսու կենսագրութիւնը և ծանօթութիւնները: Հրատարակած երկու գրքերում ահադին տեղ են բռնում նախերգնները, չառաջարաններն ու վերջաբանները», որոնցից մեծ մասը իրար կրկնութիւններ են և ընթերցողների համար մեծ մասամբ մութ և դժւարահաս-

կանալի, մանաւանդ որ սրանց հետ
ծանրանում է պ. թարգմանչի անսո-
վոր և պարսկերէն լեզվի ազգեցու-
թեան տակ ընկած հայերէնը:

Պր. Գիւլզադեանն իր թարգմա-
նութիւնն արել է այն պարսկերէն
լեզվից, ինչ լեզվով գրել է Գիւրու-
սին իր Շահ-Նամէն, խոկ աժմեան
պարսկերէն Շահ-Նամէն լաւանի տար-
բերութիւններ է ներկայացնում
սկզբնական Շահ-Նամէից: Այս բանը
որոշելու համար պ. Գիւլզադեանն
իր թարգմանութիւնների ճակատին
դրել է «Թարգմանութիւն բնադիր
պարսկերէնից», Խոստովանում ենք,
որ այս դարձւածքը բացի իր օ-
տարութիւնից՝ ուղիղ չէ
արտապատում պարոն Գիւլզադեանի
միտքը.

Մենք պ. Գիւլզադեանի թարգ-
մանական լեզուն բաւարար չենք
համարում. նա շատ տեղ ծանր է,
մութը և ոչ հայերէն: Որինակ.

«Արտեանքիցն արցունք թափեց
մայրը տխուր՝ թէ ուրախ,
կանչեց արզար Աստւան, սիրու
լի արիւն և ախ ու վախ».

Ու անդադար ասում էր. «Ով աշ
խարհապահ տէր Աստւած,
Քեզ եմ լանձնում անձնանւէր
ուխտս զգաստ պահպանած».

Դու գիտացիր և առուր որդուս
կեանքիցն երկիւղ քա-
ջերին,

Լուսաւորիր աշխարհ նը-
նը անց, որ տգէտ են իւր
մասին»:

(Զոհակո, երես 35):

«Մեր խստութիւնն է մի տարր
կամ բնութեան խառ-

նւած,

Պէտք է աշնակէս բումնել, ինչ
պէս մեզ սերմանել է Աստւած:
(Խոստամ. եր. 92):

Շատ տեղ լանգեր լարմարեցնե-
լու համար լեզվի դէմ սխալներ է
գործում: օրինակ՝

«Պէտք է վախ ու մտածմունքը
սրտից քերել, դուրս գցել
Դու աղ անթիւ զօրքից կուող
մի գուռզաւոր չես գտնել».

(Խոստամ ու Սոհրաբ եր. 95):

«Երբ Զոհակի նահանգն էր մնում
դատարկ, անիշխան»,

Մի ճոխ հարուստ մարդ կար որ-
պէս սրա ծառալ պաշտօնեան:

(Զոհակ. մ. զլիսի սկիզբը):

Մեղանջում է լանզերի դէմ:

«Դա մեզանով կը համոզւի, որ
ինքն անպէս է զօրեղ
Որ ինչ որ զա ունի, ոչ ոք ձեռը
բոնել չէ կարող»:

(Խոստամ. եր. 73):

Մեղանջում է նաև վանկերի
քանակութեան դէմ: Մինչդեռ երկու
գրքերն էլ թարգմանել է 15 վանկա-
նի ոտանաւորով, այսուտամ և Սոհրա-
բի «մ. զլիսի մէջ ամբողջ 6 տող շա-
րունակ 16 վանկով է դուրս եկել...»

Քայց տաղաչափական պակասութիւն-
ների վրայ մենք առանձին ուշազրու-
թիւն չենք զարձնում: Այսպիսի մի
մեծ թարգմանութիւն մէջ հասկանա-
լի է, որ ակապիտի սխալներ կը մտնէ-
ին: Մենք զլիսաւրապէս ցանկանում
ենք, որ Ֆիրդուսու միտքը արտա-
լաւուի ճիշդ, իստակի, անդրա-
բառախառն հայերէնով և մանա-
ւանդ թեթև լեզվով, և եթէ մեր մե-
րուլիշեալ պահանջներին մեասում են

չափարերական կամունները, աւելի ները թարգմանուէին արձակ և ոչ
լաւ է, որ «Ռուսաստ ու Առաքը» և ուսանաւորով։
ԱՄիսիուշիո նման հրաշալի գրւած։

Գ. Ա.Ս.

ԼՈՒՆԿԵՒԻՉ, Վ. — «Հանրամատչելի բնախօսութիւն»։ Հրատարակ։
Թիֆլ. Հ. Հրատ. ընկերութեան № 55, Թիֆլիս, 1893 թ.

Դիտական զրքերը ծանօթաց-
նում են իրանց աւանդած առար-
կան ընթերցողների մի սահմանա-
փակ շրջանի—զլիաւորապէս՝ մաս-
նագէտներին, իսկ հանրամատչելի
գիտական զրքերը նշանակւած են
ընթերցողների մեծ շրջանի, մինչեւ
անգամ ընդհանրութեան համար։
Ահա էական կէտերը զուտ գիտակա-
կան և հանրամատչելի գիտական
զրքերի, և այս էական կէտերից
արդէն րդիսում են մնացածները։
Հանրամատչելի զրքերի աւանդելի
առարկան պիտի լինի օգտակար և
մատչելի ընդհանրութեան։ Օգտա-
կար առարկաների շարքին պէտք է
դասել և նրանց, որոնք թէպէտ
գործնական կեանքին չեն վերաբե-
րում, բայց հետաքրքիր են իրանց
բովանդակութեամբ։ Պր. Լունկեւիչը
«Բնախօսութիւնը» իր բովանդակու-
թեամբ պատկանում է օգտակար և
մատչելի զրքերի շարքին։ Հանրա-
մատչելի զրքերից մի այլ պահանջ
էլ կայ, որը վերաբերում է նրանց
պատմւածքին (ԱՅԼՈՅԵՆԻ)։ այդ գըր-
քերի լեզուն պիտի լինի թեթեւ և
մատչելի ընդհանրութեան։ Ոմանք
լեզուի թեթեսութեան հետ մտցնում
են և կենդանութիւն պատմւածքի

մէջ, այսինքն աւանդելի առարկաի
մասին գրում են կենդանի և գրաւիչ
լեզով, բայց կենդանի լեզով գրել գի-
տութեան ամեն մարդ կարող չէ։ զրա-
համար առանձին չնորհք է հարկա-
ւոր և այդ չնորհքը ի բնէ տրւած է
պ. Լունկեւիչին։ Նրա «Բնախօսու-
թիւնը» կարդացւում է աճնպիսի
լափշտակութեամբ, ինչպէս մի ոռ-
ման։ Նա փշեղնում է մեզ ոռաց
գիտական զրականութեան մէջ
լաւտնի պրոֆեսոր Տեմիրեազեւի
«Փիզիոլոգիա բացեւութեան» գի-
տութիւնի մասին աւելի կենդանի,
քան պ. Լունկեւիչն է գրում, մենք
չենք կարող պատկերացնել։ Սրանով
և վերջացնում ենք «Բնախօսու-
թեան» պատմւածքի (ԱՅԼՈՅԵՆԻ)
մասին խօսելը և անցնում ենք մի
այլ կէտի, որը մեզ ալժմ հետաքրք-
րում է։

Պր. Լունկեւիչը, ինչպէս երեսում
է, գրելիս լինքն էլ է ոգեսորեւլ։ Ո-
գեսորեւած գրելն առաջազնում է և
շտապով գրելը, իսկ շտապով գրողը
այնքան չէ մտածում իր արդէն
զրածի մասին, որքան մտածում է
թէ ինչը ինչպէս պիտի զրի։ սրա
համար նա լիովին շրջանակեաց չէ
լինում, ուստի և շատ հեշտութեամբ

նրա աչքից կարող են սպրդել մանր պակասութիւնները և մանրամանութիւնների մէջ նրա արած սիսալները: Մենք ուրիշ բանով չենք ցանկանում բացատրել այն տիտուր երեսով, որ գրքի մէջ մտել են աշնապիսի սխալներ, որոնց սխալ լինելը ինքը պ. Լուսկեւիչն անկատկած շատ լաւ է հասկանում: Ցուց տալու համար, որ պ. Լուսկեւիչի գրքի մէջ կան սխալներ և նկատողութեան արժանի կէտեր, կը գերցնենք մի գլուխու Քայլ առ քայլ հետեւ պ. Լուսկեւիչին նրա «Քնախօսութեան» մէջ մենք ձանձրալի ենք համարում «Մուրճ»-ի ընթերցողների համար և աւելորդ պ. Լուսկեւիչի վերաբերեալ, որովհետև մենք ոչ թէ ֆիզիոլոգիա ենք ուզում սովորեցնել նրան, այլ միան նրա ուշագրութիւնը գարձ նել իր գրքի վրայ, որը, չնայելով իր ընդհանուր գեղեցիկ կազմութեան, կարող է ընկնել իր մանր պակասութիւնների պատճառով: Վերցնենք Ա. գլուխու, որտեղ խօսում է օդի մասին:

«Հետաքրքիր է իմանալ թէ անտեսանելի օդը արգեծք ծանրութիւն ունի» հարցնում է պարոն Լուսկեւիչը և պատասխանում է: «Ի հարկէ, ունի (,) և այս կարելի է շատ հասարակ կերպով ապացուցանել: Վերցնենք եզան բուշը (աւսինքն՝ փամփուշը) և կշռենք: Ենթադրենք, որ նրա կշռը 6 մսխալ է: Նթէ բուշը փչենք (փուքսով և ոչ բերանով), բերանը կապենք բարակ թելով և նորից կշռենք՝ կը տեսնենք, որ նա այժմ մի փոքր աւելի կը կշռի» երբ 90:

Թող կշռի պ. Լուսկեւիչը և կը տեսնի, որ աւելի չի կշռի և պատճառն աերոստատիկակի ան օրէնքն է, որ մարմիններն օդի մէջ կորցնում են իրանց կշռից անքան, որքան կշռում է նրանց (այդ մարմինների) հաւասար ծաւալ սննեցող օդը: Փամփուշը՝ քանի որ սեղմւած էր՝ քիչ էր կշռում, բայց հենց որ փքեց օդով, նա կորցրեց իր կշռից ուղիղ անքան, որքան որ կշռում է այդ աւելացած օդը: Եթէ պ. Լուսկեւիչն իր վերովիշեալ վամփուշի փորձն անէր անօդ տարածութեան մէջ, այն ժամանակ միայն ուղիղ կը լինէր նրա ասածը առ օդը մտնելով բուշտի մէջ՝ աւելացրեց նրա կշռը»: օդալին տարածութեան մէջ փամփուշի տեղ սովորաբար վերցնում են ապակէ գնդակ: Պր. Լուսկեւիչը վերովիշեալ զէպքում ուղեցել է ժողովրդին մատչելի մի փորձ անել և դրա համար վերցրել է փամփուշը՝ երեխ շտապելուց մոռանալով, որ դատարկ և օդով լի փամփուշը զանազան ծաւալ է ունենում:

Նոյն Ա. գլուխի մէջ պ. Լուսկեւիչը ծանօթացնում է օդի բաղադրիչ մասերից մէկի՝ թթւածինի լատկութիւնների հետ: «Եթէ մենք—ասում է նա—վառած լուցկին մի կերպ (?) բոնենք ապակէ զանգակաձն անօթի տակ, որից օդը բուրովին հանած է, լուցկին իսկովն և եթ կը հանդչի: Քայլ գուցէ լուցկիի հանդչելու պատճառը այն չէ, որ ամանի մէջ թթւածին չկայ, այլ և այն, որ անտեղ չկայ ազօտ: Եթէ իսկովն և եթ այդ անօթը լցնենք միայն ազօտով և դարձեալ վառած լուցկին

բռնենք նրա տակ, լուցկին այս անգամ էլ իսկոյն կը հանգչի: Ուրեմն ազօտը ալսողեղ ոչինչ նշանակութիւն չունի և վառաւելու միակ պատճառը թթւածինն է (այդ գեռ չի կարելի հետեւնել): Թթւածինը ոչ մի աչն նպաստում է վառելուն, աչ և անպաչման կերպով առաջ է բերում վառումն (թթւածինի այս լատկութիւնը ոչ մի փորձով գրքի մէջ ապացուցւած չէ): Հէնց նոյնալիսի հանգամանքներում (հրապար հանգամանքներում) ապակէ անօթի մէջ տեղաւորեցէք կրակի վրայ թեթև կերպով կարմրացրած երկաթէ ձողի Երկաթէ ձողը իսկոցն կրակի մանր կաչծիր կը դառնաւ (եթէ միայն փորձը կատարում է թթւածինի մէջ) և նրանից, ըստ երեսթին ոչինչ չի մնաւ՝ նա կալրուխ (երես 92—93):

Այս ամբողջ պարբերութիւնը, որ մէջ ենք բերել պ. Լունկեւիչի գըրքից, կատարեալ խաօս է, լիքը՝ լաւ չբացատրած փորձերով և չապացուցւած օրէնքներով: Նթէ պ. Լունկեւիչը ապակէ զանդակի մէջ ազօտ մտցնելուց չետու մտցնէր թթւածին և վառած լուցկի փորձը կրկնէր, աչն ժամանակ մի աչն կարելի կը լինէր եղբակացնել, որ թթւածինը նպաստում է վառելուն: որա հետ պէտք էր կատել և կարմրացրած երկաթէ ձողի փորձը: Խսկ որ թթւածինը «անպայման կերպով առաջ է բերում վառում»—սա ոչ մի փորձով վերեց ալացուցւած չէ: Էլ չենք խօսում ալսող աչն բանի մասին, որ ապակէ անօդ զանդակի տակ ամբողջ լուցկի բռնել բա-

ւականին անկարելի է թւում...

Նոյն Ա գլխում պ. Լունկեւիչը խօսում է բակտերիաների մասին: Նա վերցնում է օդի մէջ լողացող պոտրոֆիկ, հասարակ աչքին անտեսանելի կենդանիների և բոլոնի ձւաներն ու սերմերը (երես 100) և աճեցնում է նրանց բուլիօնում և մի քանի օրից չետու Բնչ է տեսնում:—«Սա մանր մունք կենդանիների մի ամբողջ թագաւորութիւն էր, որոնք ծնունդ էին առել աչն կուչ եկած ձվիկներից, որ մենք տեսանք օդի փոշու մէջ: Հէնց ալսողեղ, խոշորացուցի տակ պատկերանում էր մի բուսական աշխարհ՝ նման հբաշալի պարտիզի, ուր (որտեղ) աննդում էին այդ տարօրինակ կենդանիները: Սակայն Բնչ տարօրինակ բուսեր են զրանք», և ա. Լունկեւիչը գեղեցիկ կերպով բացատրում է այդ նա խօսում այդ բուսերի կեանքի, նրանց բազմանալու մասին և աչն բաց տարաբաղդաբար ոչինչ չէ խօսում աչն կենդանիների մասին, որոնք վիստում էին բուլիօնում, միայն մի տեղ (եր. 103) վիշտմ է, որ վերուիշեալ բուսերը լաճակ կերակրի տեղ են ծառագում «ալրտեղ թափառող փորքրիկ կենդանիներին» և վերջացնում է ասելով որ այդ «բուսերը կոչւում են բակտերիաներ»: «Սակայն Բնչ տարօրինակ կենդանիներ էին զրանք, արդիօք դրանք ես բակտերիաներ չեն»—կը հարցնի աչն ընթերցողը, որի համար իսկապէս նշանակած է պ. Լունկեւիչի «Բնախօսութիւնը», բաց նրա հիմնական հարցին պ. Լունկեւիչի գիրքը չպատասխանիլ:

Խօսում՝ է պ. Հունկեւիչը բակտերիաների առաջացրած մի քանի վարակիչ հիւանդութիւնների մասին (Եր. 107—108): Բակտերիաները սարսափելի են ոչ միայն իրանց էութեամբ, այլ և նրանով, որ նրանք բազմանում են զարմանալի արագութեամբ: Նրանց աչս բազմացման արագութիւնն է գլխաւոր պատճառը, որ խօնկրան և այլ համաձարակ հիւանդութիւններն ալսպիսի զարհուրելի ծաւալ են բռնում ամենակարծ միջոցում: Պ. Հունկեւիչը ալսուել առանձին պիտի շեշտէր բակտերիաների բազմանալու արագութեան վրակ և մինչև անգամ ձ քրօպօս առաջ քերէր թւեր, թէ օրինակ մէկ բակտերիան մի քանի ժամից լետոյ քանի միլիոնաւոր բակտերիաների կարող է փոխւել—մէկ խօսքով շօշափելի դարձնէր բակտերիաների բազմացման արագութիւնը:

105—106 Երեսների վրա պ. Հունկեւիչը խօսում է թէ փոխելու դործում ինչ կարեւոր դեր են խաղում բակտերիաները: «Ընկնելով իրանց աճելու և բազմանալու համար նպաստաւոր դէպքերում, որպէս են աղքը, փտած տերների կոտը, սատակած կենդանիների նեխուած դիակները և ալին, աչդ (բակտերիաների) սերմերը դառնում են մեծ քանակութեամբ ձողեր (բակտերիաներ), որոնց թիւը ամեն բոպէ մեծանում է: Կերակրելով և բազմանալով սատակած կենդանիների և բոլսերի փտած մնացորդներով, ալդ ձողերը արագաբար առաջ են սահնում իրանց աւերիչ (փոխութեան) դործը» (105)...

105 Երեսի աչս պարբերութիւնից երեսում է, որ բակտերիաներն ընկնելով արդէն փտած կամ նեխուած նիւթերի վրակ և կերակրելով նրանց փտած մնացորդներով՝ շարուն ակում են վը առութեան գործը: Որ այս բանը սիսալէ, ալսինքն՝ որ բակտերիաները ոչ մի աչն շարուն ակում են փտութեան գործը, այդ խօսուովանում է պ. Հունկեւիչն արդէն հետեւալ (106) Երեսում: Ազդպիսով 105 և 106 Երեսները հակասում են իրար: Ահա աչն՝ առաջինին հակասող, բայց ուղիղ պարբերութիւնը: «Այս բոլորը մենք ասում ենք միմիան ցուց տալու համար թէ փտումն կարող է տեղի ունենալ աչն ժամանակ մի աչն, երբ փոսդ (աչսինքն՝ փառելու լատկութիւն ունեցող) նիւթերի մէջ առաջանում են առանձին տեսակի բակտերիաներ, որոնք բազմանալով ալդպիսի նիւթերում և կերակրելով նրանցով՝ առաջ են բերում փտութեան»:

Մեր վերոնիշեալ բոլոր նկատողութիւնները վերաբերում էին միայն III գլխին և պ. Հունկեւիչին, բայց «Բնախօսութեան» մէջ պատահում են այնպիսի սխալ կէտեր, որոնցից գտւար է եղբակացնել արդեօք մեղաւորն ալսուել հեղինակն է թէ թարգմանիչը (ինչպէս լաւոնի է՝ պ. Հունկեւիչի ձեռագրից թարգմանել է պ. Կոստ. Գիւլնազարեան): Օրինակներ վերցնենք X գլխից, որտեղ խօսում է ականջի և աչքի մասին: «Եթէ վերցնենք երկու լար: ու

րոնց երկաջնութիւնն ու հաստութիւնը հաւասար լինեն միմեանց և հաւասար ուժով ձգենք զրանցից մէկը հասարակ փախտի, իսկ միւաը ջութակի վրայ, առաջինը խուլ, կամաց (թուլ) ձայն կը հանէ, իսկ երկրորդ լարը բարձր (?) ձայն. թէ կուզ միատեսակ ուժով զարկենք նրանց» (երես 313): Երկրորդ լարը կը հանի ոչ թէ բարձր, այլ ուժեղ (գրուկի, սալինի) ձայն: Ալստեղ, չզիտեմ, թարգմանիչը թէ հեղինակը ձայնի տոնը խառնել է ձայնի ուժի հետ:

«Այս հասարակ փորձը մեզ ցուց է տալիս, որ արմի լուսը մի հասարակ և միաձև բան չէ, այլ ընդհակառակն, նրա կազմութեան մէջ կան և ծիածանի եօթն զուների ճառագալթներն»... (երես 325): Հէնց այդ «ծիածանի եօթն զուների ճառագալթներն» են կազմում արենի «շացնող սպիտակ լուսը»: Ալստեղ և-ը շատ անտեղի կերպով մէջ է ընկել չգիտեմ ում չնորհքով (գուցէ տպագրական սիսալ է, բայց վրիպակներում չէ վիշտած) և աղաւաղել է ամբողջ նախադասութեան միտքը.

Ի դէպ, այս X զլիսի մի կէտի մեծ նշանակութիւն ունեցող մի պակասութեան վրա պիտի խօսենք: Խօսքը տեսութեան պրոցեսի մասին է:

«Լուսի ճառագալթները բիրի միջից անցնելով՝ ընկնում են ստանակերպի (աչքի բիւրեղիկի) վրայ, ալստեղ... նրանք բեկւում են, չետոք սառնակերպից (բիւրեղիկից) գուրս գալով աչքի մէջ խաչաձև դիւք են ստանում, որից լևառու նորից բա-

ժանուում են մէկմէկուց և ընկնում ցանցաթաղանթի վրայ, որտեղ և ստացուում է առարկակի շուռ տւած (զլիսի վալը, նոյնպէս և փոքրադիր) պատկերը: Լուսի ճառագալթները ցանցաթաղանթի վրայ ընկնելով որոշ կերպով գրգռում են նրան, այդ գրգռումը կենդրոնացնում է տեսութեան նեարդը և հասցնում զլիսի ուղեղին, որպէս բոլորովին որոշ լուսեղին գրգիռ» (երես 335): Այ առարկաները մենք տեսնում ենք զլիսիվայր զիւքով—այդ ուղղէ, բայց ինչու այդ առարկաները մեզ թւում են ոչ թէ զլիսիվայր, այլ իրանց բնական դիրքով—կը հարցնէ այն ընթերցողը, որը Փիզիօլոգ չէ, և որի համար իսկապէս նշանակւած է «Բնախօսութիւնը», բայց նա ոչ մի պատասխան չի տանալ պր. Լունկեիչի գրքից: Այս բանը շատ մեծ զանցառութիւն է հեղինակի կողմից: Մենք կարծում ենք դրա վերաբերեալ բազմաթիւ թէօրիաներից մէկը կարելի կը լինէր մէջ բերել՝ ընթերցողներին մոլորութեան մէջ չժողնելու համար:

Պ. Լունկեիչի մասին ալսքան: Կթէ նա մնացած զլիների վրայ ու շադրութիւն դարձնի՝ նրանց մէջն, էլ թերութիւններ շատ կը գտնի: Մենք հիմա անցնում ենք գրքի տերմինուղիալին, որի պատասխանատուն միան թարգմանիչը կարող է լինել:

ԶԼ-րդ երեսի վրայ դէպք է լինում խօսելու ազօտի մասին: Թարգմանիչը նրան չի ուղում կոչել բորակածին (գուցէ չգիտէ), որն արդէն մեր մէջ քաղաքացիութեան իրաւունք է

ստացել, այլ ծանօթութեամ մէջ ա-
սում է. «...աչն տերմինները, որոնք
հակերէնում խորթ և «թխովի» բնա-
ւորութիւն ունեն, մնաք փոխարինե-
ցինք նոյն եւրոպական տերմիննե-
րով», Նատ լաւ, մնաք ոչինչ դէմ
չունենք, որ «թխովի» տերմինները
փոխարինւեն ընդհանուր գործածա-
կան եւրոպական տերմիններով, բայց
այս դէպքում զգովզ պէտք է լինել—
գուցէ մի քանի տերմիններ «թխո-
վի» չեն, իսկ ընդհակառակն՝ նրանց
նորուանիշ եւրոպական տերմիններն
աւելի «թխովի» են հնչում հակերէ-
նում...

Մի քանի երեսից լետու (Եր. 95)
կարդում ենք այս տողերը. «...մեր
մահից լետու մեր մարմնից... մնում
են միմիւան միններալալին պինդ նիւ-
թեր, ջրակին գոլորշիներ, ամիմիակ և
ածխալին թթւագաղու նիթէ թարգ-
մանիչը «ամմիւակի» տեղ «աւշակ»
հակերէն բառը չէ գործածել—զրա-
դէմ ոչինչ չունենք, բայց «միններա-
լալին նիւթերը» արդէն շատ «թխո-
վի» են հնչում հակերէնում. այդ
զգում է և թարգմանիչը և «Ուսելիք»
զլսում նա արդէն ամնն տեղ «միննե-
րալալին» տեղ «ամմ.քալին նիւթերո» է
գործածում: Իսկ ինչ վերաբերում է
«ածխալին թթւագաղ» բառին, ուս ար-
դէն ոչ թէ «թխովի» է, այլ բոլորովին
անմիտ է իր կազմութեամբ, թարգ-
մանիչը թէպէտ դէմ է «թխովի» բա-
ռերին, բայց ինքը բաւականին մէծ
քանակութեամբ գործ է ածումնրանց:
Ահա մի քանի օրինակներ. «կնտնուց
(ըմակօք)», «գոնդող», «խախաց»,
«խուրմա (ՓԻՆԻՔ)», «ծովալին շուն
(տյուլեն)», «հատւածակողմ» (որից

մա), «ոտանակերպ (քրյուտալ, քրյ-
ւտալիք)», և այլն: Չգիտեմ, զուցէ
այս բառերը ինքը թարգմանիչը չէ
«թխովի», այլ ուրիշները (բառարան-
ները, թեմական դպրոցների բնա-
գէտ—վարժակետները), բայց ով-
կուզէ թխած լինի, միևնույն է,—
նրանք «թխովի» են: Բացի դրանից՝
թարգմանիչը կարծել է թէ ինչ բառ
ուսւերէնում ածականի վերջաւորու-
թիւն տնի, նա հակերէնում անպատ-
ճառ պիտի ածական դառնաք և զրա-
համար բառերի տեմաններին աւելա-
ցրել է «ալին» կամ «եազ» սուփիքո-
ները: Այսպիսով ստացւել են, «ա-
րիւնավին գնդակներ (кровяные ша-
рики, «архивинавиин» կը լինէր՝ քրօ-
վանистые)», «կրծքալին վանդակ (грудная клетка)», «լեզալին վամ-
փոշտ», «նոթատոմաքսեազ զեղձ»,
«աստերիկումատնեազ աղիք» «ենթ-
ատոմաքսեազ զեղձալին հիւթ» և
այլ կուրիօզ բառերը: Ուրեմն
թարգմանչի թէօրիալով մենք պիտի
ասէինք, պունատանալին կամ լու-
նաստանեան թագաւոր (греческий
король), հոտիմալին կամ հոտիմնաք
պար, «նըրուսաղէմալին կամ երու-
սաղէմնաք տաճար»: և վերջապէս,
«Բնախօսութեամ» մէջ շատ տեղ գոր-
ծածող «եզան վամփոշտը»—«եզա-
փիս կամ «եզեակ բուշտ»: Տերմինների
շփոթութեան օրինակ ըերմինք զըր-
քից: «Մարդու չնչառութեան գոր-
ծարանները սկսում են խոչափողով
(նկարի բացատրութեան մէջ՝ խոչա-
փողը կոչւում է կոկորդ):... Խոչափո-
ղից լետու, ներքեւ գտնւած է այս-
պէս անւանւած չնչափողը (Եր. 114
—115):»: «Ենչափողը, եթէ ընթեր-

ցողը լիշում է, սկսում է լան ծալ-
րով, որ կոչում է կոկորդ կամ խըռ-
չափող (Երես 314 և վրիպակներ) և
«Խոչափողը», որկոր, ստամբու...
անւանում է մարտովթեան խո-
զովակ»: «Բերանի խոռոչում հէնց-
խոչափողի վատեը գտնում է մարտ-
ովթեան զործարանների ան մասը,
որ կոչում է կոկորդ (Եր. 202)»:
«Որպէս զի ուստելիքի գունդը խոչա-
փողի մէջ չընկնէ, այլ սրա վետեը
գտնուած կոկորդի մէջ (Եր. 207)...»:

Աքստեղ մէջ բերած չորս նախա-
դասութիւններից երեսում է 1) որ
կոկորդը կամ խոչափողը համ շըն

չառութիւն, համ էլ մարտովթեան
գործարան է, 2) որ կոկորդ և խըռ-
չափողը թէպէտ միենոն է, բայց
կոկորդը գտնուում է խոչափողի
վետեը...

Պատահում են կոպիտ տպագրա-
կան սինալներ, որոնք չեն ուղղւած
դրբի վերջում, օրին. «Հասովկաւոր
մարդն ունի 33 (?) աստան»: Դիսի
և մէջքի ուղեղների նկարն է ու-
զում է ցոլց տալ և առաջարկում է
տեսնել նկար № 11: Բաց ես անում
№ 11 և տեսնում ես... աչքի
նկարը...

Գ. Ա. Ա.

ՕՐԵՆՔ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

(Քահանացական խնդրի առթիւ)

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵՍՆԻ

Սկսած Լուսաւորչի օրերից՝ մինչև մեր ժամանակները, գարերի այս երկար շարքում մեր հոգեւոր գործերը կառավարել են և ըստ մեծի մասին դեռ կառավարուում են միմիայն արադիցիայով—աւանդական սովորութիւնով, եթէ ցիշելու չլինինք սուրբ հարց և հայրապետաների զանազան ժամանակներում և պարագաներում տւած կանոնները, որոնք համարեա երբէք իրական և ընդհանուր գործադրութիւն չեն ունեցել շնորհիւ այն հանգամանքի, որ ժամանակի դարաւոր կնիքը և հնութեան փոշին նրանց մատնել են մոռացութեան... իսկ շատերն ել արդէն անսպէսք, նոյն իսկ վնասակար են ներկայիս պահանջներին...

Պատմական աղէտալի ժամանակները, հայոց հայրապետութեան անհաստատ ու վտանգալից կացութիւնը, հայերի բոնադատած վիճակը, մասամբ նաև հայ հոգեւորականութեան թուլութիւնը ժամանակ և նովաստամատոց պացմաններ չափն նրան ի մի կազմակերպւելու՝ մեր հոգեւոր գործերը կանոնաւորապէս վարելու համար և վերոցիշեալ կանոնները ամփոփելով հրատարակելու իբրև մի օրինադիրք, կողէկս, որով պիտի զեկավարւէին թէ իրանք և թէ իրանց յաջորդները:

Ի հարկէ, այդ ուղղութեամբ եղել են փորձեր. Ա. Գրքի պատմէրները միացրած եկեղեցու ս. հարց կանոնների և ժողովրդի աւանդական սովորութիւնների հետ ի մի ամփոփելով տալ ժողովրդին իբ-

ըև օրինագիրք, որպիսին է Մխիթար Գօշի և այլոց միջնադարեան օրինագրքերը. բայց դրանք ընդհանուր ընդունելութիւն և գործադրութիւն, եթէ չենք սխալում, երբէք չեն գտել. նրանք աւելի ազդեցութիւն և իրական գործադրութիւն են ունեցել Հայաստանից դուրս հայկական գաղթավայրերում՝ Լեհաստանում, Ռուսաստանում, նոյն իսկ Վրաստանում, քան բուն Հայաստանում:

Այսպէս ուրեմն, գարերից ի վեր մեր ներքին հոգեւոր գործերը կառավարելու համար իսկապէս մենք մի օրինագիրք չենք ունեցել այդ բառի իսկական իմաստով:—Այսուղ չենք ցիշում յայտնի «Պոլոժենիան»¹⁾, որովհետեւ դա վերաբերում է միմիայն Ռուսաստանի հայերին և այն էլ որոշ սահմաններով միայն: Մեզանում իշխել է ըստ մեծի մասին միայն կամայականութիւնը, հաճոյքը, քմահաճութիւնը, ինչ ուզում էք անւանեցէք: Իբրև ասիական ժողովրդի իսկական տիպար, մեր գործերի կառավարութիւնը ըստ մեծի մասին եղել է և է անկանոն, հակառակ և ամեն տեսակ պատահականութեան արդիւնք, քանի որ նրա հիմքը խախուս է եղել, քանի որ չկայ խիստ սահմաններով որոշւած օրէնքը: Մենք չունենք յարատեւ, անեղծանելի և սրբացած օրէնք, այլ միայն կամայականութիւն... Աւը չկայ օրէնք, հարկաւ չի կարող լինել և զիսցիպլինա, գործերի յաջորդական հետևողականութիւն, հրահանգների և վճիւների միատեսակութիւն, պարտականութիւնների իրաւունքների փոխադարձ յարաբերութեան սահման: Այսօրւայ գորեղ, քաղաքակիրթ և յառաջադէմ ազգերի կազմը անխախտ է մնում միմիայն կանոնաւոր օրէնքի և լաւ կազմակերպութեան շնորհիւ:

Օրէնքն է, որ մեղաւորին պատժում է, զրպարուածին արդարացնում, ճշմարտութիւնը սպաշտականում, սպարտաճանաչութիւնը խրախուսում, պարտազանցութիւնը դատապարտում և առհասարակ մարդկացին փոխադարձ յարաբերութիւնների արթուն զեկավար հանդիսանում: Զի կարելի երեակացել մի լաւ, կազմակերպւած և

¹⁾ Сводъ законовъ. изданіе 1857 года. т. XI. часть I. книга третія. Оуправлениі духовныхъ дѣлъ христіанъ Армяно-Грегоріансаго исповѣдавія.

կանոնաւոր հաստատութիւն կամ հիմնարկութիւն, որ յարատե-
ւել կարողանար առանց օրէնքի, կանոնի և լաւ կազմակերպու-
թեան:

Սուրբերը միայն անցեալումն են գոյութիւն ունեցել. ներկա-
յումն, երբ մարդկացին հասարակութիւն, ուրեմն և ազատ կամ-
քի վրաց հիմնած փոխադարձ յարաբերութիւն կայ, պիտի լինի և
օրէնք, իրաւունքների, պարտականութիւնների և փոխադարձ յարա-
բերութեան սպարզ ու որոշ սահման: Զիայ այդ սահմանը, — առևն ոք
ազատէ ուրեմն ըստ իւր քմահաճութեան գործելու, և այդ քմա-
հաճութիւնն է, որ խեղդել է շատ գեղեցիկ հիմնարկութիւններ և
խեղդում է մեղանում ամեն բան:

Ոչ միայն այդ. վիրջին դարերում մեր հոգեւորականութիւնը
այնքան ընկել, նրա կազմակերպութիւնը, փոխադարձ կապն ու յա-
րաբերութիւնը այնքան թուլացել է, որ նա երբէք չի ունեցել միա-
բանութիւններ այդ բառի իսկական մտքով, այն ձեռով, օրի-
նակ, որպիսին գոյութիւն ունի մեր կաթոլիկ եղբայրակիցների՝
Վինեսիլի և Վիննայի Միիթարեանների մէջ... Հայ հոգեւորականը
իրան երբէք չի համարել միաբանութեան անբաժանելի անդամ.
միաբանութեան և առհասարակ հայ հոգեւորականութեան շահերը
նա համարել է իբրև մի օտար, խորթ, իրան չվերաբերեալ, իւր
անձնականին հակառակ շահեր, ուստի և նա մտածել և գործել է ըստ
մեծի մասին ոչ թէ յօդուտ, այլ ի մեաս այն եղբայրութեան, այն
դաստկարգին—միաբանութեան, որին խոտոմամբ և երդումով յա-
ւիտենական անդամ է գրւած: Դրանից է ծագում ահա այն տըի-
րալի երեսիթը, որ մեր վարդապետների, եպիսկոպոսների և, ցաւ է
ասել, նոյն իսկ կաթողիկոսների երբեմն մեծամեծ կարողութիւնները,
արժէքաւոր թղթերն ու թամնազին գոյքերը բաժին են գաւնում
զանազան հաջիների, խնամիների... և ազգականների, ոչ միայն
կենդանութեան ժամանակ, այլ և մահւանից յետոյ:

Մենք չունինք առհասարակ օրէնք մեր ներբին գործերին վե-
րաբերեալ, չունինք նաև, չեմ ասում խիստ, զինւորական մի կազ-
մակերպութիւն մեր հոգեւորականութեան մէջ, այլ նոյն իսկ հա-
սարակ, սովորական մի կազմակերպութիւն, որի անդ սմները հաս-
կանալ կարողանացին իրանց եղբայրութեան շահերի ընդհանրու-

թիւնը, այն եկեղեցու շահերի միութիւնը, որին ծառացելու նրանք սղարտաւորւել են կամաւոր ուխտով և երդումով...

Ի՞նչ կարող է լինել այդպիսի մի հիմնարկութեան, մարմնի կամ ամբողջ հոգեորականութեան գործունէութեան հետեւանքը, երբ նա տողորւած չէ մի ընդհանուր գաղափարով, երբ նա միացած չէ շահերի ընդհանրութեամբ. երբ նա չունի մի որոշ և յարդելի կազմակերպութիւն, երբ այդ անկազմ մարմինը, բացի այդ բոլոր պակասութիւններից, չունի նաև իւր գործունէութեան սահմանները որոշող օրէնք, կամոն. երբ նրա բազմաթիւ, ցան ուցիր անդամները տգէտ են, ողորմելի և կաշտապակեր...

Չունենք օրէնք, չունենք նաև կազմակերպութիւն, կաւ չունենք կազմակերպութիւն, չունենք նաև օրէնք. առանց կազմակերպութեան օրէնքը կը մնայ միայն մեռե ոլ տառ, իսկ առանց օրէնքի չի կարող գոյութիւն ունենալ յարատե կազմակերպութիւն։ Այդ երկու գաղափարներից որն էլ վերցնէք, առանց միւսին՝ ապարդիւն, անօգուտ և անպէտք են, իսկ առանց այդ երկուսի գոյութեան՝ չի կարող գոյութիւն ունենալ ոչ մի բարեկեցիկ հիմնարկութիւն, մասնաւանդ երբ նա բարդ պարտականութիւնների և իրաւունքների զեկավար է, որպիսին է մեր հոգեորականութիւնը։

Այս տեսակէտից նայելով, մեր հոգեոր գործերը ամբողջովին գտնւում են խաօսի մէջ. օրէնք չլինելուցն է քահանայական խնդրի, հաս ու չհասի, ընտրական գործի, ուսումնարանական կազմակերպութեան, հոգեւոր կառավարութեանց տնտեսական և առհասարակ միւս մասերի ներկայիս կարկամ. խառնաշփոթ և հակասական դրութիւնը։

Այս կամ այն անհատն, ի հարկէ, շատ բան կարող է շինել շնորհիւ այն հանգամանքի, որ նա պատահաբար լուսամիտ, խոհուն, հեռատես և ժողովրդի ու եկեղեցու շահերին նւիրւած անձնաւորութիւն է. բայց, չմոռանսնք, որ ացդպիսի անհատները բացառութիւն են. նրանք, որպէս և նրանց գործունէութիւնը, ժամանակաւոր են միայն. այդ գործունէութիւնը յարատե, արդիւնաւէտ չի կարող լինել, երբ նա պաշտպանւած ու խրախուսւած չէ օրէնքով։

Տգէտ քահանաների խնդիրն, օրինակ, անգեալ տարի Սինոդի մի գեղեցիկ կարգադրութեամբ արխիւ տրւեց այլ ևս երևան շգա-

լու յոյսով, բայց այսօր մեր ամբողջ մամունի ու հասարակութիւնը կրկին ստիպւած է նոյն հին երգը երգելու, ինչ որ երեսուն տարիներից ի վեր հազար ու մի ձևերով քննւած ու դառապարաւած էր: Այդ մեռած խնդիրը չէր կարող երևան գալ, ևթէ մեր հոգևորականութիւնը մի քիչ միայն հետեւզականութիւն, մի փոքր յարգանք ունենար հէնց դէպի իւր որոշմունքը, մի փոքր յաջորդական և հեւատես լինէր իւր գործողութիւնների մէջ... Սկզբունքով էլ, կարգադրութիւնով էլ որոշւած էր տգէտ քահանոս շնեւանալիրել, պրծաւ գնաց... Սովետութիւնները աւելորդ են. հիմա հարցը շննել են մի գորգեան հանգոյց, թէ ինչ կը նշանակէ կրթւած քահանայ (?!?) :—Կարգացէք մեր հոգեւոր սեմինարիաների ծրագիրը, և կը հասկանաք, որ նրանք կազմւած են կրթւած քահանաներ տալու համար. խնդիրը պարզ է. եթէ նրանց ծրագիրը մի քիչ հին և պակասաւոր է, պէտք է փոփոխել և լրացնել և ով որ այդ ծրագիրը անցած կը լինի, նրան մենք կանւանենք կրթւած քահանայ, համեմատաբար միայն ի հարկէ:

Մեզանից շատերը քահանադաշտական խնդիրին այնպէս են վերաբերում; որ կարծես աշխարհիս երեսին մի չեղած, չտեսնւած և աիեղերական նշանակութիւն ունեցող խնդիր պիտի լուծեն: Նայեցէք ձեր շուրջը, պարոններ, եթէ ընդունակ էք լուս օրինակի հետեւելու, այդպիսի օրինակներ շատ կան. վերցրէք կաթոլիկ, յոյն, ոռուս, վրացի հոգևորականութիւնը, հետեւեցէք միմիայն նրանց, որովհետեւ այդ կողմից մենք բոլորից յետ ենք:

Վրաց սեմինարիան, որ ուսման ծրագրով համապատասխան է մեր ճեմարանին, բացառապէս միայն քահանաներ է տալիս վրաց. ինչն է պատճառը, որ նրա սաները գնում են գիւղ, իսկ մեր սեմինարիստները կամ ճեմարանականները՝ ոչ. հարկաւ օրէնքի և կըրթական ցենզի պահանջը, որ վրաց մէջ կաց, իսկ մեզանում չկաց: Այսուղ խօսք չի կարող լինել fin de siècle-ի նիւթապաշտ ուղղութեան մասին, որի պատճառով որպէս թէ մեր շրջանաւարտները հրաժարում են քահանադաշտիւնից. հապա ինչու վրացի շրջանաւարտները չեն հրաժարում, քանի որ նրանց սեմինարիան Թիֆլիսի նման մի շուաց քաղաքումն է գտնւում, իսկ մեր ճեմարանը էջմիածնի նման մի համեստ վանքի բակերում...

Թողնենք վրացոց. Հոգևորականութիւնով մենք յև ենք նոյն իսկ մեր հայ-կաթոլիկ եղբայրակիցներից, որոնք Կովկասում մինչեւ վերջին տարիներս չունեն ինքնուրոցն անկախ հոգևոր կառավարութիւն. չունեն հոգևոր սեմինարիաներ, բայց ունին մի զօրեղ հոգևորականութիւն։ Համեմատեցէք այդ մեր տգետ եղբայրակիցների գիւղական հոգևորականներին մերայինների հետ, զիտեցէք նրանց գործունէութիւնը, ուղղութիւնը և կը տեսնէք, որ նրանք անչափ բարձր են մերոնցից. թէև սակաւաթիւ, ցանուցիր, առանց մօտաւոր իշխանութեան հսկողութեան, սակայն մի ոգով, մի ուղղութեամբ տոգորւած, մի սերտ կազմակերպութեամբ միացած նրանք կարող են միայն զարմանք յարուցանել։

Վերցրէք, օրինակ, Ախալքալաքի գաւառը, ուր ապրում են բազմաթիւ հայեր, հայ կաթոլիկներ և վրացիներ. համեմատեցէք և տեսէք. վրաց զիւղերում կան ճեմարանական լիակատար կրթութեամբ քահանաներ. կաթոլիկներն ունին միջնակարգ կրթութեամբ իրանց գործին հմտւու և բանի բուն քահանաներ, իսկ այդ գաւառի ազգաբնակութեան գերակշռող տարրը—Լուսաւորչականները՝ յիսուն և իննը քահանաների մէջ չունին և ոչ մի քահանաց, որ գպրոցի երես տեսած լինէր։ Երևակայեցէք, որ քահանան, ըստ բանաստեղծի ասութեան, պիտի լինի հովիտ անխոնջ Քրիստոսի հօտի. երկնաբեր գանձին արթուն դէտ. միջնորդ Աստուծոյ, մարդկան ազգի հետ»...

Կրկնում ենք, վրաց մէջ կրթւած անձերն են ձեռնադրւում քահանաց, որովհետեւ արգելք կայ տգետների առաջ և պահանջ կրթական ցենզի, իսկ մեզանում էն ձեռնադրւում, որովհետեւ չկայ թէ այդ արգելքը և թէ օրէնքի նշանակութիւն ստացած խիստ սրահանջը. խարութիւնն ու սրահանջը իրանք կը ստեղծեն կրթւած քահանայացուներ։

Այդ գէպքը մեզանում նոր չէ. երբ եղել է խիստ սրահանջ, նա ունեցել է հետևանք, միացն տեսական չլինելով կորցրել է իւր նշանակութիւնը։ Այսպէս օրինակ, Գէորգ Դ.-ի ժամանակ զիւղական քահանայացուներից սրահանջը պահանջում էր ձայնագրութիւն, և մենք

յիշում ենք տասնեակ տիրացուներ, որոնք մի տարի շարունակ ձայնագրութեամբ էին պարապում քահանայ դառնալու համար և իրօք դարձան էլ Եթէ դորա հետ լինէր նաև կրթական ցենզի պահանջը, աղա նրանցից շատերը դրանից էլ կը պատրաստէին։ Մենք ժամանակին հետեւելու, նրա պահանջները յարգելու և, մի բան որոշելուց յետոյ հետեւանքին սպասելու ընդունակութիւն քիչ ունենք։ Սինողը կրթական ցենզ նշանակեց քահանաների համար, և մի տարի չանցած, արդէն մենք հրաշքներ ենք սպասում։ Սպասեցէք, պարոններ, համբերութիւն ունեցէք մի քիչ և կը տեսնէք նրա բարերար հետեւանքները։ Մենք անձամբ տեսանք չորս տիրացուներ, որ յոյսերը կարելուց յետոյ անցեալ տարի որոշեցին սեպտեմբերի ամսից պատրաստւել մի խումբ ուսուցիչների մօտ Ներսիսեան դպրոցի չորրորդ դասաւան քննութիւն տալու համար. բայց եկաւ սեպտեմբերը, նոր քամի վիճ և նրանք տեսնելով որ աւանց պատրաստելու էլ քահանայ կարող են լինել, թողին իրանց մտադրութիւնը։

Հասկանալի է, եթէ Սինողի որոշմունքը անփոփոխելի մնար, փորձի համար գէթ մի հինգ վեց տարի, այնուհետեւ միայն կարելի կը լինէր նրա օգտի կամ վնասի մասին խօսել. այդ որոշմունքի շնորհիւ, անտարակոյս, լնովունակ և պատրաստի տիրացուներից շատերը ուղղակի քննութեամբ կարող էին քահանայ դառնալ։ Ուր ջոկողութիւն, լնուրութիւն չկայ, այնուեղ չի կարող առաջ գալ ոչ մի լաւ բան, դա բնական օրէնք է. օրինակը աչքերիս առաջն է, մի քանի տարւայ լնթացքում խալիքա վարժապետներն ու խալիքայութիւնը պատմութեան նիւթ դարձան, շնորհիւ օրէնքի պահանջման. մի տասն-քսան տարուց յետոյ կարող ենք և այս քահանայական ծեծւած խնդիրն էլ պատմութեան արխիւին յանձնել, եթէ յարգել կարողանանք ժամանակի պահանջը և հետեւնք հարեւաններիս գեղեցիկ օրինակին։

Մենք ակամայ կանգ առանք այսքան երկար քահանայական խնդրի վրայ. այս ամենը բերում ենք իբրև պատահական օրինակներ հասարակութեանը զբաղեցնող խնդրի առթիւ։ Մեր յօդւածի նպատակը միայն քահանայական խնդիրը չէ, այլ մեր բոլոր հոգեւոր գործերի կանոնաւորման խնդիրը, որոնք անխղելի կերպով կապւած

են իրար հետ, ինչպէս մի ամբողջ մարմնի օրգանական մասերը, լինի դա քահանայական, ուսումնարանական, հաս ու չհասի, անտեսական և այլն:

Այդ խնդիրներից շատերն իսկապէս եղել են շատ վաղուց, քրիստոնէութեան առաջին օրերից, որպիսին էր քահանայականը, հաս ու չհասը և այլն. քահանաներին և հոգևորականներին ողբում է իւր անզուզական երկի մէջ դեռ հայկական Ներողութ—Խորենացին:

Դարերը չեն կարողացել լուծել այդ խնդիրները և ահա, շնորհիւ կեանքի միանգամայն նոր սպայմանների, եւրոպական քաղաքակրթութեան նոր և զօրեղ ազդեցութեան, այդ խնդիրները երեան են դալիս առաւել բարիւած, կնճռւած և անցետաձելի լուծումն են սպասում: Հների վրայ աւելացել են նորանոր խնդիրներ, կեանքի նոր սպայմանները պահանջում են հնումը չնախատեսնւած օրէսքներ: Այդ բոլորը կենդրոնանում է մեր հոգևորականնութեան և չջմիածնի ձեռքը, որ շնորհիւ իւր ներկայ կազմակերպութեան՝ չի կարողանում ոչ միայն այդ բոլոր խնդիրների առաջն առնել, լուծումն, ուղղութիւն տալ ու դեկավարել, այլ շատ և շատ յետ է մնում այդ պահանջներն հասկանալուց... Իրողութիւնն այն է, որ մեր հոգեոր դասը թէ իւր կրթութեամբ, թէ հասկացողութիւնով և թէ աշխարհայեցողութեամբ աշխարհականներից շատ յետ է մնացել, այնպէս որ այն, ինչ հոգևորականութեան անմիջական պարտականութիւնն է կատարելլը, նա մոռանում է այդ, որ ժողովրդի լուսամիտ դասին առիթ է տալիս թէ բողքելու և թէ յիշեցնելու, պահանջելու նրա պարուածանաշութիւնը:

Չեզ պարզ օրինակ. մեր թէ առաջնորդների և թէ Սինոդի անդամների մէջ, չենք ասում բարձրագոյն, միջնակարգ կրթութեան տէր անձեր էլ չկան...

«Ուրճ»-ի (№ 3) մէջ գեղեցիկ է նկատում պ. Արամիսանեանցը, թէ միայն կրթւած քահանաներով չի նորոգւի մեր հոգևորականութիւնը, այլ այդ նորոգութիւնը անհրաժեշտ է և կուսակրօն հոգևորականութեան համար: Եւ նա ալնդում է որ քահանայական դասի վերանորոգումը նոյն իսկ հոգևոր կառավարչական մարմնից, վարդապետներից ու եպիսկոպոսներից պէտք է սկսել:

Երբ ծառի արմատը անառողջ պայմանների մէջ է, նրա եղ.

ների և պառւզների առողջութիւնը ժամանակաւոր և պատահական միայն կարող է լինել... Նորոգութիւնը հիմքից է հարկաւոր, այլապէս նոր կարկառանը կարող է պատառել հին տիկը:

Այս ամենից յետոց մենք այն կ'ասենք, որ հարկաւոր է ժամանակի պահանջը յարգել և մեր բոլոր գործերում մոցնել առհասարակ նորոգութեան, կանոնի և սահմանադրութեան ոդի:

Մեր եկեղեցին ժողովրդական եկեղեցի է. առանց ժողովրդի հեղինակաւոր մասի ձայնին կարգադրութիւն անելլ հակառակ կը լինի այդ ժողովրդի աւանդական սովորութեանը և եկեղեցու սգուն: Ուստի այս ամեն խնդիրների վերաբերեալ պէտք է մշակւեն որոշ կանոններ, հրատարակւեն՝ մամուլի և ժողովրդի հասկացող մասի թեր և դէմ կարծիքն խմանալու համար և ապա այդպէս քննադատութեան բովից անցնելուց յետոց՝ հրատարակւեն իբրև օրէնք:

Ի հարկէ այդ օրէնքը այն ժամանակ միայն պատկառանք կ'աղդէ և արդիւնք կունենայ, երբ նա կը համապատասխանէ ժողովրդի և ժամանակի պահանջին և բարձր կանգնած կը լինի կուսակցական շատ անգամ կորստաբեր միտումներից: Մեր հոգեւորականութիւնը չի ուզում կարծես մի քիչ բարձր կանգնել կուսակցութիւններից և օգտաել այդ կուսակցութիւնների մշակած խնդիրներից ժողովրդի կարիքն ու հոգսը լրացնելու համար, այլ նա ինքը յաճախ զոհ է դառնում այդպիսի կուսակցական միտումների...

Օրէնքի հետ անհրաժեշտ է խիստ կազմակերպութիւն, առանց որին օրէնքը կը մնայ միայն տառ, երբ նա չի գործադրեի մարդկացին յարաբերութեանց ժամանակ. կազմակերպութեան համար գեղեցիկ օրինակ են եւրոպական հիմնարկութիւնները. մեր հոգեւոր գործերն այսօր այնքան բարդած են, որ նրանց կանոնաւորելու համար անհրաժեշտ են առանձին վարիչ մարմիններ:

Այս ամենը, ի հարկէ, դիւրին իրականանալի չեն, մանաւանդ այն պատճառով, որ էջմիածինը զեռ առաջնորդներ չի գտնում թեմերը թափուր ։ Թողնելու համար. բայց չպիտի մոռանանք, որ այդ մարմիններից և պաշտօններից շատերը, որպիսի են տնտեսականը, ուսումնարանականը և այլն, կարելի է յանձնել դրա համար ժողովրդից լնտրած աշխարհականներին, որոնք այդ մասերում հաւանա-

կանորէն աւելի ձեւնհաս են, քան նոյն իսկ հոգևորականները¹⁾:

Միայն հիմնաւոր-էականն նորոգութիւնը առհասարակ մեր բորբոքին գործերում կարող է բարձրացնել մեր հոգևորականութեան ընկած պատիւը, միայն հետեւողական, արդարամիտ և օրինաւոր գործունէութիւնը կը կապէ ժողովրդին իւր եկեղեցական կարգերի հետ, այլապէս ներկայիս խառնաշփոթ դրութիւնը, բացի զգւանքից ու արհամարհանքից, ոչինչ չի կարող ներշնչել ժողովրդին:

Այսօր խլանում, խեղդում է ժողովրդի արդարացի ձայնը հոգևոր դասի բազմաթիւ ապօրինութեանց առթիւ: Կարգացէք առաջնորդների, յաջորդների և քահանաների վրայ ուղղւած բաղմաթիւ խնդիրները, որոնք ըստ մեծի մասին մնում են անպատասխան. հետեւեցէք հաս ու չհասի կենսական և գայթակղեցուցիչ ինդրին իւր բազմաթիւ ապօրինի հետեւանքներով... «Ոչ յօրինակ այլոց... Քննեցէք եկեղեցական դումարների, վանական կալւածների անկոնտրոլ, անհաշիւ դրութիւնը. դիսեցէք առհասարակ մեր բոլոր ներքին գործերի անգոյն, ողորմելի և կորսուաբեր ընթացքը, և կը գաք մի տիրալի, յուսահատական եղբակացութեան. արդարը հալածւում, գործը խափանւում, դրամը յափշտակութեան և աւարի նիւթ գառնում, մի խօսքով այսոեղ տիրապետում են բուն ասիական կարգերը... սիմոնականութիւն, կաշառակերութիւն, խնամիութիւն, եօլայականութիւն...

Եւ ասացէք խնդրեմ, այս խառնաշփոթ դրութեան մէջ, երբ անհատի պատիւը, իրաւոնքը, զիրքը և անունը անաղարտ մի որոշ դիրքի և սահմանի մէջ պահելու համար ոչ մի գրաւական չկաչ, երբ անհատը կախումն ունի ոչ թէ օրէնքից, այլ կամայականութիւնից և խնամիութիւնից. երբ անհատի ստորագրը պաշտօնակիցը մի բոպէում կարող է տապալել նրան և չունի օրէնք, որով արդարանալ կարողանայ, — այդպիսի հանգամանքներում առհասարակ նվ է գժւել իւր «սաղ զլուխը աւետարանի տակ դնել», նվ կը տայ

¹⁾ Տես «Մուրճ» պ. Ա. Արտավանեանցի լոգւածը. «Դպրոցական-վարչական րեփորտ», ուր ազգպիսի մի առաջարկութիւն արւած է ուսումնաբանների ուսումնական մասի կառավարութեան համար:

հոգեորականութեան անօւնը, երբ մի լիրք լրագրական սուտ¹⁾ կարող է թէկուզ ժամանակաւորապէս խախտել անհատի դիրքն ու պատիւը, երբ ապացուցած յանցաւոր քահանան, Աւանի փոխանակ, պարզեով է վերագրանում իւր տեղը. երբ զատը չքննւած՝ քահանան բանտարկւում է և առաջնորդը զլանում է բողոքելու այդ մասին. երբ նոյն առաջնորդը քահանաց է ձեռնադրում քրէական յանցաւորին... Այս է ահա մեր ներքին գործերի պատկերը:

Յիշենք գարձեալ մի խնդիր, որ անցեալ տարիները ուղղած էր հոգեոր կառավարութեան. դա խնդիր չէր, այլ կատարեալ մի յանդիմանութիւն, բողոք՝ մեզանում տիրապետող կարգերի դէմ: Խնդրաառն կարծեմ հինգերորդ աստիճանի հասութիւն ունէր, որին չէին թոյլ տալիս ամուսնանալու: Նա հաւաքել էր ացբախի դէպ-քերի **89** օրինակ ացբախի ամուսնութիւնների, իսկ իրան մերժում էին. ուստի նա մօտաւորապէս այս էր գրում: «Եթէ դա օրէնք է, ուրեմն թոյլ տէք ինձ ևս օգտական այդ օրէնքից, իսկ եթէ կամականութիւն, ապա ևս չեմ ցանկանալ զո՞ն լինել կամացականութեան և ոչ էլ դրա համար նպաստ կը տամ. ձեմարանին»: Թոյլատուութեան համար կարծեմ 100 ա. էր պահանջւում յօդուտ ձեմարանի: Յիրաւի ժամանակի խիստ պահանջը չէ, մանաւանդ գիւղական դասի համար, որ հաս ու հասը կենսական խնդիր է գարձրել, այլ այդ ապօրինի թոյլատուութիւններն ու մի որոշ կանոնի հնետելը, որոնք, իբրև գայթակղեցուցիչ օրինակ, հիմք են դաւանում ժողովրդի մոլորութեան և ապա արդարացի արտունջին: Ան որ թոյլ է արւած հարեւանին չորրորդ աստիճանում, չի թոյլատուում իրան հինգերորդում, ինչ պիտի մտածէ այդ մասին ժողովուրդը:

Վերևն էլ ասացինք, որ մեր խօսքը միայն քահանացութեան չի վերաբերում, որի մասին ձեռնհաս անձերն արծարծեցին իրանց կարծիքը. սորա մէջ շօշափուած մի քանի կէտերը մինչեւ անդամ գուրս եկան մամուլի մէջ, երբ մենք այս յօդւածը բարեկամներիս շրջանում կարդալուց յետոյ արդէն արտագրում էինք. այս, միայն քահանացութեան մասին չէ մեր խօսքը. ալ առհասարակ բոլոր մեր

¹⁾ Յիշեցէք Արսէն աբեղ. Պլաճեանի դէպքը, որին սպանութեան մէջ էին զբարտում!

հոգեւոր գործերի վարչական կանոնաւուրութեան, իրաւունքների և պարտականութիւնների սահմանագրութեան, ընդդիրը առհասարակ պէտք է աւելի լայն մոքով հասկանալ. դա մեր հոգեւոր գործերի վարուժն է, լինի դա քահանացական, տնտեսական, ուսումնական և այլն... Մէկը առանց միւսի անկախօրէն մշակել չի լինի, մարմինը անդամալոյն կը լինի, երբ նորա օրգանները իրանց զարգացմամբ համապատասխան չեն իրար...

Այսօր մենք ահազին, գործեր, խնդիրներ և հասուն պահանջներ ունենք, որոնք սպասում են շուտափոյթ լուծման, որոնց և ոչ մինը իւր ներկայութեամբ չի համապատասխանում կեանքի պահանջներին. ընտրական գործը, ուսումնարանական խնդիրը, հասուն հասը, տնտեսականը, քահանացականը, կուսակրօն հոգեւորականութեան խնդիրը և այլն և այլն... Բողոքը հասունացած պառողներ են, որոնց եթէ քաղող չլինի, ռանսատակ կը գնան:

Ժամանակը և ժողովրդի պահանջը առաջ են գնացել, կեանքի պայմանները հիմնովին փոփոխւել են, շատ հին կարգեր և սովորութիւններ անդառնալի կերպով կորցրել են իրանց նշանակութիւնը: Տրապիցիան—սովորութիւնը—ացլ ևս չի կարող բաւարարութիւն տալ ժողովրդի ներկաց կացութեանը. Ժամանակը պրել է իւր անխոսափելի պահանջը, որին պէտք է բաւարարութիւն տալ, ապա թէ ոչ, նա իւր առաջն եկած արգելքը խորսակելով կ'անցնի. պէտք է յարգել կեանքի նորանոր պայմանների պահանջը, այլապէս ժողովուրդը երես կը դարձնէ այն հիմնարկութիւնից, որ իւր պահանջները յարգել չգիտէ:

Մենք չենք ուզում գրչի մ' ի հարւածով լուծել այդ բարդ խնդիրները, այլ մասնաւնիշ լինել այդ խնդիրների մեծութեան, ամբողջութեան նոցա փոխադարձ կապի վրաց, որոնց լուծումը պէտք է որոնել օրէնքի և կազմակերպութեան մ' էջ, որ մեզանում չկաց: Տւէք օրէնք, տւէք կազմակերպութիւն և ժամանակն ու կեանքը կը լուծեն ացդ խնդիրները, ի հարկէ, քանի շուտ, այնուքան լաւ. մանաւանդ ացդ խնդիրներից մի քանիները գէթ տեսականապէս բաւականաշափ արձարծել է մամուլը, ինչպէս օրինակ ծխականների և եկեղեցու յարաբերութիւնը («Արձագանք»), գըուրոցական-վարչականը («Մուրճ»), ընտրողականը («Մուրճ», «Մշակ»), քահանացականը (ամբողջ մամուլը):

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԷԶ

Լուր էր տպւած, որ Տիֆլիսի թեմական իշխանութիւնը Ախալքալաքի գործակալութեան տիրացուներին հրաւէր է կարդում, որ քանկացողները գնան Տիֆլիս պատրաստված քահանաւ դառնալու համար. որով վերջնականապէս ճշգւում է այն լուրը՝ թէ թեմական իշխանութիւնը տիրացուական դպրոց է բաց անում¹⁾.

Օգուելով հանգամանքից—Ախալքալաքի գործակալութեան տիրացուներին ուղղած հրաւէրի առիթով, կ'աշխատեմ ձեռքիս տակ եղած փաստերով ապացուցանել 1) որ Ախալքալաքի գործակալութիւնը ունի հարկաւոր թւից աւելի քահանաներ. 2) նոր քահանաներ ձեռնադրելն բոլորովին աւելորդ է, այն էլ ազդ տիրացուներից, և 3) Ախալքալաքի գործակալութեան ուղղած հրաւէրի անհեթեթութիւնը:

1393 թ. վերջերը պաշտօնական գործերով հնարաւորութիւն ունենալով շրջել Ախալքալաքի գործականութիւնն 72 դիւզերից²⁾ 55-ը, մօտիկից ծանօթացայ տեղական քահանաների մտաւոր, բարոյական և նիւթեական դրութեան հետ. Շրջածս գիւղերում կան 40 քահանաներ, որոնցից 23-ը ձեռնադրւած են Գրիգոր եպիսկոպոսից. Սագինեանից, 6 ը Զիւնակեան, 4 ը Վարդան, 5-ը Հասան-Զալալեկան և 2-ը Սերովիքի եպիսկոպոսից. Դրանցից 10-ը Մատթէոս, իսկ մնացածը Կէորդ կաթողիկոսների օրով են ձեռնադրւած. Ազդ գիւղերի ծուփերի թիւը համում է 3,400·ի. ուրեմն իւրաքանչիւր քահանաւի վրայ միջին հաշուով ընկնում է 85 ծուխ. Խրականութեան մէջ սական չատ մեծ անհաւասարութիւններ կան. այսպէս օրինակ, Կարծախ գիւղը մի քահանաւ ունի 240 տուխ, մինչ-

1) Որ և կատարւած է արդէն:

Ծան. Խմբ.

2) Մնացածները սաստիկ ցրտերի պատճառով թողիւ.

դեռ մօտի Մրակոլ կամ Մրակովալ գիւղը 14 տ. ծխով մի քահանակ: Լուսադուրս գիւղը 20 ծուխով երկու քահանակ ունի. Բուռնաշէթ գիւղը նրանից մօտ երկու վերստ հեռաւորութեան վրա՝ 35 ծուխ մի քահանակ: Կաճու Մեծ 23 ծ. մի քահանակ նոյն հեռաւորութեան վրա:

Երջածո գիւղերից 22-ը ամենամեծ գիւղերն են 60—175 ծուխ ու նեցող Մի գիւղ կաւ-կարծախ 240 ծ.: Ազգ 23 գիւղերը ունին 22 քահանակ միջին թւով 100 ծուխ իւրաքանչիւրը: Մի քանի տարի սրանից առաջ ազգ գիւղերում քահանաների թիւը 33-ից պակաս չէ եղել, ծխերի աւելի պակաս քահանակութեամբ: Ազգ գիւղերից 3-ը քահանակ չունին—կորխ (78 ծուխ), Մերենեա (100 ծ.) և Աբով (60 ծ.): Մերենեաին մօտիկ են Ականա (3 վերստ), Խմտելա (1 վերստ), Սամսար (ոչ աւելի քան 3¹/₂ վերստ) և Բուղալէթ (նոյնքան) փոքր գիւղերը, ուստի և դրանցից մէկի քահանաւին կարելի է չանձնել: Աբովը մօտ է (2 վերստաշափ) Բղաւէթ գիւղին (43 ծ.) և ունի մօտ 60 տուն բնակիչ, ուստի և Բղաւէթի քահանան առանց գմւարութեան կարող է հովել, ինչպէս և հովւում է: Կորխ գիւղին թէև մօտ է (1¹/₂ վ.): Օրմա գիւղը, որի քահանան էլ ալժմո հովւում է նրան, սակայն աւելի լաւ էր մի ուրիշ քահանակ տալ նրան - կորխին:

Պալխօ (40 տ.), Բուղաշէն (45 տ.), Դրկնա (16 տ.), Զակ (39 տ.) և Գուման (105 տ.) գիւղերը ունին ալժմո 245 տ. ծխական և երկու քահանակ, մէկը Զակում, միւսը Գումանում: Մի քանի տարի: առաջ գիւղերը ունեցել են 5 քահանակ աւելի քիչ ժողովրդով: ալժմուն էլ օգտւելով հրաւէրից կաշխատեն իրանց տիրացուներին ներկայացնել ձեռնադրելու Եթէ ալժմու երկու քահանակի ամմենելին չեն կարողանում բաւական արդիւնք տալ, ապա ինչպէս պիտի կարողանան նորա երեք անգամ աւելի քահանաների պահել նոյն արդիւնքով: Դրկնա գիւղից մի վերստ հեռաւորութեան վրայ են գտնւում Զակ և Պալխօ գիւղերը: Գումանը ոչ աւելի քան 1¹/₂ վերստ, իսկ Բուղաշէնը 2 վերստ: ուստի և հեռաւորութեան կողմից մեծ չարմարութիւններ են ներկայացնում ազգ գիւղերը երկու քահանակի ծուխ լինելու առ միշտ:

Ղադու (30 տուն) և Ալաթուման (35 տուն) գիւղերը խիստ մօտ են Մեծ Կաճու գիւղին: Ալաթումանը կպած է Կաճովին: ձորի մի ափում մէկն է, միւսում երկրորդը: Ղադուն, բացի նրանից որ մօտէ Կաճովին, մօտ է և Բուռնաշէթ և Լոմագուրս գիւղերին (2¹/₂ վերստ): անկասկած նրանք էլ կուղենան ջոկ քահանակ ունենալ, ու օգտւելով հրաւէրից՝ նրանց տիրացուներն էլ բոքիկ ոտով մինչի ծփխիս մէկ կը վագին... Ալաթումանը կանուի, իսկ Ղադուն լոմագուրսի քահանաներն են հովւում ալժմու: Մի ուրիշ գիւղ (ալժմու միաւն 85 տուն) ունեցել է 3 քահանակ մի քանի տարի առաջ: Երկուսը վախճանել են, մէկն է մեացել, որը ալժմու հաղիւ հազ կարու-

ղանում է ձեռնադրութեան համար արած պարտքերը տալ պրօնել, չնա-
կելով որ 15 տարի է քահանակ է ու վերջին տարիներս էլ հովում է
մերձակալ մի երկու գիւղ, որոնք քահանակ չունին. ինքը այդ գործակա-
լութեան լաւ քահանաներից է, ձեռնադրել է 1879 թ. Սագինեան եպիս-
կոպոսից: Խոսպիս գիւղը (53 տ.) ունի մի ծերունի քահանակ, մօտ 3 տարի
առաջ վախճանում է նրա քահանակ որդին. բայց գեռ նրա ձեռնադրութիւ-
նից մնացած պարտքերը չտւած՝ ուզում էր երկրորդ տիրացու որդուն քա-
հանակ ձեռնադրել տալ, որին էլ խոլերան է տանում:

Քահանակ չունեցող գիւղերիցն են Խիտիլու, Սամսար, Թագչա, Խո-
րինեա, Խոչարակ Ղառըրմա գիւղերը, չհաշելով աճապիսի գիւղեր, որոնց
ծիսերի թիւը 8—15 տ. չեն անցնում: Այս գիւղերն էլ իրանց տիրացու-
ները կը ներկայացնեն ձեռնադրելու, չնաելով որ մերձակալ գիւղերի
քահանաները հովում են նրանց:

Փոքը Խէնչալլի (28 տուն) ունի մի ծերունի լաւ քահանակ, ժողո-
վը գիւղը գոն է, բայց աւելացնում է, եթէ իմ հողերս ու աշխատելս չլինին՝
ժողովրդի տւածը քաղցած կը թողնէ ինձ: Սրան մօտ է ($3\frac{1}{2}$ վ. ոչ աւելլի)
Վեծ Խէնչալլի գիւղը (115 տ.)՝ ունի մի քահանակ, որ ակժմս կարծեմ
վախճանել է. չէր կարելի արգեօք այդ երկու գիւղը մի քահանակի
լանձնել:

Թւեցի այն գիւղերը, որոնք քահանակ չունին և հովում են մեր-
ձակալ գիւղերի քահանաներով, բայց որոնք ալսպիսի մի աջող ժամանա-
կում իրանց տիրացուներին կը ներկայացնեն անկառակած քահանակ ձեռ-
նադրելու համար և թերես զտնւեն գիւղեր որ մէկի փոխարէն ներկա-
յացն են երկուսը: Մօտիկ ապագան մեզ այդ ցոյց կը տաէ, ինչպէս ցոյց
կը տալ նաև անզգուշ քաջի վտանգաւոր հետեւանքները:

Աչժմս մի առ մի կը լիշեմ այն գիւղերը, որտեղ կարելի է քչացնել
եղած քահանաների թիւը:

- 1) Վեծ (47 ծուխ) և փոքը (30 ծուխ) Արագեալ գիւղերը ունին
77 և ծուխ երկու քահանակ, հեռաւորութիւնները մի վերստից պակաս:
- 2) Յարակովա (110 ծ.) գիւղը ունի 2 քահանակ: 3) Գիւմիւրդա (120 ծ.)
գիւղը 2 քահանակ: 4) Սաթիս (175) գիւղը 2 քահանակ: 5) Լոմազուրս
(20 ծ.) գիւղը 2 քահանակ: Ասաւորէթ (110 ծ.) և Բուռնաշէ (35
ծ.) գիւղերը համարեա իրար կապա են ($\frac{1}{2}$ վերտառ) և ունին 2 քահանակ:
- 6) Ղաղու, Լոմագուրս, Կածու և Ալաթուման գիւղերը շատ մօտ են իրար
և ունին 3 քահանակ և ընդամենը 108 ծուխ միասին գիր առած: Այս չորս
գիւղերը մի քահանակի էլ հաղին կարողանան բաւականաշափ արդինք
տալ, որովհետեւ վերջին երկու գիւղերը չքաւոր են: 8) Խիտելա (60 ծ.)
գիւղի քահանան խոլերալից վախճանել է, և ինչպէս պատմում են գիւ-
ղացիք, լաւ քահանակ է եղել, բայց ճնշւած ձեռնադրութեան պարտքերի

տակ. (աղդականների ասելով մօտ 800 ո. ծախտել է ձեռնադրութիւնը աշողիցնելու համար). ձեռնադրուել է Սագինեան եպիսկոպոսից Բարսելիթ գիւղը հազիւ Յ վերսա հեռու լինի նրանից, ունի 50 տ. մի քահանակ: 115 տ. ծուխ հովելը մի քահանակի համար ամսենենու դժւար չէ: 9) Մեծ և փոքր Գեօնտուրաններ, Գիլֆ և Նամզարա գիւղերը դանւում են մի փոքրիկ հարթ գաշտավարի վրայ և շատ մօտիկ են իրար, ունին չորս քահանակ և ընդամենը մօտ 130 տառն ծուխ, միջին թւով իւրաքանչիւրին 32^{1/2} ծուխ: Մեծ Գեօնտուրէն գանւում է այդ գիւղերի կենարոնում, ամենից հեռու է Նամզարա գիւղը որ Յ վերսաշափ հազիւ թէ լինի:

Վերջին տասներեք տարիների ընթացքում այդ գործակալութեան համար քահանաներ չեն ձեռնադրուել: 1891—1893 թ. վերջը վախճանել են թէ այլ հիւանդութիւններից և թէ խօլերատով Շ քահանակ: Զնալուով այս հանդամանքներին, բերածո փաստերը պարզ ցուց են տալիս, որ Ախալքալաքի գործակալութեան մէջ ոչ միան քահանակի պակասութիւն չի զգացւում, այլ և եղած քահանաները բաւականից դեռ շատ աւելի են: Յարմարաւոր մի քանի ժամանակաւոր տեղափոխութիւններ անելուց հետո էլ, մեր կարծիքով, կարելի է քահանաների թիւը պակուցնել ուժով առ անց որ և է դժւարութիւններ առաջ բերելու: Այս բոլորն ասպահուլինելուց հետով, արդեօք կարիք կալ տիրացուներին հրաւեր կարդալու: Դուցէ ալիքաւեէրն եղած լինի ամեն մի գիւղի մի քահանակ տալու բարի գիտաւորութեամբ, առանց նախատեսելու դրա հետեանքները: Բացի ան գիւղերից, որոնք քահանակ չունին, նաև ան գիւղերից շատերը, որոնք քահանակ ունին, ունին քահանակացու տիրացուները: հրաւերը կարդացւած է, ասպարէզը բացւած: Էլ թիւն ետ կը կանգնեցնէ տիրացուներին, մանաւանդ նրանց, որոնք հարուստ են Տիփիասում անելիք ծախսերը համեմակիթերու չափ կամ պարագ վաստակելու ախորժակ: Զէ որ տիրացուական գպրոցում կատարելագործելու համար վող է հարեկաւոր թէկուզ միան ապրուստի համար: Անկասկած իշխանութեան ալ քաղը մեղ կը վերացարձէ 70-ական և 80-ական թւականներին, երբ հեղեղւցին Ախալքիսաւի և մանաւանդ Ալէքսանդրապոլի վիճակները վերին տասիճանի տղէ ու կոսիա քահանաներու:

Մեր տեսած քահանաներից և ոչ մէկը ոչ մի դպրոցում ուսում չէ առել: բոլորն էլ գիւղական քահանաների և խալիքաների աշակերա տիրացուներ են եղել: Ուսում չառածն երի մէջ կամ հառկացող, խելացի քահանաներ, ուսկան նրանց թիւը շատ չնչին է, մատների վրաէ կարելի է հաշւել: Մնացածները ըստ մեծի մասին ապէտներ են, կան մէջները նաև անպիսիներ, որոնք ոչ ոչ գրել և ոչ կարդալ գիտեն:

Բու ռհացէթի, Օրծակի, Գիւմիւրդայի (մէկը միան), Գիլիքի, Մեծ Արակեազի
և ալյն քահանաներին ձեռնադրել են, որ եթէ ոչ բնական և ոչ տուացական
ուսումն ունին, գոնէ Սուրբ Հոգու չորրէն իջնի վերեկց վրէքք՝ թերես մի
ման գառնան. բայց դժբաղլաբար Սուրբ Հոգին չի իջնում, ձեռնադրողի
թէ ձեռնադրողների... աճարժանութեան պատճառով. Խակ թէ դրանք
մեծ գումարներ էին ծախսել՝ դա անկասկած է: Մի գիւղի քահանաց
ասում էր «իմ վրէս շատ թանգ նստեց քահանաւ դառնալու. ձեռնադրել
եմ 1877 թ. Սագինեան եպիսկոպոսի ձեռքով. Եթէ ան փողը որ ծախ-
սեցի ձեռնադրելու համար, գործ զնէի հողի, տաւարի վրայ, հիմի հինգ
անգամ աւելի մեծ կարողութիւն կունենալի. խակ եթէ պարտքով անէի՛
առնս կը քահացէք, ինչպէս շատերինը քանդւաւ. փառք Աստծուն, տւել
էր՝ ծախսեցի, հիմի էլ կաշխատեմ տեղը լցնելու»:

Կան մի քանի քահանաներ, որոնց թերևս աւելի լաւ կը լինի հիւանդանոց ուղարկել... իսկ մի շարք քահանաներ էլ, որոնց պիտի ասել «բաւական է որքան աշխատեցիք լօգուս եկեղեցու և ազգի, լօգուս կըլի նիք՝ գուացէք հանգստացեք» Աղյուսակ քահանաները կատարեալ պատիժ են ժողովրդի համար:

1864—81 թ. ձեռնադրւած քահանաներից ալժմս կենդանի են 35 հոգի, բոլորն էլ ձեռնադրութեան դործը աջողեցրել են մեծամեծ գումարներով (350—1500 ռ.). Միայն մի քահանակի պատահեցի, որ պարծենում էր թէ իր հետ ձեռնադրւողների մէջ ամենից քիչ ինքն է ծախսել. այսինքն մի անմեղ գումար 300—400 ռուբլի. ձեռնադրւել է 1879 թ. Սադինեան եալիսկոպարսից. և զէպ պէտք է վիշես որ Ախալցխակի ամբողջ վիճակի քահանաների մօտ 70% ը ձեռնադրել է ալդ եպիսկոպոսը. Պէտք է խոստովանել, որ նա մեծ ջանք է գործ դրել որքան հնարին է ազդին շատ... տղէտ քահանաներ տալ իր գործակիցների աջակցութեամբ. Մեծ անարդարութիւն կը լինէր եթէ այս էլ չխոստովանենք, որ պահանջների մէջ խիստ չափաւոր է եղել միշտ հետեւելով ժողովրդական այն առածին, որ առում է, «Էժան լինի, շատ լինի», մինենոն ժամանակ պատառի մեծը թողնելով ուրիշներին: Տգէտների քահանալանալու պատճառը ժողովուրդը չէ, այլ սիմոնականութիւնը. ժողովուրդը չանցաւոր չէ: Մի քանի ստահակների ձեռքով ստորագրւած տասնեակներով ստորագրութիւնները համախօսականների մէջ հոգեստ իշխանութեան կողմից երբ ստուգեց. բոլորովով ձախը երբ լսեց, Երբ ձեռնադրւողի ոչ թէ ուսումն ու խելքն էր քննւում, ի նկատի առնւում, այլ գրապանը, բնականաբար ուսում առածնելի զէմ մի համար պատւար պիտի քաշէր, պատւար, որի միւս կողմն անցնելու համար փող էր հարկաւոր և միայն փող: Նթէ մեր զպրոցաւարոնները խոչս են տւել քահանացութիւնից, անկասկած ուրիշ անսպաստ պայմանների հետ ի նկատի են առել ալդ զլիսաւր պաշմանը:

Վասամբ սրանով կարելի է բացադրել այն հանգամանքը, որ ոչ միայն դիւղերը, գԺբազգաբար նաև քաղաքները հեղեղեցին տղէտ և շատ անդամ անդրագէտ քահանաներով:

Կրթութիւն ստացածի համար աններելի է թւում կաշառքով ստանալ չորրութիւն, մինչզեռ տիրացուները մեծ վատահութեամբ ծախսում են ահազին գումարներ, այն դիտումով, որ երբ և իցէ ետ են ստանալու Ազդ տեսակ տիրացուները քահանաւ դառնալով տղրուկի նման կպչում են ժողովրդի ջանից. այս դէպքում ժողովուրդը հարստահարսում է ոչ միայն նիւթապէս, ազլ և մտաւորապէս, բարուապէս:

Ճանապարհորդելով ազդ վիճակում, ես եկալ այն եզրակացութեան, որ քահանաների ձեռնադրութեան միակ պամանը փողն է եղել թէ ձեռնադրութիւնը և թէ նիւթապէս ապօնովելու դիտումներով. բայց չարաչար սիմալել են այն տիրացուները, որոնք պարտքով են քահանաւ դառել և քիչ ծուխունեցող գիւղի վրայ ալդպիսիները մինչև վերջը ճնշւած են եղել պարտքերի և հոգսերի տակ. Բոլորովին տարբեր է այն տիրացւի վիճակը որ կամ քիչ պարտքով և կամ սեփական միջոցներով է քահանաւ դառել, այն էլ 60-ից աւելի ծուխունեցող գիւղի վրայ. Նա մի տասը տարւակ ընթացքում վերադարձրած լինելով ծախքը, ոկում է նիւթապէս ապահովէլ, փող ետ քցել շահով տալ սրան նրան. Ակտեղ ահա երեան է գալիս վաշխառու քահանաւի տիպը իր բոլոր հրեշտութիւններով¹⁾:

Բարուական կապ ազդ տեսակ քահանաների և ժողովրդի մէջ խոշորացուցով պէտք է վնարել զա վազուց, իր խիստ չւալլութիւն, մոռացուել է և ձեռնադրուղի և ձեռնադրովի կողմից. Ձեռնադրովը պիտի ձեռնադրէ, որովհետեւ... պարատւորւած է, Նամանաւանդ որ բազմաստորագիր համախօսականներն էլ ազդ են տրամադրում. իսկ ձեռնադրովը փող է գիր համախօսականներն էլ ազդ փողը տակուաթերով և գանազան ծախսել, ինչ միջոցներով էլ լինի՝ ազդ փողը տակուաթերով և գանազան բարգումներով հանդերձ պիտի ետ ստանակ. ձեռնադրովից. ի հարկէ ոչ ազլ ժողովրդից, Բարուական կապի մասին խօսք կարող է լինել.

Ժողովուրդը շատ լաւ է հասկացել, որ ինքն իրա քահանաւի համար ներկայացնում է, միմիայն եկամուափ, օգտուելու ազբիւր և ուրիշ ոչ ինչ. Մի անգամ ալս տեսակ համեացք կազմւելուց վետու թքով կպցւած կարկատաններով ազդ երկու հակառակ ծալրերը համերաշխացնել չի կարելի. պէտք է մի հիմնական փոփոխութիւն մացնել՝ միամուգաման վերջ գնելով տիրացուների ձեռնադրութեանը և ասպարէզ տալով դպրոցաւարտներին. Անցան այն ժամանակները, երբ ժողովրդի պահանջները քահանաւներից սահմանափակում էին կրօնական պարտաւորութիւնների և ծխուրի

¹⁾ Ակտ տեսակ քահանաներ ոչ միայն Ախալքալաքի դաւառում, ալ և ուրիշ տեղեր էլ շատ կարելի է գտնել.

կատարելսվը: Քայլց արի տես որ շրջածս դիւղերի մի շարք քահանաներ նոյն իսկ հրաժարում են ժողովրդի ազդ անհրաժեշտ պէտքերը կատարել ուր մնաց թէ ուրիշ նրանցից ոչ պակաս կարեոր պահանջներին բաւականութիւն տալ ոչ միայն չեն կարողանում կամ չեն ուզում, ազ և չեն էլ հասկանում:

Համարեն ամեն տեղ գիւղացիները բաժանւած էին երկու թահւախիկողմի: մէկը միշտ պիտի քահանան վնէր՝ իր ազգական-խնամիներով լինելով կատարեալ պատուհաս ժողովրդի համար: Աւելորդ կը լինէր անշուշտ մի առ մի թւել այն բոլոր դիւղերը ուր ժողովուրդը քահանաների պատճառով կորցրել է իր խաղաղութիւնը: Մի քիչ ուշադիր վահելը շուտով երեան կը հանէ ազդ տեսակներին: Կամ մի շարք դիւղեր էն ուր քահանաները տնտեսապէս ճնշւած, ամսապահով վիճակի մէջ են դանւում: Բերեամ երկուսը շատերից: Սուլզացի մի տիրացու ուզում է անպատճառ քահանաւ դառնալ, իրանց գիւղերի վրա չի աջողւում՝ քահանաւ վինելու պատճառով: Մերձակաչ Մրակոլ կամ Մրակովաւ գիւղը, որ ալժմս մօտ 18 տարի տնցնելուց իւտու միայն ունի 14 տուն ժողովուրդ, քահանաւ չունի: Սուլզակի տիրացուն դալիս է և հոգեոր իշխանութեանը ներկազնում իրան՝ քահանաւ ճեռնայիրելու համար ազդ դիւղի վրա: Խշխանութիւնը տեսնելով, որ գիւղը փոքր է և ամենելին չի կարող բաւականութիւն տալ քահանավի նոյն իսկ հազուսաի ծախքերին՝ դժւարութիւններ է քարուցանում, սակայն վերջը կակդում է. բայց ապագակի գլխացաւանքից ազաւելու համար տիրացուից պահանջում է ստորագրութիւն, որով պարտաւորի բաւականանալ արդքան ծուխով և ամենելին չբողոքի եկամուտի քչութեան համար: Տիրացուն ստորագրութիւնը տալիս է, և մի գեղեցիկ օր 1877 թ. ձեռնադրում է Սագինիան եսլիսկոսուից քահանաւ: Անցել են 17 տարիներ, բայց խեղճ քահանան դեռ պարտքերից չէ աղատւել: Եւ իրօք, 14 տուն ծուխով ինչ անէ թշւառ քահանան—ընտանիք կառավարէ, ապեցնէ, թէ պարտքը տապ:

Հաստ աւելի ողբակի է կածու գիւղի տէր-Անտոնի գրութիւնը. թէն ալժմս հովտում է երկու գիւղ (58 ծուխով), սակայն ճնշւած ճեռնայիրութեան պարտքերի տակ՝ մոլորել է ողորմելին: Գիւղացոց չքաւորութեան պատճառով եկամուտը քչացել կարւել է. ստացած արդիւնքը հրէշաւոր պարտքերն են կլանում: Վերջին ձին ու սակը ուզում էին Լոմանզուրոցիք տանել իրանց եկեղեցուն տալիք 130 ու. պարտքի փոխարէն: Եթէ տէր-Անտոնի պարտքը միայն ազդ վնէր, զեռ ոչինչ, ձին ու սակը կը տար, կը պրօնէր, հոգին կազատէր. բայց արի տես որ չսրս կողմից ու զում են, հոգեոր իշխանութիւնն էլ «Արարատ»-ի 3—4 տարւաչ բաժա-

Նորդագինն է պահանջում. Առ Էլ 1881թ. և ձեռնադրւել Սաղինեան եպիսկոպոսից:

Չնակելով որ եղած քահանաների թիւը բաւականից շատ է, թեմական իշխանութիւնը նորերի ձեռնադրելու հրաւերներ է կարդում: Եղածների տնտեսական, մտաւոր և բարուական դրութիւնը զեռ թողած, որ հարկաւոր է բարուաքել նոյն իշխանութիւնը այդ թւառների թիւը շատացնելու ջանքեր է անում: Եթէ թեմական իշխանութիւնը ուզում է քահանաների դրութիւնը բարուաքւած տեսնել, առաջ թող նրանց թիւը քչացնէ նորերին չձեռնադրելով: Եղածների դրութիւնը բարուաքելու փորձեր նոյն իշխանութիւնը չարաւ:

Թող ներփակ այս էլ ասելու. Թիֆլիսի թեմական իշխանութիւնը նորերի ձեռնադրութեան անհրաժեշտութեան եզրակացութիւնը Բնչ փաստերի վրա հիմնեց, երբ իրողութիւնը պարզ ցուց է տալիս, որ եղածները շատ են:

Մեր համեստ կարծիքով, նոյն իշխանութիւնը, նախքան հրապարակական հրաւեր կարդալը, պէտք է Ախալքալաքի գործակալութիւնից ինչպէս և միւսներից հաւաքչէր ամենաստուգ տեղեկութիւններ գիտերի թվի նրանց ճխերի քանակութեան, իրար մէջ ունեցած հեռաւորութեան և քահանաների ներկաւ թվի մասին, որոնք նրան հակառակ եզրակացութեան կը հասցնէին:

Ինչ որ ապացուցանելու էինք, ապացուցեցինք: Մնում է մի երկու խօսք էլ ասել և վերջացնել ներկաւ չօդւածը: Քահանաւական ինդիրը, շնորհիւ Արշէն էրէցի և Սեղրակեան սրբազնի չօդւածների, դառաւ հասարակական հերթական ազրող ինդիր, որի աստիճանին երբէք մինչեւ ացման չէր հասել: Հասարակութեան կրթւած մասի նրա վրա դարձրած ներկաւ ուշադրութիւնը ցուց է տալիս որ այդ ինդիրը հասունացած է: ուստի և՝ ինչպէս ուրիշ հասարակական ինդիրներ, մի անգամ հրապարակի վրայ գրւելուց չետող լուծումն են ստանում շուտ կամ ուշ, բաւարար կամ անբաւարար չափերով, նաևելով նրանց կենսունակութեանը և հասարակութեան զանազան խաւերում նրանց արած նւաճումներին, այնպէս էլ քահանաւական ինդիրը մի անգամ հրապարակի վրա տրաքելուց վետո՞յ լուծումն է ստանալու: Անկասկած բոլորիս համար ցանկալի էր տեսնել այդ ինդիրը լուծած այն չափով ինչ չափով պահանջելի է: Քահանաւական ինդիրը շատ պարզ է, ժողովուրդը ուզում է կրթւած, ուսում առած հոգեորականներ: Ոչ ոք չի կարող ասել, որ այդ պահանջը անբնական է, իրաւացի չէ: բաց դժբախտաբար մի շարք մարդիկ համարձակութիւն չունենալով ասելու, կողմանակի կերպով պաշտպանում են տգէտ:

ների, տիրացուների ձեռնադրութիւնը։ Արդեօք սունկի պէս բուանող տիրացւական դպրոցներն ապացուցներ չեն դրան։

Արմեն Վահագանաց Ղ. Հայէլանց

Р. S. Ախալքալաքի վիճակի քահանաների մասին իր ժամանակին վեհափառ Հայրապետին մի զեկուցումով լայտնել եմ, ինչպէս և Տփիսիս եղած ժամանակս՝ ներկայ առաջնորդին պատմել:

1894թ. Մայիսի 20.

Երնջակի Հանդուս.

ՄԻ ԲՐՈՅԵՒԹԻՒՆԻ ԱՌԻԹՈՎ

I

Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Փ

Զի կարելի Համաձայնել «Մշակի» հետ, որ մամուլի վաշխառութիւնը վաս բան է. բայց ոչ պակաս վաս բան է մամուլի և այն վարմունքը, երբ նա միջոց է տալիս զանազան ճարապիկ մարդոց տարածել հասարակութեան մէջ իրանց անմաքուր մնպերի և դիտաւորութիւնների պատղները: Եւ ահա պ. Փ. Վարդաղարեանցի հրատարակած բրոշիւրը «Իմ պատասխանը «Մուրճ»-ի խմբագրին», տարածեց հասարակութեան մէջ կարծես իբրև մի յաւելած «Մշակ» լրագրի № 60-ի:

Ի՞նչ է ուզում ասել պ. Վարդաղարեանցը իր այդ բրոշիւրով. —որ ինքը յանձն էր առել «Մուրճ»ի հրատարակութիւնը, որ նա վես է կրել դրա համար, նիւթապէս նայատել է պ. Արասխանեանցի զբականական գործին, իսկ պ. Արասխանեանցը համարձակւել է «ապերախտ» գոնուել նրա լաւութեան դէմ, համարձակւել է չխոնարհւել և երկրողադութիւն շտալ պ. Վարդաղարեանցի ոսկելից սննդուկներին!!!

Այդ է պ. Արասխանեանցի մեղքը?

Ուշադրութեամբ կարգացէք թէ «Մշակ»-ի, թէ «Մուրճ»-ի (1894, № 2) և թէ վերջապէս վերջիշեալ բրոշիւրի մէջ առաջ բերած փասուերը և մանրամասնութիւնները, թէ պ. Արասխանեանցի և թէ պ. Վարդաղարեանցի տւած բացատրութիւնները—և դուք ակամայ կը գաք մի վերջնական եզրակացութեան, թէ պ. Վարդաղարեանցի պրետենզիաները, բոլոր յաւակնութիւնները հիմնւած են այն հանգամանքի վրայ, որ նա «Մուրճ» համար փող է մսիւել (թող թէ գուցէ նոյն իսկ շահով յետ ստանալու յոյտով), իսկ «Մուրճ»

պ. Խմբագիրը այնքան ինքնուրոցն է գտնել, որ չէ շփոթել իր ընկեր-«Հրատարակչի» տնտեսական և գրականական իրաւունքները, որ պ. Արասխանեանցը բարձր է սպահել մամուլի նշանակութիւնը և չէ թույլ տւել որ և է նիւթական հանգամանքի ճնշում՝ իր ստանձնած մամուլի և գրականութեան գործի վրայ:

Բայց չէ որ այդ պատիւ է բերում պ. Արասխանեանցին:

Պ. Վարդագարեանցը շատ է ուշացել իր բուրժուազական պահանջմունքների մէջ. և պ. Արասխանեանցի ցոյց տւած ընդդիմութիւնը միայն համակրութեան ու ծափահարութեան է արժանի այն մարդոց կողմից, որոնք զիտեն հասկանալ մամուլի և գրականութեան սուրբ կոչումը:

Պ. Վարդագարեանցը ուզում է հաւատացնել իր ընթերցողներին, որ բարոյապէս էլ է նպաստել պ. Արասխանեանցին «Մուրձի» հրատարակման մէջ:

Սա արդէն միանգամայն յանդգնութիւն է: Պ. Վարդագարեանցի նմաններին չէ վիճակւած «Մուրձի» գրական և գաղափարական արժանիքների մասին դատելու: «Մուրձը» երբէք չէ եղել բարոյական տագնասպի մէջ, բայց նա կընկնէր այդ գրութեան մէջ այն ժամանակ, երբ Վարդագարեանցի նմանների խելքը կը գործէր նրա մէջ:

Պարօնը ասում է, որ Դրիգոր Արծրունին վաս էր վերաբերութեամբ գէպի «Մուրձը» և նորա խմբագիրը: Նա զեռ անհամեստութիւն է ունենում առաջ բերել հանդուցեալի մի երկու հայհոյական խօսքերը:

Խեղճ Դրիգոր Արծրունի. արգեօք քո կենդանութեան ժամանակ երբ և իցէ մասձել էիր այն մասին, որ մահւանիցդ յետոց քո անունը զանազան ձարպիկ մարդոց համար տմենալաւ դիմակ պիտի ծառայէր, որի տակ ծածկելով իրանց մոռփի ու ոդու ողորմելիութիւնը, պիտի յանդգնութիւն ունենան դեռ հալածել այն մարդոց, որոնք քո խսկական հետեղներն են լինելու, որոնք շարունակելու են ծառայել մամուլի և գրականութեան շահերին այնպիսի անկեղծութեամբ և անձնւիրութեամբ, ինչպէս որ դու էիր ծառայում:

Վարդագանելով մեր այս երկու խօսքը, մենք չենք կարող մեր համակրութիւնը չայտնել պ. Ա. Արասխանեանցին նորա բունած

այն ինքնուրոյն գիրքի համար, որ նա ընդունել է դէսի պ. Վարդագարեանցի ազականիշ ձգոումները:

Խնչպէս մամուլի և տպագրական խօսքի անարատութեան պաշտպան՝ «Մուրճի» խմբագիր պ. Ա. Արասիսնեանցը կանգնած է իւր կոչման բարձրութեան վրայ:

Դրէժու Վարդագիր
Երանեան Վարդագիր
Դէրգի Առաջանութեան
Մէջուի Նախարարութեան
Յակով Յակով
Դէրգի Վարդագիր

II

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՐԻՆ

Մեծապատիւ պրն. Խմբագիր!

Զայրոյթով կարգացի ես պ. Վարդագարեանցի, «Իմ պատասխանը» «Մուրճ»-ի խմբագրին»:

Մոռիկուց ծանօթանալով պ. Վարդագարեանցի կողմից անտեղի յարուցած վէճին և զորա մանրամասնութիւններին, ես տեսայ որ բրոշիւրի մէջ բերած փասաները յեղաշրջւած են, և նորա հեղինակը հոգ է տարել ոչ անկան ճշմարտութեան և իրողութեան մասին, որքան այն մասին, թէ ինչպէս ետ ու առաջ և ծուռ դասաւորել ապացոյցները, որ նոքա ծառացեն մի որոշ տեսդենցիայի և ճշդութեան տպաւորութիւն գործեն:

Իսկ այն ոգին, որի սե գոյնը աչքի է զարնում բրոշիւրի իւրաքանչիւր էջի վրայ, այնքան վատ է և անարժան կրթւած մարդուն, որ ես այսուհետեւ առանց երկբայելու պիտի համարեմ պ. Վարդագարեանին ոչ միայն Զեր, այլ և «Մուրճի» քենապահ և չար թշնամիներից:

Իրոշիւրի ոգու անունն է անւանաբար կութիւն առանց միջոցների խորութեան:

Մնամ «Մուրճի» համակրող և Զեր բարեկամ՝

ԼԵՒՈՒ ՄԸՆՍԻԵԼԵՍՆՑ

III

ՊԱՏԱՍԽԱՆ ԲՐՈՅԵԿԻՐԻ

Վերը մենք տպեցինք Թիֆլիսում ներկայ մեր մի խումբ աշխատակիցների մեզ ուղարկած գրութիւնները։ Մենք ուրախ ենք նոցանում արտալաւուած համոզմունքների և զգացմունքների համար և գիտենք նաև որ միան ստորագրողները չեն արդ համոզմունքների մեր նկատմամբ։ Սակայն թէ արդ գրութիւնը և թէ շատ ուրիշների բերանացի լորդորները՝ այլ ևս գլուխ չենել Վարդագարեանցի հետ, որպէս մենք կարծում ենք, մեզ սակայն իսպառ ազատ չեն կացուցանում պատառխանելու պարտաւորութիւնից այն անլուր մեքենայութիւնների դեմ, որ ան մարդը լարել է ուզում «Մուրճ»-ի դեմ, թէև նպատակները ակնկալտնի են ամենքի համար։

Մեր ընթերցողների վիշութեան մէջ անշուշտ թարմ մնացած կը լինի ան պատմութիւնը, որ ես արեցի «Մուրճ»-ի էջերում (№ 2) «Մի ընկերութեան սկզբի և վախճանի մասին, պատմութիւն թէ ինչպէս մեր կապիտալիստներից մէկը, «Մուրճ»-ին նիւթապէս օգնելու պարտակով՝ ինձ հետ նոտարական պալման է կապում։ թէ ինչպէս արդ անելուց չետո՞ւ անսպասելի կերպով երկան է հանում իւր թաքուն դիտաւորութիւնները՝ «Մուրճ»-ի խմբագրական գործի մէջ քիթ կոխել։ թէ ինչպէս՝ լուսահատւած, որ նրան արդ չի չաջողուամ իւր ոսկով ու արծաթով՝ առաջարկ է անում ինձ, որ պալմանաժամից առաջ պալմանաթուղթը պատռելու համաձանութիւն տամ, որ դորանով ինձ վախեցնէ, և թէ վերջապէս, ինչպէս ես տալիս եմ նրան իւր խողրած արձակման թուղթը։

Ընչից դրդւած ես արդ պատմութիւնը արեցի? Նորանից, որ, ինչպէս լիշում կը լինեն մեր ընթերցողները, իմ նախկին նոտարական ընկերը, առանց որ և է առիթի իմ կողմից, «Մշակ» ուս փետրւար ամսին նամակներ տպեց՝ ակնչալտնի դիտաւորութեամբ իւր խաղերը լրագրական էջերում փալեցնել, ինձ ու «Մուրճ»ին վեասելու համար։ Ասում եմ «խաղեր», որովհետև արդ «նամակների» ամենն մի տողը մի մի հարցական նշաններ էին, նշանակւած ոչ թէ մի բան դրականապէս ասելու, այլ ընթերցողների մէջ միմիան կամկածներ լարուցանելու։

Այդ խաղերի գէմն առնելու համար էր որ ես գրեցի «Մուրճ» № 2-ում՝ «Մի ընկերութեան սկիզբն ու վախճանը», Ազգակ մեր ընթերցողները պէտք է ճանաչին ան մարդուն, որը ինձ կամաւոր կերպով կպել էր և ոչ մի կերպ ինձանից վերջնականապէս պոկել չի ուղում:

Մի նոր ապացուց այդ բանիս պէտք է ծառաէ և մի բրոշիւր, որ ես ստանում եմ «Մշակի» համարներից մէկի հետ: Բրոշիւրը խորագրած է «Դմ պատասխան» «Մուրճի խմբագրին»:

Այս բրոշիւրը ոչ այլ ինչ է, եթէ ոչ սատանալութիւնների մի ստան: Սա ոտից զլուխ ստեր են, կամ խեղաթիւրութիւններ կամ ոչինչ չապացու: Սա ոտից զլուխ ստեր են, կամ խեղաթիւրութիւններ կամ ոչինչ չապացու: Կամ իրողութիւններ, իսկ առհասարակ՝ օդինքազութիւններ: Դորա հեցանազ իրողութիւններ, իսկ առհասարակ՝ օդինքազութիւններ: Դորա հեցանազ իրողութիւններ, իսկ առհասարակ՝ օդինքազութիւններ:

Բայց հա նաև այնքան լիմար է, որ չի մտածել որ այն, ինչ ուրիշ ները կը զլանան անել, ես կ'անեմ, և որ ես չեմ թողնիլ որ ստառ անարգել կերպով փողոցում շրջի:

Մի անազնիւ մարդու բոլոր քավերին հետեւելը գժւար բան է, որով հետեւ խարդախ բնաւորութիւնները իրանց խարդախութիւնը մտցնում են թէ ֆակտուրը պատմելու մէջ, թէ ոճի մէջ, թէ ուրիշների գրածը լետ ու առաջ դնելու մէջ, մի խօսքով ամեն աեղ:

Երբ որ ես մի քանի օրինակներով կ'ապացուցանեմ խարդախութիւնը, ան ժամանակ հասարակութիւնն էլ կը հասկանալ թէ ինչ մարդուն ես անազնիւ և խարդախ եմ անւանում:

Նա իւր բրօշիւրով ուզում է «Մուրճ» № 2-ում իմ պատմւածքը հերքել, և այդ առիթով նորանոր խաղեր է մէջտեղ գցել:

Նա գրում է հետեւեալ տողը:

«Դուք պահանջում էիք, և թէ միաչն ձեր գրածը ասեմ, 1500 ռուբլի կանխիկ փող և 1200 ռուբլու «Մուրճ»-եր ինձանից»:

«Բայց ինչո՞ւ էիք այսքան պահանջում ինձանից, եթէ, որպէս հաւատացնում էք ձեր ընթերցողներին, «Մուրճ» ի 1894 թ. դեֆիցիտն էիք պահանջում: Զէ որ 1894 թ. դեֆիցիտը, որպէս ցոյց տւիք մեր բաժանման վկաներին, 700 ռուբլի էր, և ես մեր նոտարական պալմանով պարտաւոր էի ծածկել միմիան դեֆիցիտը, այսինքն տալ 700 ռուբլի 1894 թ. համար»:

Այս միջանկեալ խօսքով «և թէ միաչն ձեր գրածը ասեմ», վկարդաղարեանցը ընթերցողի մէջ ուզում է կասկած լարուցանել, թէ երեխ Արասխանեանցը թէ 1500 ռ., թէ «Մուրճ» և թէ դորա հետ

միասին ուրիշ բաներ էլ է պահանջել: Ել ինչ եմ պահանջել—այդ մասին նա լռում է, չնայած որ մի ամբողջ բրոցիւր է հրատարակել լատկապէս ինձ պատասխանելու համար:

Համաձայնեցէք, որ նա այդ միջանկեալ խօսքը գրել է միմիայն մոլորենելու համար, քանի որ նա նոր ստեր պէտք է հնարի հակառակը պնդելու համար:

Թէ ինչ եմ պահանջել ես նրանից՝ մեր պահմանը քանդելու համար, և թէ Վարդաղարեանցը ինչ է պատասխանել—այդ բոլորը ասւած ու կատարւած է 6—7 հոգու ներկալութեամբ, որոնք և եղել են մեր բաժանման վկաները: Մեր բաժանման ուրիշ վկաներ չկան: Խոկ «Մուրճ»-ում այդ մասին ես գրել եմ այն, ինչ ես պահանջել եմ վկաների երկու ժողովշերում: Եւ այստեղ աւելի չեմ պահանջել, քան ինչ «Մուրճ»-ում գրել եմ: Ուրեմն խարդախութիւն է մի միջանկեալ խօսքով՝ կասկածներ արուցանել:

Ուրեմն դա մի խարդախութիւն:

Ներկրորդ, նա իբր թէ առաջ է բերում այն, ինչ ես գրել եմ: Այդ որ գրածի մասին է խօսում, այն նամակի մասին որ ես նրան գրել եմ, երբ ստացաւ նորանից բաժանելու առաջարկը, թէ այն «պատմութեան» մասին, որ ես գրել եմ «Մուրճ»-ի № 2-ում:

Նա այդ բաց է թողնում, ինչու որովհետեւ սատանաները պարզութիւն չեն սիրում:

Խոկ վկաների առաջ խօսածս և «Մուրճ»-ում նորութեամբ տպածս այս է: «Ես պատասխանեցի առաջարկով որ «Մուրճ»-ի 1894 թ. դեփիցիտի համար (Վարդաղարեանցը, պահմանի թուղթը քանդել ուզողը) երաշխառոր լինի (կամ կանխիկ դրամ տալ), բայց միան մինչ 1500 ռուբլու, հետեւապէս ետ ստանայ մնացորդը, եթէ դեփիցիտը պակաս լինի, խոկ աւելին համար նա պատասխանառու չլինի» (տես «Մուրճ» № 2, էջ 30):

Ուրեմն իմ պահանջածս անպալման 1500 ռ. չէր, այլ 1500 ռուբլու երաշխառութիւն: Այդ նշանակում է որ եթէ դեփիցիտը լինէր դեցուք 700 ռ., նա պարտաւոր չէր ինձ տալ 1500 ռուբլի, այլ միան 700 ռ.. եթէ դեփիցիտը լինէր 100 ռուբլի—նա պարտաւոր չէր տալ ինձ 1500 ռուբլի, այլ միան 100: Խոկ եթէ դեփիցիտը լինէր 1600, 2000, 2500 ռուբլի, նա պարտաւոր էր տալ զորանից միան 1500 ռուբլի և ոչ աւելի:

Խոկ Վարդաղարեանցը, որովհետեւ նպատակ ունի միմիայն մոլորենել հասարակութիւնը իմ անձնաւորութեան նկատմամբ, խարդախում է ալդտեղ ես, ինչպէս ամեն տեղ, և, փոխանակ ասելու որ իմ դրամական պահանջս եղել է մինչ 1500 ռուբլու երաշխառութիւն, նա ասում է թէ իբր ես ողահանջած լինեմ 1500 ռուբլի:

Ուրեմն նա խարգախում է իմ գրածաւ:

Բայց որովհետև Վարդաղարեանց միմիան խաղեր սարքող է, նա վաղը կասի թէ «եթէ միան ձեր զրածը ասեմ» խօսքերը չեն վերաբերում «Մուրճ»-ում գրածին և պաշտօնական ժողովներում տեղի ունեցած խօսակցութեան, այլ վերաբերում են պաշտօնական բաժանումից առաջ իմ գրած նամակին, ազմինքն այն պատասխանին որ ես տւի նրան, երբ նամակով բաժանելու առաջարկ սացացաց, Մութ մարդիկ պարզ խօսել չեն սիրում, և Վարդաղարեանց, իբր մութ անձնաւորութիւն, ամեն տեղ «կրիւչով»-ներ է թողնում որ խնդիրը նորից զարուցանելու նիւթ ունենալ Բայց իմ պատմածս վերաբերում է ժողովներում պաշտօնապէս առաջարկածիս, եթէ ճիշդ եմ պատմել «Մուրճ»-ում, ուրեմն ժողովներից առաջ գրած ոչ մի նամակով չի հերքվիլ «Մուրճ»-ում գրածիս ճշմարտութիւնը:

Խոկ եթէ նամակս էլ կցէք իմ արած պատմութեան, բաժանման պատմութիւնը կը լինի հետեւալը.

Ես, ենթագրելով որ գեֆեցիաը 1894 թ. եը լինի ոչ պակաս քան 1500 ու., նամակով առաջարկել էի տալ ինձ 1500 ռուբլի, պարտքս 3500 ռուբլու թողնել նոյնը, բայց ոչ 5 այլ 10 տարւակ ընթացքում վճարելու պարտաւորութեամբ:

Դուք պատասխանեցիք.թէ ժողովով էք ուզում բաժանելու. ուրեմն դուք ընդունեցիք իմ ալդ առաջարկը:

Ժողովում առաջարկեցի ոչ անպակման 1500 ռուբլի, այլ մինչ ադքանի երաշխաւորութիւն, և «Մուրճ»-ի աւելորդ համարները:

Դուք ալդ էլ չընդունեցիք:

Ապա, պատահած անցքերից լեռոտ ձեր հեռանալը անհրաժեշտ համարելով «Մուրճ»ի պատմի համար՝ հրաժարեցի նաև ալդ երաշխաւորութիւնից, պահանջելով միան «Մուրճ»-ի ը:

Սոքա են հղել իմ պալմանները:

Հերքւեց սորանով իմ արած պատմութիւնը?

Երրորդ, իբր թէ ես պահանջել եմ Վարդաղարեանից նաև «1200 ռուբլու «Մուրճ»-ի»:

Աթէ նա ասէք թէ ես պահանջել եմ իւր մօտ գտնւած «Մուրճ»-ի ը (ալսինքն աւելորդ մնացած օրինակները), դա կ'ասէի որ ճիշդ է և նամածան «Մուրճ»-ում իմ պատմածի հետ Բայց նա ասում է թէ իմ պահանջս եղել է «1200 ռուբլու «Մուրճ»-ի», և խարդախում է, երբ ես պահանջում էի «Մուրճի» աւելորդ մնացած օրինակները, ես մտածում էի միան այն բանի մասին, որ «Մուրճի» անցած երկու տարիները ձեռք բերել ցանկացողները ստիպւած չլինեն դիմել «Մուրճի» թշնամացած մի մարդու, ես չէի մտածում ալդ աւելորդ մնացած համարների քան ակի

մասին. աղ աւելորդ մնացածները լինէին 10 հատոր թէ 30—40—50 թէ աւելի հատորներ, միևնուն է—ես չեմ ուզիլ որ նոքա «Մուրճին» թշնամի մարդու ձեռքում լինեն: Ահա ինչու, երբ ես հրաժարւեցի դրամական երաշխատրութիւնից անդամ, ես այնուամենանիւ պահանջեցի «Մուրճի» աւելորդ համարները, չնակած որ աւք պահանջը, բնաւ կանխիկ դրամի արժողութիւնը չունէր:

Ես ոչ նամակով, ոչ բաժանուման ժողովներում չեմ պահանջել «1200 ռուբլու» «Մուրճեր»: ուրեմն, եթէ Վարդաղարեանդը պնդում է թէ իբրադի ես գրել եմ, դա պէտք է դրանենդութիւն լինի (աղողող): դա մի սուտ է:

Դա, ուրեմն, երրորդ զրաբարտութիւն:

Ես քննեցի ալղափիսավլ Վարդաղարեանցի դրած մէկ ու կէս տողը, և ցոյց տւի որ հէնց միան աղքանում երեք ստեր, զրաբարտութիւններ, մտքի խեղաթիւրութիւններ կան:

Վարդաղարեանց, չհամարձակմալով իմ ասածներս ուղղակի հերքել, աշխատում է իմ ասածիցս մի տեղ բառ դէն գցելով, միւս տեղ մի բառ աւելացնելով՝ կարծել տալ իւր բրոշիւրի ընթերցողներին թէ իբր իւր պնդածը նաև իմ ասածն է:

Դա սատանացութիւն չէ:

Վերը առաջ բերած տողերում նա ասում է նաև թէ իբր ես լայտնած լինում «բաժանման վկաններին» թէ «Մուրճ»-ի 1894 թ. դեֆիցիտն է 700 ռուբլի: Եւ աղ 700 ռուբլին նա հիմք է ընդունում իւր դասողութիւնների համար մի տասնեակ տեղ: Եւ աւելացնում է: «Ես (Վարդաղարեանց) մեր նոտարական պահմանով պարտաւոր էի ծածկել միմիան դեֆիցիտը»:

Կրկին աչքակապութիւն! Նթէ դուք պարտաւոր էիք ծածկել միմիան դեֆիցիտը, դուք պէտք է սպասէիք և 1894 թ. վերջում իմանակիք աչք դեֆիցիտի քանակը ու ըստ անոմ մնարէիք: Ֆակտը սա է, որ դեֆիցիտը Վարդաղարեանցի ինձ ներկայացրած հաշով, 1892-ին եղել է 2382 ռուբլի, 1893 թւականին մօտ 2000 ռուբլի: Եւ ահա այս թւանշանները ինձ ներկայացնողն է որ իւր բրոշիւրում (էջ 7) խրոխտաբար գրում է թէ «Ես կարող էի մի տարի ել մնալ հրաժարակից 700 ռուբլու և վնաս կրել բաց դորա փոխարէնը և ազն»:

Պարզ չէ արգեօք որ աղ տողերը գրելու ժամանակ նա գիտակցաբար բռնացել է իւր խղճի վրաց ։ Ես կեղծում է: Եւ աղ նրա համար ոչինչ, քանի որ իւր դիտաւորութիւնները թագցնելով, ուրեմն կեղծելով էր նա ինձ հետ նոտարական պահման կապել, որ չետու ինձ ոսկով գնելու փորձն անի ու «Մուրճ»-ի տէրը գտանալ ։ Կամ, եթէ այդ չաղողի իրան՝ հեռանակ թէկրազ պահմանաժամից առաջ: Նորա բոլոր գործողութիւնները խաղեր են եղել և այս բրոշիւրն էլ մի խաղ է, ուրիշ ոչինչ:

Բայց այս բրոշվարի մը առղն է ուղիղ և անխարդախ, Աս գրել էի ամսություն (№ 2 էջ 302), թէ «իս վճռել էի ազատւել նորանից առանց կոպէկ պահանջելու»: Այդ վճռել ես կաչացրել էի երբ տեսակ որ նոտարական ընկերոջս մնալը մեծ բարուական վնաս կը լինէր «Մուրճ»-ի համար: և աշդախուի մի վճռ ես կաչացրել էի, երբ իմ առաջարկու՝ մինչ 1500 ռուբլու երաշխաւորութեան մասին՝ նա մերժեց, հետեապէս բաժանման առաջին ժողովից, ուրեմն հոկտեմբերի 16-ից չետու: Եւ հոկտեմբերի 18-ի ժողովում ես չափանիցի իմ այդ վճռուը, խակ ալժմ, բրոշվարի հեղինակը՝ հոկտեմբերի 16-ից չետու իմ կաչացրած այդ վճռու ուղում է հերքել հոկտեմբերի 15-ին իմ գրած մի նամակով, և այն էլ այդ նամակի լոկ վերջին տողով, որով վկացում եմ թէ «ձեզ բարեկամ եմ եղել որպէս արամագիր եմ մնալու»: Դարանից, հոկտեմբերի 15-ին գրած իմ այդ նամակի մի տողովը, երբ զեռ բաժանման ժողովները չէինք ունեցել և չգիտէի թէ այդ մարդը մտադիր է «Մուրճ»-ին խօսապէս վնասին և ապահովութիւն չտալու, այդ մի տողովը, ասում եմ, նա հերքել է ուղում այն որ հոկտեմբերի, 16-ից լետու ես վճռել էի նրանից հեռանալ...

Նրկուսից մէկը, կամ նա լիմար է ձեանում կամ ընթերցողներին է վիմարժերի տեղ զնում:

Դա էլ ուրեմն մի նոր խարդախութիւն:

Խարդախս մտածողը, ասացի ես, ամեն տեղ խարդախութիւն կը մտցնի: Կամննալով «Մուրճ»-ին ել ու մուտքի մասին գաղափար ունենալ, չուլիսին 1891 թւականի ինձ հետ պալման կապել ցանկացողը հարցնում է, 'ի միջի ալոց, նաև թէ այդ 1891 թւականին ինչ է լինելու «Մուրճ»-ի ելքն ու մուտքը: Եւ ես ասում եմ նրան՝ թէ 297 բաժանորդից սպասում ես ստանալ 1780 ռուբլի, խակ ծախք նոյն 1891 թ. համար (բացի խմբագրի անձնական ծախքերից) սպասում եմ 2580 ռ. Եւ մի թղթի կտորի վրաէ զրում եմ այդ երկու թւերը, որ ալժմ վարդապարհանցը իւր բրոշվարում առաջ է բերում, իր վաստեր իմ գէմի Ամենքի համար պարզ է, որ տարւալ կիսում (կուլիսին) ոչ մի թերթի հրատարակիչ չի կարող իմանալ թէ որքան կորուստ է ունենալու ապառիկներից և որքան է լինելու ծախքի ծիչդ գումարը: Եւ որովհետեւ 1889 և 90 թւականներին «Մուրճ» ապառիկներից աննշան բան էր կորել, ուստի ես կատարեալ հիմք ունել նոյնը սպասել նաև 1891 թւականի համար, Աթէ ես ծախք նշանակում էի ամբողջ տարւայ համար՝ պարզ է որ նաև մուտք պէտք էր հաշւել ոչ միայն մինչ լուլիս ամսին ստացածը, այլ և ապառիկ մնացածը:

Բայց որովհետեւ չարդազարհանցը ամեն տեղ պէտք է խարդախու-

թիւն մտցնի, այդ պատճառով նա իւր բրոշիւրի էջ 9 լատնում է մի ալս-պիսի բան՝ «...դուք,... նոր էք շտապում ընթերցողներին ասելու որ ձեր ինձ ցուց տւած հաշիւը ձիշտ չէ եղել, որ ձեր ինձ ներկալացրած հաշփ մուտքը մուտք չէ եղել»։ Եւ էտոտք որովոր բաժանորդները ցուց էք տւել կ անթիկ և միմիաչն աչժմ էք շտապում ասել... որ «Մուրճ»-ը (լուլիսին 1891 թ.,) ուղարկում էր 285 հոգու վճարով կանխիկ և ապառիկ միասին»։

Ցուց տւեք այն գոկումէնտը, պարոն, որով գուք կարող լինէիք ապացուցանել, թէ 1891 թ. մինչ լուլիսը ապառիկ մնացածի մասին խօսք եղած չլինէր։ Իսկ ես միշտ պատրաստ եմ հաշէմատեաններս լանկացողների առջեր գնել և ցուց տալ որ 1889 և 1890 թւականների հաշփն մինչ տարւալիքները բոլոր ապառիկներից երկու տարւակ լնթ ացքում հազիւ մի 100 ռուբլի միավան չէր ստացւել և որ հետեապէս ես ամենաքոր խըզ ճով կարող էի ասել լուլիսին 1891 թ. թէ 297 բաժանորդից ես սպասում էի ստանալ 2780 ռուբլի։

Զարմանալու աղտեղ ուրեմն ոչինչ չկա։

Նա զարմանում է նաև, էջ 9, որ 1892-ին և 1893-ին ծախքը աւելի է եղել քան ան ինչ ես ցուց եմ տւել 1891-ի համար, և գորանից կրկին խարդախաբար եղրակացութիւններ է անում իմ դէմ։

Հասարակութիւնը մոլորեցնելու համար նա անդէմ է ձևանում և ասում է թէ տեսէք, տեսէք՝ Արասխաննեանցը 1891 թ. համար «Մուրճ» ծախք իրան, Վարդազարեանցին, ցուց է տւել 2580 ռ. իւր կազմած նախահաշուով, մինչդեռ 1892-ին և 1893-ին ծախքը աւելի գուրս եկաւ։ Իբր ուրեմն ես նորան մոլորեցրել եմ և նա սպասածից աւելի գեֆեցիաներ է կրել։ Նա ուրեմն կասկածի տակ է ուղում գցել իմ խղճի մաքրութիւնը, երբ ես նրան լուլիսին 1891 թւականի ասում էի թէ, իս նախահաշուով այդ 1891 թւականին «Մուրճ» ծախքը պիտի լինէր 2580 ռուբլի։

Խարդախը, նորից եմ ասում՝ ամեն տեղ խարդախ է մնում։ Նա անքան կուր չէ որ չկարողանակ տեսնել ան թիւը, որ գրւած է 1891 թ. «Մուրճ»-ի վերջին երեսի վրա և ալնքան սինհետաքրքիր չէ եղել որ այդ թիւը համեմատած չլինի 1892 և 1893-ին «Մուրճ»-երի տաղած երեսների թւերի հետ։ Նա անշուշտ հազար անգամ տեսած կը լինի որ 1891-ին տագւած է 1634 երես, հետեապէս դորս ծախքը աւելի սակաւ պիտի լինէր, իսկ 1892-ին տպւած է 1900 երես, 1893-ին 1972 երես, և որ հետեապէս այդ տարիներից ամեն մինում ծախքը գեթ մի հինդերորդականութիւնը գեթ 500—600 ռուբլով պիտի աւելի եղած լինի։ Իսկ վարդազարեանցին տակի լաւ քան մինչև անգամ ինձ լատնի է որ, օրի-

նակ՝ 1892 թ. եղել է ծախք (խմբագրի բաժնից դուրս) 3298 ռուբլի, ուրեմն մօտ 3300 ռուբլի, այսինքն 2580 (իմ ցոց տւած ծախքը 1981 թւականի համար) + 500 ռ. (այսինքն այդ 1892 ին ամելի տպածի ծախքը), որ անում է միասին 3080 ռուբլի. իսկ մեացած 200 ռուբլին երեխ զուցել է մի մեծ վեպ կամ «Մուրճ» աւելորդ համարներ իւր հաշվի արտասպառուց:

Ասացեք խնդրեմ, եւ սորանից պարող բան կարող է լինել, և որքան պէտք է մէկը խարդախ ոգի ունենալ, որ, առաջուց իման ալով աչս ամենը, լանգնի հրապարակ դուրս գալ և մեղաղաբներ բարդել մի մարդու վրայ, որը կարծել է թէ բարեկամ մարդու հետ է խօսացել նորա հետ պալման կապելիս? Եւ չէ որ, ինչպէս պատմել եմ «Մուրճ»-ում, մեր նախահաշիւը 1892 թւականի համար ես կազմում էի ոչ թէ 1891 թւականի տպած երեսների թվի հիման վրայ, այլ որ նախահաշւի հիմք ընդունւած էր ամսական 160 երես, ինչպէս որ եզաւ էլ? Չէ որ «Մուրճ»-ում իմ այդ մասին պատմածը վերաբերում է 1892 թւականի նախահաշւին և ոչ թէ 1891 թւականին և չէ որ իմ ասում «ինչ որ 3000 ռուբլին» 1892 ի նախահաշւին է վերաբերում?

Ուրեմն մի նոր խարդախութիւն ես, երբ նա (էջ 8) ասում է թէ այդ «ինչ որ 3000 ռուբլին» 1891 թւականի ծախքը պիտի լինել:

Կարելի՞ է արդեօք աւելի պարզ կայուցանել այն խարդախ ողին որ Վարդաղարհանց կոչւած կլեատովնիկը մտցնում է իմ մաքուր սրտով կազմած ամենաբարեխիզն հաշիւների ու նախահաշիւների մէջ?

Ես գրել էի «Մուրճ»-ում (№ 2, էջ 307) թէ Վարդաղարեանցը, առաջարկելով ինձնից բաժանելի, սկզբում՝ ուզում էր միան ինձ վախնցնել, և որ նորա խելական միտքը այն է եղել որ, զգացնել տալով իմ անապահովութիւնը՝ ստիպէ ինձ նոր պահման կապել իւր հետ ինչպէս ինչքը կ'ուզելու:

Ես պատմել էի որ, իրօք, երբ մենք բաժանեցինք իւր ցանկացած ձեռլի ալսինքն անովէս որ 1894 թւականի համար ապահովութիւն չըստացաւ, նա արդէն իւր սկզբնական դիտաւորութիւնը ուզեց ի կատար ածել՝ առաջարկելով ինձ նոր պահման կապել հետը: Ահա այդ բանն է որ ես աներեսութիւն էի անւանել:

Իւր բրոշւրի էջ 8 նա բարւոք է համարում բողոքել այդ իմ ասածների դէմ: Ելքի նա այդպիսի դիտաւորութիւն չի ունեցել: Բայց տեսէք թէ ստախօսը ինչպէս շուտ է բանւում, որ ինքը իւր բրոշւրի էջ 13 հաստատում է իմ ասածը: «Ես կրկին «Մուրճ»-ի մասին էի հոգում և այն ժամանակ — բաժանակը ամառա ան և կ լուց չետուք — 93 թ. հոկտեմբերին, երբ

առաջարկեցի թէ կը դառնամ նորից հրատարակիչ, միայն այն պալմանով, որ...» (անշուշտ այն պալմանով, որ ինքը իրաւունք ունենալ իմ գործերի մէջ քիթ կոխել):

Տեսէք, խնդրեմ, աղպիսի խոստավանք անողը մի քանի էջ առաջ ինչպիսի բացադանչութիւններ է անում:

«Նոր պալման ող. Արասլաննեանցի հետ... ոչ, ող. Արասլաննեանց, ես ձեզ հետ մի անգամ արդէն պալման եմ կապել, թող հիմի ուրիշները կապեն... թէև իմ թշնամիներին անիծելիս էլ չեմ ցանկալ այդ»: Եւ կետով. «Բայց դուք, որ աղքան ախորժում էք հաւատացնելու թէ ես (Վարդաղարեանց) կուզենակի նորից արժանանալ ձեր ընկեր լինելու, նոր պալման կապել...»:

Իբր թէ ուրեմն, միայն հնարում էի, երբ գրում է «Մուրճ»-ում թէ նա նպատակ է ունեցել՝ պալմանը խախտելով, ինձ ննդը գցելու ոգտու լով դորանից՝ ինձ պալմաններ թելադրելու...

Ես ասում եմ ոչ թէ փոխաբերական կամ չափազանցրած մտքով այլ բառացի համկացէք այս իմ խօսքը՝ որ այս ամբողջ բրոշները մի կեղծիք է, կեղծիքների մի ոստանն Մի կեղծիք է նորն իսկ նորա աչ խօսքը (էջ 14) թէ իբր ես իրա, Վարդաղարեանցի մասին որ և ից մէկին գրած լինեմ թէ «ու մոյ սովոր այս ամսանափակ գլուխը՝ պարծենալ ամննքի առաջ»: Իբր տեսէք որ Արասլաննեանցը իրա՝ Վարդաղարեանցի՝ մասին այնքան բարձր կարծիքի է եղել որ ասել է՝ «ինձ հետ համաձան է իմ խմբագրական բարեկամը»: Որքան պարծենկոտութիւն, բայց և որքան ամօթանք (եթէ միայն երես ունի ամաչելու) նորա համար, եթէ լայտ նելու լինեմ որ այդ էլ մի կեղծիք է:

Եւ ահսէք թէ որքան մեծ է այդ մարգու լանդզնութիւնը, որ նա, սուտը ասելուց լնտով, դեռ պնդում էլ է թէ «փառք Աստուծոյ, այսօր էլ մնում են ձեր (այսինքն Արասլաննեանցի) գրած այդ տողերը»: Ուրեմն իբր թէ դորանակ նա ինձ զինաթափ արաւ! Հրավիրում եմ Վարդաղարեանցին տանել այդ նամակը ցոյց տալ «Մշակի» խմբագրութեանը, որը տարածել է նորա բրոշները: Թող ուրեմներն էլ տեսնեն ձեր սոտիսութիւնը: Այդ նամակում չեն գտնիլ խօսք Վարդաղարեանցի մասին և ոչ էլ Վարդաղարեանցի առաջ բերած Սոմոյ սովոր այս ամսանափակը լինեմ լուսականութիւն!

Երբ ընթերցողը իմ ակս մի քանի բացատրութիւնները կարգացած կը լի-նի, նա անշուշտ կը հասկանակ թէ ինչ մտաւոր և բարողական ավանդակութիւնն է ներկալացնում իրանից՝ իմ գէմ լրազրական էջերում և բրոշիւրով կուեկու չանդպնողը. նա կը հասկանակ նաև թէ՝ երբ տպագրական խօսքով մի մարդ աչղքան և աչղքան իրողութիւններ է խարդախում և աչղքան չանդուգն է, ապա սովորական բերանացի չարաբերութիւնների մէջ ինչ բաներ կարող էր իրան թուլ տալ! Ես միանգամացն իմ պատւից առոր և մամարում որ և է խօսք անգամ աւել բրոշիւրի այն տողերի մասին, որոնք իբր թէ գաղտնիքներ են չափանում իմ խմբագրական դործունէութիւնից:

Նա ուզեց իւր բրոշիւրով «Մուրճ» № 2-ում իմ պատմածների ձըշմարտութիւնը կասկածի ենթարկել. բայց հասաւ միաչն այն բանին, որ տեղիք տւեց ինձ իւր խարդախ ողին աւելի պարզ կացուցանելու հասարակութեան:

Ես իմ հաշիւը աչղ խարդախ մարդու հետ աչժմեանից արդէն վերջացած եմ համարում:

Ի վերջու ներողութիւն եմ խնդրում «Մուրճ» ընթերցողներից որ ես մի երկրորդ անգամ նոցա զբաղեցրի մի անձնական խնդրով: Բայց լուսով եմ որ նոքա կը համաձայնեն հետո՝ որ ակս անձնական խնդրի պարզելու հետ կապւած են նաև բարողական շահեր, որոնք ոչ միաչն անձիս են վերաբերում, այլ և «Մուրճ»-ին ու մեր գրականութեան պատվին առհասարակ:

Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐՆՈՒ ՄԱՀԸ: — ԿԱԶԻՄԻՐ ՊԵՐԻՔ: — ՄԻՆԻՍՏՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ

Այս տողերը գրելու րոպէին ամբողջ լուսաւորւած աշխարհքը
բռնւած է մի զգացմունքով, որը մի առժամանակ չետ է մղում
բռլոր քաղաքական խնդիրները, — դա է՝ ֆրանսիական հանրապե-
տութեան նախագահ Սադի Կարնո'ի սպանումը Լիոն քաղաքում,
մի երիտասարդի՝ իտալացի Կեզարիօ'ի ձեռքով, մեր հին տոմարով
14-ն յունիսի (26-ն յունիսի նոր տոմարով): Այս դէպքը ինքն ըստ
ինքեան չի կարող մեծ քաղաքական անցք համարւել, այն
մոքով որ այդ եղեննազործութիւնը ազգեցութիւն գործի ֆրան-
սիացի մանաւանդ արտաքին քաղաքականութեան վրայ: Բայց վա-
ղաժամ անհետանալը այս կեանքից մի քաղաքական անձի, որը
իւր հայրենիքի ամենայարգւած մարդկանց թւին էր պատկանում
և որը, որոշ րոպէներում, կարող էր իւր անձի վրայ դարձնել իւր
հայրենակիցների հանգին մեծամասնութեան վստահութիւնը, — այդ
արդէն մի ազգային կորուստ է, արժանի որ ողբացւի ամբողջ լու-
սաւոր աշխարհից:

Սադի Կարնօ պատկանում էր պատմական Կարնօների սերնդին.
Նորա պապը «չաղթութիւնների կազմակերպող» անունը վաստակած
հանրապետական մինիստր էր անցեալ տարու յեղափութեան տա-
րիներում, հայրը՝ հրապարակախոս և պետական անձն և 1848 թւա-
կանին՝ հանրապետութեան մինիստր եղած կարճ՝ ժամանակով: Սա-
դի Կարնօ, ծնւած 11 օգոստոս, 1837 թւականին Լիմոժ քա-
ղաքում, ուսումնով ինժենէր, 1871 թւականից սկած միշտ լնուր-
ւած իբր անդամ պատգամաւորական ժողովի, 1880—1881 թթ.

մինհստր հասարակաց աշխատութիւնների, 1885 ֆինանսների մինհստր. և 3-ն դեկտ. 1887 թւականին ընտրւեց նախագահ Փրանսիական հանրապետութեան՝ հրաժարականը տւած Ժիւլ Գրեւիի տեղը:

Կարնօ՞ն նախագահական ընտրութիւններին, 1887 թւին, ոտացաւ 616 ձայն, ընդդէմ 217 ձայների, որոնք արւեցին գեներալ Սոսիե՛ին (118), Ֆերրիին և Ֆրէչսիներին: Ընտրւած լինելով եօթ տարով՝ ներկայ 1894 թւականի վերջը լրանում էր ժամանակամիջոցը, բայց ամենահաւանական կանդիդատը նախագահութեան համար՝ կրկին ներկայանում էր նա ինքը:

Կարնօ՞ի իրը նախագահի ամենամեծ վաստակը այն էր որ նորա ժամանակ Ֆրանսիան վերջնականապէս բռնեց իրան վայել զիրքը եւ բարակական մեծ պետութիւնների մէջ, իւր անձնական արժանիքներով այլ պետութիւններին վատահութիւններշնչելով դէպի ֆրանսիական քաղաքականութիւնը:

Ներկայում, Փրանսիական պարլամէնտի երկու մարմինները՝ սենատը և պատգամաւորների ժողովը, գումարւած միասին կոնգրեսին՝ հանրապետութեան նախագահի նոր ընտրութիւն կատարեցին: Ընտրւածն է Կազիմիր Պերիէ, նա ինքը որ այս մայիսին հրաժարական տւեց մինհստր-նախագահութիւնից և որը մինհստր լինելուց առաջ և մինհստրութիւնը ժողնելուց յետոց՝ ընտրւած էր նախագահ պատգամաւորների ժողովի: Պերիէն, նման Կարնօ՞ին, պատկանում է պատմական հանրապետական սոհմի. Նորա պապը 1831 թւականին մինհստր-նախագահ եղաւ, հայրը՝ մինհստր էր 1871—1872-ին: Պերիէն ընտրւեց նախագահ հանրապետութեան 451 ձայնով (851 ձայններից) նոյն իսկ առաջին քւէով: Այդ առիթով կարող ենք յիշեցնել որ հանգուցեալ Կարնօն 1877-ին ընտրւեց ոչ առաջին քւէով, երբ նա կանդիդատ չէր, այլ երկրորդ քւէի ժամանակ: Պերիէի ընտրութիւնը և ապասելի էր, և յաջող:

Այս վերջին ամսում մի քանի երկիրներում մինհստրական ճգնաժամեր եղան՝ Ֆրանսիայում, Խտալիայում, Աւնգարիայում, Բոլգարիայում, Սերբիայում: Դոցանից Խտալիայում և Աւնգարիայում գարիայում, Հանրապետութեան հանրապետութեան մինհստրութիւններին փոխարինեցին նոր մինհստրական տւած մինհստրութիւններին նոր մի-

Նիստութիւններ, բայց առաջւայ մինիստր-նախագահներով. այդպիսով Կրիստին մնաց Խաղաքում, Վեկերլէ՝ Անգարիայում: Ֆրանսիայում Կազեմիր-Պերիէի մինիստրութեանը յաջորդեց Դիւլիւլինի մինիստրութիւնը: Դիւլիւլին, Կարնօի անձնական բարեկամը, մինիստր-նախագահ էր Պերիէի մինիստրութիւնից առաջ:

Նոր մինիստրութիւնը կազմեց մայիսի 18. ին: Այդ նոր մինիստրութեան անդամները ահազին մեծամանութեամբ նոր և զեռ անփորձ մարդիկ են: Նոր մինիստրութիւնով ծրագիր չի փոխւում, և Պերիէն թողեց մինիստրութիւնը՝ դրեթէ կամովին, մի չնչին առիթով:

Հաստ աւելի խոշոր քննաւորութիւն է կրում մինիստրական փոփոխութիւնը Բոլգարիայում, ուր Ստամբուլով, որ մինիստր-նախագահի կոչումով իսկական դիքտատորութիւն էր անում Բոլգարիայում, իշխան Ֆերդինանդին ստիպւեց իւր հրաժարականը տալ որ և ընդունեց: Ստամբուլով խաղացել է Բոլգարիայում ամենաառաջնակարգ դեր և նորա անձի հետ է զլիսաւորապէս կապւած Բոլգարիայի ներքին և արտաքին քաղաքականութիւնը այս վերջին 7—8 տարիներում: Ստամբուլովի տեղը իբր մինիստր-նախագահ այժմ նշանակւած է, 21-ն մայիսից, Ստոիլով, որի մինիստրութեան մէջ մասել են ցայֆմ ընդդիմադիր կուսակցութեան կարևորագոյն քաղաքական անձերը:

Z.

ԶԱՆԱԳԱՆ ԼԱՒՐԵԲ

ՍՈՎ.Բ. Նորին Վեհափառութիւն Կաթողիկոսը ստացած է ներքին գործոց պ. Տախարարից, թւագրած 29 ապրիլ 1894 թ. համարով 2226 հետևեալ զրութիւնը.

«Թագաւոր Կայսրն ընդունել է Վեհափառ Հայրապետի միջնորդութիւնն և բարեհաճել է թող առաջ կամաւոր նւէրների հանգանակութիւնն անել Ռուսիայի հայոց թիմերի մէջ, ի նպաստ Թիւրքիաքնակ և Երիանի նահանգում բնակող սովատանջ համերին»:

Ցայտոնելով այդ մասին, «Արարատի» մակիով տեսրում Վեհափառ Հայրապետը ըստ է լամսում առ, այս Բարձրագոջն թուլուտթիւնից լեռու բարեպաշտ հայ հասարակութիւնը ջերմ եռանդով կը շարունակէ օգնութիւն հասցնել իւր սովատանջ հայենակիցներին»:

**ՅՈԳՈՒՏ ՍՈՎ.ԵԱԼ.ՆԵՐԻ ԱՄԱՐՁԻ» անցեալ № 4-ում հրատարակւած առաջին ցուցակով գուցացած գումարն էր զրամով 38,500 ռ. 29 կ.
ալիւր 600 պուդ.
ցորեն 250 »**

Յ Ո Ւ Ց Ա Կ Ե Բ Կ Ր Ո Բ Դ

1.	Մուկւալից. եղբ. Ժամհարեաններից, Վեհ. Կաթուն 1500 ռ.	կ.
2.	Արմաւրից, պ. Յովհաննէս Թողոսեանի ձեռքով Վ. Կ. 1600 »	»
3.	Շուշուց, պ. Թաղէսս Բարակեան Թափիրեանից Վ. Կ. 500 »	»
4.	Մուկւալից, պ. Գէորգ Քանանեանից, վերատեսուչ Լազարեան Ճեմարանի, Վեհ. Կաթուն 200 »	»
5.	Մողղոկի հասարակութիւնից, պ. Ս. Գեանչումեան-նի ձեռքով, Վեհ. Կաթուն 200 »	»
6.	Պետիգորսկից, պ. և ա. Դ. Աւենիկիանից, Վ. Կ. ին 200 »	»
7.	Եկատերինոսպարից, պ. Մ. Շահրազ Մ. Մինասեան Վեհ. Կաթուն կոսին 120 »	»
8.	Մողղոկեցի Յովհ. Գեանջումեան, Վեհ. Կաթուն 100 »	»

9.	Վաղիկաւկազի հայ երիտասարդութիւնը վ. կ. ին	243	"	"
10.	Եկատերինողարի հայ կանաչք, վ. են. կաթող. ին	243	"	"
11.	Եւպատրիալի հայ հասարակութիւնը, վ. են. կ. ին	100	"	"
12.	Թիֆլիսից, պ. Ալէքս. Արամակլիխեանց, վ. են. կ. ին	100	"	"
13.	Եւպատրիալից, պ. Յակոբ Սեփերեան, վ. են. կ. ին	100	"	"
14.	Աստրախանից, տ. Կատարինէ Զանումեան վ. են. ին	100	"	"
15.	Հին-Նախիջևանից, պ. պ. Վարդան և Սիմօն Պօ- ղոսեան, վ. են. կաթողիկոսին . . .	100	"	"
16.	Դուխուց, պ. Ցովհաննէս Բուճիաթեանց, վ. են. ին	100	"	"
17.	Նոր Նախիջևանից, պ. Յար. Խօջանեանց, վ. են. ին	60	"	50
18.	Փոթիում հանգանակւած պ. Ա. Թիւրքեանի ձեռ- քով, վ. են. կաթողիկոսին . . .	49	"	"
19.	Սալիանում, հանգանակւած բժ. Մ. Արամեանի ձեռքով, վ. են. կաթողիկոսին . . .	52	"	"
20.	Թիֆլիսից, պ. Միք. Ղուլիջանեան, վ. են. կաթ. ին	45	"	"
21.	Եկատիրինողարից, պ. Կարապետ Մ. Թամազեան վ. են. կաթողիկոսին . . .	25	"	"
22.	Գուբանից, պ. Ա. ազ. Ասրինեան Տէր-Եղիազարեան, վ. են. կաթողիկոսին . . .	25	"	"
23.	Շուշուց, պ. Մ. Գեանջեանեան և Մ. Դանիելեան, վ. են. կաթողիկոսին . . .	50	"	"
24.	Եկատիրինողարից, պ. Ա. Քամբիկեանի ձեռքով վ. են. կաթողիկոսին . . .	15	"	"
25.	Նոր-Նախիջևանից՝ ուսուցիչներ, վ. են. կաթող. ին	40	"	30
26.	Մոսկւակի հայ հասարակութիւն, Մ. Շահազիզեանի ձեռքով, վ. են. կաթողիկոսին . . .	1000	"	"
27.	Մոսկւակի հայ հասարակութիւն, Մ. Շահազիզեանի ձեռքով, Երևանի Բարեկործ. Ընկ. ճիւղին	1000	"	"
28.	Մոսկւակից, տիկ. Պ., վ. են. կաթողիկոսին . . .	300	"	"
29.	Մոսկւակից, Մ. Զանումեանց, վ. են. կաթ. . .	600	"	"
30.	Ղզլարից, հանգանակութիւն Գէորգ քահ. Մկրտչ- մեանի, տիկ. Ե. Խղմիրեանի և պ. Ղ. -Միշվէ- լեանի վ. են. կաթողիկոսին . . .	1500	"	"
31.	Իշխան. Մարիամ Բէկթաբէգեան և Աննա Զիթա- իեան քույրեր, վ. են. կաթողիկոսին . . .	1000	"	"
32.	«Մշակ» լրագրին մայս ամսուակ ընթացք. ուղարկ.	1478	"	"
33.	Հայոց Բարեկործ. Ընկեր. Կարսի ճիւղը ապրիլին ստացել է դրամով . . .	105	"	"
34.	Մ. Զանումեանց:	600	"	"

35.	Հալոց Բարեգործ. Ծնկեր. Խորհուրդը, սովետակաների օգտին ապրիլի 21-ին տուած ներկալացումից.	1326	"	40	"
36.	Թիֆլիսից, Կենդրոնակ. գրավաճանոց. Վեհ. Կաթ.	100	"		"
37.	Օղեսասի հասարակութիւնը, ապրիլին, Նոր Բայա- զէտի Հ. Բարեգործ. Ծնկ. Ճիւղին	168	"		"
38.	Եւպատորիալի հայ հասարակութիւն, Վեհ. Կաթող.	235	"		"
39.	" Յ. Սեփերեան, Վեհ. Կաթողիկ.	100	"		"
40.	Հաշարխանից, հանդանակ. Յ. Գ. Բունիաթիւանցի, բժ. Առաջամեանցի և Ա. Սեբեբուկեանի 2500	2500	"		"
41.	Նովոչերկասկի հայ հասարակութիւն Վեհ. Կաթո- ղիկուին, «Արձագանքի» միջոցով	100	"		"
42.	Եկաղերինողարից, հայ և լոյն գաղթականներ, Վեհ. Կաթողիկ., «Արձագանքի» միջոցով 25 " 90 "	25	"	90	"
43.	Թիֆլիսի թեմական առաջն. միջոցով, Վեհ. Կա- թողիկուին ուղարկելու				
ա.	Հանգանակութեամբ Թիֆլիսի եկեղեցիների ծխա- կանների մէջ (բացի «Մուրձ» № 4-ում լիշտածներից)		54	"	"
Ծխականներից Ս. Նշան եկեղեցու.		312	"	50	"
» Եջմիածնեցոց եկ.					
» Մողնու Ս. Դէորդ եկ. (Երկրորդ տու- մարով, Ա. Յովհաննիսեանի և Վար- դապետանի ձեռքբոլ)		214	"		"
» Կաթողիկէ եկ.		47	"		"
» Շամբորիցոց եկ.		108	"	50	"
» Կուկիոլ Ա. Առուածածին եկ.		56	"	70	"
» Թանդուեց Ա. Աստւածածին եկ.		30	"		"
» Բեթղեհէմ եկ.		180	"	40	"
բ.	Գործակալութիւններից.				
Զաքաթալի		304	"		"
Գանձակի		704	"	17	"
Դուշէթի		127	"	17	"
Սղնախի		426	"		"
Քութափակի		200	"		"
Ղազախի բ. մասից		252	"	60	"
Շահագնու		72	"	10	"
Շուլավերի		66	"	97	"
Քարվանսարակ գիւղից		13	"	20	"
Անանուր գիւղից		27	"		"
գ.	Հանգ. Թաղ. Վարդապատրիկեանի ժառանգներից	205	"		"

- գ. Թիֆլիսի մեշտանների վարչութիւնից 500 » — »
 ե. «Ղոր.Դար»ի խմբագլութեան միջոցով 122 » .
 90 կ.և 216 ռուբլի 338 » 90 »
 զ. Գունձակի հալ ուսանողներից 28 » — »
 44. Բարեգործական Ընկեր. Ալեքսանդրապոլի ճիւղը,
 բացի այն գումարներից, որ նա ստացել է
 Ծնկերութ. կենարունից (1300 ռ.), Վեհ. Կա-
 թողիկոսից (500 ռ.) և «Մշակ»ի խմբագրու-
 թիւնից (468 ռ.), և որոնք ուրեմն մտել են
 «Մուրձ»ի վիշտակւած գումարների մէջ,
 ստացել է մինչ լուսիսի սկիզբը այլ նվիրա-
 տուններից 1317 » 69 »
 (որի մէջ են ալեքսանդրապոլիցի Յար. Վարդ.
 պատրիկեանից ստացած 200 ռ. և արմաւիր-
 ցի ԱԼ. Տարասովից ստացած 100 ռ.),
 45. Մոսկավից՝ տ. տ. 0. Աճեմեանի և Ս. Ներսէսեանի
 ձեռքով հանգ., Հ. Բ. Ծրբանի ճիւղին 424 » »
 46. Բաքւից Բելիքիեանց, Հ. Բ. Ծնկ. Ծրբանի ճիւղին 100 » »
 Ն. ՄԵԾ. ՌՈՒՍՍԱՅ ԿԱՅՍՏՐՈՒՀԻՆ, Մեծ իշխանուհի Կսենիա Ալեքսանդ-
 րովնակի և Մեծ իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչի հետ մական-
 ի 13-ին ժամանեց Բաթում, իսկ ապա այնտեղից ուղևորւեց
 Աբասթուման Խոր որդի Մեծ իշխան Գէօրգի Ալեքսանդրովի-
 չին ալցելելու Յունիսի 12-ին Նորին Մեծութիւնը ճանապարհ-
 ընկաւ դէպի Պետերբուրգ:
- ՔԱՀԱՆԱՑԱԿԱՆ ԽՆԴԻԲ:** Քահանացական խնդրին վերաբերեալ ներկաչ
 համարում տպւում են մեր աշխատակից պ. Գր. Վանցեանի
 «Օրէնք և Կազմակերպութիւն» լոգւածը և Արսէն վարդապետ
 Վլտանեանի մի լոգւածը Ախալքալաքի գործակալութեան քա-
 հանաների մասին. Մի առանձին լոգւածում մենք, նոյն խնդ-
 րի վերաբերմամբ, պիտի ջանանք ինկատի առնել «Մուրձ»ում
 երևեցած թէ ինքնուրուն և թէ այլ թերթերից արտասպաւած
 լոգւածները:
- Այս անգամ առանձին ուշադրութիւն ենք դարձնում պ.
 Վանցեանի լոգւածի վրաէ, ուր արդարացի կերպով խիստ պա-
 հանջ է դրում՝ մեր հոգեսոր վարչական գործերի կառավարու-
 թեան մէջ մտցնել խիստ կանոնաւորութիւն և սահմանադրա-
 կան ոգի, աչինքն օրէնքներ և նոյն դործադրելու համար
 համապատասխան կազմակերպութիւն. Միան թէ չենք կարող
 չնկատել, որ լոգւածագիրը, թէն միան տեղ-տեղ, շատ է շեշ-

տում հոգեորականութեան դասակարդալին բնաւորութեան վրայ նմանեցնելով նորան վանական նեղ միաբանութիւններին: Մինչդեռ հոգեորականութիւնը, օգտաւէս լինելու համար միաբանական նեղ սահմաններից շատ աւելի հեռու հորիզոն և և ոտքերի տակ աւելի խորը հիմքեր պիտի ունենա:

Այս տեսակէտը աական չի մըստում լողւածի ամբողջութեանը, որովհետեւ ուս հայեացքի վրա չեն հիմնւած լողւածի կարեորագուն մոքերը

ՍԻՄՈՆ ԲԵՅ ՄԱՔՍՈՒՏԻ: Ոէլոտէրի հեռակարական գործակալութիւնը հեռագրել է հետեւալը, «Ղալաթիալի մի նշանաւոր հայ Սիմէռն բէ՛ Մաքսուտի վրաց փողոցում երեք մարդ լարձակւեցին նորա վրայ ատրաճանակ արձակելով և զաշոնի հարւածներ տալով: Յարձակւողներից երկուսը ձերբակալւած են: Եթին իրանց արարքի շարժառիթ՝ նոքա առաջ բերին թէ Մաքսուտը գաւաճան է հանդիսացել հայոց գործի վերաբերութեամբ, անընդհատ զիջումներ անելով կառավարութեան ի վեաս հայոց իրաւունքների»:

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԴԻ ԱԶՆԻԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒՐԻ լուսիսի 1-ին փոխանակ իւր ծառալութեան ժամանակը լրացած իշխ. Մաղալովի, բազմութեամբ 144 ձանի ընդդէմ 63-ի ընտրւեց նորին Մեծութեան պալատի եղերմէլստէր վրացի իշխան կոնստանտին Բագրատիոն-Մուխրանսկից ազնւականների նախկին առաջնորդ իշխ. Խւանէ Մուխրանսկու որդին:

ԹԻՖԼԻՍԻ ԱԶՆԻԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԼԻԱԾԱԿԱՆ ԲԱՆԿԻ ընդհանուր ժողովները, որ տեսեցին երկու շաբաթ, մասնակցութեամբ աւելի քան հազար հոգու, վերջացուն 25 մայիսի վերընտրութեամբ ցավճմեան կառավարիչ իշխան Խլիւ Ճաւառաւածէի, որ և միւս կ թեկնածուն էր: Ընտրւածը ստացաւ 989 ձան, ընդդէմ 334 ձանի: Բանկը ունեցել էր անցնալ հաշվարտակ մէջ 173 հազար ռուբլու զոտ օգուստ:

ՄԱՄՈՒԼԻ: Պոլսում հրատարակուղ «Աւետաբեր» շաբաթաթերթը, կառավարութեան կարգադրութեամբ դադարեցրած է՝ սովի մասին խօսած և այդ նպատակով գրամական նւէր ստացած լինելու պատճառով:

«ԿՈՎԿԱՍԻԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ» (Կավազսկое Сельское Хозяйство) շաբաթաթերթ «Մուրճ» 1893 №№ 10 և 11 հազորգած էր որ կովկասեան գիւղատնտեսական Ծնկերութեան նախկին օրգանը, որ ամսական տեսլուների ձեռով էր լուս տեսնում, վորսարկեց շաբաթաթերթի և կանոնաւորագէս պիտի ոկտէր հրատարակ-

ւել, երբ ընկերութեան առաջարկութեամբ մէկը հաստատէր իբր պատասխանատու խմբագիր: Նաբաթաթերթ հրատարակելու առաջարկը եղած էր ընկերութեան անդամ պ. Գր. Վերմիչեանի կողմից, որին և լանջնուեց թերթի խակական խմբագրութիւնը, թէն պատասխանատու (անւանական) խմբագիր հաստատւած էր պ. Ալ. Քալանթար: Ներկայ մաշիսին սական ալ, Վերմիչեանը հրաժարւեց խմբագրութիւնը վարելուց, իւր համար անհնարին գտնելով աշխատել ստեղծւած անորոշ զրութեան մէջ, քանի որ ինքը խակական խմբագիրն էր առանց խմբագրի պաշտօնապէս հաստատւած իրաւունքի, միւսը՝ պաշտօնապէս ճանաչւած խմբագիրն է առանց խակական խմբագրի աշխատութեան, և չգիտէ թէ որ մէկն է թերթի տէրը՝ Ընկերութեան ընդհանուր ժողովը, թէ նորա խորհուրդը, թէ պատասխանատու խմբագիրը թէ, վերջապէս, խակական խընթագիրը:

Գիւղատնտեսական Ընկերութիւնը չպէտք է թող տաէ որ շարունակւի մի ազգպիսի դրութիւն: Մեր կարծիքավ բոլորվին անիրաւացի է և վեասակար բաժանել խմբագրութիւնը: Հաստատելով մէկին իբր պատասխանատու, ալոինքն լոկ անունով խմբագիրն և անձնելով խակական խմբագրութիւնը մի ազ անձի, սական առանց կոչումի, հետեւապէս և առանց պատասխանատութեան: Ազդ երկու կոչումները պէտք է միացած լինեն մի անձի մէջ: Եթէ մի անձի հաւատում էք խակական խմբագրութիւնը, առաջարկեք կառավարութեանը որ նա հաստատի նաև իբր խմբագիր լի, որը ինքնի ըստ ինքեան հասկանալի է, որ կը լինի նաև պատասխանատու խմբագիր:

ԹԻՖԼ. ՔԱՂԱՔ. ՓՈԽԱԳ. Ա.ՊԱՀ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ: Մեր խմբագրութեան մէջ օրերս ստացել է կրակից փոխաղարձ ապահովացնող Թիֆլիսի Ընկերութեան 1893 թւականի տարեհաշիւը, որից երեսում է, որ ընկերութիւնը 1893 թ. տարեշրջանում շատ սակաւ արդիւնք է ունեցել, (ալոինքն 1150 ռ. 34 կ.): Ազդ ստացած փոքրիկ արդիւնքի պատճառը այն է եղել, որ ընկերութիւնը, հորժիւ երկու հրեհների, վճարել է իբրև վարձատրութիւն վեասի փոխարէն 8,469 ռ. 27 կոպէկ:

Եթէ ընդունենք, որ հրեհն չպատահէր, և ընկերութիւնը չկրէր վեաս, ուրեմն ընկերութեան պահեստի գումարը, որ առ 1-ն լունարի 1893 թ. 20.869 ռ. էր, կաւելանար 8619 ռ. 61 կոպէկով, մինչդեռ առ 1-ն լունարի 94 թ. ազդ գումարը հասնում է միան 22019 ռ. 85 կոպէկի, որ ասել է 93 թւականի արդիւնքը կազմում է 1150 ռ. 34 կոպէկ:

Ընկերութեան գործունէութիւնը 93 թ. չամենակն գէպս կարելի է բաւարար համարել ան մտքով, որ 93 թ. ընթացքում ընկերութիւնը նորից ձեռք է բերել 567.950 ռուբլու կաչքերի ապահովագրութիւն, մինչդեռ նոյն թւականին դադարեցրել են կաչք ապահովացնելուց 19 կլինիաներ 167.650 ռարժողութեամբ և բացի աց՝ 8 կլինիաներ նւազացրել են իրանց կաչքերի ապահովացման գումարից 92.200 ռուբլու չափ ապահովագրութիւն։

Ալսպէս ուկեմն 93 թ. տարեշրջանում ընկերութիւնը նորից ձեռք է բերել 410.450 ռուբլու արժողութեամբ կաչքերի ապահովագրութիւն, որից եթէ դուրս գանք 8 դադարեցրած կլինիաների 92.200 ռուբլու չափ ապահովագրութիւնը, կը հասարկի 318.250 ռուբլուն։

Մի ահագին քաղաքի համար, ինչպիսին Թիֆլիսն է, գտնում ենք, որ ազգ նոր ձեռք բերած ապահովագրական գումարը փոքրիկ թիւ է և ընկերութիւնը իր գիրք ունեցող նախաձեռնողներով կարող էին շատ բան անել, որ և շատ ցանկալի էր։

ԿԱԼԻԽԱՆԵՐԸ ԱՆԻՔՈՎԿԱՍՈՒԹՅ. Խուսաց կալսերական տունը (Ուգել-նոյն վեդումստօ), որ Անդրկովկասումմի քանի նշանաւոր կալւածներ ունի, նորերս ձեռք է բերել վրացի իշխանուհի և Մուխրանսկիի (Ճնեալ Մուլխանովակի) ընդարձակ կալւածքը, Մուխրանի գիւղում։

ՆԵՐՍԵՍԵԱՆ ԳՊՐԱՆՈՑԻ ՀՈԴԱԲԱՐՁԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ պատգամաւորների ընտրութիւնները. Ան խնդիրը, որը գործեան հանգուց էր դառնել չորսիւ ծալքակեղ կուսակցութեան հոգևոր իշխանութեան կողմից և որի մասին մենք խօսել էինք «Մուրճի» վետրւարի համարում (Ընտրողական գործերի վտանգումն) ջուածում, աչքի վերջապէս մերձենում է իւր լուծմանը. Յունիսի 19-ին նշանակւած են ծխական ընտրութիւններ Թիֆլիսի հայոց 22 եկեղեցիներից ամեն մինում 3 ական պատղամաւորներ ընտրելու համար, որոնք ապա պէտք է ընտրեն 12 հոգաբարձուներ։ Ճիշդ է, ըստ ասածին՝ լաւ է ուշ քան ոչ երբէք, բաց ալսպիսի խնդիրներում, ուր ամեն ինչ կախւած է զէ պի կանոնադրութիւններն ունեցած լարգանքից, ժողովրդական առաջընդունութիւններից, որ մի հոգաբարձութիւն չորս տարւաչ տեղաւորի քան ութ տարի կառավարեց մի զպրոց, առանց արդարացուցիչ պատճառների, — դա կը մնաէ իբր մի մեծ և ան-

ջնջելի բիծ հայկական հոգնոր կառավարչութեան վրաց

Պղտոր ջրերում ձուկ որսող մամուլը, իմանալով որ նոր բնտրութիւնն է նշանակւած, ան մամուլը, որը երբէք չի բողոքած Ներսէսեան դպրանոցում տեղի ունեցած այլ անսովոր անկանոնութեան դէմ, այժմ տեսէք ինչ է գրում.

«Ի հարկէ, ասում է «Արձագանքը», իւրաքանչյւր թիֆ լիսեցի հակ և մենք նորանց հետ վազուց ցանկանում էնք որ վերջ տրւէք Դերսէսեան Պարոցի հոգաբարձութեան (?) անորոշ դրութեան»... Մի հարցնող լինի «Արձագանքին» թէ այս ամբողջ 4 տարւակ ընթացքում, երբ հին հոգաբարձուները (նոցա թւում և «Արձագանքի» խմբագիր Աբգար Յովհաննիսեանը) ժամանակից աւել կառավարեցին այդ դպրանոցը, երբ բողոքեց այդ անկանոնութեան դէմ, երբ դէմ մի անմեղ ցանկութիւն չալսնեց որ վերջ տրւէք այդ անկանոնութեանը: Արքան փարիսեցիութիւնն! Անցեալի հիման վրաէ զատելով՝ մենք, ընդհակառակը, համոզւած ենք, որ եթէ մի նոր չորս տարի էլ ընտրութիւն չկատարւէք՝ «Արձագանքը» նուն լուսպիւնը պիտի պահպանէք, ինչպէս և մինչ այժմ արել է: Դա պարզ է: Պարզ է և այն, որ «Արձագանքը» աշխատել է որ հոգեոր կառավարութիւնը ան սխալ քալով ընթանար, որը այսօր մի արտաւոր բիծ է համար: մարտում նուն այդ հոգ կառավարութեան համար:

Ահա թէ ուր է տանում վաս խորհրդատուներին լսելու:

ԱԱԶՄԱԼՈՒԾՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ: Մինչդեռ ամբողջ ազգը խորը ցաւ է զգում այն հանգամանքը, չորհիւ, որ մեր հայոց եկեղեցական, ծխական ընտրողական և այլ գործերում պարտքի և իրաւունքի սահմանները բաւականաչափ ճիշտ որոշած չեն, իսկ որոշածները բաւականաչափ որբութեամբ չեն չարգւում, մի խօսքով որ ընդհանուր առմամբ կամականութիւնն և զորա չնորհիւ անորոշութիւն է տիրում: մինչդեռ այդ անորոշութիւնների և կամականութիւնների մի որոշ շափով դէմն աւնեկու համար ամեն կողմից ձախներ են լսում կանոնադրութիւնների կամ այլ խօսքերով՝ օրէնքներ մշակելու, կարեորագոյն գործերի համար ձեռնհաս ատեաններ ստեղծելու, վարող, հսկող, քննող, գատող մարմիններ ստեղծելու, «Մշակի» № 65-ում պ. Ս. Զաւարեան «Դպրոցական խնդիրներ» լոդւածում քարոզում է կատարեալ հակառակը: Այդ ամբողջ լոդւածի ովին կարող ենք ամփոփել չոդւածի այս առղերով: «Առհասարակ պէտք է ասել (ասում է լոդւածագիրը), որ զա-

նազան կանօն աղբութիւնների «միջամտութիւնը» իրանց միատեսակ մանր-մունր կէտերով գպրոցական և առհասարակ մեր համալնական-եկեղեցական գործերում, բայի վնասից ոչինչ օգուտ չքերեցին և չեն էլ քերելու ապագաւորմութեանը և ակադեմիան մանրակրկիտ պարտաւորեցուցիչ ու կղլամենտացիան չէ կարող նախատեսնել ամեն ինչ։ Միւս կողմից, ինչքան էլ խելօք լինէ-ին կանոնադրութիւններ կազմողները, նրանք չեն կարող աւելի խելացի լինել քան համացն հաւ ժողովուրդը»։

Սա արդէն քննադատութիւնն չէ որ և է կանոնադրութեան, օրինակ զպրոցական (մանոնքի) ալս ու այն սխալ կամ վատ որոշումների, ալլ ցախաւելով սրբելն է (tabula rasa) ամեն տեսակ կանոնադրութեան, ամեն պարտաւորեցուցիչ օրէնքի, ամեն տեսակ կազմակերպութեան... Աւելի քան ազդ, զա հերքումն է ամեն հանրաէին գաղափարի, հանրաէին շահերի, հանրաէին շահերի, հանրաէ անունութեան առհասարակ, որովհեան օրէնքը կանոն և դոքա նման պարտաւորիչ բաները ստեղծում են, երբ հասունանում է որ և իցէ կարգ ու կանոն ընդհանրացնելու հնարաւորութեան գիտակցութիւնը։ իսկ մի կանոն պարտաւորիչ են դարձնում, ընդհանրացնում են այն ժամանակ, երբ նա չօշափում է ոչ թէ տեղական առանձնականութիւնները, ալլ այն, ինչ բոլոր հասարակութիւններին լատուկ է։

Իբր թէ հաւ ժողովուրդը աչնքան խելօք է, որ նորահամար որ և է կարգ ու կանոն սահմանել չպէտք է... Իբր թէ, ուրեմն, կարգ, կանոն, օրէնք միմիան անպիսի չի մարժողովուրդների համար են, ինչպէս են անգլիացիք, Փրանսիացիք, Կերմանացիք, ամերիկացիք, զիցերիացիք և այլն, Ալլ եղբակացութիւն դժւարանում ենք դուրս բերել «Մշակ»ի լուսածից։

«ՀԱՅ ԼՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՄԻՐԱՄԵԱԿ» պատկերի համար ստացանք պ. Գ. Շահպահեանից ևս 1 սուրբի «Հանդէս Ամսօրեալին» հասցնելու։

ՅՈՎՀԱՆՆԵՍ աւագ քահանակ ԽՍ.ՋԻԿԻԱՆԻ մասին երեք ամիս առաջ լրագիրներում լուր պատեց թէ վախճանւած է (տես «Մուրճ» № 2)։ Ակժմ սուզգ տեղեկութիւններ են հասած արտասահմանեան հաւ թերթերին, թէ այդ լուրը բոլորովին զուրկ է հիմունքից։ Հետեապէս նաև սխալ պէտք է համարել տեղեկութիւնները նորա թողած կտակի մասին։

ԽՈԼԵՐԱ. Խոլերա երևացել է Թիւրքիայում, Սիւասի և Երզերումի նահանգներում, Աւտարիացի Գալիցիայում, Բելգիայում:

ՆԻՒՐԱԲԱՐՈՒԻԹԻՒՆՆԵՐ. Թիֆլիսի բարուսի հարուստ Յովհաննէս Զիթախեանի մահան առիթով՝ նորա զաւակները, որոնք են՝ իշխանուհի Մարիամ Յովհ. Բէկթարէդնեան և Աննա Յովհ. Զիթախեանց, իրանց հօր չիշատակին հնուենեալ նույներն են արել. Ներսէսեան դպրանոցին՝ 1000 ռ., սովորակների օգտին 1000 ռ., Գագեանեան օրիորդաց դպրոցին՝ 500 ռ., Հաջ կանանց բարեգործ. Ընկերութեանը 500 ռ., հաւ քահանաների խնակողական դրամարկղին՝ 300 ռ., Ծինամծարիանթ-կարի երկրադորժական դպրոցին՝ 300 ռ., Մարիա կալսրունու կորերի հոգաբարձութեան Կովկասի ճմարզին՝ 200 ռ., Հաւալարարի ձրի ճաշարանին՝ 200 ռ.: Բացի այդ, խոստացւած է զդակ կարողների և գերձակների համքարութեան պատկանողների չփառը աղջիկներին մարդու տալու համար շարունակել տալ տարեկան 150·ական ռուբլի: Այդ համքարութիւններից ամեն մէկին, ինչպիս հանգուցեալը ամեն տարի տալիս էր:

† ՆԻԿՈՂԵՐԱ. Զիվաննի, Յունիսի 1-ին վախճանեց բարոն Զիվանի, Նիկոտերա, 66 տարեկան հասակում (Տնւած էր սեպ. 1828 թ.): Հանգուցեալը մասնակցութիւն էր ունեցել նորագուն խտավան տուղծելու գործում: Նա մասնակցել էր 1857 թւականի ապստամբութեանը Նէապոլի Բուրրանների դէմ, որի համար յման գատապարտւեց տաժանակիր աշխատանքի պատժին, 1860 թւականին աղատւեց Գարիբալդիի ձեռքով: Ծնուրւեց խտական պարլամէնտի անդամ, իբր անդամ պրոգրեսիստների (Քառաջդիմականների) կուսակցութեան, 1871—77 թ. եղաւ. Ներքին մինիստր, ազա մնաց ընդդիմադրականների մէջ, իբր մէկը պենտարիստների, ակինքն հին պատմական ձախակողմեանների, 5 յառաջդիմական պարագումներից մէկը. դոքա էլն՝ Նիկոտերա, Կարիսոլի, Արլուպի, Յանարդելլի և Բակկարինի:

† ՎԻԼՀԵԼՄ ՌՈՇԵՐ. Լէլպցիգ'ում՝ քաղաքա-տնտես պրոֆեսոր Վիլհելմ Ռոշէր, Հանգուցեալը ծնւած էր 1817 թւականին, հետևապէս մնուաւ 77 տարեկան հասակում: 1843-ին նա պրոֆեսոր էր Գեօտոպինդէնում, 1848-ին սկսած մինչ իւր մահը՝ Լէլպցիգի համալսարանում: Ռոշէրը անւանի ներկայացուցիչ էր պատմական մեթոդի քաղաքատնտեսութեան մէջ, բայց Ռոշէրի չառուկ մեթոդը արդէն բաւական ժամանակից ի վեր հնացած է բնորժիւ պատմական շկոլայի աւելի միծ զարգացման:

ՎՐԻՊԱԿՆԵՐԻ, «Մուրճ»-ի ներկաց համարում ալ, Բահաթրեանցի լողածի երկու ծանօթութիւնները (էջ 740 և 741) տպւած են առանց սրբազրութեան:

«Մուրճ» № 4, Շանթի ոտանաւորի երկրորդ տան մէջ տպւած է «մաշւած», ուղղին է՝ «մաղւած»:

ՆՈՐ ԱՏԱՅԻԱԾ ԳՐՔԵՐ

- 1) 1,50 — «Երեխի մարդիկ» (Փոքրիկ կենսագրութիւն), Տետր I, Վիկտոր Հիւզօ. — Դաւիթ Լիւինգստոն, Հրատարակութ. «Արօր» տպարանի, Բաքու, 1894 թ., գինն է 15 կոպ.;
- 2) ՅՈՎ. ՀԱՅ. ՆԻՍԻՍԵԱՆ, Արիսողոմ — «Բառգիրք ոռուերէնից-հակիրէն», Ա. և Բ. հաստրներ Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1888—1893; Գինն է առաջին հատորի 3 ռ., երկրորդ հատորի՝ 4 ոռութիւն;
- 3) ՆԵԶՎ. Ա. ՆԻՎ., Պ. — «Մուկուչի հավկլը», մանկական վէպիկ, Փոխագրութիւն. Հրատ. Թիվ 1, 1894 թ., գինն է 15 կոպէկ.
- 4) ՂԱԲԱԶԵԱՆ, Գէորգ. — «Բանւորների ապահովացումը Արևմտեան Եւրոպայում և Խուսաստանում»: Արտասալած «Մուրճ» ամսագրից: Հրատ. Արշակ Օհանեանցի, Թիֆլիս, տպ. Ռուբինեանցի, գինն է 30 կոպէկ. (Զուտ արդիւնքը լատկացրած է տաճկահակ սովեալ գաղթականների և Ղարսի և Երեանի նահանգն. կարուեալների օգտին).
- 5) ԿԱԲՄԷՆ ՍԻԼԻԱ. — Երկու հեքիաթ «Հեքիաթների աշխարհից»: Թարդմ. ոռուերէնից: Հրատ. Թիֆլ. Հայոց Ընկ., Թիֆլիս, տպ. Խոսինեանցի, 1894, գինն է 10 կոպ.;

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ ԱՆՑԵԱԼ ՏԱՐԻՆԵՐԸ

Վաճառական բա հետեւեալ գուերով

Նշանակած գները սնվուինս պահպանելու են մինչեւ վերջը 1895 թ.)

«ՄՈՒՐՃ» 1889 թ. անկազմ.	4 ռ. — կ.
«ՄՈՒՐՃ» 1890 թ. անկազմ.	5 » — շ
«ՄՈՒՐՃ» 1891 թ. (սակաւաթիւ) անկազմ.	10 » — շ
«ՄՈՒՐՃ» 1892 թ. անկազմ.	9 » — շ
«ՄՈՒՐՃ» 1893 թ. անկազմ	10 » — շ

Վ Ճ Ա Ր Բ Կ Ա Ն Խ Ի Ւ Կ

Ճանապարհածախիսի համար ուղարկում է մի-մի ռուբլի
ամեն տարւայ համար:
Կազմի համար վճարում է վերադիր 60 կոպ. ամեն կիսա-
մեակի համար (այսինքն 1 ռ. 20 կ. ամեն տարւայ հա-
մար):

Դիմել՝ Տիֆլիսъ, въ редакцію журнала „Мурчъ“.
Tiflis, Rédaction de la Revue „Mourtch“.



„ՄՈՒՐՃ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՅԱՀԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Բ Ի

ԲԱԺԱՆՈՐԴՎԳՐՈՒԹԻՒՆԸ 1894 ԹԻՍԿՆԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

Տարեկան գիմն է 10 դ.

Յաժմանորդագրութեան համար զիմել՝

ԽՄԵԼՔՐԱՏՈՒՆԸ. { Տիֆլոսъ. Въ редакцію журнала „МУРЧИ“.
Tiflis. Rédaction de la Revue „MOURTCI“.

Կամ մեր գործակալութիւններին՝

ԲԱՔՈՒ. — Տպարան «Արօր»:

» ող. Նիկ. Աբրահամեան:

ԷԶՄԻԱԾԻՆ. — Արսէն արեգայ Ղալովեան:

ԲԱԹՈՒՄ. — ող. Արգիս Մակարեանց (զրաս, եղր. Ծովեանների):

ՌԱՍՏՈՎ. և ՆԱՐ-ՆԱՄԻՋԵՒՄՆ. — Եղբ. Պ. և Գ. Աւանեսներ:

ՇՈՒՇԵ. — ող. Գէորգ Ղարաջեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — ող. Քրիստ. Բաշինջաղեան, Գостиный дворъ.

ՄԱՐՍԼՅ. — ող. Սիմեոն Միքայեանց: Rue St. Jacques № 86:

ԽՄԵԼՔՐԱՏՈՒՆԸ. գառնւում է Թիֆլիս, Վելեամինեան փողոց, տուն № 8